

Մ Ո Ւ Ր Ք

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 10-11 1896

ՀՈԿՏ.—ՆՈՅԵՄԲԵՐ

1896 № 10-11

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Երևո

1 ԲԱԲԿԵՆՑ, Գ.	1251	Նորեկ (վեպ. չարունակ.):
2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՆՈՆ	1276	Խորհրդաւոր գիշեր (բանաստ.):
3 ԱԴԵԼԵԱՆ, Ա.	1277	Տգիտութեան զոհեր (վեպ, չարուն.):
4 ՆԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԷԲՍԱՆԴՐ	1303	Գրչի հանաքներ (բանաստ.):
5 Ա. Ա.	1305	Բաբալոնաւթալին շրջանը, II:
6 ԱՐԱՅԵԱՆ, ԱՐՇԱԿ.	1322	Ամրոցի թաղուհուն (բանաստ.):
7 ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆՑ, ՅՈՎՀ.	1324	Ժողովրդի ընթերցանութիւնը:
8 ՓԱՓԱՋԵԱՆ, Վ.	1339	Ֆրիդրիկ Նիշէ:
9 ԱՂԲԱԼԵԱՆ, Ն.	1349	Տուրդ. «Արձակ Բանաստեղծութիւն»:
10 ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆՑ, ՅՈՎՀ.	1352	«Ծաղիկ և պտուղ», (դրախտ.):
11 " "	1353	«Անձրե և ձիւն», (դրախտ.):
12 ԱՂԲԱԼԵԱՆ, Ն.	1355	«Փոքրիկ ընթերցարան» (դրախտ.):
13 " "	1356	«Գեանաւորի երկխաները» (դրախտ.):
14 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, Ա.	1360	Վամանակակից Տեսութիւն:
15 Ա. Ա.	1382	Պատրիարք Օրմանեան:
16 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, Ա.	1386	Նոր դպրանոցների խնդիրը:
17 ԼՈՒՍԻՆԻ.	1393	Հայերի երգումը դատարաններում:
18 " "	1398	Դպրոցները կողկառում:
19 ԱՐԱՆԱՍԵԱՆ, ԱՇՈՏ.	1404	Կաթնամատենական ցուցահանդէսը:
20 ՍԵՒԵԱՆ, Հ.	1410	Թատրոնի շուրջը, IX:
21 ԽՄԲ.	1415	Զանազան լուրեր:

Տեղեկատու եւ Յայտարարութիւններ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типография М. Д. Ротиняна, Гол. пр., д. № 41.

1896

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 10 — 11 1896 ՀՈԿՏԵՄԲԵՐ — ՆՈՅԵՄԲԵՐ 1896 № 10 — 11

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типография М. Д. Ротинянца, Гол. пр. д. № 41.

1 8 9 6

А 4403

Получено 1-го ноября 1896 г.

144403

1-го ноября 1896 г.

Позволено пензурою. Тифлисъ, 1-го Ноября 1896 г.

144403

IX ՏՄԻԻ „ՄՈՒՐՃ“ ՏՄԻԻ IX

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1897 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՄՈՒՐՃ» ամսագիրը 1897 թվականին կը հրատարակէի նոյն ծրագրով և նոյն դիրքով, որպէս և նախկին ութ տարիներու ընթացքին ՄՈՒՐՃ»-ը, որպէս անցեալումն էր, նոյնպէս և ապագայում կը բովանդակի՝

- I. Յօդւածներ մեր կեանքի հիմնական պայմանների մասին:
- II. Վէպեր և պատմաճշման ինքնուրոյն և թարգմանական:
- III. Ոտանաւոր-բանաստեղծութիւններ, պօէմաներ՝ ինքնուրոյն և թարգմանական:
- IV. Նկարագրական-ճամբորդական:
- V. Պատմական:
- VI. Գիտական հանրամատչելի յօդւածներ:
- VII. Յօդւածներ տնտեսական և սոցիալական խնդիրների մասին:
- VIII. Գրական քննադատութիւն:
- IX. Գրախօսութիւն նոր լոյս տեսած գրքերի մասին:
- X. Ժամանակակից ճեպարարութիւն: Յօդւածներ հայկական կեանքի ընթացիկ խնդիրների մասին:
- XI. Գաւառական նամակներ:
- XII. Թատրոնական քրոնիկ:

XIII. Արտասահմանեան քրոնիկ:

XIV. Կարևորագոյն լուրեր ամսւոյ եղելու թիւներէց:

XV. Տեղեկատուներ և յայտարարութիւններ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ կը շարունակի «Մուրճ»-ում նաև 1897 թւա-
կանին առանձին ուշադրութեան առնւել:

ՄՈՒՐՃ-Ի ՎԻՊԱԿԱՆ բաժինը ներկայումս աւելի քան երբ և իցէ
ապահոված է յատուկ աշխատակիցներով:

«ՄՈՒՐՃ»-Ի ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ կը մնայ նոյնը ինչ միշտ եղել է՝ յառաջդի-
մական-քննադատական:

«ՄՈՒՐՃ»-Ը ունի աշխատակիցներ ի մի սուար խումբ, որը
կազմւած է ամսագրի ու թնամեայ կեանքով և որով ապա-
հովում են ամսագրի կարևորագոյն բաժինները: Աշխա-
տակիցներ ի կազմը լրացւում է նորերով, որոնց նպաստ-
ները երբեք չեն սակասել «Մուրճ»-ին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ: «Մուրճ»-ի տարեկան բաժա-
նորդագինն է 10 ռուբլի: Ուսուցիչները և ուսանողները վճա-
րում են զիջումով՝ 8 ռուբլի, արհեստաւորները և զործա-
կատարները՝ 7 ռուբլի: Կարելի է զրւել նաև զործակալ-աշ-
խատակիցներ մօտ, ստանալով նոցանից անզորրաղիւր:
ՎՃԱՐԸ կարելի է հատուցանել նաև մաս-մաս՝ 5 ռուբլի սկզբում,
մնացածը մինչև յունիսի վերջը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ընդունում են ամբողջ տարով՝ տողը 1 ու,
կէս տարով՝ տողը 7 5 կողէկ:

Դիմել Խմբագրատուն—Тифлисъ, въ редакцію „МУРЧЪ“

Արտասահմանից—Tiflis. Réd etion „MOURTCH“:

Ն Ո Ր Ե Կ

Վ Է Պ

Գ Ի Ր Ք Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Գ. ԲԱՐԿԵՆՅԻ

(Շարունակութիւն ¹)

Դիտելի Ա.

Անաստուածների ձորը ընկած է երկու նահանգի երեք գաւառների միախառնման տեղը—լեռների խորքերում: Որ նահանգին է պատկանում այս ձորը, և ո՞ր գաւառի վարչութեանը պէտք է նա ենթարկւի, ոչ մի աստիճանաւոր էլ որոշել չի կարող, որովհետեւ քիչ մնալ է այս տեղարէնքում պատահում, և անցնողն էլ, Անաստուածի շրջակայ ամացի դաշտ ու լեռներից սարսափած, վազում է ժամ առաջ դուրս գալ զարհուրիչ առանձնութիւնից: Յաճախ պատահում էր, որ իր տունը եկողին Սլօ զաշաղը, ծխաքարը ծխելով, հարցնում էր.—«օձն իրեն սորոտովը, թռչունն իրեն թռկովը այս կողմերը չի կարող գալ, դու ինչպէս եկել ես»:

Անաստուած ասածը լեռների ձիւնապատ վերեւում մի ձոր է, հինգ վերստ երկարութեամբ և մի վերստ խորութեամբ: Նրա ներքևի մի քանի քաջ լաջնութիւնից միշտ վերևի կէտ վերստ լաջնութիւնը թեք դժով մօտ մի վերստ վերև բարձրացող սարերը պար-

¹) Տես «Մուրճ» 1896 թ. № 5, 6, 7—8, 9:

փակում են այս վայրը մի ձեղքի մէջ, որի խորքում կանգնողը տեսնում է միայն թեք սարերի կուրծքերը և վերևում զարհուրելի ձորը ծածկող վրանի նման կապուտակ երկինքը:

Մնաստւածը կազմող թեք լեռները շարունակելով միանում են և բարձր օդի մէջ կազմում են մի դաշտ, որի վերևը մի անմատչելի ձիւնասլառ լեռն է—Մնաստւածի դադաթը, իսկ ցածր ներքևում իրար մօտենալով գետի վրայ կազմում են մի դուռը, որը իջնում է մի անհուն խորխորատի վրայ, որից դէպի դուռն եղած տարածութիւնը բռնած է միայն վայրի այծեամների համար մատչելի ժայռերով, անձեռնմուխ մնացած փշալի մացառներով—Մնաստւածի դուռը: Ամառ ժամանակ Անաստւածի լանջերը սկսում են ձիւնաթափւել: Ձիւնը տեղ-տեղ հալում է և նրա տակից բուսնում են մոզ կանաչ անմահական խոտերը, բազմաթիւ դեղին, կարմիր, սպիտակ, մոռ ու դիւզազ ծաղիկները: Շատ տեղեր էլ ձիւն է կենում և շերտ-շերտ դառած ծածկում է մեծ մասը ձորալանջերի: Ձորալանջերի մեծ ու փոքր ձիւնեայ պուրակները, նրանց տակից հոսող բարակ ջրերը, պուրակ-պուրակ ծաղկալի կանաչները ձորաշրջանի լանջերում, դադաթիդաշտի մէջ ընկած և արևի լոյսով լուսաւորւած—այս բնութեանը մի անասելի և աննկարագրելի գեղեցկութիւն են տալիս: Անաստւածի մէջտեղով անցնող նոյն անուն գետը, տեղ-տեղ խշխշալով, տեղ-տեղ գրգռալով քարերին է կպչում, և իր գուռում գոչումով ականջ խլացնում: Ձորի մէջտեղում նա կազմում է երեք սաժէնանոց մի ջրվէժ, որից ջուր թափւելով հազար բիւր կաթիլներ է դառնում և այս կաթիլները սպիտակ ու փրփրուն, արևի գոցնից դեղին ու կանաչ ընկնելով իրենց ներքևի քարի վրայ, անկման ոյժից նորից բարձրանում են վերև և, հասնելով ջրվէժի մի մասին, հանդիպում են վերից եկող հոսանքին և վայր ընկնում: Այս հանդիպման տեղում ներքևից և վերևից ընթացող կաթիլները մի փրփրան հանգոյց են կազմում, որը որպէս սպիտակ օղակ փայլում է վճիռ ու մաքուր օդի մէջ:

Ջրվէժի ներքևում ձորի մէջտեղում ընկած է մի մեծ ժայռ, որ կազմում է մի կամուրջ ձորալանջերի մէջ և որի տակից գրգռալով ընթանում է Անաստւածի գետը: Այդ ժայռը քարերի ընթաց-

քում ծածկել է քարերով, հողով և գեղեցիկ բոյսերով և դրա վրա դրած է Սլո զաչաղի հինգսիւնանի և նրա հովւի ու տաւարարածի վրանները:

Սլո զաչաղի և նրա հովւի ու նախարարածի վրանների դիրքն այնպէս է, որ նոքա երկու կողմից էլ Անաստուածի գագաթի, զռան և ջրվէժների պատճառով անմատչելի են, իսկ միւս երկու կողմերից դէպի այս վրանները սարալանջերից իջնում են բարակ ճանապարհներ. այս ճանապարհների վրայ էլ կառուցւած են քարերից փոքրիկ ապաստարաններ մի կամ շատ-շատ՝ երկու մարդի համար, որոնք թագ կենողը կարող է պաշտպանել վրանները դրսից եկող թշնամուց: Սլո զաչաղը իր տան պաշտպանութիւնը այսպէս է որոշել. կամուրջի ամենայն մի ծայրում կանգնի մի-մի մարդ, սարալանջերում շինած տեղերում մի-մի մարդ, իսկ ինքը վրանի մէջում: Նա ունէր երկու քաջ հովիւ և երկու էլ քաջ նախարարածներ, որոնք նեղ ժամանակ պէտք է կանգնէին այդ որոշեալ տեղերում, իսկ ինքը վրանից կառավարէր նրանցը, թոյլ տեղին օգնութեան հասնէր և վերջին բույէտում պաշտպանէր իր տունը:

—Բայց իզուր են այս պաշտպանութիւնները, ասում էր տաւարարած Մհօն, — Սլո զաչաղի տան վրայ ո՞վ կարող է գալ: Ո՞վ սիրտ կ'անի գնաց Սլո զաչաղի գնդակի առաջ:

Ամենայն տեղ տարածւած է թէ Սլո զաչաղը շատ հարուստ է և ունի մեծ առձեռն դրամ: Այս բույէիս նրա բէրը ¹⁾ գալիս է 300 մաքի և քսան կով: Սրան համեմատ էլ ունի նա եղներ, արջառներ և այլ անասուններ, որոնցով տանում է նա իր բեռները: Նրա երամակի մէջ ամենաքիչը քառասուն մատակ ձի կայ, որոնց 20-ը զուտ «քէլկան» ²⁾ են նշաններով ու վկայագրով. նրա մօտ դրած երկու տները միայն նրանով են ապրում և նրան ծառայում, այնպէս որ Անաստուածի միակ տէրը Սլօն է: Սլո զաչաղի քաջութիւնն ու անունը ամենայն տեղ տարածւած է: Գանձակի, Երեւանու ու Կարսի նահանգներում, Մակեայ, Խոյի, Աւաջուղայ խանութիւններում, Վանի,

¹⁾ Բէր անւանւում է այն տեղը, ուր կթում են ոչխարներ:

²⁾ Այսպէս անւանում է ձիերի այն ցեղը, որ լինում է Ապաղայի, Ալաշկերտի և Մուշի գաւառներում և ընդհանրապէս անւանում է «քէլկան»:

Մուշի ու Կարնոյ փաշալիքներում ամենայն տեղ յայտնի է Սլօ զաչաղը: Բոլորն էլ գիտեն, որ նա աւագակ է, բայց Թրք, Ռւմ, որտեղ և որի միջոցով է նա անում իր աւարները, ոչ ոք չգիտի: Աւագակութիւնը նա անւանում է չօլ-փաշասիութիւն և անկեղծ սրտով նւիրւած է աւարառութեան: Սլօ զաչաղը միայն մի զաւակ ունի, որին պատկանում է նրա բոլոր հարստութիւնն ու կեանքը և որին Սլօ զաչաղը դժւածի պէս սիրում է: Դա Սլօյի աղջիկ Գուլէն է: Արու զաւակ չունենալը առաջ շատ էր տխրեցնում Սլօին, բայց վերջը նա հանդստացաւ և փառք էր տալիս Աստծուն:

—Աստուած առհասարակ, յաճախ կրկնում էր նա, քաջ մարդիկներին արու զաւակ չի տալիս և, եթէ տալիս է, վատն է տալիս: Փառք Նրան, որ նա ինձ վատ զաւակից ազատել է:

Երկու կին առնելը զաւակ ունենալու համար նա մեղք է համարում: «Եթէ մի շանը ամեն անգամ վեց լակոտ տուող Աստուծը, երբ կամենայ չի կարող ինձ մի կնոջից եօթը քաջ տղայ տալ ասում էր նա: Աստուած առհասարակ մի մարդին բոլոր բանն էլ չի տալիս: Ինձ տւել է լաւ կին, հարստութիւն, լաւ անուն և յաջողութիւն, իսկ արու զաւակից զրկել է, փառք Իրենք: Իր կին Փաթէին Սլօ զաչաղը շատ սիրում էր նրա խոնարհութեան համար և միշտ Աստուած կ'աղաչէր, որ նրա ու Փաթէի հոգին մի օրում առնի: Ինչպէս ասացինք, Սլօ զաչաղի կեանքն ու հարստութիւնը պատկանում էր նրա միակ զաւակ Գուլէին: Գուլէն հասակը բարձր ու բարակ, ինչպէս արանու բարդու, հազիւ տասնութ տարեկան աղջիկ էր: Նրա երեսի կաշին սպիտակ ու կարմիր, աչքերը մեծ մեծ ու շագանակագոյն, երկար արանանունքներով ծածկւած: Նրա յօնքերը բաւականին խիտ էին, երկար ու ճակատի վրայ խաչաձև հազնւում էին իրար. նրա սև սաթի պէս մազերը մի քանի ծամ հիւսած թափւում էին նրա ոտերի վրայ: Նրա աչքերը վառվում էին ինչպէս ասող: Նրա ամբողջ երեսում կարդացւում էր երեխայութիւն, բարութիւն, միանոց ժամանակ քաջութիւն և արագութիւն: Իրանը բարակ և դալար. նա արագ էր ինչպէս սարի այծ և ամբողջ օրը աշխատում էր Գուլէ հորթերը բռնի, Գուլէ դառն ու ուլը բեր, Գուլէ ոչխարը տուր բերի, ցան ու փոշի արա, խնոցի

հարի, կարպետ ու բառ ¹⁾ գործի, Գուլէ, տաւարարածներին և խաշ-
նարածներին և նրանց կնանիքին, որոնք Սլօի տանը աշխատում
էին, հրամաններ տուր: Գուլէի մայրն և դրացիները միշտ ասում
էին, որ Գուլէն երկու տղամարդ արժի:

Գուլէն լիովին բախտաւոր էր: Երբ չուզէնար բան անել, իս-
կոյն իլիկը (Թէշին) կը վերցնէր և կը գնար քարերի վրայ, ձիւների
մէջ, ջրվէժների առաջ և իր ձայնով օղը կը թնդացնէր: Գուլէն
գիտէր բազմաթիւ պարերգեր: Թէ անձրեւի լու լու լու թափւելը,
թէ թռչունի ճթճթոցը, թէ առուի գլգլոցը, թէ քամու բւոցը,—
բոլորը նա ղուրս էր բերում իր երգերի մէջ: Երբ չէ, նա գլուխը
ղնում էր թունուս ֆասը ոսկիներով պատած, զարդարւում էր ջու-
բայով, որի կուրծքը ծածկած էր երկու շարան պալուլ ոսկիներով
և գնում ճեմեւու ծաղիկների մէջ: Այս ջրից խմելով, այն
ծաղիկը քաղելով, այս քարի վրայ նստած, այն բաշի վրայ թիկ-
նած նա բարձրացնում էր զլօն և սար ու քար ուրախացնում
իր ձայնով:

Շատերին արդէն յայտնի էր, որ Սլօ զաչաղը հասած աղջիկ
ունի, շատերը գիտէին նրա գեղեցկութիւնը ու տնարարութիւնը,
բայց ճիշդ կը յանդգնէր նրան ուզել, ճիշդ Սլօ զաչաղը կ'տար իր
աղջիկը: Շատերն ասում էին, որ Գուլէի զլխագինը հազար ոչխար
է, բայց շատերն էլ ասում էին, որ Սլօ զաչաղը ուզում է ամենա-
քաջ և անւանի մարդը գտնի, որ իրեն փեսայացնի:

Իսկ ինքը Գուլէն միայն սովորում և երգում էր սիրոյ երգեր
և ոչ մի ալ մտածողութիւն նրա սրտի մէջ չէր մտել. կը պատա-
հէին րոպէներ, երբ նա կը մտաբերէր, որ ինքն էլ պէտք է մարդի
գնաց, բայց իսկոյն իրեն կը հաչոյէր, թէ չի ամաչում, որ նա,
Սլօ զաչաղի դուստրը, այսպիսի բաների վրայ է մտածում:

Միթէ Սլօն չի կարող նրան մարդացու ընտրել, միթէ կարե-
լի է Սլօի անունը խաչտառակել, չէ որ մարդու գնալու վրայ մտա-
ծելը ամօթ բան է և հօր համար խաչտառակութիւն:

Գուլէի սրտակիցն, նրա մեծացնողն և երգ սովորեցնողն
էր տաւարարածի մայր Բէզէն: Յաճախ Գուլէն ու Բէզէն իլիկները

¹⁾ Կապերտի ամենահասարակ տեսակը:

վերցրած գնում էին ձիւների կողքերին նստում և Բէզէն պատմում էր հին պատմութիւններ, սիրոյ դէպքեր և անբախտութիւններ: Իսկ Գուլէն լսում էր և ամաչում, որ անգամ մի հարց էլ է տայ:

— Գուլէ ջան, դրուստ ասա, մի օր հարցրեց պառաւը, քո սիրան ումն է ընկել:

— Ոչ դէի, Բէզէ: Ես ըսկի այդպիսի բաներ չեմ մտածում:

— Ես շատ կ'ուզէի, որ դու լինէիր մի հողագործի կին: Մեր խաշնարածի կեանքը շատ վատ է. այսօր ունիս երեք հարիւր ոչխար, վաղը մի ցաւ կը պատահի և բոլորն էլ կը կոտորւին ու դու աղքատ կը մնաս: Հացերի մէջ ապրող քրդերը ուտում են լաւ կերակուր, ապրում են մաքուր տներում, իսկ խաշնարած քրդի ապրուստը շան ապրուստ է. գիշեր ցերեկ բաց օդում, ցրտի մէջ, անձրևի տակ: Ահա այժմ մենք ձիւնի մէջ ենք ապրում. բայց մի գնաց քաղաք, տես մի ինչ կը տեսնես, խանութ, առևտուր, լաւ շոր, միւրք, ամենայն բան: Որ մտնում ես բազար՝ ամենայն բան, ինչ որ Աստուած ստեղծել է, կայ. առ ու կեր:

— Ով է իմանում հայրս ինձ ում կ'տայ. նա ինչ ասի, ես նրա խօսքից դուրս գալ անկարող եմ:

— Է, որդիս, մարդ պէտք է իր սրտի ուղածին առնի: Երիկը եզ չէ՝ ծախես ազատես, ոչխար չէ՝ մորթես ուտես, այլ անօձիք մի շապիկ է, որի հանել գցելը շատ դժւար է: Որ էրիկդ քեզ սիրելի եղաւ—մութ գիշերը վառ ցերեկ կը դառնայ, հագիդ կտաւը աբրեշում կ'երևայ, սիրտդ միշտ ուրախ կը լինի, ու ինքդ չես պառաւի. իսկ երբ էրիկդ սրտովդ չլինի, գարունը քեզ աշուն կ'երևայ, ծաղիկներն ըսկի աչքովդ չեն գայ, բերնիցդ մի երդ դուրս չի գայ, սիրտդ կը մեռնի ու ինքդ աշնան խոտի նման կը թոռոմես ու կը թափես:

— Բէզէ ջան, բայց ոնց է լինում, որ աղջիկը տղին սիրում է:

— Ո՞վ է հասկանում, դա վիճակ է: Վերևից գիր է գրում թէ՛ ասենք՝ Գուլէն Ալօյին սիրի. և այդպէս էլ լինում է. և մէկ օր, երբ Գուլէն Ալօյին պատահում է, իսկոյն զգում է, որ սիրեց նրան:

ԴԼ. Բ.

Ովանէս աղի տունը մշտական սար զնացող էր: Մաղիկ խանութը իր աղքատ ժամանակն էլ մի երկու կով կը տանէր սար, որ տեղից կը բերէր ձմռանց եղի, պանրի, ժաժկի պաշար: Բայց, որովհետեւ Ովանէս աղէն սար չէր գնալ, պատճառ որ միշտ ծառայութեան մէջ կը լինէր և ժամանակ չէր ունենայ, բացի սրանից սարում որս ու աւազ չէր լինիլ, այդ պատճառով այդտեղ նա բաւականութիւն չէր գտնում, տիկին Մաղիկը միշտ կարօտութիւն ունէր մի ծառայող տան, որի տղամարդն ու կանայք նրան օգնէին: Այդպիսի տուն էր քիւրդ Մատոյի տունը: Մատոյի և նրա կին Ջէյնարի նւիրւածութիւնը տիկին Մաղիկը գրաւեց հետեւեալ հանգամանքներում: Թանգ տարի էր: Խնութում ցորեն չէր պտնւում, և ով էլ ունենում էր, նա չէր ծախում: Մատոն իր բազմութիւն ընտանիքով շատ անճարութեան մէջ էր: Ում դիմեց նա, հաց չուեցին, և արդէն երեք օր էր, որ նրա ընտանիքը ոչինչ չէր կերել: Նա առաւօտը վեր կացաւ և, աչքերը խթած, մտաւ գիւղի մէջ, որ ում տունը բախտի բերամբ չաեսնելով մօնի, նրանից հաց ուզի: Բախտը նրան տարաւ Ովանէս աղենց տունը և նա տիկին Մաղիկին պատմեց իր դրութիւնը: Տիկին Մաղիկը նրան շատ կարեկցաբար ընդունեց և խոստացաւ մինչև ցանքեր դուրս գալը իրենց հացը նրա հետ կիսել, և չնայելով, որ իր ընտանիքը մասամբ քաղցած էր մնում, իր խոստումը կատարեց և Մատոյի ընտանիքն էլ ողջ առողջ լի ժամանակի հասաւ: Մի օր, երբ ցորենն արդէն էժանացել էր և Մատոն իրենը ապրուստ էր գտել, նա վերցրեց իր կին Ջէյնաբին, երեք աղջկան և միակ արու զաւակ Ալօյին, եկան Ովանէս աղենց տուն ու մի կտոր հաց ու քիչ աղ ուզեց: Երբ զարմացած տիկին Մաղիկը աղն ու հացը տուց նրան, նա դրեց դետինը և ոտով կոխտոեց, երդւելով—այս աղն ու հացը թող իմ բոլոր որդիները կտորի, ինձ ու իմ կնոջը սպանի, եթէ ես քանի կամ այս տանը՝ նւիրւած ծառայ չլինեմ: Այն ժամանակուանից մինչև այսօր քսան և հինգ տարի է անցել և միշտ Մատոյի ընտանիքը Ովանէս աղի մօտն է և նրան հաւատարիմ ծառայում: Տիկին Մաղիկն էլ, խելօք և բարի կին լինելով, չի թո՞

դուժ, որ նոցա ծառայութիւնը ձրի անցնի և միշտ նրանցը փոխարինով վարձատրում է:

Ալէքսանդրի, որին Ձէյնօն իր ձեռքերի վրայ էր մեծացրել, զալը շատ ուրախացրեց Մատոյի ընտանիքը:

—Ձէյնօ, փառք Աստուծոյ, ջահէլ աղէն եկաւ և մենք էլ հիմա ուրիշների նման տէր կ'ունենանք, ասում էր մի օր Մատօն:

—Փառք Աստուծոյ, Ալէքսանդրն էլ լաւ տղայ է, մեզ ուզում է և նեղ ժամանակ մեզ կը պահի:

—Այ կնիկ, այս տարի դու Ալէքսանդրի մօտ մնայ ամառը գիւղում, իսկ ես տները սար կը տանեմ, Ալօն էլ հօ ոչխարը կը պահի:

—Լաւ ես ասում, այ մարդ. ես որ մնացի՝ Ալէքսանդրին լաւ կը ծառայեմ. և տեսնենք, զուցէ նա մեր Ալօյին էլ օգնի:

—Վալլահ, այս տարի կամ ես իմ գլուխը կը տամ, կամ այն աղջկան կը բերեմ: Քանի որ Ալէքսանդրը այստեղ դատաւոր է, որ ես այդ աղջկան չփախցնեմ, էլ երբ կարող եմ ձեռք բերել, մէջ ընկաւ Ալօն: Ալօն Ալէքսանդրից մի քանի տարի մեծ էր: Նրա պսակելու ժամանակը վաղուց արդէն հասել էր և Մատօն ու Ձէյնօն ապրում էին, որ իրանց արու զաւակի պսակը տեսնեն, յետոյ մեռնեն: Նոքա յաճախ պահանջում էին Ալօյիցը, որ մի աղջիկ էլ նա ընտրի, բայց Ալօն չէր համաձայնում, ու չէ:

—Ես, մինչև մի լաւ և իմ սրտի ուզած աղջիկ չլինի, չեմ պսակել: Պէտք է մի այնպիսի մարդու աղջիկ առնեմ, որ ինքը քաջ լինի, ազգը յայտնի, որ իմ տղաներն էլ լաւ լինեն: Մշտական ասած է—տղան քեռուն կը նմանի:

Եւ Ալօն ման էր զալիս մի այդպիսի աղջկայ. բայց գտնել չէր կարողանում, այնպէս որ իր յոյսը վերջերում միայն Աստուծոյ վրայ էր դրել:

Նա վաղուց լսել էր Սլօ զաչաղի անունը և որ նա աղջիկ ունի, բայց նրա մոքով չէր անցնի, որ նրա աղջկան ուզի: Մի գիշեր երբ Ալօն քնած էր, մի երազ տեսաւ: Մի լայն հրապարակում, որը ծածկւած էր բազմաթիւ ծաղիկներով և աղբիւրներով և ընկած էր մի սարի լանջում, նա ոչխար էր արածեցնում. այդ ժամանակ նրան մօտեցաւ մի ծերունի փայտը ձեռին:

—Ոչխարիդ բարաքեաթ լինի, պատ նա Ալօյին:

—Բարե ես եկել, պատասխանեց Ալօն:

—Դու վաղուց ինձ աղաչում ես, դարձաւ ծերը զէպի երիտասարդ հովիւը, և ես քո ձայնը լսեցի. առ այս ինձորը տամ քեզ, սա քո բաժինն է: Սա Ալօ զաչաղի աղջիկ Գուլէն է: Ալօն քեզ աղչիկ չի տայ, համա մի վախենայ, նա քո վիճակն է և վերջը այս աղջիկը քոնը կը լինի:

Ալօն զարմացած զարթնեց և ինքն իրեն չէր հաւատում: Այն օրւանից նա շտեպած սիրահարուց Ալօ զաչաղի դստեր վրայ: Այս երազը տեսնելուց արդէն սեպտեմբերի սկիզբն էր և մի 15 օր հաջիւ էր մնացել, որ Ալօյի տունը սարից գայ: Նա յանձնեց իր ոչխարները ուրիշին և փաշտն առաւ ձեռքն ու ընկաւ ճանապարհ զէպի սարը. նա պատահեց Ալօ զաչաղին, որ իր իւրտից ցածր էր իջած, և ուղիղ գնաց նրա տունը:

—Բարի օր ձեզ:

—Աստուծոյ բարին, պատասխանեց Ալօյի կինը. եղբայր, որ տեղացի ես, համեցիր նստի:

—Խնութեցի եմ, իմ եզը գողացել, անցկացրել են Սիւնիք, ես գնում եմ եզս գտնելու: Յոգնած էի, եկայ ձեր տունը. այսօր, եթէ տեղ տաք, այստեղ կը մնամ, իսկ վաղը գնալու եմ գործիս:

—Բարե ես եկել, հաց բերեմ կեր, ասելով Ֆաթէն հրամայեց. —հիւրին հաց դրեցին:

Ալօն թէպէտ հացն ու մածունը ուտում էր, բայց իր կերածը չէր տեսնում, նրա աչքերը թափառում էին լաջն վրանի անկիւնները: Յանկարծ վրանը մտաւ մի հրեշտակ աղջիկ: Բաւական էր Ալօն նկատեց նրա բարձր հասակն ու կարմիր երեսներն և կրակոտ աչքերը, իր տեղում չորացաւ մնաց: Պատառը նրա ձեռքից վեր ընկաւ, աչքերը բարձրացան ճակատի տակը և նա սառած ու չորացած նայում էր եկողին:

Ելիկը ձեռքում մանելով, Գուլէն, շորորալով մօտեցաւ Բէզէին:

—Այս հիւ է, Բէզէ:

—Աստուծոյ հիւրն է, մի կտոր հաց է ուտում, զնն:

Հացը վերջացնելուց Ալօն մի աննկարագրելի հոգեկան դրուժեան մէջ էր: Այս գիշեր այստեղ մնաց, թէ գնաց, ահա հարցը:

Նրա նստատեղը, բարախող սիրտը՝ ասում էին—[Թէ մնայ. իսկ ամօթխածութիւնը—[Թէ գնաւ Վերջը նա ոյժ արաւ, բարձրացաւ տեղիցը, փայտը դրեց կուլարի ¹⁾ մէջն, շնորհակալութիւն արաւ և յայտնեց, [Թէ գնում է:

—Ինչու, որդի, այս մթանը ուր ես գնում: Սլօ աղի տանը, փառք Աստուծոյ, հաց կայ ուտելու, շոր կայ քնելու:

Այս խօսքերը ²⁾ ասուեցրին Ալօյին: Ինչու նա վերկացաւ գնալու: Մնամ ես, չգնամ, գիշերն այստեղ կը քնեմ, մէկ էլ նրա երեսը կը տեսնեմ. չէ, ես ամօթից նրա երեսը նայել չեմ կարողանում, միայն գալն էր, որ տեսայ: Բայց ոնց մնամ, ինչ անեմ, մնամ, չէ, միանգամ ասեցի գնալու եմ և վերկացայ: Այս մտածողութիւնները մի վաչրկենում անցան նրա գլխի միջից և նա շնորհակալութիւն անելով գլուխը կոր, սիրտը կոտոր հեռացաւ Սլօ զաւաղի տանից: Երբ նա տանից բաւականին հեռացել էր, շները վազեցին ետեւից, և նա փոխանակ, ինչպէս վաչել էր քրդին, փայտով նրանց խրկելու, հաց էր գցում և աղաչում, որ իրենից հեռանան. Ալօն գնաց, բայց ուր գնար,—չգիտէր և ուղեւորեց դէպի դաշտը: Քիչ հեռւում նա պատահեց մի հովիւ:

—Բարաքաթ լինի, հովիւ:

—Բարով եկար:

—Ում ոչխարն է:

—Սլօ աղի:

—Ե՞րբ էք այս տեղից գնալու:

—Տասնհինգ օրից յետոյ:

—Սարերը դատարկեւել են: Ինչո՞ւ այդքան ուշ:

—Դեռ այնպիսի մարդ չի ծնւել, որ Սլօ աղի տունը գողութեան գայ:

Միտքը տարաւ Ալօյին. ուր գնա, ի՞նչ անի. վերջը նա ուղեւորեց դէպի մօտակայ գիւղերը և գնաց մի հայ գիւղ, որտեղ հին ծանօթ ունէր:

—Բարի օր, քաւոր Կրպօ:

—Աստու. բարին, քրիւէ Ալօ: Դու ինչպէս է պատահել, որ այս ժամանակ այստեղ ես:

¹⁾ Հովական փրարկու:

—Խնութ զիւղը ուզում եմ թողնեմ և ձմեռն աչտեղ հովիւ վարձեմ:

Արդէն տասնէւորրորդ օրն էր, որ Ալօն քաւոր-Արպօի տանն էր: Նա ամբողջ գիշեր գոժում կը պառկէր անքուն և անձնատուր իր մտքերին, իսկ ցերեկը դիւղումը պատերի տակին շուքուխ կը ծխէր:

—Քրիւ է Ալօ, եղբայր, ուղիղն ասա, դու կարծես չես եկել աչտեղ վարձելու, այլ ուրիշ նպատակով ես եկել:

—Ոչ, ճշմարտը նա է, որ քեզ ասել եմ:

—Եղբայր, բաց դու ինչո՞ւ կորած ես ու շարած, ամբողջ օրը ոչ խօսում ես, ոչ հովիւ վարձող ես փնտռում: Գող չես, թէ ասեմ գողութեան ես եկել: Ոտիդ վրայ էլ չորացել ես.

—Եկել էի, բաց ձեր գեղին լաւ նայելուց յետոյ, տեսայ, որ էլի մերն է լաւ, ու այսօր գնում եմ:

Միւս օր աղօթարանը նոր էր բացւել, որ Ալօն իրեն հասցրեց Ալօ զաչաղի քոչին: Ալօ զաչաղը, մի քէլկան մատակ ձի հեծած, քոչի յետեից գնում էր: Քիչ հեռունրանից քոչը քշում էին նախարարածների ու հովիւների կանայք. իսկ քոչի առաջ զարդարած, ոսկու արծաթի մէջ փաթաթւած, քէլկան ձիանիքը տակներին, գնում էին Փաթէն ու Գուլէն:

Ալօ զաչաղը քառասուն հինգամեայ, թիկնաւէտ միջահասակ մարդ էր. նրա լացն ու խիտ յօնքերը, վառվռուն աչքերն ու երկար բեղերը նրան քիչ զարհուրելի էին դարձնում: Նա իրեն ձիան վրայ պահում էր հպարտ և կարծես պատրաստ կուլելու: Բաց միւսնոցն ժամանակ նրա առնական դէմքի վրայ երևում էր և մի գիծ բարութեան ու ընդունակութեան ներելու:

—Բարի օր, աղա, մօտեցաւ նրան Ալօն:

—Բարով, որդիս: Բարի է:

—Փառք Աստուծոյ բարի: Իմ եզները գողացել էին, գնացի հացերի մօտ գտայ, տւեցի նրանց բուդ ¹⁾, այժմ գնում եմ արանը: Ճանապարհին քո քոչը տեսայ և ինձ բախտաւոր եմ համարում, որ անվտանգ կը հասնեմ զիւղ: Գնալուց ես քո տունն եկայ, Աստուծ չէն պահի, կուշտ հաց կերայ և ճանապարհ ընկայ:

¹⁾ Աւրիշի անասունները վարձով իրեն մօտ կերակրել:

—Շատ լաւ, որդի, բայց ես թշնամու տէր եմ, իսկ քեզ էլ չեմ ճանաչում. գնա, քեզ ճանապարհի ուրիշ ընկեր գտի:

Այս խօսքերը Ալօյին յուսակտուր արեցին: Նա տասն և հինգ օր աչն յուսով սպասում էր, որ այսօր Գուլէնց քոչի հետ գնայ. նա այս բախտաւոր թուպէն անգամ երազումն էր տեսնում, իսկ այժմ, նրա բոլոր յոյսերը դերևս ելան:

—Ոչինչ, աղա, ես մենակ կը գնամ:

Այս ասելով առաջ գնաց և երբ մօտեցաւ Գուլէին ու Ծաթէին՝ միայն «բարի օր» խօսքերը կարողացաւ արտասանել և մի անգամ տեսնել Գուլէի երեսը. նա շփոթեց, իրեն կորցրեց և բարեին պատասխան չսպասած գնաց առաջ: Ի՞նչ դրութեան մէջ էր Գուլէին տեսնելուց Ալօն, անկարելի է նկարագրել: Նրա աչքերը մթնեցին, սևացան, ծնկները թուլացան և քիչ էր մնում, որ վայր ընկնէր, բայց իրեն պահեց:

ԴԼ. Գ.

Օրէ օր Ալօյի սէրը սաստկանում էր: Այնպէս արածեցնելուց, ծնեցնելուց, կթելուց—միշտ Գուլէն նրա աչքի առաջն էր: Բայց Սլօ զաչաղը երազումն էլ չէր կարող կարծել, որ հայերի ծառան կարող է մտադրութիւն ունենալ նրան փեսայանալու: Ալօն շատ լաւ հասկանում էր, որ Սլօն նրան աղջիկ չի տալ: Ա՛ւմը դիմի, ո՞վ կը համաձայնի նրա համար, որ հայի ծառայ է և ինչպէս քրդերն են ասում, հայի շան կուտն է ուտում, Սլօ զաչաղից, որին Սլօ աղան կանչում, աղջիկ ուզի: Եւ դիցուք, թէ Սլօն էլ համաձայնեց, կարող է արդեօք նա, որ 25 մաքի, մի կով, մի ձի և երկու էլ եղ ունի, տալ աչն աղջկայ գլխագին: Իսկ փախցնել Սլօ աղի աղջիկը նա նոյնպէս չի կարող: Նախ Սլօի աղջիկը նրան ինչ է ճանաչում, որ չգայ նրա հետ, յետոյ ո՞վ կը չանդգնի նրա հետ արիւնարբու Սլօ զաչաղի աղջիկը փախցնի. և յետոյ փախցնեն էլ, մի՞թէ կարող են այնպիսի տղամարդից իրենց ազատել: Այս մտքերը տանջում էին Ալօյին և նրա քուռն ու զաղարումը կտրում: Արդէն ութն ամիս էր անցել աչն օրից, երբ նա առաջին անգամ տեսել էր Գուլէին և Ալօն ատքի վրայ մաշել էր: Այժմ Ալօն Ուլանէս աղենցը հովիւ էր և տների հետ հովիտներում: Այնպէս արածեցնելուց ամե-

նայն ծաղիկ յիշեցնում էր Գուլէի դէմքն ու շորերը, ամենայն մի աղբիւր—նրա ձայնն ու սրտի պարզութիւնը: Այս խոցերը իրենց սէրը ունեն. այս թաքէքը ընտրում են այծեր, որոնց գերադասում են միւսներէց. ես եմ միայն, որ անիծւած եմ բնութեան մէջ: Յաճախ նա իրեն կշտամբում էր. ինչ յանդգնութիւն, անամօթութիւն նրա կողմից Այս զաչաղի աղջիկն ու գել: Էծն իր ոտովը, ուն իր ոտովը, միթէ կարող է սև ագռաւը խառնել բաղերի երամին և բադ դառնալ, կամ կոյր բուն սոխակների մէջ մտնել և նրանց նման երգել: Գուռ հով, ոտաբոբիկ Մասօցի որդի, դու հով, մշտական ուրիշի լակկող, ուրիշին հովիւ, Այս, Այս զաչաղը—ով, նրա աղջիկ Գուլէն—հով. չէ որ նրա միայն մատերի ոսկեայ մատանիները քո ամբողջ կարողութիւնն են, գուցէ իսկ քեզանից էլ թանգ են: Այս զաչաղի դռան կովերի բողոցը ու ոչխարի բողոցը մարդ է խլացնում, իսկ քո տանը կատու էլ չի մլաւում: Այս ժամանակները Այսն յաճախ վճռում էր, որ գնաց իրեն մի քարափից գցի, կամ գետը նետի, որ սպանւի, բայց նայում էր արևի փայլուն լոյսին, կամ լուսնին, կամ պայծառ աստղերին, գետնի զոյնզոյն ծաղիկներին, աղբիւրների վճիտ ու գլգլան ջրերին—և հանդարտում էր: Նա սկսում էր խղճալ իր հօրն ու մօրը, որ կը կորցնեն իրենց միակ որդուն. երեակայում էր, թէ ոնց լաց կը լինի Մաղիկ խանում: և վատ մոքերը հեռացնում էր իրանից: Վերջապէս նա վճռեց մէկին իր ցաւն ասի, մէկի առաջ լաց լինի, որ իր ցաւի ընկեր լինի. և այդ մէկն ընտրեց տիկին Մաղիկին: Շուտով դէպք էլ պատահեց բացելու նրա առաջ: Գարնանը հովիւները եկել էին, թէ չէ, Այսն ոչխարի առաջ միշտ սրինգ կ'ածէր: Առաւօտն արօտ քաշելուց, ցերեկն արածեցնելուց, իրիկունը տուն բերելուց, գիշերը գհոռում, Այսի սրինգը օդը կը թնդեցնէր և միշտ զարուրի (ամենամեղամաղճոտ եղանակը): Յաճախ օբի կանաչքը կը ժողովէին Այսի մօտ, որը զարուրի կ'ածէր. և նոքա լաց կը լինէին, որն իր մեռեալների վրայ, որն անբախտ պսակի, որն անբախտ սիրոյ, իսկ որն միւսներին աչք տալով: Նէրին անգամ սովորել էր Այսի սրինգին և ածելուց կը դար նրա մօտ կը կանգնէր: Մի օր երբ մոլթն ընկել էր և ժամանակ էր ոչխարը տուն քաշելու, նա ընկած հոտի առաջ կամաց-կամաց գնում էր, իսկ ոչխար-

ները նրա ետեւից շորորալով խոտերը կծելով ու ծաղիկները պրծեցնելով ընթանում էին: Ամենից մօտ գնում էին զոյգ ներիները, որոնք զուհիները կպցնում էին նրա քամակին, կողքերին, նրա երեսին: էին նայում ու չափաւոր քայլով ոչխարն իրենց ետեւից քաշում: Յանկարծ երկու ներին էլ ընկան առաջ և նրա առաջը կտրեցին, աչքեցին նրա սրինդին ու կոտորեցին իրար խփելով թղիացրին: Սոցա թղիոցը կարծես կտրեց Ալօյի սիրտը: Յանկարծ կաջճակի արագութեամբ նրա գլխով անցաւ մի համեմատութիւն, զնէրիները սրինդի պատճառով, որ նրանց խկի պէտք էլ չէ, կըռւում են, իսկ ես Գուլէի համար ոչինչ չեմ անում: և նրա աչքերից սկսեց հոսել յորդ արտասուքը: Նա սրինդը ածեց և լացեց, ածեց և լացեց, մինչև որ ոչխարը գհու աւեց և ինքը գնաց Ովանէս աղենց տանը ընթերելու:

Տիկին Ծաղիկը ճրագը վառեց թէ չէ, նրա աչքերը ընկան Ալօյի աչքերին, որոնք արտասուենքոտած էին և արտասուենքից ուռած:

—Քա, այ տղա, դու լաց ես եղել:

—Ձէ, ինչու: Բայց ինչ անեմ, լաց չլինեմ:

—Քեզ ինչ է պատահել:

—Տիկին, մի ցաւ ունեմ, որ միայն ինձ է յայտնի և Աստուծոն: Մինչև հիմա ես ոչ ոքի չեմ ասել, բայց մարդս ուրիշին պատմում է իր անբախտութիւնը, իրենը թեթեւացնում է ու լսողի հետ դարդը կիսում: Նա արդէն վաղուց վճռել էի, որ քեզ իբրեւ իմ տիկնոջը, մօրըս և քրոջս, յայտնեմ իմ ցաւը, բայց դէպք չէր պատահում, իսկ այսօր կը յայտնեմ:

—Ձինի աչքդ աղջկայ է ընկել:

—Քեզանից ծածկեմ, Աստուծոց ինչ ծածկեմ: այո, ես արդէն մի տարի է, որ ընկել եմ Սլօ դաշաղի աղջկայ ետեւից:

—Այն հարուստ Սլօյի:

—Այո:

—Նա քեզ աղջիկ կը տամ:

—Դէ, ես իմ:

—Վերջին խօսքերը Ալօն այնպէս արտասանեց, որ շարժեց տիկին Ծաղիկի գութը: Նա վաղուց մոռացել էր սէրը և սիրոյ

մասին մտածելը, բայց այս բոլորին նա մտաբերեց իր բոլոր անցեալը: Թէ ինչպէս նա սիրեց Ովանէս աղին և գնում մարագնե-րում ծածուկ լաց էր լինում, թէ ինչպէս նրան դուր էր դալիս Ովանէս աղի քաջ խօսելը, առնական դէմքը ու ղէնքը, որ անգամ մութը տեղում փայլում էին նրա աչքերի առաջ: Նրա սրտում առաջ եկաւ կարեկցութեան զգացմունքը, որը յաճախ աւելի ունե-նում են կանայք և մանաւանդ սիրահարական դէպքերում: Նրա մէջ դարձեալ զարթնեց անկեղծ սիրոյ յաղթութեան զազաւիարը, և նա ասեց.

— Մի վախենայ, Ալօ, Աստուած ողորմած է:

Այսօրեանից սկսեց տիկին Մաղիկի և Ալօյի մէջ անկեղծու-թիւնը: Ալօն պատմում էր նրան իր բոլոր մտածածները և անե-լիքները և նրանից, որպէս գորովագութ մօրից, խորհուրդներ էր խնդրում: Տիկին Մաղիկն էլ միշտ կարեկցաբար էր վարւում դէպի նա և, յաճախ տեսնելով Ալօյի անկեղծ տանջանքը, Աստուած էր կանչում, որ նրան մի ճար անի: Տիկին Մաղիկը իր բոլոր բարեմասնութիւն-ների հետ ունէր և կանանց ընդհանուր պակասութիւնը. նա Ալօյի զազանիքը չկարողացաւ երկար թաղցնել և շուտով յայտնեց նրա ծնողներին:

Զէյնօն ու Մատօն իրենց ականջներին հաւատալ չէին կարող, որ նոցա խելօք, համեստ որդի Ալօն, որից բաւական էին բոլոր հայերը և որը ամբողջ ձմեռը կառավարում էր անգամ երկու հա-զար ոչխար, կարողանար մի այգուիսի անիրագործելի միտք ունե-նալ: Նոքա սկզբից այս բանը ընդունեցին, իբրև պատասնեկան յա-փշտակութիւն, ջուրը դարի վեր գնալու նշան, և սկսեցին քարո-ղել Ալօյին, որ ձեռք վերցնի այգուիսի ապարդիւն մտածողութիւն-ներից: Բայց Ալօն նրանց չէր լսում, ու չէ:

— Մայրիկ, ասում էր նա Զէյնօյին աղերսական ձայնով, ներքի ինձ, ես քո ու հօրս առաջ մեղաւոր եմ: Բայց ես բացի նրանից ուրիշ աղջիկ առնել անկարող եմ: Աշխարհում բացի Պուլէն, ինչ-քան կին ու աղջիկ կան, բոլորն էլ իմ մայրս ու քոյրերս են: Զէյ-նօն իր գլուխը կորցրել էր, ինչ սնէր, ու մը դիմէր: Արդէն վեց-եօթ ամիս է, որ նա այս բանը լսել էր և ոչ մի խրատ չէր օգնում: Ումը դիմում էր, նրա վրայ ծիծաղում էին: Վերջապէս

նա սկսեց դիմել մոլլաներին ու գրքացներին, որ նրա որդուն թուղթ անեն և սէրը պաղեցնեն: Բայց սա էլ ապարդիւն եղաւ, մինչև որ մէկը նրան մի բարի խրատ տուեց:

Մի թուրք մոլլա, որին նա դիմեց, անկեղծաբար խոստովանեց, որ ինքը գրքացութեանը ոչ մի նշանակութիւն չի տալիս, և խորհուրդ տւեց Ձէյնօյին, որ նա կաշառի աղջկայ դրացի կանանցից մէկին, որը համոզելով աղջկան փախցնել տայ:

Ձէյնօն այս բանը բոլորից ծածուկ պահեց, բացի տիկին Մաղիկիցն ու Մատօյից, որոնք համաձայնեցին նրա հետ, և նա խօսեց, փէշը-գոտիկ, սկսեց շրջել այտոեղ, աչտոեղ, Սլօ զաշաղի ծանօթների, ազգականների տունը, մինչև որ նա ծանօթացաւ Բէզէի հետ: Սկզբից նա Բէզէի հետ լաւ բարեկամացաւ, ընծաներ տալով, յետոյ անկեղծաբար յայտնեց նրան իր կոծը և խնդրեց օգնութիւն: Բէզէն երկար չէր կարողանում յանդգնել այս բանին ձեռք զարկելու, բայց Ձէյնօյի բերած ոչխարները նրա աչքերը շարքին և նա սկսեց ծածուկ ամենայն տեղ խօսեցնել Գուլէին և փոխել նրա տրամադրութիւնը դէպի Սլօն:

Գուլէն վաղուց արդէն ապրում էր նրա պատմած հէքիաթների մթնոլորտում, որը աւելի և աւելի թանձրանում էր, և ջանում նրա մէջ ստեղծել առասպելական բնաւորութիւն: Նա սկսեց մտածել, թէ ինքն էլ կարող է առասպելական սէր ունենալ, սիրել տանջւել, փախչել սիրած մարդու հետ, կոխներին և սպանութիւնների պատճառ դառնալ, հօր հալածանքներին ենթարկւել, մինչև որ մայրական սիրող սիրտը կը կակղեցնի և հօր կարծր բնաւորութիւնը, կը լինի հաշտութիւն և նա բախտաւոր կ'ապրի: Նա սկսեց մտածել, թէ ով կարող է լինել նրան փախցնող հերոսը, միթէ նրանց ծառաները կամ դրացիները,— ոչ անծանօթ մարդ հեռու երկրից: Նա երկար փնտռում էր իր լսածների մէջ մի այդպիսի անծանօթի. և ահա նա մտաբերեց Ալօյին, որի անունը նա յաճախ լսել էր Բէզէից և որին մի անգամ տեսել էր նրա տանը: Բէզէն Սլօն հասարակ հովիւ էր, միջահասակ, թիկնաւէտ, հասարակ շոր հագած առանց մի քաջութեան և աւազակութեան, հետեւապէս և չէր զբաւում նրա անուրջները, բայց նրա հեռւից հայերի մէջ, քաղաքի և բաղարի մօտիկ լինելը զբաւում էին Գուլէին, որն իրեն

ներկայացնում էր իր ապագայ փախչելիք տեղերը և շտեմած մարդիկը, աչգիները, ծառերը, բոստանները իրենց մրդերով, որոնց մէջ հանգիստ ապրում են լաւ հագնւած կանայք ու տղամարդիկ։ Շուտով Գուլէն սկսեց կարծել, որ ինքը սիրահարւած է Ալօյի վերայ և իրիկը ձեռքն առած թափառում էր դաշտերը, երգում և աշխատում տխրել և, եթէ կարելի էր, լաց լինել։ Ֆաթէն իր աղջկայ մէջ եղած փոփոխութիւնը նկատում էր, բայց պատճառն իմանալ չէր կարողանում, մինչև եկող դէպքերը բաց արեցին նրա առաջ, թէ Ալօ զսպարի ընտանիքը Բէզէ պառաւի շնորհիւ ինչ վիճի առաջ էր կանգնած։ Վերջապէս երազից երեք տարի դեռ չանցած Բէզէյի միջոցով, մի քանի ընկերներով միասին, երբ փիր-Մուրադ Սուլթանի խորհրդով Ալօ զապարը գնացել էր Տաճկաստան աւազակութեան, Ալօն փախցրեց Գուլէին և բերեց Խնութ գիւղը Ալէքսանդրենց տունը։

Երբ Պերճաւանում տարածւել էր Խնութի եղբւնական դէպքի լուրը և հասել էր նահանգապետին, Մուրթուզ Ալի խանը յայտնել էր նրան որ Ալէքսանդրը կարող է աչդ գործում ապօրինի զեր խաղած լինել և այս պատճառով նահանգապետը պահանջել էր, որ նա շուտով ներկայանայ իրեն։

ԳԼ. Դ.

Նահանգապետի նամակն ստանձնելուց՝ շուտափոյթ ներկայանալու մասին, Ալէքսանդրենց տունը արդէն վերադարձել էր սարից։ Մատոն, իր կինը, Ալօն ու Գուլէն բոլորն էլ Ովանէս աղի տանն էին։ Արդէն քսաներորդ օրն էր սոքա այտուղ էին և լուրեր էին ստանում, որ Ալօ զապարը եկել է, Բէզէ պառաւին սպանել է և ասում է, որ մինչև Մատոյին, կնոջն ու տղին չսպանի և իր աղջկան տուն չբերի, չի հանգստանայ։ Այս լուրը սարսափեցնում էր Մատոյի ընտանիքը, որի երջանիկ բոսկները ջաճախ շառազուհում էին մրրկաւոր սարսափով, և որի մէջ տիրում էր երջանկութեան հետ և խորը տխրութիւն։ Բայց, ինչ արած, խեղճ ընտանիքը դարձեալ անկարող եղաւ չբաժանել իր ուրախութիւնը զրացիների հետ, և մի երեկոյ Ովանէս աղենց տանը խաղ սարքեցին փոխարէն հարսանիքի, որը կարող էր լինել միայն Գուլէի հայրենական ընտանիքի հետ հաշտելուց յետոյ։

Երեկոցեան զափի գրգռոցն ու զուռնի ձայնը ընկան Ովանէս աղի հացատ տունը թէ չէ, ամենայն ինչ փոխւեց: Վաղուց այս պատերը այդպիսի հրաշալի ձայներ իրենց մէջ չէին լսել: Արդէն քառասուն և հինգ տարի է, որ Ովանէս աղի պսակելուց զէս այս յարկի տակ մի այսպիսի սուրբ ու բերկրալից զւարճութիւն տեղի չէր ունեցել: Տիկին Մաղիլը ուրախութիւնից իրեն կորցրել էր և տան ու բակի մի անկիւնից միւսն էր վազ տալիս: Զէջնօն, ուր գնում էր— ճանապարհին շշկոււմ էր և մօտենում իր աղին, որը բոլորի վրայ բաղմութիւ աղլուխներ փաթաթած, ջալալցանակ բաղդադու ճթերը կախած, մահուդ չուխան հագին, խանչալը վրէն, տան մի անկիւնում կանգնած էր: Մտռն Գուլէի մօտից չէր հեռանում և նրա ամենայն մի ասածին և ուզածին հրամանակատար էր: Ովանէս աղէն սկսել էր կոնծելը և արդէն ուրախ տրամադրութեան մէջ, մի ինչ որ բան իր զինուորական անցեալից պատմում էր իրան մօտիկ նստած Ալէքսանդրին, Լուսկի Գէւօյին և միւս հարեաններին: Խրկողն ու կալողը բարձրացել հացատան թախտի վրայ նստել էին և առանձին ուշադրութեամբ նայում էին իրենց տիրոջը, հաւատացած լինելով, որ նա այսօր էլ դաշտ չի գնաց, բայց յամենայն դէպս իրենց մնով կը հիւրասիրի:

— Ովանէս աղա, տայ Ասուած, որ մի օր էլ Ալէքսանդր աղի հարսանիքն աննք, ասում էր Լուսկի Գէւօն: Այն օրը ես մտադիր եմ, Ասուած աջողի, գեղի բոլոր ծերերին ու պառաւներին ժողովմ, մենք բոլորս առանձին հին պարերգերից ասելով գովանդ խաղանք:

— Нѣтъ, не советую (ոչ, խորհուրդ չեմ տալիս) օղի ծծելուց ու ընչացքները մինչև ականջը ոլորելուց յետոյ, պատասխանեց Ովանէս աղէն:

— Այ, դու մատաղ ըլես Ալէքսանդր աղին, հա, ասա, մեռած հարբան, քեզ այսպիսի տղայ լինի պսակելու, դուն էլ չեմ ու չու անես:

— Забудь, я самъ молодой, другой жена хачу-возмоу (աղաւաղած ոռսերէնով— ինչու, ես ինքս երկրորդ եմ, և ուզում եմ երկրորդ կին առնել): Ալէքսանդրը և միւսները ծիծաղում էին ծերի անկեղծ հանաքների վրայ:

— Բայց Саша (Ալէքսանդր) ջան, դարձաւ Ովանէս աղէն դէպի իր

որդուն զորովով և խոկուն կերպով, եթէ խելօք լինիս՝ բոլորովին չես պսակւի. և դարձեալ հանաքի ձեով первый шарлатанъ будешь (առաջին սրիկան կը դառնաս : Օ՛, ես ինչպէս էի վարչաւումս : Լեհուհիները ինձ շատ սիրում էին, աչքերս համբուրում էին, ընկնում էին ճտովս ու երեսիս երկար նայում : Իմ մասին ասում էին. хороший, черный Иванъсь (լաւ, սեաւ Ովանէս) :

— Ինչու չպսակւի, մի՞թէ թոռ ունենալը քեզ համար բախտաւորութիւն չի լինի :

— Ինձ համար... ինձ համար... ես երդւել եմ, երբ թոռն ունեցայ, հրացանը, բարակները, որսի և ամենայն բան թողնելու եմ և սկսելու եմ, օրը երկու, երեք անգամ եկեղեցի գնամ... օ... թողիս ձեռքը բռնած. я его назову վասիլ (ես նրան կ'անւանեմ վասիլ) վասիլ Օսիպիչ Բէբուտով :

— Բայց ինչու չես ուզում տղէդ պսակւի, միջամտեց զիւզացիներից մէկը :

— Պսակւելը լաւ չէ, որովհետեւ հոգսերը կը բազմանան, երբ երեխաները մեռան, ինքը շուտ կը ծերանայ. բայց, Ալէքսանդր, молодой человекъ, красные погоны, хорошо (երիտասարդ, մարդ, կարմիր ուսադիրներով, լաւ), քէֆ արա ոռւս կնանքոնց հետ անհոգս, անցաւ, խմի արտասահմանի կոնեակ, առաջին տեսակի գինի, հեծի կաբարդայի ձի, բարակներ, հրացան... вотъ тебѣ хорошо, (և շատ լաւ կը լինի) :

Այս խօսակցութեան ժամանակ ներս մտաւ տիկին Մաղիկը :

— Մաղիկ քոյրիկ, Ովանէս աղին տեսնում ես, խորհուրդ է տալիս, որ Ալէքսանդրը չպսակւի, իսկ դու ինչ ես ասում, հարցրեց Լուսկի Գէւօն :

— Ես, եղբայր, սրանից յետոյ ամէն օր եկեղեցի եմ գնալու և Մարիամ Աստուածածնան խնդրելու, որ իմ Ալէքսանդրիս մի լաւ կին հասցնի. և մի անձին երինջ էլ մատաղ եմ տեսել :

— Աստուած քո սրտի ուղածը կատարի :

— Նրան թողնես իրեն համար օղի խմի, քէֆեր անի. իսկ ես, եղբայր ջան, քանի ինձ ճանաչել եմ, մի արեւ օր չեմ տեսել, օրս սև է անցել և աչքերս արտասունքով : Հիմա, որ փառք իրենը, ես բախտի երես եմ տեսնում : Այժմեանից պատրաստելու եմ գի-

նի, եղ, բրինձ, միս, որ Աստուծով, ձմեռը պէտք է հարսանիք անենք:

Գափի գրգռոցն հացատան մէջ արդէն ականջ էր խլացնում: Բոլորն պար բռնել և սպասում էին որ պարոններն էլ միանան նոցա հետ, թէպէտ առանց սոցա էլ պարի ծայրերը իրար էին հասնում: Պար բռնած կային մօտ հարիւր հոգի հայ ու քուրդ կանայք ու տղամարդիք: Լուսկի Գէւօն, իր կինը, տիկին Մաղիկը և միւս հասակաւորները մտան պարի մէջ և դափի հետ սկսել էին երգել ամենահին զաւեշտական գովանտը:

Քուրդ կանայք նոր էին սարից իջել, առողջ և կարմիր դէմքով, կանոնաւոր կազմաւածքով: Նրանց աչքերի մէջ երևում էր վեհութիւն ու կեանք, շարժւածքի մէջ եռանդ, կորով: Իսկ հայ կանայք բոլորը դալկացած էին ամառուայ շոգից և դողոցկից, նիհար, մէջքները ծուռ և կաղմաւածքները անշնորք: Մանր աշխատանքը, վատ օդը ու ջուրը նրանց կիսասպան էին արել և զրկել ամենայն եռանդից ու կեանքից:

Ովանէս աղէն արդէն վերին աստիճանին էր հասել, նա վաղուց բռնել էր պարի գլուխը և զովանտը քաշում: Նա պահանջեց նորահարսին, որին Զէյնօն բերեց նրա ձեռքը զցեց: Նրա կուրծքի Ս. Գէորգի խաչը, որը ախտից համարեա սեւացել էր, հազիւ փայլում էր ճրագի լոյսից: Նա ստէպ-ստէպ իր ընչացքները սրում էր, կուրծքը ոլորում, աղլուխը բարձր շարժում ու քայլում պարը: Նրբ նա տեսաւ, որ տղամարդիքն ու կանայք խառը պարում են, նա իսկոյն հրամայեց, որ բաժանուեն,—կանայք պարի սկզբում բռնեն, իսկ տղամարդիք վերջում:

Նրբ նրա հրամանը կատարեց, նա «ախ, вы дураки» (ախ դուք չիմարներ) ասելով, շարունակեց պարը: Վերջը նա կանչեց Ալէքսանդրին և յանձնեց նրան պարի քաշելը:

—Այ, տեսնում ես, քո հայրը ինչպիսի տղամարդ է: Նրբ նկատեցի, որ պարի մէջ տղամարդիք ու կանայք անկարգ իրար ձեռք են բռնել, իսկոյն կարգի բերել տւեցի: Այդպէս էլ հարկաւոր է: Այ, մեր նորահարսի ձեռքը բռնի: Սոքա 30 տարի է մեր տանն են և մեր հացի պատիւը զիտեն, դու էլ պէտք է այս հարսին անես քեզ քոյր: Вотъ нашъ армянскій законъ (ահա, մեր հայերիս օրէնքը):

Ալէքսանդրը երկար ժամանակ պարի գլուխը քաշում էր։ Պիշերն արդէն կիսից անցել էր, երբ մի քանի տղամարդ ու կին խնդրեցին նրան, որ առաջարկի դափ չածեն, իսկ պարը շարունակեն քրդի կանանց երգելու։ Երկու կին և երկու աղջիկ քրդերից բաժանեցին և սկսեցին պարերգը։

Քրդուհիների ձայնը բարակ էր, երգը մոնոտոն ու մելամաղձոտ, պարը—միակերպ շարժումներ. բայց յամենայն դէպս այս բոլորն էլ Ալէքսանդրի սրտին, հոգուն մօտ էին ու սիրելի։ Նա յափշտակւած էր, որպէս և բոլոր միւսները։ Նա յաճախ որպէս պարագլուխ դառնում էր դէպի իր ձեռքը բռնած Գուլէն, նրա առաջ կանգնում և գլուխը գետին ծռում, ոտերը միւսնոյն տեղում կաքաւի նման բարձրացնում իջեցնում, Գուլէի ոտների հետ զոյգ և դակիին բռնացնում, թւերը բարձրացրած օդում շարժում, յետոյ յետ դառնում կողքը դէպի Գուլէն դարձնում, գլուխը վեր բարձրացնում և սագի նման սահում պարեշարքի զլիւում։

Բայց կոլոլ պարը մարդուս ուղեղը ժամանակ առժամանակ ազատ է թաշում։ Այդ բույրներում ինքնամոռացութիւնից յետոյ, նրա գլուխը անցնում էր շարժար մոթերի հեղեղ։

Վաղուց Ալէքսանդրը այսպէս չէր պարել։ Նա մտաբերեց իր երեխայութիւնն ու պատանեկութիւնը, վրանները սարում, որոնց ետեւում դիշերները մինչև լոյս պարել էր ու երգել, հովիտների սլաղ աղբիւրները, որոնց վրայ նա սերտել էր այս երգերը, նոցա խշխշոցը, որը նա քանի անգամ փորձել էր խլացնի իր ձայնով. այն վճիռը, որը նա պատանի ժամանակը կացացրել էր, որ մի լաւ քրդական պարեգէտ ստող կին ունենայ, որը, թէկուզ նա մնայ քուրդ, միայն իր սրտի ուզածը լինի։ Այդ երեխայ ժամանակ նա եղել է, որպէս մի ծաղիկ սարալանջի, թռչկոտել է, որպէս մի թռչնիկ մարգագետնի, անյադ պարել է, լացել, սիրել և ծիծաղել, մի խօսքով ապրել է այն կեանքով, որով ապրում է ամբողջ բնութիւնը և այս օրերը մնացել էին որպէս միակ քաղցր յիշատակները նրա քրտնաջան կեանքի ընթացքում։

Իսկ այժմ ի՞նչ է նա. մի կմախք, կեանքից զուրկ ու մեռնող արարած, որը մի ինչ որ գաղափարի նւիրւել և ամեն բան մոռացել է. այժմ նա երգում էր միայն թախծանաց և մարդկութեան

վրայ լացի երգեր: Վերջը նա սթափուեց, նայեց պարողներին ու երգողներին, իր ձեռքը բռնած Գուլէին և մոռացաւ իր թախիժը: Նա նոր զգաց, որ նրա բռնած փափուկ մատը ունէր մի առանձին անուշիկ ջերմութիւն: Նա թեքուեց նայեց Գուլէին, որ նրանից հասարկով հաղիւ քիչ նւաստ էր: Գուլէի աչտերը մարմնի ընդհանուր շարժումներից սլարի ժամանակ և հացատան տաքութիւնից կարմրած էին ու քիչ քրտնած. ճրագի աղօտ լոյսում աւելի լաւ աչքի էին ընկնում նրա աչտերից մինչև ականջներն ու վիզն եղած կաշու թղթենման բարակութիւնն ու սպիտակութիւնը: Քսան օրւայ կեանքը շւաքի, հեռու արևի ու ցրտի ազդեցութիւնից, նրա դէմքի կաշին իր բնական դոշին էին բերել: Նրա աչքերի նայւածքը, շէնքն ու արտանայունքները նրան աննկարագրելի զեղեցիկ էին երևում, այնպէս, որ նա մի բան մտածում էր, որ այսպիսի մի զեղեցկութիւն նա տեսել է համալսարանում՝ Վենետացի պատկերի վրայ: Իրանը բարակ ու համաշափ, շարժւածքները հանդարտ ու սահուն, ամբողջ մարմինը կոնոնաւոր և դալար. Գուլէն նման էր նրա տեսած արձանին, որի զեղեցկութիւնը նա առաջ համարում էր յունական զեղարւեստի հնարած բան, բայց որի նմանը այսօր նա տեսնում էր բնութեան մէջ: Գուլէի երեսի կոնոնաւոր դժագոյնութեան հետ երևող մոտաւոր ընդունակութիւնը, կանացի համեստութիւնն ու ամօթխածութիւնը, բնական և չափաւոր բարութիւնը, որոնք արտայայտւում էին նրա դէմքի վրայ, զարմացրել էին Ալէքսանդրին: Նա երկար ժամանակ իրեն հաշիւ չտալով, ակնապիշ նայում էր իր ձեռքը բռնած զեղեցկունուն և ընկել էր անհուն հիացման մէջ: Միթէ սա կին է և ոչ հրեշտակ կամ ստեղծագործութիւն բանաստեղծական վրձինի: Միթէ իմ աչքերս ինձ չեն խաբում, սա կարելի է մի վէպի հերոսուհի է, իրեն զարմացած, մոմ կտրած հարցնում էր և աչքերը գցում քրդուհու երեսին, ձեռքերի մատներին, ոտքերի փոքրութեանը և մէջքի բարակութեանը: Յանկարծ նրա աչքերն ընկան Գուլէի շամամանման ստիճաններին, որոնք նրան մտաբերել տւեցին սուփանք, և նա խկոյն ուշաբերւեց, մի ինչ որ զգանք զգաց դէպի իրեն, անասնական զգացմունքը մարդու և աւելի խանդով շարունակեց պարել: Իսկ երբ նա մի անգամ էլ գլուխը դէպի Գուլէն թեքած, ոգևոր-

ւած պարում էր, յանկարծ նրա աչքերն առան Գուլէի աչքերին, որոնց մէջ նա նկատեց այնքան անկեղծութիւն, գեղեցկութիւն ու գորով, որ շփոթեց ու պարը խառնեց և մի այնպիսի մարում առաջ եկաւ նրա գլխում, որ պէտք է վայր ընկնէր, եթէ չգարթնեցնէր նրան Մստոյի ձայնը:

—Աղա, հրամայի թող նորահարսը երգի:

—Ես չեմ կարող, զուտ ասա Մստո:

—Ինչու, քո ծառան է, քո քոյրն է, նորահարս է, թող երգի, սիրտն ուրախանայ:

—Գուլէ, քրդերէն դարձաւ դէպի նա Ալէքսանդրը, խնդրեմ, եթէ կարելի է, զուէլ երգես, և առաջարկեց միւս քրդուհիներին, որ օգնեն նրան:

Մի քիչ խորհուրդներ անելուց յետոյ, Գուլէն քրդուհիներէ հետ սկսեցին երգել.

Այ տղա, այ տղա հովիւ,

Սրինգը ձեռքումը հովիւ.

Դու ոչխար չես արածեցնում,

Հօտերն իրար ես խառնում,

Միայն հարս ու աղջկայ նայում:

Այ տղա, շան տղա հովիւ,

Սրինգը մատումը հովիւ,

Ոչխարը քարերն ես տանում,

Անջուր, անօթի ես պահում

Աղջիկներին աչքով անում:

Այ տղա, շան տղա, հովիւ,

Բլուլը ձեռումը հովիւ:

Գուլէ ձայնը ուժեղ էր, կուրծքից և մետաղական զրնգոցով: Նրա ձայնը բարձրացաւ թէ չէ ընկաւ հացատան գմբէթի մէջ և բոլորը կ'ասես շալիւի դիպան, այնքան զարմացել էին: Ալէքսանդրը հիացած այս ձայնից, որի նմանները հազաազիւտ են, լիովին ուշադրութիւն էր դարձրել և թեքել դէպի Գուլէն, որը կարծես չէր նկատում, որ ամէնի աչքերը դէպի ինքն են յառած, և, տարւած երգով ու պարով, սահում էր բաղի նման և շորորում քամով երբեող բարդուի նման:

Հովւի երգին հետեւեց պայտառի երգը և յետոյ էլ սրաի երգը.

Ով սիրտ, ով սիրտ, սիրտ, սիրտ, սիրտ, սիրտ,
Ինչ կանեմ սէրն անսիրտ, սիրտ, սիրտ:

Ձորի բերնի ծառը, սէր սիրտ.

Տար այդ խղճուկ եարը, սէր սիրտ.

Ով սիրտ, ով սիրտ, սիրտ, սիրտ, սիրտ, սիրտ
Ի՞նչ անեմ եարն անսիրտ, սիրտ, սիրտ.

Ի՞նչ կանեմ բախտն, անսէր սիրտ, սիրտ

Ի՞նչ կանեմ վարդն անսէր, սիրտ, սիրտ:

Այս խօսքերն իրանց մեղամաղձոտ տպաւորութիւնը թողեցին Ալէքսանդրի վրա, որը իր մտքում սկսեց նկարագրել իրեն ինչպէս ձորի բերնին միայնակ ընկած ծառ, որին ամենայն մի անցորդ զիպչում է, իբրեւ մի անտէր, անսէր, անեւար սրաի, որին խնդրում են, որ մէկը գաջ վերցնի: Նրա բախտն առանց սիրոյ նոյնպէս է, որպէս վարդ առանց սոխակի: Ալէքսանդրը համալսարանից գալուց դէս արդէն բաւականին փոխուել էր, իսկ այսօր նա աննկարագրելի գեղեցիկ էր: Նրա շէկ դէմքը կարմրած, ճրագի լուսաւորութեան մէջ մի առանձին փայլ ստացած, լի կեանքով, իր մէջ ունէր մի մեծ դուրեկանութիւն, որով գրաւում էր բոլոր պարողներին: Պրիստաւական զաշանգ կարած նշանազգեստը, դեղին ժապաւենով ու դեղին ուսադիրներով շատ սազում էին նրա բարձր ու բարակ առնական հասակին, իսկ նրա մամուղների զընդոցը մի առանձին շիկ էին տալիս նրան պարի ժամանակ:

Գուլէն առաջին անգամն էր, որ իր կեանքի մէջ այսպիսի մարդ էր պատահում և նոր էր ընտելանում նորա դէմքին: Ալէքսանդրը նրա համար թէպէտ անհասկանալի, բայց շատ դուրեկան գեղեցկութիւն ունէր, որով նա յափշտակւած էր և որին պարի ժամանակ ստէպ-ստէպ նայում էր աչքերի ճոթով: Գուլէն շատ անգամ պարել էր, բայց ոչ մի տղամարդի այսպէս ներքեւից վերէնէր աչքել և ոչ մէկի ձեռքերը այս տաքութիւնը և փափկութիւնը չէին ունեցել, ոչ էլ այսպէս սղմել էին նրա ձեռքերի հետ: Նա զգում էր մի կերպ մօտկութիւն, բայց երբ սկսեցին ամբողջ թիւն ու ուսը ամբողջ թիւն ուսին կպած պարը, Գուլէն զգաց, որ ոչ մի ժամանակ նրա մարմինը այսպէս ամուր չէր սեղմել տղամարդի

մարմնի և ոչ մի մարմնից նա աչսպէս մաքուր հոտ և ջերմութիւն չէր զգացել: Նա արդէն մոռացել էր, որ Ալօն իր ամուսինն է և կարծես աղջիկ էր. Ալօ զաչաղի դուստրը վեհանձն ու ազատ պարում էր մի հայի հետ, որը անկարող էր մի որ և է կերպով նրանից բարձր լինել: Նա Ալօին մտաբերեց այն ժամանակ, երբ սկսեցին երգել:

Օ, Ալօ, օ, Ալօ

Խեղճուկ ու տխուր Ալօ:

Այն ժամանակ նա աչքերով փնտռեց ու գտաւ Ալօին, որը հեռու նստած էր հովիւների մօտ: Նա աչքերը զարձրեց Ալէքսանդրին և իսկոյն մտաբերեց, չէ որ նա իր ամուսնու պարոնն էր, աղան էր: Իսկոյն նա զգաց իր ու Ալէքսանդրի մէջ եղած զանազանութիւնը, սառը քրտինք տւեց նրա վրայ, նրա թւերը թուլացան և հոռացան Ալէքսանդրի թւերից և պարի շարունակութեան ժամանակ նա զգաց, որ բռնել է մի ձեռք, որի նմանները միշտ պարերի ժամանակ բռնած է եղել:

Արդէն լուսադէմին էր, երբ պարը վերջացաւ, և Ալէքսանդրը հոգով, խելքով ու մարմնով ձանձրացած մտաւ տեղաշարժերը թէ չէ, իսկոյն քնեց: Առաւօտը զարթնելուց նա իսկոյն մտաբերեց Գուլէին, շուտափոյթ հագնւեց, կարծես մէկը նրան քաշում էր Գուլէի մօտ, և իրեն համար անզղալի կերպով գնաց դէպի նա, որին տեսնելուց մի կերպ ամաչեց և շղկեց, բայց իսկոյն էլ մոքի եկաւ և խնդրեց մի բաժակ ջուր և Գուլէի գեղեցիկ դէմքը տեսնելուց, ձեռքից ջուր առնելուց յետոյ հանդստացաւ ու յետ դարձաւ դէպի իր սենեակը:

Միւս օրը համաձայն նահանգապետի հրամանին նա ուղևորւեց Թուրքանիս, որտեղից պէտք է գնար Պերճաւան:

(Շարունակելի)

ԽՈՐՀՐԴԱԽՈՐ ԳԻԾԵՐ

ՀԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Լուսինը վերև հանդարտ սահում է
Յաւիտենական իւր ուղին բըռնած,
Եւ նորան ուրախ ճանապարհում է
Ամպերի մի խումբ՝ չորս կողմը պատած։
Ամպերը սիրով զըզւում են լուսնին
Եւ գլխի շուրջը պըսուցտ են դալիս,
Ամուր ճըպում են նորա երեսին
Եւ փայփայում են, և համբոյր տալիս։
Բայց երբ լուսինը սարի մօտ կանգնեց
Եւ, մնաք բարեաւ ասելով խըմբին,
Լերան գազաթից իրան վայր նետեց,—
Թախիժը տիրեց ուղեկիցներին։
Եւ նոքա տըրտում նորից ետ դարձան,
Հանդցրին ճրագներն երկնի երեսից,
Սըգաւորների սև ըզգեստ հագան
Եւ հեկեկացին սըրտի խորքերից։
Նոցա վըշտիցը տարածւեց խաւար,
Նոցա ողբիցը զըղըրդաց աշխարհ,
Նոցա յորդահոս արտասուքներից
Գետեր վազեցին սարերի գլխից։

ՏԳԻՏՈՒԹԵԱՆ ԶՈՅԵՐ

Վէպ գիւղական կեանքից

Ա. ԱԴԵԼԵԱՆԻ

(Շարունակութիւն) ¹⁾

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Դ. ԴԼՈՒԽ

Համբարձումը տուն հասաւ բոլորովին ջարդւած և ուժասպառ զրութեան մէջ: Տան սանդուղքներով նա կնոջ և եղբօր օգնութեամբ միայն կարողացաւ բարձրանալ: Սենեակ մտնելուն պէս նա անկողին պահանջեց: Վառվառը, որը ամուսնու անակնկալ և անմըխիթար վերադարձը տեսնելով՝ վշտակալւած էր և հազիւ էր կարողանում պահել իւր լացը, իսկոյն փափուկ անկողին պատրաստեց, պառկեցրեց ամուսնուն և գնաց ջուր տաքացնելու: Մի քանի րոպէից յետոյ նա կրկին ներս եկաւ, չոքեց մարդու կողքին ու սկսեց իւր հարց ու փորձը:

— Է՛, թնչու ախր էդ օրն ես ընկել:

— Ես գիտեմ, պատասխանեց հիւանդը նւազ ձայնով:

— Մըսէ՛լ ես, թէ ուրիշ տեղից ես գտել էդ հիւանդութիւնը:

— Ես գիտեմ, երևի էս էլ մեր բախտիցն է: Զի գալիս, չի

¹⁾ Տե՛ս «Մուրճ» 1896 թ. № 5, 6, 7—8 և 9:

գալիս, էլի: Լաւ տեղ էի մտել, ձեզ գրել էի դրա մասին, քան մանէթով: Ամսեկան 17 մանէթ փող էի յետ գցում: Հիւանդացոյ, ամեն ինչ կիսատ մնաց:

— Երեւի հին հիւանդութիւնդ էնտեղ շարժւել է, դու էլ քեզ լաւ չես պահել ու հոգես ես դառել: Դէ 17 մանէթ որ յետ էիր գցում, պա քո կերածը էլ ի՞նչ էր. երեք մանէթ:

— Երեք մանէթ քիչ է...

— Պա քիչ չէ, ի՞նչ է, մէջ մոտա Գալուստը, — քաղաքումը ամսեկան երեք մանէթ որ ծախսես, միայն ցամաք հաց պիտի ուտես:

— Ասա հէնց բան չի կերել և էդ պատճառով էս օրն է ընկել էլի, վրա բերեց Վառվառը արտասուելով:

— Իհարկէ, կարող է պատահել, խօսաց կրկին Գալուստը. ինքը նազ մարդ, Բալասանու նման անպիտան տեղում, կարգին կերակուրից զուրկ մնացած և ցամաք հացով կառավարւած. պա էդ օրը չի՞ ընկնիլ:

Համբարձումը փոքր ինչ լուռ մնաց և ապա աչքերը առաստաղին գցած՝ լուրջ և խորհրդաւոր եղանակով ասաց.

— Էէհ, մեծ-մեծ խօսում էք, ծախսը քիչ է եղել... Պա ստացածս խօմ սաղ չէի ուտելու:

— Ստացածդ սաղ մի ուտիր, ասաց Վառվառը նստատիկքով և փոքր ինչ զայրացած, բայց քեզ էլ մի զրկիր: Դու հէնց առջուց ջանիդ արժէքը չես իմացել և քեզ միշտ զրկել ես, որ հիմա էդ օրին ես հասել: Թաւրիդ զնացիր, եթէ համբերութիւն ունենայիր և լաւ բժշկէիր, հիմա մեզ սգի մէջ չէիր պահիլ:

Վառվառը կրկին արտասուեց և դուրս գնաց սենեակից: Սինդի ազգականներից մի քանի տղամարդիկ և կանայք եկան Համբարձումի տեսութեանը: Ամենքն էլ զարմացան, սարսափեցին և մի վատ բան զգացին Համբարձումի մեռելացին դէմքը տեսնելով: Նրա աչտերի ոսկրները դուրս էին ցլւած, երեսի կաշու տակ սաես արիւն չէր խաղում, քիթը սրւած էր և աչքերը խոր ընկած: Ամենքը գալիս, խէթ-խէթ նայում էին նորեկի վրա և զարմանքով հարցնում. «Էս ի՞նչու է հսպէս դառել», յետոյ նստում էին և լուռ ու մունջ Համբարձումի երեսին նայում:

Վառվառը բերաւ պղնձէ մեծ լւացալանը և ապա կաթսայի

մէջ տաք ջուր: Համբարձումը եղբօր օղնութեամբ բարձրացաւ սեղից, մօտեցաւ լացարանին ու նստեց յտոակի վրա դարսած բարձերի վրա: Եկած տիկիներէից մէկը ջուր ածեց, իսկ Վառվառը լացաւ մարդու գլուխը: Ո'րքան կեղտ կար նրա գլխին: Դորանից յետոյ Վառվառը կրկին տաք ջուր բերաւ և այս անգամ լացաւ Համբարձումի ոտները: Ո'րքան բարակել էին այդ ոտները. մնացել էր ոսկորն ու մորթին: Վառվառը իւր գոգնոցով սրբեց ոտները, շալով փաթաթեց մարդու գլուխը և նրան պառկեցնելով անկողնում, հասո վերմակով ծածկեց: Դորանից յետոյ Վառվառը թէյ բերաւ և ամենքն էլ սկսեցին թէյ խմել:

Ընթրիքից յետոյ, երբ այցելուները գնացել էին, Համբարձումի ընտանիքը սլառկեց քնելու: Վառվառը երկար ժամանակ նստած էր հիւանդի գլխատակին. սառը փաթեթ էր նրա ճակատին: Երբ հիւանդը վերջապէս ննջեց, ինքն էլ անկողին մտաւ:

Կարձ ժամանակից յետոյ, Համբարձումը իրեն այցելող մի երկու կնոջ բերանից լսեց այն ամենի մասին, ինչ որ գիւղում խօսւում էր Գալուստի նշանւելու առիթով: Համբարձումը սրտումը նեղացաւ եղբօր վրա, որ կանանց համար խօսակցութեան առարկայ էր դարձել, և զարմացաւ, որ նա մի անխոհեմ քայլ էր արել. նա ինչպէս է համարձակւել առանց մեծ եղբօր խորհուրդի, առանց նրա կամքն իմանալու, աղջիկ հաւանել և խօսք տալ:

Այդ միտքը սկսեց անհանգստացնել Համբարձումին: Նա երկար չկարողացաւ համբերել, և ահա մի օր Գալուստի բացակայութեամբ կնոջ մօտ խօսք բաց արաւ այդ հարցի առիթով:

— Լսել եմ, որ Գալուստը նշանւում է և իր համար հարսնացու է հաւանել. ճիշդ է էդ, հարցրեց Համբարձումը լի ահրամարանքով:

— Ո՞ւմնից լսեցիր, ասաց Վառվառը ծիծաղերես:

— Քեզ ինչ, լսել եմ:

— Ասուած տանի մեր կանանց. բերաններումը խոմ ջուր չի տաքանալ, շնորհ էին վռազ:

— Ուրեմն ուղիղ է, ասաց Համբարձումը լրջութեամբ և ունեքը կիտելով: Հիմա դու էլ ուրախ ես դրանով, էլի՞:

— Է, պա ինչու չեմ ուրախ լինիլ. մեր եղբայրն է, նշան-

ւելու ժամանակն է, ինքը իր համար հիմիկանից նշանած է ջոկել: Խօմ լմց չեմ լինելու:

— Պրծան, զննց: Աչքս լոյս. ուրեմն դու էլ Գալուստի կտորիցն ես, և ո՞վ դիտէ, քո մատն էլ զբանում խառն է:

— Ձէ, մեղայ Աստուծոյ եթէ իմ մատը զբանում խառն լինի: Լսեցի, որ Գալուստ եղբայրը Մկրտչի աղջկանը սիրել է, ուղում է տանի: Ասացի զէ ինչ կայ որ. աշջիկը լաւ աղջիկ, տղան սիրում է, թող տանի:

— Ծաղիկս, ծաղիկս, ընդհատեց Համբարցումը նախատինքով և ծաղրադին, շատ խելօք ես խօսում: Բաւական չի, որ էդ բանը թողել ես լինի, հիմա էլ չես ամաշում, պատմում ես: Պա իսկի լլիններովդ չէր անցնում, թէ տեսնենք սրա մեծ եղբայրը էդ բանը ընդունելու է: Դու գիտես, որ հարսնացուն մենք էլ պիտի հաւանենք: Խօմ տղի կամքովը չի. տղան ինչ է հասկանում: Գուցէ նա հէնց զնալու է մի աղքատի կամ թուրքի աղջիկ տանի, ես պիտի ասեմ, լնաւ, տանի: Գալուստը իրա գլուխը քարոյն է տւել, որ էդպիսի յիմարութիւն է արել, և չի սպասել, որ ես դամ: Ամօթ նրա համար, որ ինքն է առաջ ընկել: Նա կնքան պիտի սպասէր, որ ես ասէի. Գալուստ, քեզ պիտի նշանեմ: Յետոյ նրա համար մի աղջիկ կը հաւանէի և հարսանիք կ'անէինք: Մկրտչի աղջկայ համար ես նշան չեմ տանի: Գալուստը ինչպէս որ խօսք է տւել, էնպէս էլ իր խօսքը չեա վերցնի: Գալուստի համար հարսնացու ես վաղուց եմ ընտրել և աղջկայ տիրոջ հետ գործը վերջացրել...

— Ո՞վ է էդ:

— Յետոյ կ'իմանաս:

— Լաւ, պա Սաթենիկը խեղճ չի: Պա Գալուստը էլ ինչպէս թողնի նրան: Գուցէ քո հաւանած աղջկան նա չսիրեց:

— Որ նրա կամքին թողնենք, իհարկէ չի սիրիլ: Նրա խելքը ոչինչ չի կորում:

— Էհ, լաւ բան չի լինիլ, ասաց Վառվառը գլուխը շարժելով:

— Ձեր արածը հէնց շատ լաւ բան է: Ո՞վ է մեղաւորը, ո՞վ գոչեց Համբարձումը բարկացած, ո՞վ ինչ անի. ինչպէս բրդել էք էնպէս էլ կերէք:

— Լաւ, դէ ասա տեսնեմ, ընտրած հարսնացուդ ո՞վ է:

— Շատիւ աղջիկը:

— Ա՛հ ուր, ուր տարեկան աղջիկը հարսնութիւն անող է: Էն երեխան մեզ համար ի՞նչ պիտի անի ախր:

— Կը մեծանայ, կ'անի: Զորս տարուց յետոյ կարգին հարս կը դառնայ:

— Հալա չորս հինգ տարի Գալուստ եղբայրը սպասի՞:

— Էլ ինչու է սպասում. հիմա կը նշանենք, կը պսակենք ու կը բերենք տուն:

— Էս պսակեցիր, բերիր, որ Գալուստ եղբօր համար կնու-
թիւն չի անելու:

— Մի հինգ վեց տարի էլ թող սպասի: Պա էն ճիշտ, որ էդ աղջկայ վրա տուն և հող կայ: Էդ ձեզ համար ոչինչ, հա՛ւա:

— Ասա հէնց հողերի համար ես նրան հաւանել էլի:

— Էդ ձեզ համար ոչինչ բան է:

— Գալուստ եղբայրն է խեղճ. կեանքը կը մաշի, հարսը տա-
նես դնես տանդ և վեց եօթ տարի սպասես: Պա դա մեղք բան չի:

— Ո՞վ որ զոչաղ տղայ է, ո՞վ որ աշխատանքի յետեւից վաղող է և կոպէկը նրա համար մանէթի տեղ է դնում, նա տասը տարի էլ կը սպասի. պա աչքներս բաց բաց, թողնենք Շատիւ ժառանգի ապրանքը ուրիշները տանեն ուտէ՛ն: Ես հալա Բաքու գնալուց Շատիւ կնոջը տեսայ, զրա մասին խօսացի. ասաց ուրախութեամբ աղջիկս ձեզ կը տամ: Միայն աղջկայ հօրեղբայրը, որ ապեկոն (որբի խնամատար) է, մի քիչ չեմ չեմ էր անում: Բայց նրա փորացաւը ես գիտեմ և ճարն էլ հեշտ է. մի հատ քսանհինգանոց նրան կը տանք, էն ժամանակ ամեն ինչ գլուխ կը գայ:

— Դ՛հա գիտես, բայց ես Գալուստ եղբօրն էլ եմ խղճում, Մկրտչի աղջկանն էլ: Անխիղճ բան դուրս կը դայ, եթէ դու դրանց գործը քանդես: Պա Ասուած վեր կ'առնի, որ տղան խօսք տայ, սաղ գիւղում էդ բանը հրապարակի և հիմա Գալուստը իր խօս-
քից յետ կ'անդնի: Ասուած էգպիտի բան չի ընդունիլ:

— Շատ... է կերել, որ խօսք է աւել: Դրա համար ես ապ-
րանքաւոր աղջկան պիտի բաց թողնեմ: Կամ թէ Մկրտչի աղջիկը ինչ բան է ախր. մի քիչ գեղեցիկ է, պրծաւ, զնանց. մի համար-

ձակ աղջիկ է. ում հետ, ասես, խօսում է: Հայրը ինչ ունի, որ զնի վրան մարդու տայ:

—Քանի որ կենդանի եմ, մտածում եր Համբարձումը, ես ինքս իմ ձեռքով էդ բանը կը վերջացնեմ. իմ մեռնելուց յետոյ էն աղջկանը գուցէ իսկի չտան եղբօրս: Ափսոս են նրա կալածները. չէ որ էդ բոլորի գախօղները (եկամուտները) իմ որդիքն էլ են ուտելու: Մկրտչի աղջկայ մասին իսկի չեմ մտածում: Ինչ լինում է լինի, բայց ես ապրանքաւոր աղջիկ չեմ բաց թողնիլ ձեռքիցս. փառք Աստծոյ, հալա խելքս չեմ կորցրել: Մեղաւորը աղջկայ ծղողներն են. պա նրանք չեն հասկացել, որ մինչև մեծ եղբօր կամքը չհարցնէին, չիմանան, աղին խօսք չեն տալ: Շան որդիք, վրան աղջիկ կապելու տղա էք զտել, հմա: Ես հալա չեմ մեռել, որ թողնեմ...:

Ձեմ իմանում, բայց էդ անխղճմտանքութիւն է, կրկնեց Վառվառը:

Այդ րոպէին ներս մտաւ Գալուստը, և ամուսինները վերջ տւին իրենց խօսակցութեանը: Համբարձումը շարունակում էր իւր մտածմունքները եղբօր նշանելու գործի վերաբերմամբ: Պիւղ վերադառնալով՝ նա իր մէջ վճռել էր Ծառիի աղջկանը նշանել իւր եղբօր համար: Աղջկատիրոջ կողմից միամիտ լինելով, նա որոշել էր բարեկենդանին կատարել թէ նշանադրութիւնը և թէ պսակը: Բայց աչժմ, Վառվառի հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ, Համբարձումը գալիս էր այն եզրակացութեանը, որ այդ գործը այլ ևս չի կարելի յետաձգել նախ այն պատճառով, որ Մկրտչի աղջկայ հարցը երկարանալով կարող է բարդանալ և ֆլաս բերել գործին: Կարեօր էր շուտ մեռցնել այդ հարցը: Բացի դրան Համբարձումը հիւանդ է, այն էլ վտանգաւոր հիւանդ: Աշունքը դեռ նոր է սկսում. մինչև բարեկենդան հրքան ժամանակ կայ... Ա՛յլ զիտէ ինչ կարող է պատահել. սաղ մնաց, սաղ չմնաց:

—Գալուստ, խօսեց յանկարծ Համբարձումը այդ մտքերի ազդեցութեան տակ, լսել եմ, որ մեր հարեան Մկրտչին խօսք ես տւել, թէ նրա աղջկանը տանելու ես, և սաղ պիւղը, ասում են, քեզ վրա է խօսում: Եղպիսի յիմարութիւն չանես, մտքիցդ ամեն ինչ հանիր: Եթէ լսեցի, որ Մկրտչի տանը երեւացել ես, ոտդ կը կոտրեմ և չեմ թողնիլ էս տունը մօնես: Քեզ նշանելու եմ և

շուտով պատկեմ. բայց դրա համար կարգ կանոն կայ: Քո դիտի գնացել ես աղջիկ հաւանքի: Պա մենք հիմքեր ենք. ուրեմն մենք հիմք:

Գալուստը միայն կարմրեց և ոչինչ չպատասխանեց:

Ե. ԴԼ.

Մի քանի օրից յետոյ Համբարձումը պատուիրեց կնոջը, որ նա իրանց ազգականներից մի քանիսին առաջիկայ շաբաթ երեկոյեան հրաւիրէ իրենց տուն՝ Գալուստի նշանադրութեան հարցի համար խորհրդակցելու:

—Ասենք զալու են զուր տեղից հացներս ուտեն և չայներս խմեն, աւելացրեց Համբարձումը. բայց դէ ինչ արած, բարեկամ են, կը նեղանան. կասեն տղայ նշանեցին առանց մեր մասլահաթի:

Վառվառը յանձն առաւ կատարել տմեն ինչ և շաբաթ օրը առաւտոտեան իւր մեծ որդուն ուղարկեց ազգականների մօտ՝ այդ բանի մասին նրանց իմաց տալու:

Դրանից մի օր առաջ, երբ Գալուստը արդէն գիտէր եղբոր մտադրութիւնը և զգում էր, որ այդ ամենից վերին աստիճանի անախորժ, ախուր և ցաւալի հետեանքներ են առաջանալու, կանչեց իր մօտ մի առանձին տեղ Վառվառին և ասաց.

—Հարս, ի սէր Աստուծոյ, յոյսս քեզ վրա է: Ես եղբօրս մտքինը գիտեմ ինչ է. նա ուզում է Մատիի աղջիկը ինձ համար նշանի, որովհետեւ վրան հող և տուն կայ: Բայց դէ ախր առաջինը՝ Ծատին ինչ մարդ է եղել, որ ես նրա աղջիկը տանեմ, երկրորդ՝ ես էն ութ տարեկան երեխային տանեմ ինչ տնեմ. ախր նա ինձ համար երեսուցի տեղ կը տայ: Գեղեցկութիւնը ասես, մի բան չի: Եղ էլ մի կողմ դրած. պա ես սրանից յետոյ Սաթենիկին ինչպէս թողնեմ. ախր ես նրանց խօսք եմ տուել: Պա ես խեղճ չեմ. հիւզում էք սաղ կեանքս սեւացնէք: Ինձ գոռեցիք, ես էլ ռարայ Մատիի աղջկան: Պա ես կը վայելեմ. չեմ վայելիլ, քանի որ սիրտս ու աչքս միշտ Սաթենիկի վրան է մնալու: Գալուստը ընկղմեց մտառանջութեան մէջ և դէմքը թախծալի կերպարանք ստացաւ:

—Եղբայր, հիմ կուզի, որ դու մի էգպիտի օրի արժանանաս. Աստուծ չանի: Դու գիտես, որ ես առաջուց էլ ասել եմ. ում սի-

բռնում ես, ում որ սիրտդ կը կաշի, նրան տար: Խօսմ' կինը ինձ համար չի լինելու, քեզ համար է: Ուրեմն ինչ աղջկաց որ հաւանում ես, նրան էլ տար: Ես ուրիշների նման պատճառ չեմ դառնալ, որ յետոյ գերեզմանս հայհոյեն: Սաթենիկը իմ ուղած աղջիկն է և Ծափի աղջկանից տասնապատիկ լաւ: Ութ տարեկան աղջկան տունենք, որ քեզ համար էլ ցաւ լինի, մեզ համար էլ: Էն ժամանակ ես նրան երեխի նման պիտի պահեմ...

— Եղբայրս էդպիսի բաներ միտք չի անում: Նա հէնց ասում է՝ հող, տուն կաց վրան, լաւ աղջիկ է, պիտի տանենք անպատճառ: Եդ բանը մեծ ցաւ է դառնել ինձ համար: Գու, հարս, ի սէր Աստուծոյ, էն իրիկուն, որ աղջիկ պիտի հաւանեն, ասա, թէ չեմ ուզում Ծափի աղջկան, ասա՝ Սաթենիկին ևս էլ եմ հաւանել, իսկ Ծափի աղջկանը չեմ ուզում, որ իմ տագրակիւնը լինի:

— Կ'ասեմ, կ'ասեմ, միամիտ կաց. եղբայրդ հէնց հիմիկանից իմ մտքինը գիտէ:

— Եդ բանը դու Համբարձում ապօրը շարունակ ասա, որ գուդէ համոզւի, թէ չէ ես էլ կ'ամբախտանամ, Սաթենիկն էլ, և վերջը խաչատուակութիւն կը լինի:

— Ի հարկէ ինչ ասել կ'ուզի, որ դա խղճի մօտիկ բան չի. աղջիկ սիրես, խօսք տաս, յետոյ եղբօր կամքով թողնես:

Այդ խօսակցութեան հետեւեալ օրը, շաբաթ երեկոյեան, Համբարձումի սենեակը սովորականից աւելի մաքուր էր, լուսաւորած և ամեն բան իւր տեղում: Համբարձումը նստած էր իւր անկողնում՝ մետաքսէ ջեջիմերես վերմակը ուսերին զգած. նա խորասուզւած էր իւր սովորական մտքերի աշխարհը: Գալուստը նստած էր ձեռքօր հանդէս: Նա դիտարկում էր Համբարձումի մեծ որդու ուսերէն դասագիրքը, որ տղան մոռացմամբ թողել էր դռնի վրայ: Երկու փոքրիկ երեխաներ նստել էին Գալուստի մօտ և նոյնպէս լուրթեամբ դիտում էին գրքի թերթերը: Նրանք ժամանակ ժամանակ միայն բացականչութիւններ էին անում, մի քանի թերթերից յետոյ յանկարծ մի նոր պատկեր նկատելով: Վաւառը զբաղւած էր խոհանոցով: Պատուհանում արդէն կանգնած էր հեշտանուր և հիւրերին էր սպասում: Այդ փայլուն ու գրաւիչ պղինձը, որ այժմ զիւղերում իւր բոլոր պարազաններով թէ աղքատի և թէ

հարուստի զլխաւոր պահանջներից մէկն է դարձել, հնչում, օրօր-
ւում էր իւր կանգնած տեղը: Նրա ծածկոցի կորիկ անցքով շատր-
ւանի նման կատաղաբար դուրս էր ցայտում ամպանման զոլորշին:
Նրեխաները երբեմն դուրս էին գնում ու կրկին գալիս: Ամենքն էլ
սպասողական դուլթեան մէջ էին: Սպասում էին հիւրերին:

Վերջապէս հիւրերը մէկ-մէկ եկան: Նրանք նստեցին պատի
տակերով դորգերի երեսից զցած դռնակներին վրա, որ ջատկապէս
պատրաստւած էր նրանց համար: Նրբ ամենքը եկան, տանտիկինը
թէյ պատրաստեց և մատուցարանը ձեռքին հիւրերին մօտենալով
ամենքին էլ թէյ բաժանեց: Այնուհետ նա բերաւ շաքարամանը և
կրկին անցնելով հիւրերին շաքար բաժանեց: Ամենքն էլ գիտէին,
թէ իրանք ինչ բանի համար են հրաւիրւած, բայց սպասում էին
տանտիրոջ խօսքին: Առաջժամ նրանք Համբարձումի առողջութեան
մատին էին հարցնում:

—Հիմա ինչպէս ես, Համբարձում, ասաց սրա մօրաքրոջ որդի
Սամսոնը, որ Համբարձումից տարիքով մեծ էր. իսկի լաւութիւն
զգում ես, թէ հէնց միևնոյնն է:

—Զէ, Սամսոն ապեր, լաւութիւն չեմ զգում, քանի գնում,
թուլանում, ոյժից ընկնում եմ. ոտներումս էլ հալ չի մնացել: Վաչ
էն, որ կարողանում եմ մի կողքից միւս կողքի շրջել կամ վերկե-
նալ տեղումս նստել:

—Ծնոտներով տակին վէրքերը ինչպէս են:

—Շատ վատ. եմ ցաւն ու չարդը էդ վէրքերն են. շատ վտան-
գաւոր է. բժիշկն էլ էր ասում: Հիմա սաստիկ թարախ է դուրս
գալիս և վատ հոտ է դուրս փչում: Քանի գնում, ջանս վա-
րակում է. տառջ միայն աջ ծնոտիս տակն էր վէրքը և
մի հոտ էր, հիմա երկուսն է դառել և ձախ ծնոտիս տակն
էլ մէկը դուրս է գալիս: Գարծես կամաց-կամաց ծակւում է
դէպի բողազս: Ինչպէս լաւանամ. ոչ դեղ կաջ, ոչ բժիշկ: Հիւան-
դութիւնը ինքն ու ինքը կը լաւանայ:

—Ախորժակդ ո՞նց է: Ելի հէնց ուտելը կը տանի:

—Ախորժակս էլ վատ է. քիչ եմ ուտում. ինչ որ բերում են,
դուր չի գալիս:

Իսկ հիւրերից ոմանք իրանց մէջ փափսում էին. շատ մաշուել

է. էլ երեսին նայել չի լինում, հնքան այլակերպել է, ոսկորները դուրս ցցւած, քիթը սրւած, աչքերը խոր ընկած ու գոյնը սևացած: Շատ ապրել չի կարող Համբարձումը. հոգ վերքերը նրան շուտ կը սպանեն: Բողազը ծածկւելու է: Հիմա ներսը սաղ փթածի նման կը լինի:

Երբ թէյը վերջացաւ, Համբարձումը բաց արաւ ասելիքը.

— Դուք իմ բարեկամներն էք և ես ձեզ խորհրդի եմ կանչել, այսպէս սկսեց Համբարձումը, վերմակի ծալքերը ուսերը քաշելով. դուք էլ զիտէք, որ Գալուստի պսակւելու ժամանակը սովորականից անցել է: Դրա պատճառը էն է, որ ես ուրիշ-ուրիշ նպատակների չետեիցն էի ընկել: Բայց հիմա, որ ես թշնամու սրտով եմ եղել— հարստութիւնս ձեռքիցս դուրս եկած, հայրս մեռած, ինքս էլ էս հալին, համարեա մերձիմահ, ուղում եմ եղբօրս պսակեմ, պարտքիցս պրծնեմ. յետոյ կը մեռնեմ, ինչ արած: Հայրս զրա հարսանիքին չարժանացաւ, ես քանի կենդանի եմ, իմ ձեռքով վերջացնեմ էդ գործը:

— Շատ լաւ կը լինի, շատ լաւ, պա ի՛նչ է, Գալուստի ժամանակը ի հարկէ անցել է. քանի կենդանի ես, դու քո պարտքը վերջացուր: Փորձանք է, կարող է պատահել. ի՛նչու դու էլ զրկես եղբօրդ հարսանիքից:

Այս ամենը թէև միաժամանակ, բայց զանազան անձանց բերաններից լսեց և կազմեց ձայների մի կատարեալ խառնուշտիթ:

— Էդ բանը ես իմ մէջ վճռել եմ անելու. փառք Աստծոյ, որ դուք էլ հաւանութիւն էք տալիս: Հիմա ձեզ կանչել եմ, որ մեզ համար հարսնացու հաւանենք: Կանչել եմ, որ յետոյ չասէք, թէ մեզ բարեկամի տեղ չդրեց, մեղանից խորհուրդ չհարցրեց:

— Ի՞նչու, ի՛նչու պիտի ասենք, շատ շնորհակալ ենք: Քէֆը ձերն է. ինչ աղջիկ որ հաւանել էք, էն էլ նշանեցէք:

— Ես մի աղջիկ եմ միայն հաւանել, ասաց Համբարձումը մեծ ծախորհուրդ եղանակով. հոգ աղջկայ վրա մի քանի տարի է, որ աչք եմ տնկել: Դա Յատիի աղջիկը՝ Նոյզարն է: Իմ տան համար, իմ եղբօր համար դրանից լաւ հարսնացու ես չեմ գտնում էս գիւղում: Դուք էլ հաւանում էք, թէ չէ: Ասացէք, առաջ ձեր խօսքը լսենք, յետոյ էլ Գալուստի կամքը կ'իմանանք:

Համբարձումը լռեց և պատասխանի էր սպասում: Հիւրերի ոմանց երեսները փայլեցին ժպիտով: Դա հետաքրքրութեան յագեցման պահանջի արտայայտութիւն էր:

—Շատ լաւ է, Աստուած շնորհաւոր անի, դրանից լաւ հարսնացու ճրտեղից էք զտնելու, վրան հող, տուն-տեղ:

—Պա փոքր չէ, զարմանքով հարցրեց կանանցից մէկը, ութ տարեկան աղջիկը ի՞նչ հարսնութիւն պիտի անի:

—Ի՞նչ, բանդ կտուրի, խօսաց մի ուրիշ կին, ինչ կայ որ... Հաւատա քիչերն են ութ-տասը տարեկան մարդու զնում: Ես ութ տարեկան չէի, որ ինձ տարան:

—Հիմա դու էլ կարծում ես, թէ քո ծնողները շատ լաւ են արել, որ քեզ ութ տարեկան մարդու են տւել. այ հողը նրանց զլխին, որ հողի տակին են հիմա...

—Եւ հօ, մեծ ցաւ դառաւ, որ աղջիկը ութ տարեկան է, վրա բերեց Սամսոնը ծաղրելով. կը բերենք տուն, հստեղ կը մեծանայ և մի քանի տարուց յետոյ կը լինի կարգին հարս, կարգին կնիկ:

—Ի հարկէ, էդ լաւ է, ասաց Համբարձումը, քանի որ աղջկանը ուրիշը չի ուզել, մենք կ'ուզենք կը տանենք: Թողնենք հալա մեծանայ: Յետոյ ճիլ գլտէ ճւմ կը տան, ձեռքներիցս դուրս կը գալ:

—Թող Համբարձումի ասածը լինի, ձայնակցեց կանանցից մի ուրիշը. նշանենք, մնայ, մի քանի տարուց յետոյ կը տանենք:

—Ես չեմ ասում մնայ, ես էլ եմ ասում տանենք. էդքան չիմար չեմ, որ աղջիկ նշանեմ ու պահեմ, աւելացրեց Համբարձումը. զուգէ յետոյ աղջկատիրոջ միտքը փոխւեց. էն ժամանակ ես ի՞նչ անեմ. ձեռքերս մնայ ծոցումս. էն ժամանակ պիտի նստեմ ախ ու վախ անեմ: Աղջիկը նշանեցիր, իսկոյն տար, որ ոչ մի մնաց չստանաս:

—Շատ լաւ է ասում Համբարձումը, մէջ մտաւ կրկին Սամսոնը, որ լռութեամբ հետեւում էր խօսակցութեանը. հէնց էգուտս էլ հարկաւոր է—Ծառիի աղջկանը նշանեցէք, վրան լաւ ապրանք կայ, և աղջկանը պսակեցէք բերէք տուն: Ապրանքաւոր աղջկայ տիրոջ հետ որքան որ գործը շուտ վերջացնես, էնքան քեզ օգուտ է: Պսակեցէք, բերէք տուն, ժամանակով, ի՞նչ կայ որ, կը մեծանայ և կարգին հարս կը դառնայ:

—Լաւ, Համբարձում, առաց հիւրերից մէկը, որ մինչ այդ լուռ էր և ուշադրութեամբ լսում էր խօսակցութիւնը, լաւ, աղջկաորի-
րոջ կամքը իմանցել էք. աղջկանը տալիս են:

—Մօր միտքը մեզ վրա է, բայց հօրեղբայրը չեմ-չեմ է անում:

—Դէ նրա չեմ-չեմին էլ մի ճար կ'անուի, ասաց Սամսոնը ծի-
ծաղերես, էդ հեշտ բան է. հօրեղբորը շատ հարկաւորն է թէ
Նոյզառը ունի տուն կը դնայ. նրանք էն է, որ էդ աղջկաց նշանե-
լովը մի բան ինքը կարողանայ ուտել: Գրիգորը մի խորամանկն է
որ...

—Էդ ոչինչ, ասաց Համբարձումը, նրան կարող ենք համոզել
Հիմա, Գալուստ, դու ինչ ես ասում: Էդ աղջկանը հումմնում ես,
թէ չէ: Դէ ասի նա քո կիներն է լինելու, ինչքան որ չլինի, քո
կամքն էլ պիտի հարցնենք:

Գալուստը ոչինչ չէր պատասխանում և գլուխը կախ գցած
նստած էր իւր տեղը:

—Հը', դէ ասա լսենք, թէ սրտինդ ինչ է, կրկնեց մեծ եղ-
բայրը:

—Ես էդ աղջկաց վրա իսկի աչք չեմ ունեցել, պատասխանեց
Գալուստը կարմրելով և շարունակելով գլուխը քաշ պահել:

—Պա ում ես ուզում տանել:

Գալուստը այս անգամ կրկին լռեց և յետոյ, կարծես խոտվածի
ու վիրաւորւածի նման, յանկարծ պատասխանեց.

—Մկրտչի աղջկանը, Սաթենիկին, իմ աչքը նրա վրան է:

—Մկրտչի աղջկաց անունը հալա մի տալ, կոպտութեամբ պա-
տասխանեց Համբարձումը, թէ ուրիշը ունես, էն ասա:

—Ուրիշը չունիմ:

—Որ էդպէս է, իզուր ես խօսում: Դու ինձանից ջահել ես,
խելքդ չի կտրում, օգուտդ ո՞րն է. ասա ինձ, որ Մկրտչի աղջկանն
ես ուզում տանել. ասի օգուտդ ո՞րն է: Ասենք Սաթենիկը Նոյզա-
ռից ղեղեցիկ է, բայց ասի մեզ ինչ օգուտ էդ ղեղեցկութիւնից:
Ջահիլը երկար չի կարողանում մտածել. մի աղջկաց տեսաւ, աչքը
կպաւ, դէ, պիտի նշանենք, նրանք էդքանն է. էլ մի քիչ երկար
միտք անել չկայ, որ տեսնէ, թէ էդ աղջկանից մի օգուտ գալիս է
դէպի տուն: Տանում է, պրծնում, յետոյ փոշմանում, փոշմանում

Որ ԲՆԻ. ախր իզուր ես խօսում: Հալա Նոյզառի վրա բուռականին ապրանք կայ: էդ նրա առաւելութիւնը: Սաթենիկի առաւելութիւնը քրն է: Թէ հողն ու ապրանքը քեզ համար ոչինչ է:

— Ի՞նչու է ոչինչ, ոչինչ չէ, բայց դէ...

— Բայց դէ ԲՆԻ. ասան, ասան, բայց դէ ԲՆԻ:

— Ես Սաթենիկին եմ սիրում:

Գալուստի մտքով անցաւ յայտնելու և այն, որ ինքը երկար ժամանակ յաճախել էր Սաթենիկին տուն, աղջկայ հետ քաղցր ժամեր էր անցկացրել. բայց նա ամաչեց ներկայ գտնւողների առաջ բաց անելու իւր զաղտնիքները. նա, ինչպէս և ամենքը արեւելքում, այդպիսի դործերում ծածկամիտ էր: Նա ամօթանք էր համարում սրտի զգացմունքները պարզութեամբ և անկեղծութեամբ արտայայտելու, չնայած որ առանց դրան էլ թէ տանեցիք և թէ ուրիշները շատ բան էին լսել Գալուստի և Սաթենիկի յարաբերութիւնների մասին:

— Դու հիմա Սաթենիկին ես սիրում, ասաց Համբարձումը, բայց Նոյզառն էլ մի քանի տարուց յետոյ որ մեծ աղջիկ դառաւ, էն ժամանակ նրան էլ կը սիրես: Ե: միշտ էդպէս է լինում: Միայն էստեղ օգուտիդ համար պիտի մի քանի տարի համբերութիւն ունենաս: Դէ էդ էլ մարդու ձեռքին չի. ինչպէս ուզի, էնպէս էլ դործը կը տանի:

— Գալուստ, զուր ես Համբարձումին էդքան խօսցնում ու նրա սիրտը նեղացնում, ասաց Սամսոնը խրատական եղանակով. հիւանդ մարդ է, նրան էլ ախր պիտի խղճաս. Շատիի աղջկանը դու եթէ նշանես, գիտես եղբօրդ համար հրքան թեթեւութիւն կը լինի: Բաղի դրան մենք էս ամենքս միասին խօսք մընա՞յ չենք ուղեւոր. մենք կուզենք, որ դու բախտաւոր լինես, մեր բարեկամն ես: Ամեն մարդ հիմա որքան կարողանում է, էստեղից-էստեղից, սրանից նրանից դէպի տուն է քարշ տալիս: Հիմա մի կարգին ապրանքաւոր աղջիկ կայ. ո՞վ գիտէ քանի մարդ է աչք տնկել նրա վրա: Փառք Աստծոյ, որ աղջկայ մօր ու հօրեղբօր միտքներն է իրանց զաւակին ձեզ տալու, իսկ դու չես ուզում տանել: Անխեղքութիւն է էդ: Ուրեմն դու հալա շատ ջանել ես, շատ բան չես հասկանում:

—Դու պիտի միտք անես, խօսաց կրկին Համբարձումը, թէ եղբայրս հիւանդ է, էլ աշխատել չի կարողանալու, որ բերի տունը լցնի: Մի միտք չես անում, թէ էս ընտանիքը, չեռոյց քո երեխաներն էլ են գալու, ինչով պիտի պահես: Սրանք մեր բարեկամներն են, դրանց առաջ ծածուկ չի, թող ասեմ. քո օտարութիւն գնալը մեզ համար փնաս է եղել: Եթէ ես իմանայի, թէ դու օտարութեան մէջ ոչինչ չես շինելու, քեզ էստեղ կը պահէի և ես էնքան չէի չարչարւիլ: Դու քո գնալովը մի բան չես առել բերել զցել էս տունը, որ ասեմ, հա, էս էլ եղբօրս աշխատածն է: Ամենքը գիտեն, որ մեր տւած շորաֆը և մեր հիմիկւան ունեցածի մեծ մասը, որով մենք կարող ենք շատ ուրիշներից էլ լաւ ապրել, միայն ես եմ ձեռքս զցել պարտքի տեղ: Պա գրանք ոչինչ: Ես պէս է, Էսպէս չի:

—Եղպէս է, Էղպէս է, ով չի իմանում էդ, ձայնակցեցին բարեկամները, զլուխներով համաձայնութեան նշան անելով:

—Հիմա դու, աչ... անխիղճ ասեմ, թէ անխելք, պա չիս ուզում մի բան էլ դու էս տունը զցես, որ ասեմ էս էլ քո աշխատանքն է:

—Համբարձում, փառք Աստծոյ, որ աղջկաոտիրոջ հետ գործը դու ինքդ համարեա թէ վերջացրել ես, մի առանձին գովասանքով ասաց Սամսոնը. ուրեմն գործի զժւար կողմը կատարել ես և հիմա մնում է հեշտը: Գալուստ, աւելացրեց նա ծիծաղելով, էդ էլ քո գործն է: Թէ ղոչաղ ես, էնպէս արա, որ եղբայրդ էլ ուրախ լինի, մենք էլ ուրախ լինենք և բարեկամներիդ զլուխը քաշ չմնայ:

Գալուստը լուռ էր և ոչինչ չէր պատասխանում: Ինչպէս փրփրադէղ ալիքներին մատնւած մի անդէկ մակոյցի, որին միայն սպասում է ծովի անորոշ ու անչափ հեռուն, նա օրօրում էր ալեկոծ ու տատանող մտքերի զշիւում: Ձգիտէր ինչ պատասխանէր: Մերժել բոլորի խնդիրը, այդ նրա ոյժից վեր էր. մանաւանդ որ եղբօր և Սամսոնի ամբողջ խօսակցութիւնը ազդել էր նրա վրա և գէպի նրանց էր թեքել իրան: Թողնել Սաթենիկին, բայց դա նրա համար իւր ամբողջ կեանքում բարոյական տանջանքների աղբիւր կը դառնար: Գալուստը երեւակայում էր այդ ամենը և զարհուրում: Ի՞նչ անել: Եւ նա տանջւում էր այդ ծանր ու մինչև յուսահատութիւն հասցնող հարցի տակ:

Այդ բոլորին բերան բաց արաւ Վառվառը, և Գալուստը նրա խօսածից կարծես փոքր ինչ հոգեկան թեթեւութիւն զգաց: Այդ կիկնը, Գալուստի միակ մտերիմը և կարեկիցը մինչև այդ՝ ընդհանուր խօսակցութեանը չէր մասնակցում, պահպանելով տղամարդկանց առաջ դիւզական կնոջ յատուկ համեստութիւնը: Նա նոյն հարցի մասին խօսում էր կանանց հետ և այն՝ միայն իրանց համար լսելի ձայնով: Տեսնելով Գալուստի անեղանկի դրութիւնը, նա բարձրացրեց իւր ձայնը և ասաց.

— Լաւ, պա Գալուստը խնդճ չի. նա էն աղջկանը ախր խօսք է տւել, պա իր խօսքը ինչպէս յետ վեր առնի: Ախր սիրաւ Սաթենիկին է կպչել, պա էլ ուրիշին ինչպէս տանի:

— Եթէ Գալուստը, առաջին, իսկապէս էն աղջկանը խօսք է տւել, կրկին կոչո ու կոպիտ եղանակով պատասխանեց Համբարձումը, էդ նրա կողմից յիմարութիւն է, ուղղակի էշութիւն է, որ իր գլխի բան է բռնել: Երկրորդ՝ որ խօսք է տւել, ուրեմն ամեն ինչ վերջացել է: Ե՞դ ինչ է նշանակում:

— Տնաշէն, խօսաց կանանցից մէկը, որը Վառվառի հետ այդ հարցում հակառակուում էր շատերի հետ միասին իրանց մասնաւոր խօսակցութեան ժամանակ, — Եթէ մեզ մօտ և թէ ուրիշ տեղերում տղան մի քանի անգամ աղջիկ է նշանում, նշանում է՞ն, հասկանում ես, բայց յետոյ յետ է տալիս և վերջը ուրիշին տանում: Բայց մենք, փառք Աստուծոյ, Սաթենիկին իսկի խօսմ չենք նշանել. էլ ինչ դժարութիւն կայ էդտեղ: Որ Գալուստը սխալւել, խօսք է տւել, ուրեմն մեր գլխին քա՞ր է ընկել պրծել:

— Անխիղճ բան էք բռնում, որ էդ տղին զօռում էք, շարունակեց Վառվառը, էդ մէկ. երկրորդ՝ էդ կնիկը Գալուստին չէ կընկոթիւն անելու. Գալուստն էլ որին ուզում է, նրան էլ տանում է:

— Հարսը մենակ նրա համար չի, Վառվառ, ասաց կանանց մէջ ամենահասակաւորը, դու սխալ ես խօսում. հարսը փեսացուի ուզածն էլ պիտի լինի, մե՛ր սրտի ուզածն էլ: Թէ չէ դու գնացիր մի յիտնեալ աղքատի աղջիկ տարար, ինձ համար դա ինչ մտիթարութիւն:

— Խօսում է էլի, ասաց Համբարձումը. խօսում են, առանց

երկար մտածելու: Ել երկարացնելը աւելորդ է. մէկ էլ նորից չենք սկսելու խօսակցութիւններս:

— Ես իսկի չեմ ուզում, որ իմ տագրակիներ Նոյզառը լինի:

— Դու մի՛ ուզիր, կտրակի և կոշտ կերպով պատասխանեց Համբարձումը, բայց մենք էսքան մարդիկ ուզում ենք: Եղ ոչինչ քեզ համար:

— Ախր Ծառին ինչ մարդ էր, որ նրա աղջկը ինչ լինի. օ՜վ գիտէ, հօր նման չիմար ու գիծ դուրս դաց:

— Հօր հետ մենք գործ չունինք. նա մեռել գնացել է:

— Ի՞նչու գործ չունէք. նրա աղջկը չի. գիծ ու անխելք հարսի հետ գլուխ դնելը հեշտ բան է ձեզ համար:

— Եթէ էս բանում մի մեղք կայ, թող բոլորը իմ վրա թափւի, թող բալէքս կոտորւն, հասկացար, գուցե Համբարձումը բարկացած:

— Շատ մի լաւ գործ ես բռնում, բալէքն էլ կոտորում ես. երախաներիդ հետ ինչ գործ ունես:

— Ե՛ր, էգույնս բաներ մի խօսաք, մէջ մտաւ Սամսոնը, ամօթ է:

— Ախր ինչ անեմ, զուր տեղից մարդու տակին կրակ են դնում:

Ամենքն էլ լռեցին: Դա նշան էր, որ հարցը վճռեց յօգուտ Համբարձումի:

— Դէ որ էդ գործի մեղքը վրձներդ էք առնում, զօռեցէք էդ տղին, ասաց Վառվառը յուզւած և վիրաւորւած ձայնով ու վերկացաւ տեղից:

Քիչ յետոյ նա ընթրիք բերաւ և հիւրերը սեղանի նստեցին: Ընթրիքի ընթացքում երկար բարեմաղթութիւններ էին անում, ասելով.

— Համբարձում, Ասուած քեզ առողջութիւն տայ ու էս գործը քո ու մեր սրտովն անի: Գալուստ, քո միտքն էլ դէպի լաւը փոխւի, որ եղբայրդ քեզանով ուրախանայ, մենք էլ պարծենանք: Որդի, դու որ միշտ մեծին հնազանդւես, յետոյ չես փոշմանի:

— Դէ ապրես, շատ լաւ ես արել. խելօքութիւնն էլ հէնց էդ է. պա էս անգամ էլ ինչու ես հակառակում:

Գալուստը ոչինչ չէր պատասխանում: Անվճռականութիւնը

նրան ենթարկել էր ծանր մտատանջութեան: Եւ այդ ամենը ասես լեռ քար լինէր, որ ճնշում էր նրա կուրծքը:

Ընթրիքից քիչ յետոյ հիւրերը շնորհակալութիւն յայտնեցին և զուրա գնացին:

Դրսում խաւար էր տիրում, բայց գնացողներից ոչ ոքի մօտ լապտեր չկար: Եթէ մէկը այդ պահուն ծածուկ կերպով հետեւէր Համբարձումի բարեկամներին, նրանցից կը լսէր հետեւեալ կամացուկ խօսակցութիւնը.

—Տէսաք. էդքան էլ ազահութիւն կը լինի. եղբօրը սիրտը կոտրում է, թէ ինչ է, Ծատիի աղջկայ վրա ապրանք կայ:

—Մէկը լինի նրան ասի, թէ ախր, Համբարձում, զու հիւանդ մարդ ես, էս օր կաս, վաղը չեա լինիլ. ինչու ես խառնւում էդ պիսի գործի մէջ և մեղքի տակ մոնում: Տղա է, ում ուզում է, թող տանի, մանաւանդ որ կնկանդ մոքինն էլ էն աղջիկն է:

—Այ, ինչու էք էդպէս խօսում. հա իր օգուտը խօսմ բանց չի թողնելու:

—Ութ տարեկան աղջկան տալիս է 30 տարեկան տղամարդուն: Պա դա ամօթանք չի, ծիծաղալի չի:

—Լաւ, տեսնե՞ք տէրտէրը կը պսակի:

—Ինչու չի պսակիլ. միթէ էլ չի պսակել. տէրտէրին ինչ. նրանը փողն է:

Զ. ԳԼ.

Սաթենիկի հայրը՝ մի խաղաղ անձն էր գիւղում: Եթէ գիւղացիներից հարցնէիր, թէ նա ինչպիսի մարդ է, կը պատասխանէին.

—Վատ չէ, խեղճ մարդ է, էլի:

Գիւղացոց հասկացողութեամբ նա խեղճ էր այն պատճառով, որ անվնաս մարդ էր: Թէ իւր համագիւղացիների և թէ հարեանների հետ նա աշխատում էր սիրով ու խաղաղ ապրում: Զար գործերից միշտ հեռու կը կենար Մկրտիչը: Հաշիւների մէջ արդարամիտ էր: Իւր կեանքում դեռ ոչ ոքի հետ չէր կռւել: Ամենի հետ նա աշխատում էր յարմարել: Բանեւորները այդ գիւղում ամենից շատ Մկրտիչին էին բաւական, որովհետեւ նա նրանց հետ շատ խղճմտանքով էր վարւում, նրանց մի կողմէն էլ չէր կտրում և լաւ

պատուում էր: Մկրտիչը ներքուստ միայն ասում էր այն մարդկանց, որոնք չար որոգացթեւեր էին լարում ուրիշների դէմ՝ իրանց անձնական շահերի համար:

Մկրտիչի կիներ իւր ամուսնու հետ անհատական այն բոլոր հարցերում, որոնք նրանց հասկացողութիւնից և առօրեայ կեանքի պահանջներից զուրա չէին, համատիպ էր: Հարեանական կեանքում Մարգարիտը նոյնպէս վարւող էր: Նա իւր բնաւորութեան մի կողմով միայն տարբերւում էր ամուսնուց. մինչդեռ Մկրտիչը ընդհանրապէս տանող, համբերող և ներողամիտ մարդ էր, Մարգարիտը, ընդհակառակը՝ մարդկանց չարութիւնների առաջ շուտով յուզւող, բարկացող և կռւող էր: Ասենք մի կնոջ հետ նա սիրով բարեկամ է. բայց երբ նա նկատեց այդ կնոջ կողմից մի որ և է անազնիւ գործ իւր դէմ, խաբեբայութիւն, կեղծիք, հարեանական օգնութեան փոխարէնը երբեք չվերագարձնելու բնաւորութիւն, այն ժամանակ Մարգարիտը կը կռւէր, կը հայհոյէր, բարեկամի բոլոր թերութիւնները երեսին կ'ասէր ու երկար ժամանակով կը կտրէր նրա հետ իւր յարաբերութիւնը:

Մի քանի զաւակներ ունէին Մկրտիչն ու Մարգարիտը: Անդրանիկը Սաթենիկն էր, որը արդէն մի հասունացած և զեղեցկադէմ աղջիկ էր: Հօր և մօր բնաւորութիւնները միացած և արմատացած էին այդ աղջկայ մէջ. նա հեղ էր և բարի, խղճմտանքով էր և ինքնասէր: Զարգացած ինքնասիրութիւնն ու խղճմտանքն էր պատճառը, որ Սաթենիկը հեզութեան հետ միասին երբեմն զիտէր հարեանական և ընկերական ընդհարումներ սարքել, ընկերուհիների կամ հարեանուհիների կողմից մի որ և է անազնիւ վարմունք տեսնելով:

Սաթենիկը կանանց շրջանում համարւում էր «համարձակ, ազատ», «առաջ աղջիկ»: Գեղեցիկահոյ վերաբերմամբ այդ ամենը արժանաւոր չափութիւններ չէին համարւում:

— Պա աղջկանը վայել է էդքան համարձակութիւնն, ասում էին կանայք մի առանձին զգուանքով և ատելութեամբ:

Բոլորովին մի ուրիշ բան էր Մատին, որը մեռել էր դեռ իւր անդրանիկ որդու՝ Նոյզառի մէկ տարեկան հասակում: Մատին մի տարօրինակ ծնունդ էր դէմքով, թէ խելքով, թէ գործերով և թէ

լեզուով: Ահա նա կանգնած է ձեր առաջ. կարճահասակ, լայնաթիկունք, ոտները կարճ, բունը երկար և զլուխը մեծ. երեսը տափակ, քիթը նոցնպէս. մազերը կոշտ ու ցից-ցից կանգնած. մէկ ունքը բարձր, իսկ միւսը կախ ընկած, և զոցա տակից նայող խոշոր, բայց խկացի արտայայտութիւնից զուրկ աչքեր: Մատիի ամբողջ դէմքը չիմարի տպաւորութիւն էր թողնում: Նա շարժում էր զանդաղ և օրօրելով. Գլխարկ-կարտուղը միշտ դէպի ձախ ականջի կողմը ծռած՝ ապուշ հայեացքով նա դէս ու դէն էր գնում: Բովանդակելի արտայայտութիւնից զուրկ մի ժպիտ խաղում էր նրա երեսին: Այդ ժպիտը հեռեանք էր այն հանգամանքի, որ զիւղացիք շարունակ կատակներ էին անում Մատիի գլխին ու կուշտ-կսւշտ ծիծաղում: Մատին ինքն էլ կը ծիծաղէր այդ կատակներից և միեւնոյն ժամանակ իրան յատուկ լեզուով կը հայհոյէր: Պատանի տղայքն անգամ ծաղրում էին Մատիին, նրա ներկայութեամբ ցոյց տալով այդ այլանդակ արարածի գլխարկ դնելու ձևը, քայլաձեքը և պատմում էին կեանքից շատ ծիծաղալի դէպքեր: Գիւղացոց այդպիսի վերաբերմունքի հետեանքն էր, որ Մատին մարդամէջ դուրս գալուց և սրան-նրան նայելուց ինքնաբերաբար ժպտում էր. նրան այնպէս էր թւում, թէ իւր զիմացի մարդը արդէն պատրաստ է կատակ անելու, իրաւ ծաղրելու, և նա կանխօրէն ժպտում էր:

Մատին իր տարօրինակ լեզուով մի հատ էր ամբողջ գիւղում: Նա դեռ մանկական հասակում սաստիկ թոթովախօս էր: Յետոյ, երբ նա արդէն հասունացաւ, թոթովախօսութիւնը ուղղւելու փոխարէն աւելի ևս բարդւեց և Մատին իր համար գիւղացոց բառբառից դուրս մի այլ բառբառ ստեղծեց: «Նս շեմ ուզում ուտել». Մատին կասէր. «անա իսի օղի չիմ օտու լա»: Նս սոված եմ. «անա իսի թօթածա»: Անպիտանը ելաւ ծառը. «անա քօփօլի վիլալա ծածառը»:

«Անա» խօսքը, որ ոչ մի միտք չունէր, Մատին յաճախ գործ էր ածում շատ բառերի հետ: Գիւղացիներից շատերը նրան դժուարութեամբ էին հասկանում:

Միծաղելի էին Մատիի կեանքի արկածները: Պատմում էին հետեւեալը.

Մի անգամ բարիկենդանին գիւղի ջահէլները վճռեցին Մա-

տիի գլխին մի խաղ խաղալ: Ծառիին տեսնելուն պէս վրա չարձակեցին և սկսեցին նրան հարւածել: Ծառիի գլխարկը վայր ընկաւ, օձիքը քիչ պատուեց և նա լանա քօփոլի ինձի թակիվիի, շանա տղա եանա դռալով՝ դուրս պրծաւ ջահէնների ձեռքից: Քիչ անցած՝ Ծառին կրկին մօտեցաւ և պահանջեց իւր գլխարկը:

— Ծառի, ասաց երիտասարդներից մէկը, գլխարկդ կը տանք, միամիտ կաց, բաց դու հալա լսիր, էստեղ մի բան կայ: Տղերք, ով կարող է էն սատկած ուրուրը վերցնել և տանել կապել էն եղան պոչին:

Հրապարակում նստա՛ էին մի քանի եղներ, իսկ նրանցից մի քիչ հեռու ընկած էր մի սպանւած ուրուր:

Ոչ ոք չէր խօսում:

— Էն մեծ եղան պոչին պիտի կապել հնա, աւելացրեց երիտասարդը:

— Ձեք կարող, վախենում ենք, եղը կը խփէ, ասացին ջահէները միաբերան, խաբելով Ծառիին:

— Ձք կարող, վախենում էք. ամօթ ձեզ համար. էլ ինչ ջահէներ էք դուք. Ծառիի չափ էլ չկաք. եթէ նա ուզի, էս բո պէին էդ բանը կ'անի: Ան, Ծառի, մի շուտ արա սրանց ամաչացրու եէ:

— Օղի չիմ:

— Ի՞նչու չես ուզում, ինչ կայ որ:

— Գէ անա իմի փափախս տօ:

Գլխարկը իրան աւին և Ծառին մօտեցաւ ուրուրին: Ամեն կողմից գոչում էին, ծաղրելով.

— Հոյ, հոյ, Ծառին վախենում է, վախենում է...

Իսկ Ծառին այդ ամենից աւելի սիրտ էր առնում, քաջաբերում էր և աշխատում էր ցոյց տալ իւր համարձակութիւնն ու անվախութիւնը: Ահա նա անվահերութեամբ բռնեց ուրուրի թևից, քաշ տւեց հակայ և մեծ-մեծ պողաւոր եղանը, մօտեցրեց և զգուշութեամբ կապեց պոչից:

— Գէ հիմա եղանը վերկացրու, գոչում էին տղերքը, խփիվ վեր կենաց:

Ծառին աքացիով մի քանի անգամ հարւածեց եղան ազդերին:

և հսկայ կենդանին հանդարտութեամբ ու դժարութեամբ վեր կացաւ տեղից: Մատին կանգնած էր տեղը և յաղթական ձայնով ծիծաղում էր:

—Հը', հը', անա իսի կապալըմ, հը':

Եզը զգաց, որ պոչից ինչ որ է մի ծանր բան կայ կախած: Յետ նայեց, տեսաւ ուրուրին և խրտնեց: Եզը կատաղեց: Մատին ուրախ էր և բարձր-բարձր խնդում էր: Բայց յանկարծ եզը իւր պոզերի բերանն առաւ նրան և ուժգին հարւածով գետնին խփեց: Ճշաց Մատին, վայ-վայ գոչեց, երեխայի նման լաց եղաւ և սկսեց էլի ծիծաղել:

—Հը', հը', անա իսի կապալըմ, հը', ասում էր նա հպարտութեամբ:

Ուրուրը եզան պոչից չէր պոկւում, և խեղճ կենդանին զբւարձի պէս դէս-դէն էր վազում: Գիւղից դուրս եկաւ եզը և այգիները տանող ճանապարհով գնաց: Մի մեծ առու եկաւ նրա առաջը, ցատկեց առուով, եկաւ մի ցանկապատ. ցանկապատովն էլ անցաւ եզը և վերջապէս հասաւ մի պատի գլուխը: Ուրուրը կրկին աչքին ընկաւ և եզը նորից կատաղեց. ցած թռաւ պատից և կոտրեց իւր առաջին ոտը: Կանգնեց խեղճ կենդանին ոտի ցաւից. քիչ յետոյ նստեց տեղը և սկսեց որոճ անել:

Եզան տէրը եկաւ գտաւ նրան, պոչից բաժանեց ուրուրը, քշեց բերաւ գոմն արաւ և զիւղամէջ գալով զանգատեց տանուտէրին: Տանուտէրը մօտ կանչեց հրապարակում գոմնող բոլոր ջահէններին, որոնց թւումն էր և Մատին, ու հարցրեց.

—Ո՞վ է էս մարդու եզան պոչին ուրուր կապողը:

Մատին կարծեւով թէ իւր քաջագործութիւնը գովելու և վարձատրելու համար է հարցնում, բոլոր ուժով գոչեց.

—Իսի, մէալիք, իսի կապալըմ, հա, հա, հա, հա...

Բայց նրա ծիծաղը տանուտէրի հասցրած ապտակից յանկարծ ընդհատեց:

—Շուն շանորդի, գոչեց տանուտէրը, էլ ծչին չէր մնացել, որ անկն, յիմար, իշիգլուխ: Հանիր էս մարդու վնասը, մի ոռութի է, առը: Շո՛ւտ:

—Վայ, վայ, վայ, երախայի նման լաց լինելով գոռում էր

Մատին անա քոփոլի Ներսէս ասալա, կապիվի, իսի կապալըմ,
 ճւճճճճ:

—Ձոռ, ցաւ, հանիր մանէթը:

—Եալ արիվիւիմ, (էլ չեմ անի) մէալիք, ծնուվիւիմ (չունեմ):

—Ձունես, զնա մէկից ան, բեր, էս սհաթին:

Քիչ անցած Մատին մի ուռբլի գտաւ, բերեց տուգանքը վճարեց և քրքջալով թողեց հրապարակը:

Աւելի մեծ և զգալի փնաս էր կրել Մատին հետեւեալ դէպքի պատճառով. նա մի կթան կով ունէր, որ շատ խրտնոզ էր և հրող Մատին յաճախ իւր հարեաններից խորհուրդ էր հարցնում կովի բնաւորութիւնը ուղղելու համար: Հարեանները ամեն անգամ պատասխանում էին—դրան ուղղել չի կարելի. մորթիր, տհալ տուր, կեր: Հարցը այդպէս էլ մնում էր, որ մի անգամ մէկը, Մատի խելքը թափ տալու և նրա յիմարութիւնը փորձելու համար, ասաց.

—Մատի, եկ կովը դցիր գոմը, դռները ամուր փակիր, ինքդ էլ մի դափ վերցրու և թակիր: Անպատճառ կովը իր խասիաթը վեր կը դնի:

Այդ խորհուրդը, որով հարեանը ակնյայտին կերպով ծաղրում էր Մատիին, մտաւ նրա գլուխը: Մատին շտապով վազեց գուռնալի Մարկոսի մօտ, առաւ նրա թմբուկը, եկաւ մտաւ գոմը, յետեից փակեց դուռը և սկսեց թմբկահարել:

Կովը թմբուկի ձայնից խրտնեց և սկսեց դէս ու դէն վազել: Փախչելու տեղ չկար, դուռը փակ էր: Խեղճ կենդանին գժւածի պէս պատերին էր կաշում, ստոյտներ էր գործում անկիւններում, մօտենում էր դռանը, աշխատում էր բաց անել, բայց չէր յաջողում: Ելի փախչում էր խեղճ կենդանին, պատն ի վեր էր կանգնում, ելի ստոյտներ էր գործում անկիւններում և կրկին մօտենում դռանը:

Իսկ Մատին հարւածում և հարւածում էր թմբուկը, գոչելով.

—Հը՛ր՛, հը՛, անա ալ, խրտնի չիս, հը՛ր:

Կովը չկարողացաւ ալլ ևս ղիմանալ. նա իւր ամբողջ ոյժը ժողովեց և ուժգնութեամբ մի ալնպիսի հարւած տուեց դռանը, որ դուռը վայր ընկաւ: Խեղճ կենդանին աղաւաղեց վերջապէս այդ տարտարոսից ու փախաւ: Փախչում էր կովը առանց դէս ու դէն նայելու: Թմբուկի ձայնը դեռ դմբդմբում էր նրա ականջներում: Փա-

խաւ կովը, բաւականին հեռացաւ գիւղից, գնաց սարերն ընկաւ և յանկարծ մի քարափից ցած գլորւելով՝ մնաց տեղն ու տեղը: Տաւարածը Մատիի խնդրանօք մի քանի օրից յետոյ գտաւ կովի լէշը և կաշին քերթելով՝ տուն բերաւ:

Մատին այդ ամէնը երեսայական միամտութեամբ պատմում էր և լսողների հետ միասին ծիծաղում:

Տարօրինակ երևոյթ էր այն, որ Մատին 30 տարեկան տղամարդ լինելով, չգիտէր թւերի համարանքը: Այդ պատճառով գիւղացիներից անբարեխիղճ մարդիկ հաշիւների մէջ յաճախ խաբում էին նրան: Դոցա թւում հետաքրքիր էր այն զէպքը, երբ 12 տարեկան մի տղայ, հասկանալով Մատիի կատարեալ անընդունակութիւնը թւաբանութեան մէջ, խաբել էր նրան:

Աշնան ժամանակն էր: Յիշեալ տղան մի տեղ ընկուզենու ծառի տակ ընկոյզ է եղել ժողովում: Նրան պատահում է Մատին և տղայի ցանկութեան հակառակ ընկերանում նրա հետ: Միասին ընկոյզ են ժողովում և, գալով մի տեղ, սկսում են բաժանել: Որովհետեւ Մատին հաշիւ չգիտէր, բաժանելու պաշտօնը ստանձնում է տղան: Մէկ-մէկ մինչև 50 համարելով, տղան ընկոյզները գրպանն է դնում: Այնուհետ Մատիի բաժինն էլ է համարում, բաց այսպէս. Մէկ, երկու, հինգ, ութ, տասը և այլն, այնպէս որ Մատին իւրաքանչիւր 50 ընկոյզի տեղ ամեն անգամ ստանում է 20 կամ դրանից պակաս ընկոյզ: Բոլոր ընկոյզները բաժանելուց յետոյ տղան ստանում է ընդամենը 200 ընկոյզ, իսկ Մատին մօտ 100:

Երեխան տուն գալով, պատմում է իւր արած ճարպիկութեան մասին ծնողներին: Մածաղելի զէպքը շուտով հրապարակ է ընկնում և հասնում է Մատիի ականջին:

—Անա, քոփոլի, Սարգիս, դու ինձի խաբալի, հմն, շննս տղնց. տղային հանդիպելով և փողոցում յետևիցն է ընկնում բռնելու և ծեծելու: Երախտան փախչում և գնում է իւր բանին:

Իսկ Մատին գլուխը քորելով ասում է:

—Անա քոփոլի շէս բազաթի:

Այսպիսի ծիծաղալի արկածներ շատ կային Մատիի կեանքում և դրանք պարզ կերպով ապացուցանում էին նրա վերին աստիճանի յիմարութիւնը:

Նրա բնաւորութեան մէջ մի գիծ էլ կար, որ դարձեալ յիմարութեան հետեանք կարելի էր համարել: Մէկից մի բանի համար վրէժ առնելու նպատակով Մատին կը գնար նրա այգին և գաղտնի կերպով կը կտրէր խաղողի որթեր կամ ջուր կ'անէր բամբակի արտի վրա. այդպիսով բամբակը կը դեղնացնէր ու մեծ փնաս կ'տար արտատիրոջը և կամ կովի, եզան, հորթի ու ձիու պոչ կը կտրէր:

Զնայած որ այդ ամենի համար նա իւր պատիժը ստանում էր, բայց և այնպէս Մատին իւր բնաւորութեան կողմը՝ երեխայական չարութիւնը չէր թողնում:

Մատին ունէր մի եղբայր, Գրիգոր անունով, որը իւր բնաւորութեամբ, կազմաւածքով և դէմքի գծադրութեամբ ամենեւին չէր նմանում մեծ եղբորը:

Գրիգորը նման էր իւր հօրը, որը մի խելացի և աշխատասէր մարդ էր: Այդ հանգամանքը առիթ էր տալիս շատերին կարծելու, որ Մատին իւր հօրիցը չէ, այլ ապօրինի զաւակ է. հասակաւոր մարդիկ մինչև անգամ պնդում էին այդ:

Գրիգորը բաժանւել էր եղբորիցը, տեսնելով նրա յիմարութիւնները և դրանից առաջացած փնասները: Այժմ նա էլ ամուսնացած էր և ունէր երկու որդի: Գրիգորը չորսադներին էր. ժամանակի հոգին լաւ հասկանալով, նա գլուխը քաշ, սուս ու փուս, մըջիւնի նման անընդհատ դէպի տուն էր կրում: Ինքն էր ու ինքը, ուրիշների հետ զործ չուներ. շատ հարկաւորն էր մի՞թէ, որ մէկը մի բանում կարօտ է, միւսը քաղցած է, երրորդը օգնութիւն է աղերսում, չորրորդը անդունդի խորքից իւր ձեռքը մեկնում և լալագին ձայնով ազատութիւն պաղատում. աւելորդ բաներ են. զոչաղ են—խաբիր, սուտ ասա, ոյժ արա, գողացիր, կեղծաւորութիւն արա և տունդ լցրու: Հարեանս ինչ բան է, հիւրասիրելը կամ հիւր գնալը ինչ բան է. դրանք բոլորն էլ դատարկ սովորութիւններ են: Աշխատիր, տակդ պնդացրու, կ'ասեմ տղայ ես:

Եւ Գրիգորը, ինչպէս գիւղացիք էին ասում, իւր համար արդէն մի փոքրիկ գումար էր կազմել և սկսել էր տոկոսով փող տալ:

Մատին մեռաւ 30 տարեկան հասակում, շնորհիւ իւր յիմարութեան: Աչնան ցուրտ ժամանակներն էր: Մի անգամ Մատին մի ձի նստած գնում էր դէպի գիւղի ներքեւի հանդը: Զին պառաւ

էր և մի աչքը կոյր: Գետի խորխուրէ կամուրջով անցնելիս, յանկարծ ձիու յետին ոտները խրեցին կամուրջի մէջ: Փոխանակ գրաստից զգուշութեամբ իջնելու և ձիուն կարեոր օգնութիւն հասցնելու, Մատին, ընդհակառակը, առաջ նստեց և ամբողջ ոյժով սկսեց վայր հրել ձիու պարանոցը, կարծելով թէ այդպիսով ձիու յետին ոտները կը բարձրանան խրած տեղից: Մինչ այս, մինչ այն, բաց ձին ազատելու ճիգ անելուց կոյր աչքի կողմից մօտեցաւ կամուրջի ափին և յանկարծ Մատիի հետ միասին գլորեց գետը: Երկուսն էլ ազատեցին: Մատին բոլորովին թրջած էր և սաստիկ դողում էր: Երբ նա գիւղական հրապարակը հասաւ, ամենքը զարմանքով գոչեցին, սա ինչ է պատահել, ընկել է գետը: Մատին երախայակման միամտութեամբ պատմեց իւր գործ դրած իմաստութիւնը և տուն գնաց: Հէնց այդ եղաւ. Մատին այդ օրից անկողին մտաւ և այլ ևս վեր չկացաւ: Ինչպէս երեաց, նա սաստիկ մրսել էր և թոքերի բորբոքումից մեռել:

Մատիի ժառանգը մնաց Նոյզառը, որը մի տարեկան աղջիկ էր: Նոյզառի մայրը՝ Սիմին, որը մի թեթեամիտ և վարքով ընկած կին էր, ուրախացել էր իւր ամուսնու մահով: Նա, որ քանիցս անգամ անհաւատարիմ էր գտնւել դէպի իւր մարդը, նրա մահւանից անմիջապէս յետոյ աղջկայ համար փեսացու էր որոնում, ասելով.

—Հոգս էնպէս մարդու գլխի, որ մեռաւ: Հիմա կ'ասեն նա էլ մարդու շարքում էր, էլի... Աղջիկս մարդու կը տամ, ես էլ փեսիս մօտը կ'ապրեմ: Փեսաս մարդուցս էլ լաւ կը պահի ինձ:

—Ախր ջահիլ ես, Սիմի, պա մարդու չես գնալու, հարցնում էին հարեան կանայք ծիծաղելով:

—Ո՞վ է ինձ ուղողը: Ուզեն էլ, չեմ գնալ: Էսպէս ազատ աւելի լաւ է. ինչ որ քէֆս ուզի, կ'անեմ:

—Գետինը մոնես, Սիմի, աչ մեռած, պա կնիկը էդպէս բաներ կը խօսի...

—Ի՞նչու չի խօսիլ, հէնց տղամարդը պիտի լինի, որ ամեն տեսակ բաներ անի: Որբւայրի կնիկ եմ. հա շատ ամուրի տղամարդիկ:

—Վճուռ, քոռանաս աղջի, հերիք է, դրան էլ մի խօսցնէք. Բիլ գիտէ էլ ինչեր կը խօսի...

Սիմին մի առանձին ինքնաբաւականութեամբ ծիծաղելով այն-
քան կանգնում էր տեղը, որ իւր դէմ կանգնած կանայք ամօթից
թողնում էին նրան և հեռանում:

Ծառի մահաւանից յետոյ նրա ազդականները ժողովեցին և
որբի համար խնամակալ ընտրեցին: Գրիգորը դարձաւ այդ խնա-
մակալը, որը այդ բանից շատ ուրախ էր. եղբօր հողերը, թէև ժա-
մանակաւորապէս, բայց իւր ձեռքն անցաւ: Գրիգորը դրանից կա-
րող էր դէպ իրան քաշել այնքան, որքան նրա ակորժակը ցան-
կանար: Ձնայած որ նա այստեղ-այնտեղ երբեմն ասում էր.

— Ինչպէս կարելի է, ակսր որբ է. որբի ապրանքը արդարու-
թեամբ պիտի պահպանէ: Բայց նրա ներքին ձայնն ու համոզ-
մունքը միշտ միեւնոյն բանն էին պնդում. ուրիշի ապրանքը ձեռքդ
է ընկել, զոչադ ես՝ մի կողմից կտրիր, միւս կողմից գողացիր, մի
խօսքով տակդ չիր և վրան ամուր նստիր:

Գրիգորը հէնց առաջին տարւանից սկսել էր եղբօր կալած-
ների եկամուտների մեծ մասը իրան սեփականացնել: Գիւղացիք
տեսնում էին այդ և ասում.

— Շատ լաւ է անում, իր եղբօր ապրանքը չէ. ուրիշը չի
տանելու ուտի. հազիր Գրիգորը հիմիկանից կ'ուտի էլի:

Եօթ տարի էր, որ Գրիգորը վայելում էր որբի կալածների
արդիւնքը: Երբ Համբարձումը առաջարկութիւն արաւ Նոյզառի
համար, Գրիգորը պատասխանեց, թէ դեռ չի ուզում մարդու տալ:
Եւ այդ ոչ թէ նրա համար, որ աղջիկը անչափահաս էր, այլ նրա
համար, որ որբի կալածները դեռ մի քանի տարի էլ իւր ձեռքին
մնան: Բայց երբ Համբարձումը իւր ցաւի համար սկսեց արդէն յա-
ճախ նրան դիմել, այն ժամանակ Գրիգորը իւր մէջ վճռեց Համ-
բարձումից անպատճառ մի բան ուտել՝ կաշառք վերցնել:

— Քառասուն մանէթ պիտի պոկեմ նրանից և յետոյ եղբօրս
աղջկանը տամ Գալուստին:

(Շարունակելի)

ԳՐԶԻ ՀԱՆԱՔՆԵՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԺԱՏՈՒՐԵԱՆԻ

I

Թէ կեանքի խնջոյք հիւր զընաս ոտով,
Կ'ասեն. «Տեղ չըլանց»—և կ'անցնես մօտով.
Բայց թէ որ զընաս սեփական կառքով,
Յիմար էլ լինես... կ'ընդունեն փառքով...

II

Թուքը երբէք քեզ չի բերիլ մեծ վընաս,
Թէ կեանքի մէջ երկու երես ունենաս.
Մէկ երեսիդ ինչքան ածեն թուք ու մուր,
Միւսը կը մընայ միշտ մաքուր...

III

Ի՞նչ ճամբով հեշտ է միշտ լըցնել գորգան,
Հարուստն այդ ճամբէն լաւ է իմանում.—
Մէկին բաշխում է նա իւր հին գուլպան,
Իսկ հարիւր-մէկի շապիկն է հանում...

IV

Ուզում ես անուն, որ հասնի երկինք.
Խօսի՛ր բարձրաձայն, հանի՛ր մեծ աղմուկ.
Ճւ երբ պահանջեն քեզնից գործ, քըրտինք,
Կակորդիլոսի թափիր արտասուք!

Ով մեր մէջ լըռիկ քրտինք է թափում...
Բախտը նորան է չարաչար խաբում...

V

Ամեն ազգումն էլ—նվ չըզիտէ այդ—
Որ կան հարուստներ՝ յայտնի ու անյայտ.
Եւ նա է ազգում մեծ անուն հանում,
Ով մեծ ցաւերն է ազգի դարմանում:
Միայն մեզանում—զարմանալի բան—
Պատիւ է խնդրում ամեն լիք զըրպան,
Եւ կան հարուստներ՝ մեծ անուն հանած,
Բայց ազգի օգտին կորեկ չեն ցանած...

VI

Մեղքից փրկելու կայ հեշտ ճանապարհ,
Շատերն են կանգնած այդ ճանապարհում.—
Աջ ձեռքով նոքա քանդում են աշխարհ...
Ձախ ձեռքով ժամում մոմեր են վառում...

12—20 օգոստոսի 1896 թ.

Գուրզուֆ (Խրիմում):

ԲԱՔԻԱՅ ՆԱԽԹԱՅԻՆ ՇՐՋԱՆԸ

II

Անցեալ ս.միս մենք ներկայացրինք Մուրճուժ հում նաւթի արտադրութեան գործը իւր բոլոր մանրամասնութիւններով, պատասխանելով 14 կարեւորագոյն հարցերին: Այնտեղ պակասում էր մի շատ կարեւոր հարցի պատասխանը—վերաբերեալ ծառայող մարմին, գլխաւորապէս արհեստաւորներին և բանւորներին: Անցեալ տարւոյ հաշիւների մէջ նաւթագործների ժողովի խորհուրդը գէթ մի փոքրիկ զլուխ էր նւիրում այդ կարեւոր բաժնին: Ինչու փոքրիկ զլուխ էր լինում և ոչ մեծ—այդ հասկանալի է. նաւթագործների խորհրդի մէջ տեղ չկայ աշխատաւոր զասակարգի ներկայացուցիչների համար և ոչ էլ այդ զասակարգը ունի իւր սեփական „СЪБЗДЪ“-ը (Ժողով). իսկ բարձրագոյն կրթութիւն ստացած բոլոր «ինժեներները», «քիմիկոսները», «տեխնոլոգները» և այլ անուններով «ինտելիգէնտները», որոնք «կառավարում» են նաւթային Փիրմանների գործերը, դժբա մի տեսակ կաշառւած մարդիկ են, կաշառւած՝ ոսկու շլացումից, բարեկեցիկ ապրուստից և որ գլխաւորն է՝ հանքատէրերի բարեկամութիւնից, որ նոքա վայելում են մինչև այն րոպէն, մինչև որ նոքա բաւականին «խելօք» կը գտնւեն ոչ մի բան այդ մութ աշխարհից լոյս չհանելու համար. այդքան խելք ունի մահկանացուներից 1000-ից 999-ը, իսկ Բաքուում—ամեն մէկը, առանց բացառութեան. և այդ նմանաւանդ հասկանալի է, որ ուղին դէպի Բաքու բռնողը դեռ շատ առաջուց ոսկէ հորթին երկրպագութիւն է տալիս: Նաւթագործների ժողովի խորհուրդը, որ անցեալ տարիները դեռ մի-մի փոքրիկ զլուխներ էր նւիրում ծառայողներին և բանւորներին,

այս անգամ, 1895 թվականի հաշվետու թեան մէջ, 1 հատիկ էջ է զետեղել: Բայց նաւթագործների խորհուրդը, որը մեր առջև դնում է իւրաքանչիւր Ֆիրմայի ստացած միլլիոնները և հարիւրհազարները, բաւականանում է ծառայողների և բանւորների մասին պակասը լրացնել ահա թէ ինչ Ֆրագներով:

«Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հանքերի ծառայողների և բանւորների մասին տեղեկութիւնները, եթէ առաջնայ ծրագրով ժողովէին, նախկին տարիների տեղեկութիւնների գրեթէ կրկնութիւնը կը լինէին և ոչ մի նոր նիւթ չէին տալ խնդրի ուսումնասիրութեան համար, Ստատիստիկական բիւրօն վճռեց սկսել տեղեկութիւններ հաւաքել հաշվետարաւայ համար տւելի ընդարձակ ծրագրով, և այն՝ ոչ միայն հանքային, այլ և գործարանական շրջանի ծառայողների և բանւորների մասին: Սակայն ցաւալի է, որ այդ խնդրի մասին մանրամասն տեղեկութիւնները մինչ այժմ չաջողեց ստանալ շատ Ֆիրմաներից, և այդ պատճառով մենք, ներկայ հաշվետու թեան լոյս տեսնելը չետաձգելու համար՝ հրատարակում ենք առանց տեղեկութիւնների ծառայողների ու բանւորների մասին: Միմիայն վերջում մի ցուցակ ենք դնում, որը ցոյց է տալիս թէ հաշվետարում, ըստ Ֆիրմաների, որքան է ծանրանում մի փութ ստացւած նաւթի վրայ ծառայողների և մշտական բանւորների պահպանութիւնը»:

Լաւ նկատեցէք զցաւալի է՝ խօսքը. որովհետև բնաւ չենք կարծում թէ Բաբլի նաւթագործների բիւրօն կարողանայ անկեղծ կերպով զգուշել մի այդպիսի պակասութեան համար: Գործատէրերը չեն կամեցել ծառայողների և բանւորների մասին տեղեկութիւններ տալ, և յետոյ իրենք կամ իրենց բիւրօն ցաւ է յայտնում այդ մասին: Ծաղր չէ՞ այդ:

Անցնենք սակայն Բաբլի Սև քաղաք կոչւած մասը, որ սև նաւթից իւղեր պատրաստելու գործարանների կենդրոնատեղին է: Հում կամ սև նաւթը Բալախանուց ¹⁾ և Բիբի-Եյբաթից նաւթանցքնե-

¹⁾ Նկատենք որ Բալախանու անունով կոչւում են Բալախանու, Սաքունչու և Իսմանու նաւթային դաշտերը, որոնք իրար կպած են, մէկը միւսի շարունակութիւն ներկայացնելով. միայն Բիբի-Եյբաթն է որ զատ է Բալախանուց և գտնւում է քաղաքին մօտ:

բով անցէ կացւում Սև քաղաքը, որպէս յիշեցինք անցեալ անգամ: Նաւթագործարանական Ֆիրմաների թիւը: 1895 թ. կային նաւթից իւղեր պատրաստելու համար 112 Ֆիրմաներ, որոնք ունէին 128 գործարան, որոնցից 102-ը լուսաւորութեան իւղեր, այսինքն կերոսին, 18-ը մեքենաներ օծելու իւղեր, 6-ը՝ բենզինային և 2-ը ասֆալտա-գուղրոնային իւղեր պատրաստելու համար: Բայց յիշեալ 102-ից, որոնք կերոսինի համար էին, 1895 թ.-ին գործեցին միայն 61-ը, իսկ 41-ը չէին գործում: Գործած են համարւում նաև այն գործարանները, որոնք բանել են մի ամիս կամ նոյն իսկ մի քանի օր:

Ամբարներ Սեւ քաղաքում: Ամբարները Սև քաղաքում, որպէս և Բալախանում, երկաթից են, քարից՝ անծածք, քարից՝ ծածկւած, հողից՝ ծածկւած և անծածք: Սև քաղաքի այդ ամեն տեսակի ամբարների կամ ռեզերւուարների թիւն էր 1895 թ.-ին 1211 (որոնցից 961-ը երկաթից), որոնք կարող էին պարունակել 192.923.821 փութ նաւթ: Դոքա պատկանում էին գործարանատէրերին. բայց կային նաև ամբարներ, որոնք պատկանում էին նաւթանցքներին և արտահանողներին. դոքա թիւն էր 62 (որից 46-ը երկաթից), պարունակութեամբ 33.781.400 փութ: Ուրեմն բոլոր ամբարների թիւն էր 1273, պարունակութիւնը 226.705.221 փութ: Դոցանից 73-ը շինեցին 1895 թ.-ին:

Ո՛րքան կերոսին պատրաստեց: Անցեալ տարի լուսաւորութեան իւղերից պատրաստեց՝ մաքրած թեթև 82.202.100 փութ. ոչ մաքրած թեթև 4.126.400 փ., չմաքրած ծանր իւղ (сложное масло) 1.234.600. Ընդամէնը՝ 87.563.100 փութ: Դա աւելի էր քան 1894 թւականին 29⁰/₀-ով:

Ահա թէ կերոսին որքան էր պատրաստւած վերջին եօթ տարում. 1889 թ.—61.₁ միլ. փութ, 1890-ին—73.₆ միլ., 1891-ին 78.₈ միլ., 1892-ին—82.₂ միլ., 1893-ին—89.₄ միլ., 1895-ին—87.₅ միլիոն փութ:

Կերոսին պատրաստող 61 գործարաններից, որոնք բանել էին անդեալ տարի, 21-ը պատրաստեցին ամեն մէկը 1 միլիոն փութից աւելի (ընդամէնը 73.₆ միլ. փ.), 11-ը $\frac{1}{2}$ միլիոնից մինչև 1 միլ. փութ, 25-ը՝ ամեն մէկը 100.000-ից մինչև $\frac{1}{2}$ միլ. փութ և 4-ը՝ ամեն մէկը 100.000 փութից պակաս:

Կերոսինի գործարանների թիւը վերջին եօթ տարիներում ոչ թէ չի աւելացել, այլ շատ պակասել է, և պակասել է ամեն տարի. 1889-ին կերոսինի գործարաններ կային 161 հատ, որոնք ամենքը բանում էին. յայտնի չէ թէ որքան կային ոչ բանող. 1890-ին նոցա թիւն էր 143 (որոնցից բանող 97), 1891-ին 127 (բանող 90), 1892-ին 106 (բանող 88), 1893-ին 103 (բանող 67), 1894-ին 102 (բանող 63), 1895-ին 102 (բանող 61): Գործարանների թւի նաղանալը նրանից է, որ փոքրիկները անհետանում են. օրինակ 1889-ին եղած 161 գործարաններից 93-ը ամեն մէկը 100.000 փութից պակաս էր արտադրում. մինչդեռ 1895-ին այդքան արտադրող կային միայն 4 հատ. նաև 100.000-ից մինչև $1\frac{1}{2}$ միլիոն փութ արտադրողներ կային 1889-ին 50 գործարան, մինչդեռ այդպիսիներ 1895-ին կային միայն 25 հատ: Ասպարէզը այդպիսով մնում է մեծ գործարաններին, մանաւանդ նոցա, որոնք մի միլիոն փութից աւելի են արտադրում. այդպիսիները կային 1889-ին 12 հատ, իսկ 1895-ին 21 հատ. կէս միլիոնից մինչև 1 միլիոն արտադրողներ կային 1889-ին 6, մինչդեռ 1895-ին 11 հատ: Դորանից պիտի եզրակացնել, որ կերոսինի համար խոշոր գործարանը այն է որ տարեկան առնւազն կէս միլիոն փութ է պատրաստում: Թէ որքան չնչին է մանր գործարանների դերը կերոսինի գործում, այդ երևում է նրանից, որ 1895 թ-ին գործած 61 գործարաններից յիշեալ 21 ամենախոշորները (1 միլիոնից աւելի արտադրածները) տւին ամբողջ կերոսինի քանակութեան $\frac{5}{6}$ մասը. իսկ աւելի քիչ խոշորներով միասին—ամբողջի $\frac{10}{11}$ մասը: Դորանով է բացատրւում, որ 1895 թ-ին կային 41 անգործ գործարաններ:

Կերոսինի արտահանումը: Մենք տեսնեք, որ 1895 թ-ին պատրաստուեց 87.5 միլիոն փութ. բացի դորանից առ 1-ն յունւարի 1895 թ. կար մնացած նախորդ տարւանից 5.6 միլ. փութ. ընդամենը 1895 թ-ին Սև քաղաքում կար 93.2 միլ. փութ:

Դորանից տեղական այլ և այլ գործածութեան համար, այլ և կորուստի գնաց 1.029.000 փ., արտահանուեց երկաթուղով 51.6 միլ. փութ և ծովով 28.4 միլ. փութ (որից 2.5 միլ. Պետրոպոլսկ-Նովո-րոսիյսկի վրայով դարձեալ արտահանման) մնաց առ 1-ն յունւարի 1896 թ. 11.2 միլ. փութ:

Արտահանումը 1889 թ-ին էր 61 միլ. փութ, 1890-ին 67 միլ., 1891-ին 74 միլ., 1892-ին 79 միլ., 1893-ին 86 միլ., 1894-ին 71 միլ., 1895-ին 81 միլ. փութ:

Օժելու իւղեր: Օժելու իւղեր պատրաստելով զբաղւած էին 14 գործարան: Մեծ մասամբ նոքա պատրաստում էին մեքենաներ և ցիլինդրներ օժելու մաքրած իւղ, այն է 5.6 միլ. փութ. ոչ մաքրած իւղ 0.7 միլ. փութ. այլ տեսակ օժելու իւղեր 0.6 միլ. փ., իսկ ընդամենը 7.013.100 փութ, նախորդ տարւանից մօտ $1\frac{1}{2}$ միլ. փութ աւելի, չնայած որ գործարանների թիւը մէկով աւելի էր (15) նախորդ տարում:

Բենզին արտահանւեց Բաքւից 1895 թ-ին 300.000 փութ:

Գուղըրոն արտահանւեց Բաքւից 708.000 փութ:

Նաւթային մնացորդներ կային Բաքւում 1895 թ-ի վերջը 25 միլ. փութ: Մնացորդների ծառայում են իբր վառելիք թէ Բաքւում և թէ Ռուսաստանում:

Կերոսինի գները: Բաքւայ իրա մէջ կերոսինի գները տարբեր էին նաւերում և երկաթուղու վագոններում. նաւերում գները տատանւեցին 8.5 կոպէկից փութը մինչև 19.5 կոպէկ փութը, նայած ամիսներին, միջինը 13.7 կոպէկ էր. վագոններում այն, որ նշանակւած էր արտասահման ուղարկելու, տատանւեցին 12 կոպէկից փութը մինչև 21 կոպէկ փութը, միջինը 17.4 կոպէկ էր. իսկ այն որ նշանակւած էր Անդրկովկասի համար, վաճառւում էին նաւերի կերոսինի գներով:

Սակայն այդ գները մեծ կարեւորութիւն չէին ներկայացնում, որովհետև Բաքւայ մէջ առ ու ծախս շատ քիչ է լինում. օրինակ, վագոններով արտահանւած կերոսինը պատկանել է $\frac{9}{10}$ մասով կերոսինի խոշոր գործարանատէրերին, որոնք կերոսինը ծախում են նւրոպայի այլ և այլ կենտրոններում, ուր գները տարբեր են: Ահա գները Ռուսիայի նաւթի առևտրի կենտրոններից մէկում լոնդոնում:

Յարիցինում գները տատանւեցին $76\frac{1}{2}$ կոպէկի փութը (յունւարին) և 97 կոպէկի մէջ (դեկտեմբերին). դժբա ցածր գներ էին: Լոնդոնում գները տարուբերւեցին $31\frac{5}{16}$ պենս մի զալլոնը (յունւարին) և $67\frac{7}{8}$ պենսի մի զալլոնը (դեկտեմբերին). ապրիլին զինը բարձրացել էր նոյն իսկ մինչև $85\frac{3}{8}$ պենս: Լոնդոնում եղած

լաւ գներով գործարանատէրերը ստացան փութ կերոսինին 5—10 կոպ. զուտ օգուտ. Գերմանիայում շատ աւելի պակաս: Ռուսիայի գները յարմարուում էին արտասահմանում եղած գներին:

Նախորդ 1894 թւականին Լոնդոնի գները տարուբերեցին միայն $3\frac{1}{4}$ պէնսի և $3\frac{15}{16}$ պէնսի մեջ մի գալլոնին. հետևապէս գները 1895 թւականին շատ բարձր էին: Այդ նրանից է որ լուրեր կային թէ Ամերիկայում նաւթը նւազել է. գների չաստիկ տարուբերումը մանաւանդ շոշափելի եղաւ. ապրիլին 1895 թ., երբ այդ մի ամսում գները $8\frac{5}{8}$ պէնսից կամաց կամաց ընկան մինչ $5\frac{3}{4}$ պէնս ամսի վերջը: Գների բարձրանալուն նպաստեց նաև այն, որ Ամերիկայից վատ լուրեր հասած ժամանակը, 1895 թ. մայիսին Բաքույ գործարանատէրերի մէջ մի նոր դաշնակցական պայման կապւեց:

Կերոսինի գինը Բաքուում 1889 թ-ին 26 կոպ., 1890 թ-ին 10 կ., 1891 թ-ին 10.3, 1892 թ-ին 7.7, 1893 թ-ին 6.7, 1894 թ-ին 7.1, 1896 թ-ին 16.2:

Ինչ է նստում փութ կերոսինը մինչև Յարիցին: Մի փութ մաքրած թեթեւ կերոսինը ստացւում է $3\frac{1}{2}$ փ. հում նաւթից. $3\frac{1}{2}$ փ. հում նաւթը Սև քաղաքում միջին գնով արժէր 1895 թ-ին (փութ թը 6.9 կոպ.) 24.15 կոպէկ մի փութ կերոսին պատրաստելը արժենում է 4 կոպէկ. ուրեմն մի փութ կերոսինի ծախքն էր 28.15 կոպ., որից դուրս գալով 2 փութ մնացորդի գինը (փութը 6.1 կոպ.) այն է 12.2 կոպ., ստացւում է 1 փութ կերոսինի ծախսը 15.95 կոպ.: Դորա վրայ աւելացւում է 60 կոպէկ ակցիդ, 12—15 կոպէկ ևս ծախքեր Բաքուից մինչև Յարիցին. այսպիսով 1 փութ կերոսինը, ըստ տեղեկագրի, Յարիցինում գործարանատիրոջ նստում էր 88—91 կոպ. մինչդեռ նա վաճառւում էր Յարիցինում միջին թւով 83.5 կոպ. փութը:

Ինչ է նստում փութ կերոսինը մինչև Լոնդոն: Գործարանատիրոջ փութ կերոսինը, որպէս տեսանք քիչ առաջ, նստում էր Բաքուում 1895 թ-ին միջին գներով 15.95 կոպ. (գրեթէ 16 կոպ.), երկաթուղային ծախք Բաքուից մինչև Բաթում կազմում էր մինչև յուլիսի 15-ը 9 կոպ., իսկ այդ օրից մինչև դեկտեմբերի վերջը՝ 19 կոպէկ «նակլադնօյ» ծախքեր Բաթումում փութին 3 կոպէկ Բաթումից մինչև Լոնդոն Ֆրանսո վերցւում էր ամեն մի թոննին:

միջին հաշուով 14 շիլլինգ. մնում են ծախքեր ապրանքի ապահովագրումը, ընդունելը և պահպանելը լոնդոնում մինչև վաճառումը, կոմիսիոնական ծախք և այլն, որոնց մասին «Տեղեկագրութեան» մէջ որոշ թւեր առաջ չեն բերւած, կամ այն կերպ են բերւած (տես էջ 151), որ գրեթէ անհասկանալի են:

Որքան նաւթից ստացւում է մի փութ կերոսին: Մի փութ մաքուր կերոսին ստանալու համար պահանջւում է եղել հում նաւթ տարբեր քանակութիւններով. ահա թւեր. 1889 թ. մի փութ կերոսին ստացւում էր գրեթէ 3 փութ հում նաւթից (ճիշտը՝ 2.⁹⁹ փութից). 1890-ին հարկաւորւում էր 3.¹⁴ փութ, 1891-ին 3.³⁷ փ., 1892-ին 3.²⁹ փ., 1893-ին 3.⁴¹ փ., 1894-ին 4.¹⁵, 1896-ին 3.⁶¹ փութ հում նաւթ:

Ահա ինչու սկսած 1890 թ-ից մինչև 1894 թ. վերջը, թէև նաւթից ամենամեծ մասամբ կերոսին էին ստանում, բայց նա թանկ էր նստում և նա չէր որ գործարանատիրոջ օգուտ էր տալիս. այդ տարիներում զլիւսւոր օգուտը ստացւում էր նաւթային մնացորդներից. իսկ անցեալ 1895 թ ին կերոսինը նորից սկսեց գրաւել առաջնակարգ տեղ օգուտի կողմից. այդ պատճառով 1895 թ-ին գործարանները տեղաշին գուրծունէութիւն ցոյց տւին:

Գները օժնւոյ իւղերի: Սովորապէս այդ իւղերի առուտուրը սակաւ է լինում. բայց եղածը այս զներով է կատարւել. ցիլինդրային իւղի փութը 70—90 կոպ., մեքենայինը 24—35 կ., լիսեռնայինը (веретенное) 14—20 կոպէկ:

Բաքւայ կերոսինագործների միութիւնը (Союзъ Бакинскихъ керосинозаводчиковъ): 1894 թւականի սկզբում Բաքւայ կերոսինագործների մէջ միութեան դաշն կապւեց՝ արտասահմանում իրենց կերոսինը ծախելու գործի համար: Մինչև այդ ժամանակ Բաքւայ գործարանատէրերից միայն 2—3 խոշոր ֆիրմաներ արտահանում էին իրենց կերոսինը արտասահմանի շուկաները, մնացածները ծախում էին իրենց կերոսինը այդ 2—3 ֆիրմաներին և կամ Բաթումում հաստատուած արտահանողներին: Դրսի առևտրի այդպիսի կազմակերպութիւնը շատ պակասաւոր էր

և չէր կարողանում ձակատ դնել ամերիկական Ստանդարտ կոչած հզօր կազմակերպութեան հետ, որը ներկայացնում է միութիւն ամերիկական խոշոր կերպարներու հետ, որոնք իրենց հետ կապուած (դաշնակցութիւն) կազմակերպւեց կառավարութեան գիտութեամբ և խրախուսանքով: Մի տարւոյ փորձը դրոշմ սկզբնական Սոխլին փոփոխել 1894 թւականի դաշնը, որը աւելի կատարեալ կազմակերպութիւն ստացաւ 1895 թ. սկզբին: Նոր դաշնադրութեամբ Սոխլը սկսեց գործել 1895 թ. ապրիլի 1-ին: Առաջ գործարանատէրերը երկու կարգի էին բաժանուած. նոր դաշնով նոքա ձուլւեցին, կազմելով մի ընդհանուր Սոխլ (դաշնակցութիւն). կարգադրիչ կոմիտէի իրաւունքները ընդարձակեցին, առևտրական գործակալների իրաւունքները և լիազօրութիւնները կրճատեցան, արկղային գործարանատէրերի հետ աւելի նպաստաւոր պայման կապւեց և որոշեցին աւելի յարմար կերպով հաշիւներ տալու ժամանակամիջոցները գործակալների և գործարանատէրերի միջև: Սոխլի նպաստին է, 1) ընտելագնաց ծախքերի կրճատումը, որ պիտի լինէր առևտուրը մեծ չափերով վարելու հետեանքը. 2) անմիջական կապ ստեղծել գործարանատէրերի և արտասահմանի սպառողների միջև. 3) բոլոր գործարանատէրերին միջոց տալ իրենց ապրանքը արտասահմանի շուկան դուրս բերել. 4) անմիջական յարաբերութիւններով ուսումնասիրել արտասահմանի շուկաների և սպառողների պահանջները. 5) կռիւ մղել ամերիկական Ստանդարտի դէմ և կամ համաձայնութեամբ նորա հետ բաժանել իրար մէջ արտասահմանի շուկաները:

Սոխլի գործունէութիւնը չի տարածուում Ռուսիայի շուկաների վրայ:

Շնորհիւ Սոխլի գները աւելի հաստատ և բարձր պահպանւեցին արտասահմանում: Բայց Ստանդարտի հետ համաձայնութիւն շուկաները իրար մէջ բաժանելու համար՝ չիրագործւեց, թէև Ստանդարտի կողմից այդպիսի առաջարկներ եղան. բայց միաժամանակ նոյն իսկ Հիւս. Ամերիկայում նոր ընկերութիւններ կազմւեցին Ստանդարտի դէմ կռիւ մղելու համար: Ստանդարտը սակայն մնում է նախի առևտրի մէջ ամենազօրեղ միութիւնը:

Սոխլը չհասաւ իւր գլխաւոր նպատակին, որ էր՝ անմիջական

Քաղ ստեղծել զործարանատէրերի և արտասահմանի սպառողների մէջ. դորա համար հարկաւոր էր զօրեղ կոխ մղել շատ առևտրական ֆիրմաների դէմ, պէտք էր ունենալ սեփական զործակալներ, սեփական մեծ ամբարներ արտասահմանեան շուկաներում, սեփական նաւեր: Այդ անիրագործելի եղաւ այն պատճառով, որ Սոխլըի մէջ մասնակցող զործարանատէրերը կապւած են կարճամեամակեաց դաշնով, մինչդեռ այն բոլորի համար պահանջուում են մեծամեծ ծախսեր:

Բաքւայ կերոսինի արտասահմանեան առևտուրը (Ներուպայում և Սոխլի արևելեան երկիրներում) չի կառարւում միայն Սոխլի միջոցով. կան Սոխլի մէջ չմտած զործարանատէրեր, որոնց անկախ զործունէութիւնը քննարկում է Սոխլիին: Բացի այդ՝ նաւթի արդիւնաբերութիւնը սկսել է զարգանալ Գրոզնոյում (հիւս. կովկաս) և Սուխումի կղզում:

Սոխլը, որը նոր պայմանով սկսեց զործել 1895 թ. ապրիլի 1-ից մինչև դեկտ. 31-ը, (9 ամսում) ծախեց արտասահմանեան շուկաներում 27 միլիոն փութ լուսաւորութեան իւղեր (կերոսին), միջին հաշւով փութը 20.17 կոպէկով Բաքւում, այսինքն եթէ արտասահմանեան գներից հանելու լինենք արտահանման բոլոր ծախքերը. իսկ մի փութ կերոսինը միջին հաշւով (գուրս գալով մնացորդների գինը) նստում էր 17.8 կոպ. զուտ օգուտը կերոսինոգործատիրոջ մնում էր 2.37 կոպէկ փութին, որ շատ լաւ օգուտ է համարւում:

Պէտք է նկատել որ Բաքւի կերոսինոգործները մեծ մասամբ նաւթահանքատէրեր են Բալախանում. այնպէս որ նոցա օգուտը ոչ միայն կերոսինից է, այլ և մանաւանդ նաւթահորերից. լաւ է կերոսինի գինը—լաւ է նաև հում նաւթի գինը:

Մնացած էր առ 1-ն յունւարի 1896 թ. Սև քաղաքում 72 միլ. փութ հում նաւթ (զործարանների ամբարներում), կերոսին, օծելու իւղեր և մնացորդներ (վերջինս 25.1 միլիոն փութ). այդ քանակութիւնից 58 միլ., ուրեմն 80% պատկանում էր 12 խոշոր զործարանատէրերին, որոնցից չորս խոշորագոյններին պատկանում էր 49 միլ. փութ, այսինքն 67% բոլոր պաշարի: Պոցանից նորէլ եղբ. ընկերութեան՝ 34.6 միլ., Շիրաւե և ընկ. 4.1 միլ., Արաֆելեան և ընկ. 2.5 միլիոն:

Արտահանումը Բաքւից: Խօսքը նաւթային արդիւնքների (գըլ-խաւորապէս կերոսինի) արտահանման մասին է դէպի արտասահման և Ռուսիա. արտահանումը տարեցտարի աւելացել է, և ահա ինչպէս.

1887	թ. արտահանւեց	91	միլիոն փութ
1888	»	116	»
1889	»	157. ₆	»
1890	»	176. ₉	»
1891	»	194. ₄	»
1892	»	213. ₄	»
1893	»	248. ₁	»
1894	»	288. ₄	»
1895	»	284. ₃	»

Վերջին տարին նախորդից աւելի քիչ էր արտահանւած. նաւթումը վերաբերում է նաւթային մնացորդներին, որ 13.₂ միլիոն աւելի պակաս էին արտահանւած. բայց ամբողջ արտահանութիւնը կը զերազանցէր նախորդ տարւանից, եթէ չլինէր Անդրկովկասի երկաթուղու միասուելը հեղեղներից, որի պատճառով նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին կերոսին գրեթէ չարտահանւեց դէպի Բաթում. ստիպւած եղան կերոսինը արտասահման ուղարկել Պետրովսկ-Նովորոսիյսկի վրայով (2.₅ միլ. փութ), մինչդեռ նախորդ ամիսներում Բաթում ուղարկւում էր միջին հաշւով ամիսը 5.₂ միլիոն փութ: Մասամբ ազդեց նաև Գրոգնին, որի նաւթային մնացորդները փոխարինեցին Վլադիկաւկազի երկաթուղու վառելիքի համար Բաքւից ստացւող մնացորդները:

Ուր է արտահանւում: Նաւթային արդիւնքները Բաքւից արտահանւում են Կասպից ծովով և Բաքու-Բաթում երկաթուղիով: Վերջին ճամբով գնում էր կերոսինը արտասահման, Անդրկովկաս և Սև-Ծովի նաւահանդիսաները. Կասպից ծովով արտահանւում էր դէպի ներքին Ռուսիայի շուկաները, Անդրկասպեան երկիրը և Պարսկաստան: Անցեալ տարի, նոյեմբերին և դեկտեմբերին, երբ Անդրկովկասեան երկաթուղին խանգարւեց, Կասպից ծովով (Պետրովսկից վրայով) 2.₅ միլ. փութ արտահանւեց նաև Եւրոպայի և Մայրագոյն Արեւելքի շուկաները:

Ամենից շատ արտահանում է Կասպից ծովով և աւելի փոքր մասը—Անդրկովկաս. երկաթուղիով: Ահա թւերը սկսած 1889 թ-ից:

	Կասպից ծովով	Անդրկովկ. երկաթուղիով
1889-ին ուղարկւեց	110	47. ₄
1890	118. ₆	57. ₃
1891	132. ₆	61. ₈
1892	145. ₁	67. ₈
1893	174. ₇	72. ₄
1894	222. ₆	65. ₈
1895	216. ₁	68. ₂

Եթէ չլինէր երկաթուղու խանգարումը վերջին երկու ամիսներին, Բաթում ուղարկւած կը լինէին մինչև 80 միլիոն փութ նաւթային արդիւնքներ. դորա պատճառը այն է, որ արտասահմանում կերոսինի գները շատ յաջող էին:

Կասպից ծովով արտահանելու զարգանալուն շատ նպաստեցին 1893 թ-ին կազմւած «Արևելեան ընկերութիւնը» (Восточное общество), որը ունէր մեծ դրամական և նաւային միջոցներ, և 1892 թ. ղեկավարներին կազմւած եօթ ամենախոշոր ֆիրմաների դաշնակցութիւնը:

Ահա լիակատար ցուցակ, որով իմացւում է թէ ինչ արդիւնքից որքան և ուր է ուղարկւած 1895 թ.:

(Տես հետևեալ երեսը)

	ԿԱՍՊԻՑ ԺՈՎՈՎ			ԵՐԿԱԹՈՒՂԻՈՎ			
	Վրլգա	Անդրկաս. Կարսկաստ. երկիր	Պարսկաստ.	Բաթում	Կովկասի այլ քաղաք.	Ընդամենը	
Կերոսին	27.873.163	395.085	100.672	51.502.073	1.097.046	80.968.039	
Քսելու իւղեր	1.728.738	8.487	108	4.981.004	34.162	- 6.752.499	
Բենզին, գուղրոն և այլն	1.042.613	583	12	16.041	7.910	1.067.159	
Նաւթային մնացորդներ	169.669.905	2.997.256	24.552	2.341.208	5.337.958	180.370.879	
Հում նաւթ	11.231.164	—	1.059.970	161.533	2.678.553	15.131.220	
	<u>211.545.583</u>	<u>3.401.411</u>	<u>1.185.314</u>	<u>59.001.859</u>	<u>9.155.629</u>	<u>284.289.796</u>	

...the results of the study are consistent with the findings of other studies that have shown that the use of a computer-based decision support system can improve the quality of medical decision making.

...the results of the study are consistent with the findings of other studies that have shown that the use of a computer-based decision support system can improve the quality of medical decision making.

...the results of the study are consistent with the findings of other studies that have shown that the use of a computer-based decision support system can improve the quality of medical decision making.

...the results of the study are consistent with the findings of other studies that have shown that the use of a computer-based decision support system can improve the quality of medical decision making.

...the results of the study are consistent with the findings of other studies that have shown that the use of a computer-based decision support system can improve the quality of medical decision making.

...the results of the study are consistent with the findings of other studies that have shown that the use of a computer-based decision support system can improve the quality of medical decision making.

...the results of the study are consistent with the findings of other studies that have shown that the use of a computer-based decision support system can improve the quality of medical decision making.

...the results of the study are consistent with the findings of other studies that have shown that the use of a computer-based decision support system can improve the quality of medical decision making.

...the results of the study are consistent with the findings of other studies that have shown that the use of a computer-based decision support system can improve the quality of medical decision making.

...the results of the study are consistent with the findings of other studies that have shown that the use of a computer-based decision support system can improve the quality of medical decision making.

Այս ցուցակից երևում է, որ Բաքույի կերոսինի գլխավոր արտահանումը լինում է դէպի արտասահման, իսկ նաւթային ֆնացորդների (որոնք ծառայում են իբր վառելիք) գլխավոր արտահանումը լինում է դէպի Ռուսիա, ուր կերոսին ուղարկւել է միայն 32.133.000 փութ, մեծ մասամբ Կասպից ծովով դէպի Աստրախան և Պետրովսկ (27.5 միլ.), և մասամբ նաև Բաթումով (5.5 միլ.):

Բաթումից արտասահման ուղարկւածը 1895 թ. Բաթումի մաքսատան տեղեկութիւններով անցեալ տարի Բաթում բերած Բաքույի նաւթից արտահանւած է՝

	Ռուսիա	Արտասահման	Ընդամենը
Կերոսին և դիստիլատ	5.559.418	47.885.066	53.444.484
Օձեկու իւղեր	445.675	5.850.747	6.296.422
Նաւթի ֆնացորդներ	106.259	2.408.995	2.515.254
Հում նաւթ	14.453	75.812	90.265
	<u>6.125.805</u>	<u>56.220.620</u>	<u>62.346.425</u>

Արտահանող Ֆիրմաներն էին՝

Նորէլ եղբ. ընկ.	24.45	միլիոն փութ.
Կասպեան-Սևծով. ընկ.	21.01	» »
Մանթաշեան և ընկ.	5.52	» »
Ծովխանեան և ընկ.	3.45	» »
Սիդերիդէս.	2.54	» »
Շիրաբե և ընկ.	1.29	» »
Ռուս Կովկասեան ընկ.	0.82	» »
Խաչատուրեանց.	0.65	» »
Վազատաֆ և Բլէյ	0.64	» »
Այլ աւելի մանր ֆիրմ.	1.97	» »
Ընդամենը	<u>62.34</u>	<u>միլիոն փութ:</u>

Ձմռանանը որ արտասահման ուղարկւած էր նաև 2.5 Պետրովի վրայով: 1894 թ. Բաթումից արտահանւած էր 57.6 միլ. փութ:

Ո՞ր երկիրներն է արտահանւում: Բաթումից կերոսինը (աւելի փոքր մասով նաև դիստիլատը և այլ իւղեր) արտահանւում է Ասիական և Եւրոպական երկիրները: Ամենից շատ ուղարկւեց օրդուզ Պորտ-Սաիդ (Եգիպտոս), այն է 8.4 միլիոն, որտեղ կերոսինը

այլ ուղղութիւններ է ստանում, մեծ մասամբ դէպի Եսպոնիա, Զինաստան, Հնդկաստան, Մալակկա. ապա դալիս է Հնդկաստանը, ուր Բաթումից ուղղակի ուղարկւեց 7.24 միլ. փութ. յետոյ դալիս են՝ Անգլիա 5.75 միլ. փ., (և բացի այդ, ուղարկւած էր Բաթումից 1.1 միլ. փ. սոլարի իւղ, այսինքն ծանր կերոսին՝ լուսաւորութեան զազ պատրաստելու համար). Աւստրիա 3.78 միլ. փ., Կ. Պոլիս 3.5 միլ. փ. (բայց Կ. Պոլսից կերոսինը մեծ մասամբ տանւում է Սոխա). Ֆրանսիա 2.7 միլ. փ., Բելգիա 2.1 միլ. փ., Եւաւ կղզի 1.74 միլ., Զինաստան 1.7 միլ., Բալկանեան պետութիւններ 1.3 միլ., Իտալիա 1.3 միլ., Ալեքսանդրիա 1.2 միլ. (որտեղից նա մեծ մասամբ այլ տեղեր է ուղարկւում, նաև Եսպոնիա), Գերմանիա 1.1 միլ., Հոլլանդիա 0.79 միլ., Թիւրքիա 0.58 միլ., Սոմաթորա կղզի 0.56 միլ., Ֆիլիպեան կղզիներ 0.49 միլ., Ռէնի 0.4 միլ., (որտեղից այլ ուղղութիւն է ստանում), Մալտա կղզի 0.32 միլ., Շւեյցիա 0.14 միլ., Ադէն 0.11 միլ. փ., Ալժիր, Թունիս և Տրիպոլի միասին ուղարկւեց 78 հազար փ., Եսպոնիա 33 հազար փութ. Եսպոնիա նախորդ 1894 թ. ուղարկւած էր Բաթումից 1.7 միլիոն. 1895 թ. Բաքույն նաւթը Եսպոնիա ուղարկւած է ոչ ուղղակի Բաթումից, այլ Պորտ-Սաիդից կամ Ալեքսանդրիայից: Ընդամենը Արևելեան երկիրներ ուղարկւած էր 26.33 միլիոն փութ, իսկ Եւրոպա՝ 20.36 միլիոն փութ:

Զգալի չափով պակաս էր արտահանումը Աւստրիա, ուր 1893 թ. արտահանւած էր Բաթումից 6.6 միլ., 1894-ին 6.4, իսկ 1895-ին միայն 3.7. այդ նրանից է որ Աւստրիական Գալիցիայում նաւթի արդիւնաբերութիւնը աճել է:

Համեմատութիւն Ամերիկայի հետ: Մի կողմ թողնելով ղիստիլատը և սոլարի իւղը, և հաշւի առնելով ամենազլուաւորը, այն է կերոսինը, (որ միայն լուսաւորութեան է ծառայում), կը տեսնենք որ Բաթումից Եւրոպա է ուղարկւում կերոսին 15.384.402 փութ, (հաշւելով նաև Թիւրքիան), իսկ Ամերիկայից՝ 100.454.509 փութ. իսկ Ասիական երկիրներ Բաթումից կերոսին ուղարկւեց նոյն անցեալ տարի՝ 26.330.532 փութ, Ամերիկայից՝ 21.871.441 փ.: Ուրեմն Ռուսաստանից արտահանւեց (Բաթումի վրայով) 41.7 միլ. Ամերիկայից՝ 122.3 միլ. փութ:

Իսկ եթէ հաշւի առնենք թէ կերոսինի և թէ դիստիլատի ու ծանր կերոսինի (սուլարի իւղ) արտահանումը, կը տեսնենք որ Ռուսիայից արտահանւած էր 50.7 միլ. փութ, Ամերիկայից՝ 124.6 միլ. փութ:

Եթէ հաշւի առնենք նաև վառելիքի համար դործածւող նաւթի մնացորդների արտահանումը, ամբողջ արտահանութիւնը Բաթումից եղաւ 61.9 միլ., (երկու երկիրների արտահանութեան 28.3⁰/₀) Ամերիկայից՝ 156.9 միլ. փութ (երկու երկիրների արտահանութեան 71.7⁰/₀):

Բաթումից լուսաւորութեան իւղեր (կերոսին և դիստիլատ) արտահանող ֆիրմաներն էին.

Սոխլզի ֆիրմաներ	{	Կասպեան Սևծովեան ընկ.	19.41	միլ. փ.
		Նոբէյ եղբ. և ընկ.	15.76	» »
		Ա. Մանթաշեան.	5.4	» »
			40.581	» »

Սոխլզից զուրա	{	Մովիանեան և ընկ.	3.072	միլ. փ.
		Սիդերիդէս	2.24	» »
		Խաչատրեանց	0.637	» »
		Գրամմադիկոպուլօ	0.407	» »
		Վաղստաֆ և Բէէյ.	0.391	» »
		Շխեանց և Զարգարեանց.	0.292	» »
		Շահպաղեան	0.262	» »
			8.304	» »

Ընդամենը. . . 47.885.066 փ.

Գները Բաթումում: Կերոսինը Բաթումից արտասահման ուղարկւում է երկու կերպ. լեցնելով նաւերը, որոնց ներքեւի մասը մեծ ամբարներ են ներկայացնում (керосинъ наливаемъ, նալիւով) և կամ ժեշտի արկղիկների մէջ (керосинъ въ ящикахъ). մի արկղիկի մէջ պարունակւում է 72 ֆունտ կերոսին: Կերոսինի գները, երբ կերոսինը գնահատւում է ոչ թէ քաղաքի ամբարներում, այլ նաւը բեռնաւորելու ծախքով միասին, կոչւում են անգլիական ոճով գների FOB Բաթում (ֆոր Բաթում): Արդ, գները ֆոր Բաթում 1895 թ. յունւարից մինչև յունիսի վերջը տատանւեցին փութը

հալիւով՝ 20 կուէկից մինչև 34 կուէկ: (այդ պէտք է անշուշտ բացատրել նրանով, որ երկաթուղային Փրահստը Բաքւից Բաթում, սկսած յուլիսից, բարձրացաւ 9 կուէկից՝ 19 կուէկ): Արկղների մէջ Փոք Բաթում արկղիկի (72 Փունտ կերոսին) արժէքը մինչև յունիսի վերջը տատանւեց 29 և 41 պէնսի միջև, իսկ յուլիսին 39 պէնս, օգոստ. 41, սեպ. 40, և սեպտ.—դեկտ. 37 պէնս: Նախորդ 1894 թւականի հետ համեմատած՝ մի փութ կերոսինի գինը Փոք Բաթում նալիւի համար 10.⁷⁶ կուէկով, արկղիկի մէջ՝ 11.⁹⁰ կուէկով աւելի բարձր էր քան 1895 թւականին:

Արկղիկներով կերոսինը ուղարկւում է Ասիական երկիրները:

Փրահստի գները: Բաթումից մինչև Միջերկրականի նաւահանգիստները Փրահստը 1895 թ. 8-ից մինչև 9 շիլլինգ էր մի թոնն, իսկ դէպի Եւրոպայի ցամաքը 13-ից մինչև 15 շիլլինգ. արկղների մէջ մի արկղի Փրահստը մինչև Միջերկրականի նաւահանգիստները 40 սանտիմ էր, հեռւոր Արևելքի համար՝ 5-ից մինչև 10 պէնս. այն է՝ մինչև Ադէն և Բասրա 6 պէնս (մի արկղը), Բոմբէյ, Կալկաթա և Մադրաս 5-ից մինչև 6 պէնս, Հոնկոնգ 7—8 պէնս, Մանիլա 8, մինչև Նապոնիա $8\frac{1}{2}$ —10 պէնս:

Նաւթամբարները Բաթումում: Բաթումում նաւթային արդիւնքները (գլխաւորապէս կերոսին) պահելու համար 1895 թ. կային 106 ռեզերւուար (1894-ին կար 100), որոնց ծաւալն էր 8.064-828 խորանարդ Փուտ, պարունակութիւնը՝ 13.928.760 փութ ջուր (այսինքն այդքան կը լինէր, եթէ ջուր լեցրած լինէր):

Ամբողջ արտահանումը Բաքւից դէպի արտասահմանեան երկիրները հետևեալն էր 1895 թ. (ամեն տեսակ նաւթային արդիւնքներ).

Բաքւից դէպի Պարսկաստան	1.185.000 փութ.
Բաթումից արտասահման	56.220.000 »
Արևմտեան մաքսատների միջով	2.800.000 »
Նովորոսիյսկից	1.756.000 »

Կասպեան նաւատորմը: Կասպից ծովում Բաքւից նաւթային արդիւնքներ արտահանելու համար 1895 թ. գործում էին 34⁵ նաւ, որից նաւթամբարաւոր (նալիւփնոյ) 95 շոգենաւեր և մօտ

250 առաջատուոր նաւեր: Այդ մեծ նաւատորմը տեղափոխեց 1895 թ-ին տեղափոխեց լուսաւորութեան իւղեր 28.4 միլ. փութ, նաւթային մնացորդներ 172.7 միլ., հում նաւթ 12.3 միլ., ընդամենը 213.4 միլիոն փութ:

Ծախքեր եւ նկամիւտներ: Նաւթագործարանատէրերի ժողովի բիւրօն իւր մեծահատոր հաշւաւորութեան վերջում առաջ է բերել թւեր պարզելու համար թէ նաւթի գործի համար որքան ծախք է լինում եւ որքան օգուտ: Մենք սակայն զգուշութեան համար լաւագոյն ենք համարում կուրօրէն չհետեւել այնտեղ առաջ բերած թւերին այդ մասին:

Ա. Ա.

ԱՄՐՈՑԻ ԹԱԳՈՒՀՈՒՆ

ԱՐՇԱԿ ԱԹԱՅԵԱՆԻ

Երբ վրայ կը հասնի գիշերը մռայլ
եւ քո սրտի պէս կ'պատէ խաւարով,
Երբ կը դադարի վառ կեանքը եռալ
եւ խուլ կ'երերայ հանգիստ, անվրդով.
Երբ խոր կը նիրհէ խիղճը մարդկային,—
Կը գամ ցնորելու քո ամրոցի տակ,
Կը հսկեմ որպէս կէսգիշերային
Մանկան օրոցքի պահապան հրեշտակ:

Կը հսկեմ, որ քեզ աչք չը մօտենայ,
Քո դէմքի վերայ շատ բան կայ անծածք.
Նոքա կը կորչեն, եթէ քեզ վերայ
Ընկնի գաղտնապէս մի օտար հայեացք.
Կը հսկեմ, որ քեզ աչք չը մօտենայ.
Եթէ մօտեցաւ, դուրս կը տամ,
Միայն թէ երբէք չը խանդարէ նա
Հրեշտակային քո քունը փարթամ:

Իմ լուռ տանջանքը երկինք կ'ողարկեմ,
Որ քո հօլանի կուրծքը չը խռովի:
Կը խեղդեմ իմ մէջ արցունքս դշխեմ,
Թող, որ նա ծփան նման բիրտ ծովի...
Դու միայն քնիր անհոգ, անխռով,

Թող քունդ լինի կեանքիդ պէս անդորր,
 Ես քեզ չեմ յուզիլ տխուր երգերով,
 Թող, որ երկինքը կարգաց քեզ օրօր...

Ես կը դիտեմ միայն, թէ ինչպէս հանգաւ
 Ճրագը քո շնչով մռայլ հոգու պէս,
 Թէ ինչպէս թռան հրեշտակներ անբան՝
 Գիշերուայ չարից պահպանելու քեզ.
 Նրանք չեն կարող ինձ պէս հիանալ,
 Երբ դու կը շնչես շնչով երկնային,
 Նրանք չեն կարող ինձ պէս լուռ մնալ,
 Ինձ պէս չերեալ քո խիստ աչերին...

Բայց իմ հայեացքը քեզ չի էլ հասնիլ,
 Աղի արցունքս զուր ինչո՞ւ կուլ տամ,
 Իմ հառաչանքը ուշքդ չի էլ գրաւիլ,
 Քեզ չի երևալ իմ սուերն անգամ:
 Եւ ի՞նչ հոգ. դեռ աշխարհակործան
 Թող յափշտակի քեզնից սիրտդ հէզ,
 Գիտեմ, սիրելիս, չար ոգուց նորան
 Շատ հեշտ է խել, բայց քեզնից... երբէք!

ԺՈՂՈՎՐԴԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ

ՅՈՎՀ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆՑԻ

Գ. Ռուս Ժողովրդի ընթերցանութեան գործը:

1. Թէ ինչ պահանջներ ունի նա եւ որքան հարուստ է դրքերով:

Իւրաքանչիւր տարի Ռուսիայում միայն ժողովրդական ուսումնարաններից աւարտելով (չհաշւելով շինական գրագիտութեան ուսումնարանները) աւելանում են համարեա 200 հազար գրագէտ: Եւրոպական Ռուսիայի ամեն կողմերից՝ ժողովուրդը, աննշան բացառութիւններով, ընթերցանութեան գրքերի մեծ պահանջներ է զգում, որին մասամբ յագուրդ է տրւում, կամ այդ պահանջը մնում է առանց բաւարարութիւն ստանալու: Նաո գիւղերում հէնց ինքեանք գիւղացիներն են հիմնում գրադարաններ և ուսումնարաններ: Թէ որքան հարուստ են ուսաները գրքերով, այդ հարցին Ռուբակինն պատասխանում է, թէ՛ ըստ երևութին շատ հարուստ են. իւրաքանչիւր տարի ուսներէն լեզւով հրատարակւում են մօտաւորապէս 20 միլիօն օրինակ զանազան գրքեր, 5 հազարից աւելի անուններով, չհաշւած հանդէսներն ու լրագիրները: Ամբողջ ընթերցող Ռուսիայում գրականական հոսանքների ալիքները, եթէ կարելի է այսպէս ասել, զլորւում են մինը միւսի ետեւից: Արդէն համարեա թէ 100 տարի է՝ անցել այն ժամանակից, երբ առաջաւոր ընթերցողների վրայից անցաւ գնաց կեղծ կլասիկականութեան ալիքը. 70 տարուց աւելի է, երբ Վարամզինի սենտիմենտալիզմի ալիքն անցաւ, ապա Ժուկովսկու ռոմանտիզմը և այլն. բայց այնտեղ գաւառի ծոցում մինչև այսօր այդ հոսանքները զլորւում են,

շրջաններով ամեն կողմ վազելով, միշտ աւելի ու աւելի մարդկային մեծ բազմութիւն ողողելով և ճանապարհը ուրիշ ալիքի թողնելով: Ոչ միայն օտարազգի, այլ և ռուս կլասիկներն անմատչելի են մնում ժողովրդին. որ և է գրքի 6000—7000 օրինակը Ռուսիայի 1500 քաղաքների մէջ բաժանելով միայն 5—6-ական է հասնում իւրաքանչիւրին: Միայն էժան ու թեթեւ հրատարակութիւններն են, որ ընկնում են ժողովրդի ձեռքը: Գիտական գրքերն էլ տարէցտարի քաղաքակիրթ հասարակութեան մէջ տարածւելով՝ բաւարարութիւն չեն տալիս ժողովրդի (բանւորների ու երկրագործների) ամբողջ դասին: Զուտ մասնագիտական գրաւորքները նրանց հասողութիւնից բարձր են, իսկ այնպիսի ինքն ըստ ինքեան գեղեցիկ հեղինակութիւնները, ինչպէս Կայգորոզովինը, Մ. Բոզդանովինն են, սողում են զեանով... Միայն մի քանի հրատարակիչներ, ինչպէս Ֆ. Ֆ. Պաւլէնկովը, իրանց գործունէութիւնը ուղղեցին դէպի գիտական-ժողովրդական գրքերի հրատարակութիւնը, որով մատչելի են քաղաքակիրթ զանգւածին. և այս է նրա մատուցած դրական և ահագին ծառայութիւնը:

2. Ինչո՞ւ լաւ գրքերը չեն ընկնում ժողովրդի ձեռքը:

Հետեւեալ տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Ռուսիայում իսկապէս աւելի հրատարակչական ու գրաւաճառական գործի անկերպարան դրութիւնն է աչքի ընկնում՝ քան գրքերի պակասութիւնը, և խոչնդոտ դառնում ընթերցանութեան տարածմանը ժողովրդի հեռաւոր ու մութ խաւերի մէջ: Մինչդեռ արեւմտեան Եւրոպայում վերջին հրատարակութիւնից ետ մնացած որ և է գիրք անմիջապէս հրապարակ կարելի է հանել, ռուսական արտագրողներն ու հեռաւոր սպառողները կարծես անանցնելի անդնդով բաժանւած են միմեանցից: Վենտրոններում, — ասում է Ռուբակին, «գրքերի առատութիւն է, հրատարակիչների և գրաւաճառների պահեստները նրանցով լցւած են, հրատարակութիւնները կամ սրանց մնացորդները ծախւում հին գրքեր վաճառողներին (բուքինիստներին), իսկ այնտեղ Ռուսիայի ոչ միայն խուլ, այլ և ոչ խուլ անկիւններում՝ գրքի հոտ էլ չի գալիս... Սակաւ չէ սլատահում որ բուքինիստների մօտ երևան են գալիս ու ծախւում են

50%—80% զեղչով բոլորովին նոր, չկտրուած գրքեր, պատկառելի Ֆիրմաների հրատարակութիւններ՝ յայտնի հեղինակների անուններով: Սրանք սնանկացած հրատարակիչ Ֆիրմաների գրքերն են, աճուրդից քաշով գնւած... Այն ժամանակ, երբ Պետերբուրգում այս գրքերն բուքլինիստների ձեռքով այսպէս էժան են ծախւում, գաւառում ոչ միայն քչերը տեղեկութիւն ունին նրանց այդպէս էժան ծախւելու մասին, այլ և շատ քչերն են, որ տեղեկութիւն ունին նրանց գոյութեան վերաբերմամբ: Նրանց ստանում են անւանական (նովինալ) գնով, իսկ երբեմն գնից էլ բարձր: Հետեւանքն այն է լինում, որ [Ժափթիվութիւնը (Хламб)], որից չգիտեն [Թէ Պետերբուրգում ինչպէս ազատեն, գնում են առանց այն էլ գրքերից ընդհանրապէս զուրկ գաւառները: Ուշադրութեան արժանի է նաև այն, որ բուքլինիստները յայտարարութիւններ տալով լրագրներին «էժանացրած» գրքերի մասին՝ շարունակ բարձրացրած գներ են նշանակում այնպիսի հրատարակութիւններին էլ, որ դեռ չեն սպառւել:

Այս երևոյթը Պրուգաւինը, միւս ուս հետազոտողը, հետեւեալ կերպով է բացատրում: (Մենք, ի հարկէ, շարունակում ենք քաղածք անել): Զանազան ինտէլլիգենտ ընկերութեանց հրատարակութիւնները աննշան քանակութեամբ են հասնում ժողովրդին այն պատճառով, որ նրանք [Ժանկ են, իս' [Ժանկ են, որովհետեւ չեն վաճառւում, իսկ սպառւում չեն, որովհետեւ նրանց արտաքինը՝ ուսումնական «ժողովրդի համար» դարձւածով՝ այդ ժողովրդին յետ է մղում: Բայց սա ի հարկէ միակ ու վերջնական պատճառը չէ. նոյն ինքը Պրուգաւինը մանրամասն հետազոտել է ցրիչների դերը Ռուսիայում և նկատում է, որ վերոյիշեալ անաջողութեան հիմնական պատճառներից մէկը սրանցից օգուտ քաղել չգիտենալն է: Իսկ երբ հրատարակիչները դիմեցին կոչում ունեցող ցրիչներին (КНИГОНОШИ), որոնք զործին սիրով վերաբերւեցին, անպայման ազնւաբար վարեցին, կարողութիւն ունեցան գրքերի բովանդակութիւնը բացատրելու, եռանդով ու անձնւիրութեամբ գործին ծառայեցին, այն ժամանակ Լ. Տոլստոյից 1000 օրինակի փոխարէն սկսեց առաջին տարին 100 հազար սպառւել: Ժողովուրդն առանձին ուշադրութիւն է դարձնում գրքի արտաքինին, մասնաւանդ սրա երեսի լաւ պատկերը շատ է գրաւում նրան:

3. Լրագիրներն ու հանդէսները ժողովրդական շրջանում:

Վերջին ժամանակներս ուռւ ժողովրդի մէջ հետզհետէ աւելի ու աւելի զգացւում է մի նոր՝ դեռ քիչ առաջ համարեա բոլորովին անծանօթ պահանջ, այն է լրագիր կարդալու պահանջը. իսկ ինչ-վերաբերում է հանդէսներին, գիւղական մարդաբնակութեան զանգ-ւածը աննշան զաղափար անգամ չունի նրանց մասին: Աւելի ժո-ղովրդականութիւն են վայելում ոչ թէ ինքն ըստ ինքեան ընտիր-թերթերը, այլ նրանք, որոնք որ և է բանով կարողացել են ժո-ղովրդի սիրտը գրաւել: Օրինակ՝ „Московский Листокъ“ ամենից շատ ընթերցողներ ունի միայն իւր թերթը լեզուի պատճառով: Բանւորներն առանձին հաճութեամբ բաժանորդ են գրաւում գու-նաւոր պատկերազարդ հանդէսներին, որոնց պատկերներով զարդա-րում են իրանց սենեակները: Այսպէս անւանեալ բանի մամուլին բարոյական փաստակար ազդեցութեան մասին Մենշիկովը վաղուց չէ որ գնահատութիւն է արել „Книжки Недѣли“ հանդիսում: Միւս կողմից գնահատելի „Сельскій Вѣстникъ“-ը դեռ չի կարող իւր գործն այնպէս կազմակերպել, որ ամեն տարի չհարկադրէր յայտա-րարել, որ «բաժանագրութիւնը դադարած է»:

4. Ո՞ր գրքերը, հանդէսներն ու լրագիրները թոյլ է տրւում ժողովրդին կարդալ:

Ինչպէս գիւղական՝ նոյնպէս էլ քաղաքային գրադարանների և ընթերցարանների արագ տարածման շատ փնտրում են դառնում այն բազմաթիւ դժարութիւններն ու խոչնդոտները, ասում է Պրուգաւին, որոնցով մինչև հիմա այդ կարգի գրադարանների բա-ցումը շրջապատւած է մեզանում: Ժողովրդական գրադարանների գոյութիւնն էլ շրջապատւած է մեզանում, շարունակում է նա, բազմաթիւ նեղիչ պայմաններով ու ձեւականութիւններով. այս վե-րաբերում է մանաւանդ ժողովրդական ուսումնարաններին կից հիմն-ւած գրադարաններին: Նախ որ միջնատարական գրացուցակի մէջ նշանակւած գրքերի թիւը վերին աստիճանի սահմանափակ է. երկ-րորդ՝ գրքերի ընտրութիւնն էլ շատ անաջող է, քանի որ ցուցակի մէջ մտել են շատ և շատ հրատարակութիւններ աւելի քան կաս-կածելի արժանաւորութեամբ (օրինակ՝ Խիկ. Ե. Պոզաժևոյի քաղցրիկ (слащавый) շարադրութիւնները). իսկ միւս կողմից,

նկատում է Պրուգալին, այդ ցուցակից մեծ քանակութեամբ բացակայում են մեր լաւագոյն հեղինակների արտադրութիւններից շատ կարեւորները ժողովրդական ընթերցանութեան համար, այնպիսի հեղինակների արտադրութիւնները, որոնք ամբողջ Ռուսիայի պարծանքն են համարւում:

Նակուշինը քննութեան առնելով 1891 թ. գրացուցակը՝ եկաւ այն եզրակացութեանը, որ գրացուցակի պակասութիւններն ու թերութիւնները առաջանում են լուսաւորութեան մինիստրութեան ուսումնական յանձնաժողովի Ֆիզիկական անկարողութիւնից՝ իւր ժամանակին քննութեան առնելու նոր լոյս տեսած և առաջաց հրատարակութեանց մեծ բաղմութիւնը: Աւելի նւազ ապշեցուցիչ է, ասում է Պրուգալին, պ. Նակուշինի ներս բերած մի այլ իրողութիւնը վերջին 30 տարիների ընթացքում. 1860—1890 ուսումնական յանձնաժողովը հաւան է գտել ժողովրդական գրադարանների համար ընդամենը 1.600 գիրք, նոյն թւում հաշւելով նաև դասագրքերը (450 անուն), իսկ իրօք այդ շրջանում մինչև 12,000 անուն գիրք է հրատարակել, չհաշւելով դասագրքերը: Թոյլատրւածները բոլորովին բաւարարութիւն չեն տալիս թէ քանակութեամբ և թէ որակութեամբ մանաւանդ շինական հասակաւոր մարդաբնակութեանը:

Աչքէ անցնելով լրագիրների և հանդէսների մինիստրական ցուցակը՝ ամենից առաջ նկատում ենք, որ ժողովրդական գրադարաններին թոյլատրւածները միայն Պետերբուրգինն ու Մոսկւայինն են: Հետեւեալը, նկատում է պ. Պրուգալին, շատ տարօրինակ բան է դուրս գալիս. Օրէստայում կամ Սարատովում բացւած ժողովրդական ընթերցարանը զրկւած է լինում տեղական հրատարակութիւնները, ինչպէս նաև «գէմսկի» պարբերական հրատարակութիւնները ստանալու իրաւունքից» ¹⁾:

¹⁾ Այս խօսքածը վերջացրելուց չետոյ մեր ձեռքն ընկաւ լուսաւորութեան մինիստրութեան ներկայ 1896 թ. «ձրի մուտք ունեցող ժողովրդական գրադարան-ընթերցարանների գրացուցակը, որի մէջ նշանակւած էին 2.823 ժողովրդական ու մանկական գրքեր: Դասագրքերը դուրս են թողնւած, իսկ պարբերական հրատարակութիւններ 87 հատ են նշանակւած:

5. Ռուս ընթերցող հասարակութեան սիրելի հեղինակները:

Այս խնդրի մասին քաղաքներ ենք անում Ռուբակինի երկասիրութիւնից և կարծում ենք, որ մասնաւորապէս հետաքրքրական պէտք է լինի ռուսահայ ընթերցողներին, որոնք ենթակա են զլիաւորապէս Ռուսիայում տիրող դրականական հոսանքներին: Յետոյ կերպ էլ, ի հարկէ, չէր կարող լինել:

Բնագիր (օրիգինալ) բէլլետրիստիկան աւելի է կարգացւում՝ քան թարգմանականը, բայց մի քանի օտարազգի հեղինակները շատ աւելի են կարգացւում՝ քան յայտնի ռուս հեղինակները: Լ. Տոլստոյ, Դոստոևսկի, Տուրգենև և կլասիկները ետ են գնում, իսկ առաջին տեղը բռնում են նրանք, որոնք օրուայ, տարուայ, հնդամեակի, տասնամեակի հարցասիրութիւնն են զրաւում: (Այդ երեւում է չգոհացրած պահանջներից): «Մոդերն»-ները առաջ են գնում, հանրութեան մատչելիները՝ յետոյ: Այս կարգից պէտք է համարել այն տխրաւիթ գրքերի մեծ քանակութիւնը, որոնք երևան են գալիս մեծախոստում լրագրական յայտարարութեանց ազդեցութեամբ և որոնք արագութեամբ դէպի անկումն են դնում, երբ դադարում են այդ յայտարարութիւնները: Ուրեմն գիրքն ինքն ըստ ինքեան ընթերցող հասարակութեան սրտովը չէր եղել: Հեղինակներից իւրաքանչիւր խումբ ունի իւր յարգողները, որոնք, սակաւ չէ սրտառում, որ մինչև անգամ խոյս են տալիս ուրիշ խմբերից հեղինակներ գնել: «Մոդային» հեղինակների հետ մոռացւում են շատ յարգելիները: Ուշադրութեամբ դիտելով մի քանի հեղինակների նկատմամբ արած պահանջների տատանումը՝ տեսնում ենք, որ սրա կամ նրա վերաբերմամբ պահանջը հաստատուն է մնում, իսկ միւսների վերաբերմամբ՝ նա միշտ փոփոխական է, մի անհաւասար պահանջ, որ շարունակ պահպանւում է նորանոր արտադրութիւններով: Պահանջի անկման պատճառները հազիւ թէ միշտ կարելի կը լինի բոլոր մանրամասնութիւններով բացատրել: Այլ դէպքերում հնարաւոր է: Այսպէս՝ ռուս կլասիկների համար յարուցած պահանջի անկումը անմիջական կախում ունի ռուս երկրի որ և է անկիւնի ընթերցողների փոքրիկ շրջանից. նայելով թէ սա ինչ աստիճանի ծանօթ է կլասիկներին և թէ ինչ աստիճանի տարածւած է որ և է հեղինակի շարադրութիւնը՝ որոշում է:

կուլտուրան ամբոխում: Պուշկինի, Լերմոնտովի և ուրիշների էթանագին հրատարակութիւնները դուրս գալուց յետոյ՝ նրանց վերաբերմամբ պահանջը մէկէն ի մէկ ընկաւ ¹⁾: Պահանջի անկումն ու տատանումը իդէական բելլէտրիստիկայի վերաբերմամբ անմիջական կախում ունի այն գերակշիռ հովերից (Вѣянія), տիրող հոսանքներից, որոնցով որ կողմն ուզենաս՝ ուղղութիւն տուող զստակարգերը պատրաստ են լողալու, միայն թէ այդ լինէր կուշտ բարօրութեան կողմը: Ամենից շատ են այն ընթերցողները, որոնք ընտրում են՝ նայելով վերնագիրներին, իրանց հասած ձայնին, տարածւած թերթի յայտարարութիւններին, գրախօսութեան, որ և է ծանծաղ կամ չզիտեսինչ գլխի տէր մարդու ձեռքով գրւած: Ընթերցողների այս տիպարը գերակշռում է և միշտ գերակշռել է, իսկ վերջին 8—9 տարիները, ինչպէս երեւում է, ևս առաւել:

Մի քանի բրադարանների հաշիւներից երեւում է, որ գիտական գրքերից ամենից շատ պահանջւում են այնպիսիները, որոնք հարկաւոր են ուսանողներին և ուսուցանողներին: Ռուբակին ուզում է այն երեւոյթի վրայ մատնացոյց լինել, որ առհասարակ բարձրագոյն ու միջնակարգ հաստատութիւններով հարուստ քաղաքներումն է որ այս կարգի գրքերը շատ են կարգացւում: Կանանց մէջ աւելի նւաղ են տարածւում գիտական գրքերը՝ քան արանց:

Այս հետաքրքիր հատւածի մանրամասնութիւններն առաջարկում ենք հարցասէր ընթերցողին Ռուբակինի բնագրում կարգաւ, մենք վերջին անգամ այստեղ մէջ կը բերենք այս հետազօտողի ընդհանուր եզրակացութիւնը և կ'անցնենք մեր հիմնական խնդրի միւս կողմին, որին աւելի հետամուտ է եղել Պրուգաւինը: Ռուբակինի վերջին

¹⁾ Ուղիղն ասած՝ ինձ հակասական է երեւում Ռուբակինի այս ենթադրութիւնը, որ չզիտես, թէ ինչ փաստերի կամ դատողութեանց վրայ է հիմնւած: Չէ՞ որ այդ կլասիկների էթանագին վաճառելու առաջին օրը մալրաքաղաքում այնպիսի սարսափելի հրմշտկոյների պատահաւ եղաւ, որ աչս տարի լրագիրները խոյլինսկի դաշտում պատահած ամբախութեանց առթիւ՝ զուգակշիռներ էին անում երկու երեւոյթների մէջ, Թէեւ Պետերբուրգում աւելի ինտելիգենցիան էր խռնւողը, աչնումանայելի մոռանալու է, որ Ռուբակինի խօսքը սրա մասին է և սա էր ահաղին քանակութեամբ սպառողը նաև ալ տեղեր:

եղրակացութեան ծուծն այս է. «իրողութիւններից երևում է, որ, եթէ արտօնեալ (привилегированный) դասի ընթերցող հասարակութիւնն այնքան էլ լաւ չէ, ինչպէս այդ, գուցէ, երևում է, ժողովրդից ելած ընթերցող հասարակութիւնն էլ այնքան գէշ չէ»։ (Այստեղ խօսքը մէկի կամ միւսի գրքեր ընտրելու կարողութեան ու ճաշակի մասին է)։ Աշխատաւորները քիչ են, գրքերը՝ քիչ։ Սրանք անհերքելի իրողութիւններ են։ Բայց աշխատաւորները դեռ այնքան քիչ չեն, որքան նրանց միութիւնը։ Դրքերի, լաւ գրքերի թիւն այնքան քիչ չէ, որքան նրանց դանդաղ տարածումը ընկերութեան, ժողովրդի մէջ»։

6. Գոեթիկ գրականութիւնն ու նրա հեղինակները։

Ռուսաց գրականութեան մէջ սրանք անւանւում են ЛУДОВИЧНЫЕ ИЗДАТЕЛИ կամ ЛУДОВИЧНИКЪ-ներ, մի արմատական բառից կազմւած, որի ծագման բացատրութիւնները սեսակ-տեսակ են։ Վերը այս կամ այն առիթով գործոնների վրայ խօսելով՝ մենք «գոեթիկ հրատարակիչներ» անւան տակ յիշեցինք։ Սրանք ինքնատիպ, ուսական կեանքից բխած մարդիկ են, ուսական էլ ինքնատիպ անունով։ Դիմենք ուրեմն Պրուդաւինին, այս «քաղաքակրթիչ» գործոնների աշխատութեան մասին գէթ հարեանցի գաղափար կազմելու համար։

Ով այս «լուբոճնիկ»-ների գործունէութեան կենտրոններում չի եղել, նա ճանաչում է գոնէ սրանց կարմրաթուշ, հաստիկ մուժիկ-ցրիչներին, որոնք «օֆէն» են անւանւում։ Այս օֆէնները լայնատարած Ռուսիայի մի ծայրից միւսն են չափում, նայելով հանգամանքներին՝ ոտով, սայլով, երկաթուղով։ Բայց այս մասին յետոյ։ Այս ցրիչների տէրերը և սրանց «լիտերատոր» գործակատարները ուս ինտելլիգենցիայից շատ աւելի վաղ սկսել էին, շահագիտական նպատակից դրդւած՝ ուսումնասիրել ժողովրդի ճաշակի թոյլ կողմերը և ամենուրեք հեղեղել իրանց միլիոնաւոր «սիրուն ու լաւ» գրքերով։ Ի հարկէ, նոյն ժողովրդի ծոցից բուսած այս գործիչներին աւելի դիւրին էր իրանց նպատակին հասնել, մանաւանդ որ ամեն ճանապարհ դէպի իրանց դրամական Երուսաղէմն էր տանում։

Ժամանակակից «լուբոճնի» գրականութեան արտադրութիւնները ըստ բովանդակութեան երկու գլխաւոր խմբի են վերածւում։

ա. հոգեւոր և բ. աշխարհական: Ա. խմբին վերաբերեալները դարձեալ վերածուում են. 1. Վարք սրբոցների, 2. Սաղմոսների, ժամագրքների, կտակարանների, աղօթագրքների. 3. Հոգեւոր-բարոյական բովանդակութեամբ պատմութիւնների և խրատների:

Բ. խումբը բաղկանում է. 1. Հէքիաթներից, 2. Պատմաճշ.ներից, 3. Վէպերից, 4. Պատմական զանազան նկարագրութիւններից, 5. Երգարաններից, 6. Երազահաններից ու ռուս ճեփեմերսիներից» (оракулы) և վերջապէս 7. Օրացոյցներից:

Այս գրականութեան ճիւղերից ամենաճանրալիւս դերը կատարում է վիպականը, որին աջողւել է ամենայն հաճոյատարութեամբ ծառայել ժողովրդի մութ խաւերի քմքին: Պրուգալին մանրամասն խօսելով դրականութեան այդ ստորագոյն ներկայացուցչի մասին՝ նկատում է. «Եւ ահա «լաբէյակի և կաբացի» պօէզիայի այս տեսակ արտադրութիւններն են, որոնք մամուլի և գրքի միջոցով տարածւում են գիւղէ գիւղ, և այսպիսով նպաստում այն հիւանալի երգերի և պօէմաների դուրս մղելուն, որոնց ստեղծել է մեր ժողովուրդը և որոնցով նա իրաւունք ունի պարծենալու: Յայտնի է, որ ռուս ժողովրդական երգերի վերաբերմամբ արտասահմանի զինականների շրջանում ամենանպաստաւոր կարծիքներ ունեն, կարելի է ասել, հիացմունքով են խօսւում նրանց մասին»:

Ճեփեմերսիներն ու երազահաններն երգարաններից աւելի կազմում են իւրաքանչիւր «լուբոշնիկի» անհրաժեշտ սեփականութիւնը: Ճեփեմերսիների և երազահանների այս կարգում պէտք է դասել նաև կին ընտրելու զանազան ձեռնարկները, կնոջ սրտի բանալիները, չիմար ու անպարկեշտ բովանդակութեամբ գրքեր:

Բոլոր «լուբոշնի» հեղինակների գլխաւորները այս երեքն են. Մ. Եւստիգնէև, Վ. Սուվորով և Ի. Կասսերով: Առաջինը համալսարանը կիսկատար թողած մարդ է, երկրորդը ծառայութիւնից հեռացած սպայ, երրորդը՝ գիւղացի: Նրանք մի թերթանոց 3³ երեսնոց գրքոյկները գրում են մի ղիշերում, ընդհանրապէս փոխադրում են յայտնի հեղինակների շարագրութիւնները, մի գրքոյկի համար 3—4 սուբլի ստանալով: Սակաւ չէ պատահում, որ այս բելլէտրիստիկան թխւում է նոյն իսկ օղիի սեղանի վրայ: «Լուբոշնիկները» ամենից շատ ուշադրութիւն են դարձնում գրքի մակա-

գրութեանը, որ նա աւելի բարձրաբաւ լինի, աւելի աչքի ընկնի: Իսկ լաւագոյն ռուս հեղինակների բնագիրները մինչև վերջին ժամանակները չէին պատահում «լուբոչնի» գրականութեան մէջ: Բայց վերջին ժամանակս էլ միայն Պուշկինի և մասամբ Տոլստոյի ու Օստրովսկու շարադրութիւնները «լուբոչնի» գրականութեան սեփականութիւն դարձան: Ինչ վերաբերում է միւսներին, աւելի էլ քիչ են երեւում: Օտարագրի հեղինակներից պատահում են մի քանի վէպերի, փոխադրութիւնները: Ժողովրդական լուբոչնի գրականութեան բնորոշ առանձնաշատկութիւններից մինն էլ է, ի միջի այլոց, միւսնոյն արտադրութեան վարիանտների ահագին առատութիւնը:

Ներկայումս ժողովրդական լուբոչնի գրականութիւնը զանաւանդեալ է հակադիր ազդեցութեանց ներքոյ. մի կողմից նա սկսում է զգալ ինտելիգէնտ գրականութեան ազդեցութիւնը, միւս կողմից հետզհետէ աւելի ու աւելի ենթարկւում է այս առանձնաշատկ «փողոցային գրականութեանը», որ իրան համար բոցն է շինել Մուկաչով «на Никольской» (Նիկոլսկայա փողոց) և որը յայտնի է «лакейская» (լակէյսկայա, ծառաների գրականութիւն) անունով: Լուբոչնի ռումաններից ամենաշատ տարածւածը, ամենից շատ ժողովրդականութեան արժանացածը «Английский милорд»-ն է — յիմար ու ցանցառ միլորդը իւր կեանքի անբարոյական նկարագրութիւններով:

7. «Լուբոչնի» հրատարակիչներն ու սրանց ցրիչները

Նիկոլսկու (այսպէս են կոչւում Մուկաչի մի փողոցի անունով յայտնի կարգի հրատարակութիւնները), հրատարակիչներից զլիսաւորներն են Նիկոլսին, Ջեմսկի և Պրէսնով: Այս ռամիկ հրատարակիչ-գրավաճառները Ռուսիայում ահագին առևտրական գործ են կատարում, միլիոնների հետ են խաղում, մինչդեռ, ինչպէս տեսանք, սովորական գրավաճառանոցները մինը միւսի ետեւից սնանկութեան են դատապարտւում՝ զրքերը փթով աճուրդի տալով: «Լուբոչնի»-ների մէջ շատ յայտնիներից մէկն էլ Գուբանովն է, որ անգրագէտ է. միւսը հազիւ ստորագրում է իւր անունը: Սրանք զանազան քաղաքներում մեծ շրջանառութիւններ ունին:

Լուբոչնի հրատարակիչների զլիսաւոր ոյժը կայանում է վա-

ճառման այն կազմակերպութեան մէջ, որից նրանք օգուտ են քաղում և որ բաղկանում է օֆէնսների, խողերաշինների ու կորորէշինիների ամբողջ լէգէոնից: Հացի հունձը քանի աւելի լաւ լինի, այնքան աւելի աջող կը գնաց օֆէնսներին՝ գործը: Նրանց կարելի է հանդիպել Կովկասից մինչև Արևմտագէլսի, Տաճկաստանից, Բալկանեան թերակղզուց մինչև Սիբիր:

Իւրաքանչիւր օֆէնսեա կամ գլխաւոր ցրիչ, հէնց որ միջոցները նրան թոյլ են տալիս, աշխատում է գործակատարներ ձեռք բերել, որոնց նա ուղարկում է ապրանքով զանազան կողմեր: Աւելի հարուստները 10—15 կամ աւելի էլ շատ ցրիչներ են ունենում: Վարձւում են յուլիսի կէսից մինչև Զատիկ 120—150 ռուբլով: (Պրուգաւինը պայմանագրի օրինակն է գրել իւր գրքի էջ 311): Սրանք վաճառում են նոսե պատկերներ ¹⁾ ու եկեղեցական «իկոններ», և, օրինակ, Սիբիրի խուլ տեղերն ընկնելով՝ անտեղեակ ժողովրդին խաբելով 3 ռ. բանի համար 30, 50 մինչև 100 ռ. են առնում: Սրանից զատ ճանապարհին պատահած զանազան այլ ապրանքների առ ու ծախսով էլ են պարագում: Գրքերն ու պատկերները մուժիկներին պարտքով էլ են տալիս՝ մինչև հետեւեալ տարին վճարելու պայմանով: Օֆենսեան օթեանի և այլ մանր ծախքերը պատկերներով է վճարում: Նրա աշխատութիւնը հեշտ բան չէ. ճանապարհի վտանգները, կրած նեղութիւնները պաշտօնեաների կողմից, կորուստները ծանր են:

Այս ցրիչների յարաբերութիւնները գիւղացիների հետ այնքան լաւ են, որ աւելի ցանկալու պէտք չկայ: Առաջւայ ժամանակները օֆէնսների բանն աւելի լաւ էր. զրավաճառները նրանց սովորաբար հաւատում էին այն աստիճան, որ մոլորհակ գրելն էլ աւելորդ էին համարում, իսկ հիմա այդ սակաւ է պատահում: Սովորաբար օֆէնսները նախապէս վճարում են ամբողջ գումարի $\frac{1}{3}$ -ը, հազիւ է պատահում $\frac{1}{2}$, մնացորդն էլ վճարում է ապրանքով:

¹⁾ Ընդհանրապէս պատկերները գրքերից աւելի են սպառւում. նրանք մուժիկի հասկացողութեանը աւելի մատչելի են, բայց կոպիտ ու անճոռնի ներկատեքենան ալ և. նրան չեն գոհացնում, աւելի ու աւելի պահանջ է դրացւում գունաւոր վիմագրութեան:

Ռուս ինտէլլիգէնտ ձեռնարկութիւններէց „Посредникъ“ (Պոսրեդնիկ, Միջնորդ) հրատարակութիւնները սիրով գնում է քաղաքային ինտէլլիգէնտ հասարակութիւնը: Օֆէններէց քչերն են այդ գրքոյկներն առնում, որովհետեւ համեմատելով «լուբո՜չնի» հրատարակութեանց գնի հետ՝ 100 գրքոյկին 15 կոպէկ աւելի թանկ է գալիս: Ուրեմն չնայելով «Պոսրեդնիկի» հրատարակութեանց ներքին անպայման գերակշիռ արժանաւորութիւններին, նրանք յետ են մղւում միայն մի գրքոյկին ¹⁵/₁₀₀ կոպ. թանկ լինելու պատճառով! Պոսրեդնիկը, իբր մասնաւոր գործոն Ռուսիայի բոլոր ինտէլլիգէնտ նոյն օրինակ ձեռնարկութեանց մէջ, կարեւոր տեղ է բռնում: Նա միացրեց գրքոյկների ներքին արժանաւորութիւնը «լուբո՜չնիկներին» հրատարակութեանց արտաքին նպաստաւոր պայմանների հետ: Սակայն, ի հարկէ, նրանց դատապարտելի միջոցներից (սոյս տւեց ¹⁾), աշխատեց զինն այնտեղ հասցնել, որ «Լիստովկա» 16 եր. փոքրադիր գրքոյկները, հիմա 3 կոպ. հատով են ծախւում: Նա գըրքերի կողքին գեղեցիկ ու գրաւիչ սլափերներ դրեց, պարզ մանկագրութիւնները ընտրեց ու ժողովրդին զիպչող արտայայտութիւններից (սոյս տւեց: Վերջերս էլ որոշ պայմաններով յանձնեց իւր գրքոյկները լուբո՜չնիկներին՝ տարածելու համար:

Իրանք օֆէնները հատով կրկնակի գնով են ծախւում՝ 3—4 ական կոպ., որովհետեւ, ասում է Պրոսգաւին, հարկադրւած են լինում ամեն տեղ «իէշքէշներ» (на водки) տալ պաշտօնեաներին: Շատ աշխատութիւն է հարկաւոր նրանց „добиться правъ“, այսինքն մամուլի արտադրութիւնները ծախելու թոյլտուութիւն ստանալ ու համար: Հիմա օֆէնների առւտուրը նւազեց, որովհետեւ իւրաքանչիւր քաղաք իւր գրավաճառներն ունի: Առաջ նրանք բոլորովին ազատ էին զիրք ծախում, իսկ շնորհիւ 1865 թ. նոր օրէնքներին՝ նրանց գործունէութիւնը շրջապատւած է զանազան նեղ պայմաններով: Օֆէնները ամենեւին չեն հետաքրքրւում գրքոյկների բովանդակութեամբ. գնելիս նրանք առաջնորդւում են միայն վեր-

¹⁾ Բայց նրա գրքերից մին որ բարձրաբարբառ մականգրութեամբ է՝ «Բրիտոսը մութիկի մօտ հիւր», հեղ. Լիսկովի, նրա հրատարակութեանց մէջ ամենից շատ տարածւած է, չնայելով որ Տոլստոյին էլ ունի:

նագիրներով և աւելի շատ՝ գնով: Նրանք ասում են. «մենք գիւղերում չենք առուտուր անում, այլ միայն քաղաքներում և մեծ ու հարուստ գիւղերում: շէնքերի մէջ չարժէ 5 կոպէկի համար կանգ առնել, քանի որ քաղաքում ես կարող եմ մէկ կամ երկու ռուբլու ծախել: Մեր ապրանքը աւելի թանկ է, մուժիկի գրպանին համապատասխան չէ: Իսկ ինչ վերաբերում է քաղաքին, այնտեղ մեզանից առնում են վաճառականները, պարոնները, չինովները, հոգևորականները:

8. Ռուս ինտելիգէնցիայի ծոցումներն այս գործում:

Յայտնի է թէ ինչպիսի վառ հարցասիրութեամբ էր վերաբերում հանգուցեալ բանաստեղծ Նեկրասովը ժողովրդի մէջ տարածող գրքերի հարցին, թէ ինչպէս սաստիկ էր ցանկանում նա ապրել մինչև այն ժամանակ, երբ «*мужикъ не Блюхера и не Милорда глупаго, — Бѣлинскаго и Гоголя съ базара понесетъ*» (երբ որ մուժիկը փոխանակ Բլիւխէրին ու Գիմար Միլորդին՝ շուկայից Բէլինսկուն և Գոգոլին սոււն կը տանի): Նա հրատարակեց երկու գրքոյկներ 3-ական կոպէկով զրաւաճառի և օժէկնեայի օգտին, բայց 1863 թ. օրէնքները, գրաքննական խստութիւնները նրան թոյլ չտւին այս ձեռնարկութիւնը շարունակելու: Նահանգական ինքնավարութիւնները (գեմսաւօններ) վերջին ժամանակս հոգածութեամբ են վերաբերում այս խնդրին, բայց դեռ միայն գրադարաններ ու ընթերցարաններ են բաց անում, հազիւ գրքերի պահեստներ:

Պրուգաւինը զբաղւելով ժողովրդի մէջ գիրք տարածելու միջոցների հարցով, առաջարկում է այնպիսի ցրիչների ցանձնել նրանց որոնք միւսնոյն ժամանակ բացատրէին բովանդակութիւնը, մի տեսակ շրջիկ դասախօսների դեր կատարէին, ինչպէս այդ գրութիւնը վաղուց գոյութիւն ունի Գերմանիայում, Անգլիայում և արեւմտեան Եւրոպայի մի քանի այլ երկիրների մէջ: Ռուսիայում երկու ուսանողներ խնդիր տւին մի նահանգապետի, որ իրանց թոյլ տրի ամառային արձակուրդներին գիւղերում ընթերցանութեան գրքեր տարածելու, բայց սրանք չստացան թոյլտուութիւն: Մի այլ նահանգում մի ուսուցիչ հասաւ նոյն նպատակին և բաւականին աջողութիւն ունեցաւ:

Ինչ էլ որ չասէին «զէմսկի» ինքնավարութեան թշնամիներն ու վատսքանողները, նկատում է Պրուգաւին, անկասկած, շնորհիւ միայն «զէմսուօ»-ների հոգատարութեան ժողովրդական կրթութեան գործը կամ, աւելի ճիշտ է ասել, գրագիտութեան տարածումը ժողովրդի մէջ այսպիսի յառաջադիմութիւն է արել վերջին 25 տարիները, որ այսպիսի կարճ ժամանակամիջոցում անհնարին բան էր առաջաչ, մինչև 1861 թ. ուէփորմները գոյութիւն ունեցած, հանգամանքներում, երբ այդ գործը ամբողջովին զտնւում էր զանազան վարչութեանց «չինովնիկների» և հոգևորականութեան ձեռքում: Բայց գրագարանում (զէմսուօների բացած) և ընթերցարանում միայն մոլորիկը ծանօթանում է գրքոյկի բովանդակութեանը, իսկ ձեռք բերել հաւնած գիրքը նա կարող է միայն պահեստում, կրպակում կամ ցրէից առնելով: Մինչդեռ այդպիսի պահեստներ գոյութիւն ունին մինչև հիմա միայն շատ քիչ «զէմսուօ»-ների մէջ: Սակայն ցարդ ոչինչ չի լսւում զիւղական գրավաճառանոցների հիմնարկութեան ¹⁾ կամ առանձին «զէմսկի» ցրիչներ ձեռք բերելու մասին: «Ջէմսկի» պահեստներում հիմա շատ էժան են ծախւում դասագրքեր, դասական պիտոյքներ, այլ կրթական հաստատութեանց պարագաներ, մանկական գրքեր, ժողովրդական էժանագին հրատարակութիւններ: Շատ հիմնարկութիւններին պահեստները ապառիկով էլ են տալիս: Բայց քանի որ գրավաճառանոցները միայն կենտրոններումն են, զիւղացիք իրանք գրքեր բերել չեն տալ այս զէմսկի պահեստներից: Այնուամենայնիւ Պրուգաւինը տեղեկութիւն է տալիս, որ շատ գաւառներում և գաւառական «զէմսուօ»-ներում բացւած են արդէն պահեստներ, որոնք մատչելի են զիւղական հասարակութեանը:

Բացի «զէմսուօ»-ներից և «գրագիտութեան յանձնաժողովներից» (Комитеты грамотности), ժողովրդի մէջ օգտակար գրքեր տարածելով զբաղւած են նաև ժողովրդական սկզբնական կրթութեան հոգածու ընկերութիւնները, որոնք վերջին տարիներս երևան են գալիս զանազան նահանգական ու գաւառական քաղաքներում:

¹⁾ Նորագոյն լրագրական տեղեկութեանցը նախելով շատ նահանգների զէմսուօներն սկսել են արդէն ալս կաշիքն էլ լցուցանել:

Ռուսիայի մէջ ժողովրդական գրքոյկներ հրատարակելու և տարածելու գործով պարապում են ինտելիգէնտ շրջաններից բացի վերոյիշեալները՝ նաև Մարակու (?) և «Народная библиотека» (Ժողովրդական գրադարան), «Общество распространения полезных книгъ» («Օգտակար գրքեր տարածող ընկերութիւն»), մանաւանդ Խարկովինը, «Русская мысль» հանդէսը, վերջապէս շատ մասնաւոր անձեր, ինչպէս ամենից նշանաւոր Պաւլենկովը, ապա Բուբակինը, Կոտելնիկով, Դէւրիէն ու Տիխոմիրով և այլն:

«Русская мысль» հանդէսի գործունէութիւնն առանձին ուշադրութեան արժանի է. թէև նրա գրքոյկները «Գրագիտութեան յանձնաժողովների» հրատարակածների պէս «Միջնորդ»-ինից թանկ են, սակայն առանձին կշիռ ունեն նրա զրախօսութիւնները: Սրանք մասնաւորապէս յանձնատարւում են գրադարանապետներին իբրև ուղեցոյց, իսկ մենք կը ցանկայինք, որ մեր հրատարակիչներն ու թարգմանիչները որ և է ձեռնարկութիւն անելուց առաջ՝ պարտք անհրաժեշտ համարէին ուսումնա յիշել վերցրած գիրքը նաև այս աղբիւրից:

(Վերջը չաջորդ անգամ)

ՖՐԻԴՐԻԿ ՆԻՇՇԷ

(Fridrich Nietzsche)

(Հավանում տեսութիւնն Նրա փիլիսոփայութեան մասին)

Վ. ՓԱՓԱՋԵԱՆԻ

Գերմանական լրագիրները հաղորդում են, որ գերմանացի աշխարհահռչակ փիլիսոփա Ֆրիդրիկ Նիշշէն (Nietzsche), որ վաղուց ի վեր «խելագարւած» էր, ալժամ շատ աւելի վատ դրութեան մէջ է. որ առաջ նա կատողանում էր գոնէ մօր հետ զբօսնել, իսկ ալժամ ալ ևս չէ կարողանում և, մեծ մասամբ հաստած մնալով բազկաթռուի մէջ, անզրպէ իր շրջակայքին, հալեացքը անհունութեան մէջ կորսւած, ինքնամոռացութեան մէջ է ընկնում:

Նոյն լրագիրները լաւտնում են, որ փիլիսոփայի բոլոր գործերի մի նոր հրատարակութեան աւելացրած է Նրա մի նոր բրոշիւրը «Հակաքրիստոս» (Antichrist), որի կծու ու կարուկ վարդապետութիւնը, քրիստոնէութեան դէմ քարոզած համարձակ մտքերն էլի մի անգամ մեծ աղմուկ է չառաջացրել «ուղղափառ» ալ և պաշտօնական փիլիսոփաների մէջ:

Որպէս Լ. Տոլստոյի վարդապետութիւնը, նոյնպէս և իր առաջարկած միջոցներով Նրան հակասող Ֆր. Նիշշէնի փիլիսոփայութիւնը՝ դարուս վերջին քառորդում ունեցան իրենց բազմաթիւ հետևողները ամեն տեղ, եւրոպական ամենափոքր ազգի գրականութիւնն անգամ ունի տւած Նիշշէնի գրւածքներից եթէ ոչ ամբողջ, գոնէ քաղածական թարգմանութիւնը, միայն մեր գրականութեան մէջ է, որ, եթէ չեմ սխալւում, առաջին անգամը լինելով, խօսւում է Նրա մասին:

Ֆրիդրիկ Նիշշէն, գերմանացի լաւտնի փիլիսոփան ալժամ 52 տարեկան է և խելագար է: Աւելի ուղիղ կը լինի ասել որ ոչ թէ խելագար է, ալ ուղեղալին չողնած ու ընկճւած, մտածողական անկարողութեան մէջ է գտնուում: Դրան աւելացրէք նաև ֆիզիքական տանջւած ու ծիրւած դրութիւնը, ալ և ան գիտակցութիւնը, որ էլ չէ կարող մտածել, հետեւել

մտալին սլացմանս Նստած է նա մօր մօտ, մեղամաղճոտ կերպով նալում է նրան և աղեխարչ է, երբ զգալով իր անկումը, գոչում է.

—Ich bin dumm, Mutter!... (Յիմար եմ, մալրիկ): Որքան ճնշիչ է Այդ հանճարը, որի իւրաքանչիւր ափորիզմը խորապէս մտածել է տալիս, որի իւրաքանչիւր տողը ներշնչւած է կարծես մարգարէական ոգով, որ բարձրութիւն և կատարելութիւն էր երազում, աւելի կատարեալ քան ինչ որ է ալփմեան մարդկութիւնը... ալդ թշուառը ալժամ ընկել է, ընկճել, անկարող և զգում է իր դրութիւնը:—

—Յիմար եմ, մալրիկ...

Փրիզլիկ Նիչչէն երկու համալսարաններում պրոֆեսորութիւն է արել և ապա, Շոպէնհաուէրի պէս, չկարողանալով տանել իր պաշտօնակիցների աւանդական շրջափակ միջնորդը, թողել է. Յետոյ ճանապարհորդել է նա շատ տեղ և շատ ու շատ թշուառութիւն կրել:

Նիչչէն, որպէս և դարավերջի մեծ երաժիշտ Վադնէրը, նկատեցին շատերից որպէս խենթեր, ալլասեռւածներ: Մաքս Նորդաուէն, իր «Ալլասեռումն» գրքի մէջ որպէս մեծ նմուշ է ներկայացնում ալլասեռման թէ մեծ երաժշտին և թէ շատերի հետ նաև սիմբոլիստ Նիչչէին: Խենթ են անւանում մանաւանդ նրանք, որոնք աւանդական մտալին կապեր են հաստատել իրենց կշռադատութեան շուրջը, որոնք որոշ սահմաններ են դժել ալս ինչ կամ ալն ինչ հասկացողութեան համար և որոնք անշարժութիւնը դերադասում են մտալին ըմբոստութիւնից: Եւ սակաւն պատմութիւնը ցոյց է տալիս որ մտալին ըմբոստութիւններն են եղել առաջին մութեան առաջնորդները:

Ասել խենթ, անհաւատ, խառնակիչ կամ անորմալ՝ մի նոր մտածողութեան, մի նոր թէօրիալի, որ ձգտում է բարձրանալ ամբոխալին «նորմալ» դրութիւնից—դա նշանակում է խենթ և ալն անւանել նոյն իսկ պրոգրէսը. որովհետեւ, ինչպէս ասում է Նիչչէն իսկ՝ «ինչ որ լաւ է ալփ, առաջ անորմալ է եղած, աչսինքն հակառակող եղած սովորութիւններին և բարձրին ու մինչև իսկ անբարոյական համարել, և աղպիսով նա կռծել է որթի պէս՝ իր գերերջանիկ հնարողի սիրաը (Zur Genealogie der Moral):

Նիչչէն, ըստ ամենալն հաւանականութեան, ծնւել է իր ժամանակից առաջ: Տեսնելով ներկալ ընկերական կազմակերպութեան անտեղիութիւնն ու հրէշաւոր անհաւասարութիւնը, ապրելով բազմաթիւ թշուառների և մի ափ առանձնաշնորհեալների ալդ կոնտրաստի (հակադրութեան) մէջ, նա գտնում է որ մարդկութիւնը շատ ցած է, փոքր է, դժոււ և որ նրան հարկաւոր է բարձրացնել: Եւ նա երազում է ալն ապագան, ալն վսեմ

բարձրութիւնը, ուր գոյութիւն չի ունենալ ոչ մի թույլ, անկարող, ճնշած արարած... Թափում է նա իր մտալին բոլոր թոյնն ու դառնութիւնը ներկա ընկերութեան վրա և երազում է կատարելութիւն, բարձրութիւն... Բայց ահա այդ կատարելութեան հասնելու անհուն փափաղն է, որ նրան ձգում է մի անդուծ, դրեթէ գալլային վարդապետութեան մէջ:

«—Լինել ամեն բանից բարձր՝ ինչպէս իր երկինքը, իր կամարը, իր երկնալին դմբէթը, իր չափաւանակաւ ապահովութիւնը... Եւ օրհնեալ լինի նա, ով այդպէս է օրհնում...»:

Ահա այն վսեմ խօսքերը, որով նա սկսում է իր խրատները: Եւ երազում է նա ստեղծագործութիւն այն Գերմարդի (der Uebermensch), որի սերունդն աւելի բարձր կը լինի քան ներկա ընկած մարդկութիւնը:

«—Թող աստղի մի ճառագայթ ցոլալ քո սիրոյ մէջ, թող քո չոյսը լինի թէ՛ կարող լինէի ծնանել «Գերմարդ»!...»

«—Բոլոր էակները մինչև՝ ալժամ ստեղծել են իրենցից առաւել բարձր էակ, և դուք, դուք կամենում էք լինել այդ մեծ մակընթացութեան տեղատուութիւնը և դէպի անտաճը, նախնականը դառնալ՝ քան թէ մարդը զերազանցել...»

«—Ձեր որդիները երկիրը պիտի սիրէք դուք. այդ սէրը թող լինի ձեր նոր աղնականութիւնը: Դէպի այդ անծանօթ երկիրն է, որին ես հրամայում եմ պարզել ձեր առագաստները ամենալն լաւնութեամբ... Դուք պիտի ձեր որդիները մէջ դարմանէք ձեր հօր որդիները լինելու վատութիւնը. այդպիսով դուք պիտի դարմանէք ձեր ամբողջ անցեալը: Ահա նոր օրինաց տախտակը, որ ես պարզում եմ ձեր գլխի վերեւը!»:

Այս երեք կտորը բաւական են հասկացնել տալու թէ ինչ է Ֆրիդրիկ Նիշչէի ձգտումը: Սիրել որդիները երկիրը. ալսինքն տենչալ այն մեծ, կատարելագործւած ու երջանիկ ապագան, որ զերծ է լինելու ալժաման ստորութիւններից, կեղծութիւններից և ահաւոր խաղաառակութիւններից: Մի անծանօթ երկիր, որի մէջ մարդիկ պիտի արամարհեն մեղ—իրենց հալերին, մեր տխմարութեան, մանաւանդ փոքրոգութեան վրա... Սիրենք այդ ապագան, տենչանք նրան, աշխատենք աւելի փութացնել նրա գալուստը և գրանով դարմանենք մեր՝ աւելի պակասատը հալերի որդիները լինելու վատութիւնը:

Թէ Նիշչէն և թէ Լ. Տոլստոյը ալդ ձգտումով մօտենում են միմեանց:

Թէ Նիշչէն և թէ Լ. Տոլստոյը ունին անկեղծ ու ճարտար արտաշատութիւն մարդկալին ալժմեան ընկերութեան բարոյական կեանքի, ալ և աշխարհացեցութիւնների դէմ: Նրկուսն էլ կծու կերպով բողբում են ալժմեան մարդկութեան—«քրիստոնէական» ընկերութեան կազմակերպութեան դէմ, նկարագրելով նրա բոլոր կեղտը և ապացուցանելով որ չաճախ խաբեբալ բարեգործութիւնների և օրինաւորութեան տակ ծածկւած կան ամեն տեսակ կեղտեր ու ախտեր:

«Այդ բոլորի ցանցաւորները—բացատրում է «Вопросы псих. и философии» հանդէսի կրկնակոթը—նրանք համարում են պետութիւնն ու եկեղեցին»

Նրանք տիրապետութեան իրաւունքը տալիս են միմիայն կշռադատութեան (raison, разумъ) և լուրջ անալիզին: Նրանք ձգտում են ազատել անհատին բարոյական և սովորութիւնների զանազան պաշտաններից և հասկացողութիւններից. բարձրացնել անհատին ինքնաճանաչութեան, փոխել նրա բարոյական կեանքը, ստեղծել նոր, աւելի ազատ ու բարձր անհատականութիւն և այդ հիման վրայ կառուցանել մի նոր ընկերութիւն, մի նոր մարդկութիւն:

Առհասարակ երկուսն էլ, թէ Լ. Տոլստոյը և թէ Ֆ. Նիշէն ձգտում են ազատել անհատին՝ նրան նեղող ու կաշկանդող բոլոր կապերից, բոլոր չղթանքներից:

Այստեղ արդէն վերջանում է երկուսի նմանողութիւնը: Երկուսն էլ սկսում են առաջարկել միջոցներ՝ այդ բոլորին հասնելու համար: Այդտեղից նրանց ճանապարհները բաժանւում են և բոլորովին տարբերում միմեանցից աչնայէս, որ զիմանտրապէս իրարու հակառակ են գնում:

Լ. Տոլստոյի համար աւետարանն ու իր բարոյականը, գթութիւն և բարութիւն, սէր և ալտրուալիզմ միակ միջոցն է հասնելու այդ ձգտման: Ֆր. Նիշէն աչնայէս չէ: Նա բոլոր չարիքը գտնում է նրա մէջ, որ անհատը չղթալած է բարոյական կապերով, քրիստոնէական կրօնի դրած բարոյական աշխարհացեղողութիւնով: «Որպէս զի—ասում է Նա—անհատը կարող լինի ազատ և կատարեալ կերպով արտաշնչել իր բոլոր ուժը, պէտք է նա ազատ լինի իր անհատական բոլոր գործողութիւնների մէջ և ազատ՝ անմաքուր խղճի կապերից (Genealogie der Moral).—«Մարդս դադարում է չար լինել, երբ Նա դադարում է իրեն չար կարծել: Պէտք է անհատին ազատել «բարոյական պատասխանատուութիւն» կոչւող քրիստոնէական վարդապետութեան հասկացողութիւնից: Նւ այդ նրա համար է հարկաւոր, որ մարդկութեան կեանքի միտքը կաշանում է միայն անհատի կարելի եղածին չափ զարգացման մէջ, մարդկային տիպի բարելաւութեան, մարդ-կենդանու կատարելատիպութեան—Կերմարդը գոյացնելու մէջ:

Ահա ընդհանուր խօսքերով Նիշէնի փիլիսոփայութեան էութիւնը: Նա, ինչպէս տեսնում էք, ձգտումով բարձր է, բայց միջոցով էգոիստ: Նւ բնական էլ է ուրեմն որ իր բառարանից ղէն է չպրտել սէր, գթութիւն, բարութիւն և ալտրուալիզմ բառերը:

Առհասարակ նկատելի է, որ շատ հեշտ է նկարագրել, պատկերացնել չարիքը. աւելի հեշտ՝ քան տալ մի առաջարկ, մի միջոց՝ նրանց ալմատախիլ անելու: Ո՞վ չգիտէ ալժմ թշառ պրոլետարիալի (օրապահիկ ապրողների) զրութիւնը, գործաւորների կեանքը... Որպիսի նկարագրողներ, որպիսի լաւ գրածքներ պատկերացրել են մեր առաջ թշառ զրկած—

ներն անստանելի կեանքը. բայց, տեսէք մէկ, քանի տեսակ միջոցներ են առաջարկուած իրր զարման. մէկը միւսից անիրագործելի, թէն չաճախ շատ համակրելի, շատ գրաւիչ պերսպեկտիւով, բայց մէկը միւսից պակասաւոր, ուտոպիական (utopique), կան առաջարկած կտրուկ միջոցներ, բայց... ալնքան առարկութիւններ են վերցնում, ալնքան դժարութիւններ առաջադրում: Որքան հիշտ է եղել չարիքը գոյացնել և որքան դժար է թուում նրան ոչնչացնել...

Այդպէս է Նիչչէն: Սքանչելի է նա, երբ բողբում է, երբ զարման պահանջում. բայց գրէթէ զգւելի է, երբ միջոցներ է առաջարկում. միջոցներ, որոնց հիմքն է մի բացարձակ անհատամոլութիւն, թուլերի ճնշում, զօրեղներին քաջակերութիւն և աւտրուկստական բոլոր զգացմունք ների ոչնչացումն: Նա գտնում է որ ամէն ոք իրաւունք ունի անսահմանապէս անհատամոլ (individualiste) լինել, զարդանալ ըստ կամայ և մի կողմը ձգել խիղճ կամ պարտականութիւն դէպի ուրիշները, որոնք միմիայն արգելք են լինում անհատի կատարելութեան. ալսինքն դէն ձգել խիղճն ու պարտականութեան զգացմունքը, բարութիւնն ու գութը:

«Բարինները—ասում է նա—ստեղծել չեն կարող, նրանք միշտ վերջի սկիզբն են. նրանք խաչում են նրան, ով նոր արժէքներ է գրում նոր տախտակների վրայ. նրանք զոյում են, խաչում ամբողջ մարդկութիւնը» (տես Also sprach Zarathustra, — «Այսպէս խօսեց Չարաթուստրան» գրքովը):

Ուզում է ասել, որ բարինները գթալով խեղճերին և մանաւանդ թուլերին, չարատանցնում են թուլ մարդկութիւնը և արգելք դառնում նրա զօրեղանալուն, կատարելագործելուն: Եւ սրովհետեւ ըստ կազմութեան բոլոր անձերը չեն կարող հասնել ազգային կատարելագործութեան, ուրեմն պիտի ադատութիւն տալ միայն «աւելի լաւ անձերին» իսկ ամբողջին թողնել կրաւորական դեր, զործիք և պատւանդան լինել ալը «լաւագոյն» անձերի բարձրանալուն:

Այդտեղ արդէն Նիչչէն պարզում է իր զգւանքը դէպի քաղաքական իրաւունքների և ընկերական արտօնութիւնների հաւասարութիւնը, որովհետեւ, նրա կարծիքով, աչգ բաները կը տանեն մարդկութեան դէպի ստորացումն, դէպի անկումն, մինչև որ չրան դարձնեն վախկոտ, նախիրալին անասուն:

Սրանից երևում է որ Նիչչէն մօտ լինելով Մալթուսի թէօրիալին աղղաբանութեան աճման մասին, Սպենսերի անհատասիրական—բուրժուազական վարդապետութեան, կտրուկ կերպով քարոզում է վերադառնալ դէպի հին—կռապաշտական դարերի աշխարհայեցողութիւնը, ուր հասարակութիւնները, ժողովուրդը ոչինչ էին և անձերը՝ ամեն ինչ: Եւ իսկապէս նա ծագում է քրիստոնէական «թուլութիւններն» ու ոգևորութեամբ

խօսում հին աշխարհի քաղաքակրթութեան մասին, ուր որոշ կերպով մի քանի դասակարգ, կռթնած բազմամբոյն ժողովրդի թշւառութեան վրայ բարձրանում էր, զարգանում: Նա մէջ է բերում պատմութեան ընթացքը, քաղաքակրթութեան էտիւլցիան՝ շնորհիւ հէնց ալդ արտօնեալ, թշւառներին ճնշող դասակարգերի, չմոռանալով ի հարկէ և հին աշխարհի ապականութիւնն ու լանցանքները: Ընդունելով թուլերի գոյութիւնը որպէս մեծ արգելք մարդկութեան կատարելագործման, Նիչչէն անպաւան կերպով քաջալերում է աղնականութեան ձգտումները և խորհուրդ տալիս «թուլերին» ծառայեցնել որպէս գործիք՝ աւելի բարձրանալու:

Նս ի հարկէ աչտեղ, որքան հնարաւոր էր համառօտ խօսեցի ալդ նշանաւոր փիլիսոփայի մասին և մէջ բերի նրա էական վարդապետութիւնը: Արժէր Նիչչէնի մասին շատ աւելի ընդարձակ և լիովին ուսումնասիրութիւն տալ, ծանօթացնել նրա փիլիսոփայական ալ և ալ հալեացքների հետ զանազան խնդիրներում և եթէ կալ գերմանագէտ և հալագէտ մէկը Նիչչէնի մի գիրքը թարգմանելու չափ, արժէ ծանօթացնել հալերին նրա «Also sprach Zarathustra» (Այսպէս խօսեց Չարաթուստրան (խմատունը) պօէմայի հետ):

Բացի ալդ գրքից, որ փիլիսոփայի վարդապետութեան էական մասը կարելի է համարել, նա թողել է ուրիշ 10 կտոր կարևոր շարադրութիւններ, որոնց միջից նշանաւորներն են.

1) Menschliches, Allzumenschliches. (Մարդկային, չափազանց մարդկային),

2) Zur Genealogie der Moral (Բարոյականութեան ճիւղադրութեան մասին),

3) Götzendämmerung oder: Wie man mit dem Hammer philosophirt (Կեղծ-աստուածների վերջալուսը, կամ՝ ինչպէս են մոռնում մուրճով):

Գրեթէ բոլոր եւրոպական լեզուներով թարգմանւած են նրանք. բոլոր ամսագիրների մէջ կարելի է գտնել բազմաթիւ ուսումնասիրութիւններ և վերլուծութիւններ նրա փիլիսոփայական սխտեմի մասին, նրա ափորիզմներ չալտնի են, մինչև իսկ նրանց մոտիւով գրւած են բանաստեղծութիւններ:

Նիչչէն Լ. Տոլստոյի չափ հռչակ ու աշակերտներ ունի, բազմաթիւ հետեողներ Նւրոպալում:

Ֆրանսերէն լեզուով կան լաւ ուսումնասիրութիւններ, «Revue de deux mondes» «La nouvelle revue» հանդէսների մէջ, ալ և առանձին ժողովածու նրա ափորիզմներից: Շուտով լոյս կը տեսնի ալդ լեզուով նրա ամբողջ գործերի թարգմանութիւնը. Ռուսերէն կարելի է գտնել փոքրիկ ուսումնասիրութիւններ «Вопрос. филос. и Псих.» հանդէսի մէջ:

Այս շատ համառօտ ակնարկից չետո՛ղ, ինձ թւում է որ նրա գլխաւոր գործերից մէջ բերած կտորները շատ աւելի պերճախօս կը լինէին, քան ունէ անալիզ: Դրա համար էլ ես տալիս եմ ալտոնդ մի քանի աֆորիզմներ նրա «Ալպէս իօսեց Զարաթուստրան» և միւս գրքերից:

Նախագգուշացնում եմ որ Նիչչէլի լեզուն մի ալնպիսի նորանշան լեզու է, ալնպէս սիմբոլական և ալլաբանական, որ հարկաւոր է լրջութեամբ խորհել նրա իւրաքանչիւր առացւածքի վրայ, լաւ ըմբռնելու համար: Մակերևութապէս կարդալով, ընթերցողը լաճախ սխալ և հակառակը կարող է հասկանալ:

Կտորներ Նիչչէլից

— Ով որ ապագայ կառուցանել կարող է, նա միայն իրաւունք ունի անցեալը դատաւիտելու:

— Ո՛չ, մարդկութեան նպատակը իր ճակատագրի վերջումը չէ, այլ իր ամենակատարեալ տիպարին հասնելու կէտում:

— Հէնց որ մարդս ալ ևս իրեն չար չէ համարում, նա դադարում է չար լինելուց:

— Առանց բարոյական ճիշտագրութեանց մէջ գտնուող սխալանքների, մարդս կը մնար միայն անկիրթ անասուն: Շնորհիւ ալդ սխալանքների է որ նա ձեռնարկել է աւելի բարձր բանի և ինքն իրեն ևնթարկել աւելի խիստ օրէնքներին:

— Ահւելի էնէրգիաներն են — նոյն իսկ «չար» կոչուող էնէրգիաները — որոնք մարդկութեան չկիկլոպալին էրկրաչափներն ու ճարտարապետներն են եղել:

— «Ի՞նչ փութ ի՞մ անձը!» ահա ալն շնանաբանը, որ ապագայի մասին խորհողը կը գրի իր դռան չէֆի վրայ:

— Ընդհանրապէս քաղաքական վատ անկողնի վրայ գտնւած ժամանակն է, որ մի ժողովուրդ վերածնում է և վերագտնում իր ոգին, որ նա սակաւ առ սակաւ կորցրել էր, երբ աշխատել էր իր իշխանութիւնը ձեռք բերել ու պահպանել: Մի ազգ իր մտաւոր մշակութեան բարձրութեան համար պարտական է քաղաքական ծիւրման ժամանակին:

— Ինչ որ լաւ է ալժմ, առաջ նորոգութիւն է եղած եղել, ալսինքն անհաստատ, հակառակող եղած սովորութիւններին ու բարքերին, և անբարոյական. ու կրծել է նա որթի պէս՝ իր գերերջանիկ հնարողի սիրտը:

— Զպէտք է ուրեմն ոչ ծաղրել և ոչ էլ արհամարհել ինչ որ առաջարկում է վերջնականապէս ոչնչացնելու, ալ հարկաւոր է դնել ալդ չարիքը միշտ նորոգող ստուգի վրայ, որովհետեւ գաղափարների սաղմերը աճում են միշտ ամօթի աղբի վրայ: (Zur Genealogie der Moral).

— Ես ձեզ ուսուցանում եմ Գերմարդը (Uebermensch, Superhombre)։ Մարդս մի բան է, որ պարտաւոր է ինքն իրան գերազանցել։ Ի՞նչ էք արել դուք մարդուն գերազանցելու համար։ Բոլոր էակները մինչև այժմ, դո՛ւք ցուցել եմ իրենցից առաւել բարձր էակ, և դժւոք, դժւոք կամենում էք լինել այդ մեծ մակընթացութեան տեղատուութիւնը և դէպի անտանջը, նախնականը ետ դառնալ, քան թէ մարդը գերազանցել։

— Դուք ասում էք թէ լաւ պատճառն է, որ արդարացնում է պատերազմը։ Իսկ ես ասում եմ, լաւ պատերազմն է, որ արդարացնում է ամեն պատճառ։

— Թող ասողի մի ճառագալթ ցույց քո սիրոյ մէջ, թող քո չղար լինի թէ՛ «կարող լինէի գերմարդ ծնանել»։ Թող աչգախի սէրը քեզ քաջալերութիւն լինի։ զինւած աչք սիրով, դու պարտաւոր ես աւելի առաջ վազել, վրայ տալ աչն բանին, ինչ որ քեզ վախեցնում է։

— Տղամարդու երջանկութիւնը կոչւում է «կամենում եմ»։ Կնոջ երջանկութիւնը՝ «Ես կամենում է»։ — «Ահա աշխարհը կատարւած» — աչգէս է ստածում ամէն կին, երբ իր բոլոր սրտով հնազանդւում է։

— Հիմէն! (Ամուսնութեան աստած) Ահա աչգէս ես անւանեցի երկու արարածների աչն կամքը՝ ստեղծելու աչս Մէկը, որ գերազանցէ իր ստեղծողներին։

— Եղբայրներ, թող ձեր մասը չանարդէ մարդուն ու հողին, աչք է որ ես խնդրում եմ ձեր հոգու մեղրից։

— Միշտ դէպի բարձր է ուղղւում մեր ճանապարհը, մեկնելով մեր ցեղից դէպի մի բարձրագոյն ցեղ։ Բայց ինչից որ զզւում ենք, դա աչն սիրտն է որ ինքն իրեն անասնացնում է ասելով մինչև իսկ. «Ամէն ինչ ինձ համար»։

(Աչտեղ չպէտք է հասկանալ, որ Նիչչէն, հակառակ իր վարդապետութեան, ալարուլիւմ է քարոզում, ոչ, նա ակնարկում է աչն որ մարդս իրեն պիտի զոհի, ապագայ սերնդին բարձրացնելու համար միայն և ոչ թէ իր ներկայ ընկերների բարեխառութեան համար)։

— Ստեղծել — ահա թէ ինչն է ազատում վշտերից և յեթեացնում կեանքի բեռը։ Բայց որ դա գոյութիւն ունենալ (աչինքն ստեղծագործութիւնը), ով որ ստեղծում է, դրա համար իսկ պէտք ունի վշտերի և որպիսի կերպարանապիտութիւնների։

— Հաւասարութեան աչք քարոզիչներին ես երբէք չեմ ուղում խառնել և ոչ էլ նրանց շարքից համարել։ Որովհետեւ ահա ինչ որ ինձ ներշնչում է Արդարութիւնը. «Մարդիկ երբէք հաւասար չեն»։ Ահ նոյն իսկ հաւասար էլ չպիտի լինեն։ (Ընթերցողը թող չմոռանալ որ վիլլիսովան միմիայն ֆիզիքական անհաւասարութեան է պաշտպան և ոչ Նիւթական) Ի՞նչ կը լինէր արդեօք իմ սէրն առ Գերմարդը, եթէ ես ուրիշ տեսակ խօ-

սէի: Հազարաւոր կամուրջներէց և հազարաւոր շաւիղներէց է որ մարդիք պարտաւոր են ունենալ զէպի ապագան և կռիւն ու անհաւասարութիւնը պարտաւոր են աւելի և միշտ թաղաւորել նրանց մէջ, ահա թէ ինչ է թելադրում ինձ իմ մեծ սէրը:

—Կեցցէ աչն կտրիճը, որ էշերին թե է տալիս և որ կթում է Լզ առիւծներին, կեցցէ ալդ անշաղթելի ողին, որ փոթորկի պէս սրբում է ամբողջ «Ալսօրը» և ամբողջ խուժանը, որ ջարդում է փշերի ծալքերը, ոչնչացնում ամեն թռչնած տերև և վատ խոտ, կեցցէ կատաղի, աղատ և անզուսպ փոթորկի աչն ողին, որ պարում է ճահճների և տխրութիւնների վրայ, մարգագետինների պէս:

—Սիրել և մեռնել, ահա թէ ինչ միմեանց համակերպում են չաւիտենա, կանութիւնից ի վեր: Կամեն սլ սիրել—դա նշանակում է նոյնպէս կամենալ մեռնել: Այդպէս եմ ես ձեզ խօսում, վատեր!

—Եւ ահա իմ օրհնութիւնը:—Լինել ամեն բանից բարձր, ինչպէս իր երկինքը, իր անշարժ կամարը, իր երկնալին գմբէթը, իր չաւիտենական ապահովութիւնը: Եւ օրհնեալ լինի նա ով օրհնում է ալդպէս: Եւ ճշմարիտ, օրհնել է նշանակում և երբէք հաջողել, երբ սովորեցնում է այս, «Ամեն բանից վեր տարածւում է Դիպած-երկինքը, Անմեղութիւն-երկինքը, Անակնկալ երկինքը, ծալրալեզ ինքնահաւանութիւն-երկինքը»:

—«Ծառալու էմ, ծառալում եմք, ծառալում ես», ալդպէս է աղօթում Նոյնպէս մեզ մօտ՝ իշխանների կեղծաւորութիւնը: Եւ վա՛յ մարդկանց, եթէ առաջին տէրը ոչինչ չէ, եթէ ոչ առաջին ծառան!

—«Մարդ» տիպի տմեն մի, չոր դարգացումը եղել է արիստոկրատական մի ընկերութեան գործն և միշտ էլ ալդպէս կը լինի, ալսինքն դա կը լինի գործ մի աչնպիսի ընկերութեան, որ հաւատք ունի զէպի մի չաւիտեական գերիշխանական աստիճանի կարեւորութիւնը և մարդկալին՝ մի մեանց մէջ ունեցած արժանիքի՝ խորին զանազանութեան, և որը, հասնելու համար ալդ նպատակին, ինչ ձևով սարկութիւն իսկ որ լինի, նրանից չի խուսափի:

—Հիւանդներն են, որոնք առողջների համար իսկական վտանգ են ներկայացնում, ուժեղները չեն որ չարագուշակ են ուժեղների համար, ալ ամենաթուլերը: Մտածում է արդեօք ալդ մասին:

Ինչպէս ալս մէջ բերած մի քանի ափորիզմներից պարզ երևում է, Նիչ՛՛՛ն վարդապետում է ձգտել միշտ զէպի բարձր, ջանալ ալդ բարձրութեան համար և զրան հասնելու նպատակին զոհել բոլոր աչն թուլ արարածները, որոնք ոչ միաչն արգելում են մարդկալին տիպի բարձրացմանն ու կատարելագործման, ալ մինչև իսկ արգելք են լինում: Սպարտական

ալդ բարոյականի հիման վրայ, Նիշչէն քաջաբերելու արժանի է հռչակում ինչ որ մեծ է, նոյն իսկ եթէ նա չար լինի: Սա արդէն փիլիսոփայի ծայրահեղութիւններից մէկն է:

Նիշչէն գերմանական ազնւականութեան փիլիսոփան է իր առաջարկած միջոցներով և ամբողջ Գերմանիայում իր աշակերտներն ունենալուց չեսոփ, սպառնում է հետեւողներ դառնել նաև Նոր-Սչխարհում: Բայց բոլոր սխալը նրանումն է որ հանճարաւոր փիլիսոփայի առաջարկած միջոցի մէջ ոչ թէ տեսնում են իբր մի «փորձ» որպէս և ուրիշ շատ առաջարկած «միջոց-փորձեր», ալ իբր արդէն գոյութիւն ունեցող կարգ ու կանոնը նւիրագործող, իբր տիրող անհաւասարութիւնն ու անիրաւութիւնը արդարացնող փիլիսոփայութիւն: Հարստահարողն ու բռնաւորը գտնում է որ ինքը Նիշչէի ակնարկած «Գերմարդը» ստեղծելու սիրոյ համար է որ հարստահարում է և ճնշում, որ եթէ ճզմում է թուլերի և անօգնականների դա ջոգուտ ապագայ մարդկութեանն է և մի աւելի զօրեղ սերունդ ստեղծելու միտումով...

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԻԻԱՆ ՏՈՒՐԳԻՆԵՒ.—Արձակ բանաստեղծութիւններ. Թարգմ. Ալ.
Մատուռեանի: 164 էջ. Մոսկւա. 1895 թ. գինը 50 կոպ.

40-ական թւականները ռուս գրականութեան համար անմոռանալի կը մնան: Այդ թւականներին էր, երբ նա, ազատելով ամեն տեսակ օտարերկրեայ ազդեցութիւններէն, ուս դրեց ինքնուրոյն ճանապարհի վրայ Գոգոլի և նրա ստեղծած «իրական չկոյալի» շնորհիւ: Մինչև Գոգոլի երեսը ռուս գրականութիւնը թէև ունէր ինքնուրոյն և շատ չափանի երկեր, բայց, աչնուամենայնիւ, նրանց վրայ նկատելի էր օտար երկերի գրողների ազդեցութիւնը. Գոգոլն առաջինն էր, որ չենթարկեց այդ ազդեցութեան և գնաց նոր, ինքնուրոյն և սեփական ճանապարհով, ալի կողմից նա կարող է հալս համարել չեռագայ բոլոր գրողների համար:

Միևնույն տարիները զարթնեց ռուս քննադատական միտքը, որի ամենալաւ ներկայացուցիչն այդ ժամանակ Վ. Բէլինսկին էր: Հռչակաւոր քննադատի կրակոտ լօղածները շարժում ձգեցին մեռած հասարակութեան մէջ և դուրս կոչե-

ցին մարդիկ, որոնք, ներկայացուցած «դեռ զգացմունքի մնացորդներ ունէին և բոլորովին չէին մոռել»: Ստիպւած լինելով չարմարել խիստ ժամանակների ուժովին, նա բաւականանում էր միայն դեղագիտական (էստէտիք) և փիլիսոփայական հարցերով. թէև շատերի համար պարզ ու նկատելի էին այն մտքերը, որոնք աւելի թանկ էին նրա համար և որոնց ուղղակի արծարծել չկարողանալով՝ արծարծում էր տողամէջ: Շատ մանր ու խոշոր պայմանների, որոնց թւում նաև Գոգոլի գրւածների և Բէլինսկու լօղածների ազդեցութեան տակ, սնւեց գրողների մի նոր սերունդ, որ նշանաւոր երկերով ասպարէզ դուրս եկաւ և գրւեց ռուս գրականութեան մէջ առաջնակարգ տեղեր: Այդ գրողներից էր նաև Տուրգենևը:

Տուրգենևն իր գրական գործունէութիւնն սկսեց բանաստեղծութիւններով և պօէմաներով: 1843 թ. դուրս եկաւ նրա «Պարաշա» պօէման, որի հիման վրայ Բէլինսկին

հոտառութեամբ, որ ալնքան չատուկ էր նրան, զգաց հեղինակի «անսովոր տաղանդ» լինելը: Գրախօսականից ուր Կալտնած է ալս միտքը երևում է, որ Բէլինսկու համար ոչ ալնքան թանկ էր պոէման, որքան հեղինակի տեսակէտը: Ինքը, Տուրքենն իր ալդ շրջանի գրւածների համար ասում է, «Եւ գրական հակակրան» եւ զգում դէպի իմ բանաստեղծութիւնները և ոչ միայն ոչ մի օրինակ չունեմ իմ պօէմաներից, ալ և շատ բան կը տալի որ նրանք չլինէին աշխարհիս երեսին»: Անցաւ ալդ ժամանակը, Տուրքինը դարձաւ Կալտնի վիպասան և ահա, ծեր հասակում, նա նորից ասպարէզ է գալիս որպէս բանաստեղծութիւնների գրող՝ ալս անգամ արձակ: Բաց ալն ժամանակաւ և ալման բանաստեղծութիւններն իրարից շատ են տարբերում: մինչդեռ առաջինները նոր սկսող, դեռևս չամրացած տաղանդի առաջին փորձերն են, վերջինները ներկայացնում են հասուն հասակի արտադրութիւններ:

Տուրքենի գրքովը, որի մասին խօսում ենք, բաղկացած է 50 գողարկ բանաստեղծութիւններից, որոնք գրւած են գլխաւորապէս 1878 — 79 թթ. նրանց մեծ մասը անձնական բնաւորութիւն ունի: Բոլոր բանաստեղծութիւնները գրւած են թէ իրան, հեղինակի սեփական և թէ հասարակութեան կեանքում պատահած դէպքերի և երևութների ազդեցութեան տակ: Քանի որ բանաստեղծութիւնների մեծ մասը, ինչպէս ասացինք, անձնական բնաւորութիւն ունի, ուստի նրանց հաս-

կանալու համար անհրաժեշտ է հեղինակի կեանքի հետ լաւ ծանօթ լինել: Մենք կ'աշխատենք ընթերցողին մի հաջեցակետ տալ որով մասամբ նրանք կարող են առաջնորդել ալս գրքովը կարգալիս:

Նշանաւոր վիպասանը իր կեանքի վերջին տարիները կորցրեց մեծ վէպեր գրելու կարողութիւնը: Իր վերջին *НОВЫ* վէպից չնայ, որ լոյս տեսաւ 1874 թ, նա ալ ևս խոշոր բան չուեց, ոչ թէ զեղարւեստական՝ ալ հասարակական նշանակութեան կողմից: Միայն մահից մի քանի տարի առաջ նրա տաղանդը մի անգամ էլ փալեց անսովոր լուսով և հանգաւ հեղինակի հետ: Ալդ ժամանակներին են վերաբերում և «Արձակ բանաստեղծութիւնները» որոնք լոյս տեսան 1882 թ.: Կեանքի վերջին տարիները Տուրքենին շատ էին զբաղեցնում մահան, ամեն բանի ունայնութեան և ծերութեան խնդիրները, մահաւանդ որ նա ծանր հիւանդութիւն ունէր: Ալդ խնդիրներին են վերաբերում բանաստեղծութիւններից «Խօսակցութիւնը», «Պառաւը», «Գանգերը», «Ինչ կը մտածեմ ես...» «Ծերութիւնը», «Աշխարհի վերջը», «Ախտեանը» և ուրիշները: Բացի դրանից նրա սիրտը ծանր խոցւած էր ալն բանական պատճառով որ նա ունեցաւ նոր սերունդի հետ իր «Հալոբ և Որդիներ» վէպի առթիւ և որ հասարակութիւնը սառն էր վերաբերում նրա չաջորդ վէպերին և սպեռախտ էր դէպի նա. ալդ է լինել նա անշուշտ իր «Կուկ կը լսես դատարանը լիմարի...» բանաստեղծութիւնը գրելիս: Ծերունի վիպասանը մի նա-

մակում աչապէս է գրում իր բարեկամին. «Բարեկամ, ծերութիւնը մի ծանր ու մռալլ ամպ է որ ծածկում է ապագան, ներկան և մինչև անգամ անցեալը, որովհետև սրբեղով վիշողութիւնները նրան դարձնում է թախծոտ»: Այո, նրան մնացել էին բաժին միաջն վիշողութիւնները, որոնց դեռ չէր սրբել ծերութիւնը: Նա մնացել էր միաջնակ, կենդանի չէին նրա բարեկամներից շատերը, նոր սերունդը հաշտ չէր նրա հետ, ներկան հրապուրիչ չէր, իսկ առաջ չէր ուզում նախ և նա թաղում էր իր վիշողութիւնների մէջ, ուր «չողում էր իր նախկին, իրան միաջն մատչելի կեանքը»: Անցեալը վիշելու արդիւնք է «Որքան գեղեցիկ, որքան թարմ էին վարդերը» հիւանալի բանաստեղծութիւնը: Մեր բոլոր ասածներն աչքի առաջ ունենալով, ընթերցողի համար պարզ կը լինի աչն տխուր կոլորիտը որ կրում են Տուրգենևի բանաստեղծութիւնները: Այդ տխրութիւնը մեղմ, բարակ ու մշուշալին տխրութիւն է, որ լատուկ է հեղինակին, դրա պատճառը կարելի է որոնել Տուրգենևի բնությունից, առանձնապատկութիւնների և մեղանքովալի հակած լինելու մէջ:

Մենք անկարող ենք այդ բանաստեղծութիւններից լաւերը ջոկել, նրանք բոլորը լաւ են: Մեղ մնում է միաջն խորհուրդ տալ ընթերցողներին որ ձեռք բերեն այդ ընտիր գրքովը և կարդան, անց էլ, ինչպէս

հեղինակն է ասում, մէկ-մէկ և ոչ իրար լետից. աչօր մէկը, վաղը միւսը: Այդ բանաստեղծութիւնները կարդալով նրանց ճաշակը կը նրբանայ, զգացմունքները կ'ազնւանան, միտքը կը խորասուզւի աչն մեծ խնդիրների աշխարհը, որոնք զբաղեցրել են ամեն տեսակ գլուխներ, և շնորհակալ կը լինեն պ. Մատուրեանից, որ տւել է այդ հիւանալի գրքովի թարգմանութիւնը: Ինչ վերաբերում է թարգմանութեան՝ դրականապէս լաւ է:

Աւստեղ չենք կարող ընթերցողներին չապտնել մի ուրախ լուր. պ. Մատուրեանը չափարարել է նոյն գրքովի կազմի վրայ, որ պատրաստում է իր «Ռուս բանաստեղծներ» խորագրով աշխատութեան առաջին գրքովը (ամբողջ հրատարակութիւնը պիտի բաղկացած լինի երեք գրքովից), ուր պիտի մտնեն թարգմանութիւններ Պուշկինի, Լերմոնտովի և Նեկրասովի երկերից: Սրտանց ուրախանում ենք, որովհետև ժամանակ է և հարկաւոր, որ մենք ծանօթանանք մի ժողովրդի ստեղծագործութիւններին, որի հետ աչնքան կապւած ենք: Ոչ մի միջոց աչնպէս չի մօտեցնում երկու ազգ կամ ժողովուրդ, որքան միմեանց մտքի արտադրութիւններին փոխադարձ հաղորդակից լինելը: Այս միջոցը շատ ուրիշ աւելի ազդու կարծւած միջոցներից աւելի զրական է և արդիւնաւոր:

Ն. Աղբալեան:

ԲԼԻՆՇՏՍՅՆ.—«Ծաղիկ և պտուղ», Թարգմ. ռուսերէնից Ռուբէն Մելիք-Մուսեանցի. Պետերբուրգ, տպ. Լիբերմանի. 1896 թ. 35 էջ, գինն է 8 կոպէկ:

«Ծաղիկ և պտուղ» գեղեցիկ գրքովի, բուսական կեանքի սքանչելի երևոյթներից մի քանիսի հետաքրքրական նկարագիրն է, որ հեղինակի բանաստեղծական պատկերացումների շնորհիւ աւելի զրաւիչ է դառնում: Թէ՛ նիւթի և թէ՛ նկարագրութեան ձևի տեսակէտից համեմատաբար պակաս արժանաւորութիւնն չունին նաև պ. Թարգմանչի չաւելածները, որոնք աչնպիսի հմտութեամբ ու պատշաճ կերպով են ներս բերում, որ երբեմն չակերտներն էլ չնկատելով՝ կարծում ես, թէ իւր և իսկ հեղինակի խօսքերն ես կարդում: Նրեի, ինքը պ. Թարգմանչին անմիջապէս զգացել էր իւր առաջին անգամ Թարգմանած՝ «Տաքութիւն և օդ» գրքովի թերութիւնները և աչ անգամ աշխատել էր խոյ տալ նրանց նմաններից:

Բոյսերի բնախօսութիւնից նրանց բեղմնաւորման, և պտղաբերութեան պայմանները, չրջապատող հանգամանքների պատճառականութիւնը շատ հետաքրքրական ու զարգացուցիչ նիւթեր են: Աչ մի քանի օրինակներից ընթերցողը կը տեսնի, թէ ինչպէս գործարանական ու անգործարան մարմինները կապւած են միմեանց հետ պատճառականութեան երկար ու անխցելի շրթալով: Հեղինակն աշխատել է ցոյց տալ ընթերցողին բնական երևոյթների նպա-

տակաւարմարութիւնը, իսկ պ. Թարգմանչը իւր վերջին չաւելածում ասում է ի միջի ալուր. «և երբ խորասուզենք բնութեան գաղտնիքների մէջ, ամեն տեղ հրաշալի հետեղականութիւն կը նկատենք, ոչ մի բան աւելորդ է. ոչ մի բան անմիտ ու պատահական չէ»: Ի հարկէ ղժար է առանց ալիւալութեան համաձայնիլ աչնպիսի բացարձակ կերպով արտալայտած կարծիքի հետ, որովհետև մենք գիտենք, օրինակի համար, որ մարդու աղիքը մի հատուած ունի՝ խուլ աղիքը՝ որ ոչ մի աչն աւելորդ, ալ և վտանգաբեր է. աչնտեղ ընկած սննդի աննշան մասնիկն էլ բաւական է մահ պատճառելու համար:

Աչ գրքովին աւելի լաւ է մշակւած նաև լեզու և ալ տեսակէտներից: Նկարները պարզ ու նպատակաւար են, Թարգմանութիւնը աւելի ազատ է պահւած օտար լեզու ազդեցութիւնից, վրիպակները համեմատաբար աննշան են:

Սակայն նկատենք, որ հարազատ չեն կարող համարւել հետեալ զարձաւածները.

«Գործի հետ անտեղեակ մարդը» (էջ 17). պէտք է ասել՝ «գործին անտեղեակ»: «Մոռնալ է առնում աչն կերակրով» (էջ 28). պէտք է՝ «կերակրից»: «Զրկել ծաղիկն բեղմնաւորելուց» (9), «իւր տակը թողնելով

կարճահասակ առէջքներին» (10 էջ). պէտք է ուղղականին նման՝ անշունչ են. Ձի կարելի ասել՝ «հազարաւոր տարիքով ու հոգով երիտասարդ մարդիկ (էջ 4). պէտք էր հազարաւոր բառ իւր գոչականի առջեւ դնել:

Ձեռքներ սխալ է. պէտք է կամ գրաբարի ն վերջաւորութիւնն առնելով ձեռներ գրել կամ ձեռքեր. միավանկ բառն էլ առնում «Գարծրած» չի կարելի ասել. կրաւորականը «ղարծրած» է, չէղբ՝ «ղարծած»: «Նեղածքութիւն» բառն էլ մեղ ծանր է թւում (էջ 31):

Մենք միայն հետեւեալ վրիպակները նկատեցինք. «կոտորատի» (էջ 27), փոխանակ «կտորատի». երկու անգամ «չետքն» (էջ 28, 29) փոխանակ «հետքն». «չոգատար» (էջ 29), փոխանակ «հոգատար»:

Ընդհանրապէս ասած՝ պ. Մելիք Մուսեանցի ընտրութիւնները աւելորդակ են, աշխատութիւնը գնահատելի և ջանքը քովելի է: Յանկալի է, որ նա շարունակի հարստացնել մեր ժողովրդական ընթերցանութեան նիւթերի աղքատիկ պաշարն աւապիսի ընտիր նիւթերով:

Նշաններից արդէն երևում է, որ նա մի ծր թերես լաւ ժողովրդական գրող գառնար, եթէ աշխատէր նույն ուղղութեամբ: Աւելի ընդարձակ շրջաններին գիտութիւնը մատչելի դարձնելու համար՝ նաև պէտք է դրականական բառերի կողքին ժողովրդականն էլ դնել, եթէ մինչև անգամ օտար լեզուներինը գործածական եղած լինէին:

Յ. Տ. Մ.

ԺԻԻՈՏՈՎՍԿԻ — Անձրև և ձիւն. Թարգմ. ռուսերէնից Ռուբ. Մելիք Մուսեանցի. Պետերբուրգ տպ. Լիբերմանի. 1896. 43 էջ. գինն է 10 կոպ.

Սխելով գրախօսել աչս գրքովը՝ դարձեալ չգիտես, թէ որն է հեղինակի և որը թարգմանչի գրածը: Թէ ինչու պ. Մելիք Մուսեանցը թողել է «Ծաղիկ և պտուղ» գրքովի մէջ ընդունած իւր չաւելածները չակերտներում նշանակելու նպատակաւորմար սովորութիւնը, չգիտեմք: Բնագրից երևում է, որ մեր գրախօսելին միայն երկու աղապիսի չաւելածներ ունի. Մէկ օրինակը՝ անտառների սակաւութեան հետեանքը

մեր հայրենիքի կլիմայի նկատմամբ կարող է ճիշտ լինել, բայց մեր երկրի և Գործի ու Շամօ անապատների համեմատութիւնները, կարծում ենք, չէ կարելի ճիշտ համարել. նրանց տարբեր կլիմաների պատճառ պէտք է ընդունել ոչ միայն ծովերի նկատմամբ ունեցած դիրքերը, այլ և մակերևութիւնների զանազանութիւնները՝ լեռնաշխարհ և անապատալին:

Աչս գրքովի բովանդակութիւնը վերաբերում է աւելի պարզ երևոյթ-

ների, մինչդեռ այն ընթերցողները, որոնք կարօտ են այդ աստիճան տարրական գիտելիքների, առանց ալեհալութեան չեն հասկանալ այդ զուտ գրականական լեզուն: Այստեղիս առաւել զգացում է պարզաբանելու կարիքը: Սառնամանիքների, սառցալին զաշտերի, լեռների, սեղանների, անդունդների, հոսանքների և այլն նկարագրութիւնները մի աստիճան աւելի զարգացածին էլ կը հետաքրքեն: Այդ ահաւոր երեւոյթների պատկերները թարգմանութեան մէջ զոնէ մեր տեսած բնագրում եղածներից էլ աւելի գեղեցիկ ու նպատակաւարմար են: Խմաստի կողմից ուղիղ չենք համարում անձրի կաթիլների մասին էջ 13 ստածը, իբր թէ նրանք նախ պիտի որոշ մեծութեան հասնեն, ապա ընկնեն. տեսակարար ծանրութեան օրէնքին հակառակ է այդ: — Զիշտ չէ բառերի այս դասաւորութիւնը. «ջրի տաքութիւնից տեսանելի կամ անտեսանելի կերպով անլապտանալուն... անւանում են ջրի գոլորշիացում, պէտք է ասել՝ տաքութիւնից ջրի...»

Դալով մեթոդին՝ այս անգամ էլ նկատեցինք, որ Ժեմտովսկին նոր երեւոյթի անցնելիս՝ ընթերցողի առջևը դնում է առհասարակ խնդիրը կամ նպատակը, տես էջ 9, 13, 16, 31, 33, բաց չէ դրել էջ 14 և որ գլխաւորն է գրքուկի սկզբում: Պր. թարգմանիչը կարող էր մի քանի գրաւիչ խօսքերով ընթերցողի հարցասիրութիւնը գրգռել և նրա ուշադրութիւնը գրաւել հետաքաջ երեւոյթների վերաջ: Ժողովրդական բնագիտական գիրքը, որ պիտի հե-

տաքքրէ առանց գործնական փորձերի, պէտք է օգուտ քաղէ տեսակ-տեսակ միջոցներից: Դժւար է պահանջել, որ մեր ի նկատի ունեցած ընթերցողը առանց նախապէս գիտենալու, թէ բանն ուր է հասնելու՝ լարած ուշադրութեամբ կարդալ իրան արդէն ծանօթ բաները:

Իսկ ինչ վերաբերում է նոր ուսածից գործնական հետեւանքների հաւանելու ինդիւն, մենք միայն անտառների տնտեսական նշանակութիւնը տեսանք. մինչդեռ անձրեւ, ձիւնը, սառույցը և այլն կարող էին առատ նիւթեր մատակարարել այդ կարեւոր նպատակի համար: Այս մասին ալ ևս աւելորդ ենք համարում խօսել՝ չիշեցնելով «Մուրճ»-ի 9 համարում նոյն հեղինակի «Տաքութիւն և օդ» գրքուկի առթիւ ասածներն:

Այս գրքուկի մէջ էլ պատահում են, ինչպէս «Տաքութիւն և օդ» թարգմանութեան մէջ, «մեղ մօտ», «գէպի իրան է քաշում ամպերին» դարձածները (էջ 36, 38): Ապա կարծում ենք որ փոխանակ ասելու «օրինակից համոզւիլ» (էջ 5), պէտք է՝ «օրինակով», «չեն հասկանում, բանը ինչումն է» (14) զուտ հալկական չէ. «գոլորշին մառախուղի է փոխւում» (16 էջ), պէտք է... փոխարկւում:

Վրիպակներ այս գրքում քիչ են երևում: Մեր նկատածներն են. բազ (էջ 4), անյետանալ (12), գտնում (37), փոխանակ՝ գտնւում. առաջանալուս (41), բնականութիւնների (43), փոխանակ բաւականութիւնների:—Ինչո՞ւ այս անգամ զանց է առնւած վրիպակների ցուցակը:

Սխալ կամ անմշակ բառեր ենք համարում՝ «երևցած» (էջ 12), պետք է երևցած. «ձիւն-լուալ» (էջ 20), ժողովուրդն ասում է «ձնակո-

լոլ», «ուժասպառ» (էջ 40), պետք է «ուժասպառ»:

Յ. Տ. Մ.

ԲԱՐՈՒՐԵԱՆ ԳԵՈՐԳ.—Փոքրիկ ընթերցարան. 31 էջ. Թիֆլիզ.

1895 թ. գինն է 5 կոպ.

» » —Փոքրիկ զրոյցներ. 32 էջ. Թիֆլիզ.

1896 թ. գինն է 10 կոպ.

Երկու գրքի վերնորում հաւաքած նիւթերը կամ չափազանց անհամ բաներ են կամ ծանօթ բաներ: Առաջին գրքուկը բաղկացած է երկու մասից, «Փոքրիկ ընթերցարան» և «Ջարճալիք»: վերջին մասի մէջ մտնում են շատ ընտիր մտքեր! Ասենք, աչս ոչինչ: Մեզ շատ զարմացրեց «Ջարճալիք» անունով մի առանձին բաժին կոչելը. իսկապէս գրքի անունը պիտի լինէր «Ջարճալիք» որովհետեւ աջնտեղ ամեն բան զարճալի է: Գրքուկի մէջ կա երեք բանաստեղծութիւն (ներեցէք ոտանաւոր) մէկը՝ «իզձ» ուր բանաստեղծը գովում է հարաւը և զրտնում է աջնտեղ «անբաւ երկինք», «ինդուլթեան կեանք», «անմահ գարուն»... Ինչ ուզէք: Միւսը՝ «որբ» ուր նորն բանաստեղծը ասում է. «Ինչ էր չարչարանք, ցաւ, վիշտ ու աշխար, անծանօթ էին քո խաղաղ հոգուն»—անցաւ էլ որբ. նոր ենք լսում: Երրորդը՝ թարգմանութիւն է. ուր ասած է թէ, եթէ ուզում ես լաւ կեանք անցկացնել, պիտի մե-

նակ լինես: Մենք կը առնք պ. Բարսեւանին.

Եթէ ուզում էք օգտակար լինել,

Գաղարէք զրքեր հրատարակելուց:

Ի հարկ է, իմ երկտողս առանձին ոչնչով աչքի չի ընկնում, բայց ես իրաւունք եմ համարում «Փոքրիկ ընթերցարանի» բանաստեղծների հետ մրցելը: Միւս գրքուկն էլ համարեա առաջին նման է միաջն զրարճալի բաժին չունի: Աջնտեղ առաջին պատմութիւնը Վ. Գարշինի «Ազգանշանին» է նման ուղղակի. միաջն «Ազգիւր»-իցն է արտատպած, երրորդի մէջ գտնւում է աչս մարգարիտը. «Ծովին խրատիր ոչ ծեծով, ալ քաղցով»: Խեղճ երեխէք... վաչ ձեր օրին. գուցէ ձեր ուսուցիչները ձեզ տան աչգ գիրքը և ասեն. «տեսէք», դուք էլ կը տեսնէք, որ նրանք էլ են լաւ անում և ձեր լաւն են ուզում ու կը տանէք քաղցը... Աչսպէս էլ միւսները: Կարդալուց չեստոյ դարձա՛յ իմ բարեկամին և բացականչեցի. «Եւ աչսպիսի գրքերը

տարածում են?—Ի՞նչ զարմանալու բան կալ—զարձաւ նա ինձ սառնութեամբ—քանի ամիս է անցել աչն օրից, երբ հասարակութեան մի մասը սպառնաց մի «ամենափուշ» գըրլաձքի երկու թէ երեք հրատարա-

կութիւնը—չէս չիշում «Մօղա է քա...ն»։ Մեր հասարակութեան մեծ մասի ճաշակը կոպիտ է, շահերը սահմանափակ, Տեսալ որ ճիշտ է ասում՝ լռեցի։

Ն. Աղբալեանց

Վ.Լ. ԿՈՐՈՒԵՆԿՈ.—Գետնափորի 'երկիւնները. 78 էջ. Թիֆլիզ. 1896 թ. գինը 15 կոպ.

—Ակամայ մարդաստան. 64 էջ. Թիֆլիզ 1896 թ. գինը 15 կոպ.

Վ.Լ. Կորուենկոն ուսնալ բելլետրիստների մէջ աչքի ընկնող տեղ է զբաղում և լուսեր է խոստանում առաջնակարգ գրող դառնալու։ Նա թէ և դեռ երիտասարդ է, բայց իր «Վէպիկներ և պատկերներով» արդէն ուշադրութիւն է գրաւել թէ գրածների գեղարւեստական արժանիքների և թէ իր համակրելի հաջնացքների պատճառով։ Զուտ գրական ասպարէզներից զատ, նա չալտնի է և հասարակական գործունէության ուրիշ ասպարէզներում։ Ռուս ներկային ծանօթ մարդկանց չալտնի է անշուշտ որ նա «Русское богатство» ամսագրի հրատարակիչներից մէկն է (որին և աշխատակցում է)։ Նրանց անշուշտ չալտնի կը լինի և աչն դերը, որ նա խաղաց վերջերս «փոփոխակներ» խնդրում։ Կորուենկոն առաջմ ոչ մի մեծ վէպ չի գրել։ Կը բացատրւում է մի կողմից նրանով, որ նա երիտասարդ է, իսկ միւս կողմից նրանով, որ ուսնալ կեանքի աշխատանքները նպաստւում

չեն մեծ վէպ ստեղծելու համար։ Մեծ վէպ ասելով մենք ծաւալը չենք հասկանում։ Կը աչն՝ որ վէպի հերոսը մի կենդանական բնաւորութիւն լինի, բնորոշի մի որոշ ժամանակաշրջան, Բայց քանի որ ուսնալ կեանքը, աղաւտելով ճորտական կաղմից, դեռ ներդաշնակութեան չի եկել, ուստի, նա չի էլ կարող մի որոշ, ընդհանուր և կենդանական տիպ ստեղծել։ Հասարակական կեանքը «ցրած է», եթէ կարելի է ասել ընդհանուր, տիրող հոսանք չկալ, իսկ ուր չկալ մտքերի, զգացմունքների և համակրանքների ընդհանուր հոսանք, աչնտեղ չկալ և ընդհանուր տիպ։ Ներկայումս ուսնալ հասարակութեան մէջ նկատւում են շատ հոսանքներ, իրարից տարբեր, շատ անգամ ուղղակի իրար հակառակ, ուստի կեանքն արտադրողն էլ տիպւած է փոքրացնել իր տեսողութեան սնկիւնը, մաս մաս անել իր գիտողութիւնը, առանձին առանձին չը ջանքերից վերցրած տիպեր ստեղծել

որովհետեւ, ինչպէս ասացինք, հոսանքներն իրարից շատ են տարտարբերում և չեն ներկայացնում ընդհանուր չափութիւններ, որոնց կարելի լինէր ի մի խմբել և ներկայացնել:

Երկու գրքովներէից թէ՛ Նիւթի մշակութեան և թէ՛ թարգմանութեան կողմից առաջին տեղը կարելի է տալ «Աւամալ մարդասպանին»: Անն երևոթ ունի իր պատճառները: Քանցագործութիւնն ու ոճրագործութիւնն էլ, անկասկած, իրանց պատճառներն ունեն, նրանք հետեանք են ժառանգականութեան և սոցիալական պայմաններին: Կան զէպքեր՝ ուր ապրելու պատճառները միասին են առաջ բերում ոճիրը կամ լանցանքը: Կան զէպքեր՝ ուր առանձին-առանձին: Այսինքն՝ Էրբեմն մարդ և՛ ծնած է ոճրագործական հակումներով և՛ շրջապատող պայմանները նպաստում են աչն հակման զարգանալուն, երբեմն էլ մարդ բոլորովին հակած չէ ոճրագործութեան, բայց կեանքի պայմանները ստիպում են նրան ոճրագործութիւն անել: Լաւ ըմբռնել ոճրագործութեան և լանցագործութեան գլխաւոր և բուն պատճառներն ու աշխատել նրանց հեռացնել, ահա մեր դարու մեծ խնդիրներից մէկը:

Կորուկենկոյի ոճրագործը ակամալ մարդասպան է, նա հակած չէ ամենեւին մարդասպանութեան, բայց և աչնպէս ոճիր է գործում, նրան զրուգող մի շարք ուժեղ ու բարդ տպաւորութիւնների կոտակումն է: Բայց տեսնենք ինչո՞ւն է բանը: Գիշաքի Ֆեոդորը մի շարք ծանր

զէպքերի ազդեցութեան տակ (մարդկանց անարդարութիւնը, կնոջ ու աղջկայ մի օրւայ մէջ մեռնելը) կորցրել է իր հին հաւատը, ուրը չի ձեռք բերել, իր խելքին աչնքան էլ հաւատ չի բնծալում, մի ցուպ առած ձեռքը, գնում է թափառելու այս ու ու աչն կողմը. տեսնի՛ ինչպէս են մարդիկ ապրում, Աստծուն ազօթք անում, ինչ հաւատի են. փնտռում է չիտակ մարդիկ: Աշխարհից պոկւելու համար իր կամքով կալանաւոր է դառնում և ծանօթանում է մինչև ոսկրները ծծւած մի ոճրագործի հետ, ուր իր արտաքինով մեծ տպաւորութիւն է անում նրա վրայ: Ոճրագործը ծեր էր, միշտ աղօթում էր, իսկ և իսկ մի սուրբ: Ծեր աղէսը սգաւելով նրա մաքուր, մանկական սրտից ու հաւատից, երդումով նրան կապում է իր հետ և ահա, մի քանի ժամանակից ցատու, ազատւելով բանտից, Ֆեոդորը չաչտնում է մի ծանապարհի վրայ զտնուող աւազակների որջում, առանց մի բոպէ կասկածելու որ լաւ մարդկանց շրջանում չի, մանաւանդ որ շրջապատողները «թուլթուն ու արաղ բերանները չեն առնում»: Մի զէպք կատարած է զարթեցնում Ֆեոդորի սրտում և նա սկսում է չհաւատալ Կոնստան (ծեր ոճրագործի) լաւ մարդ լինելուն: Նոյն աչն երեկոցեան, երբ պատահում է կասկած զարդեցնող զէպքը, Ֆեոդորին «բանի են դնում», նա պէտք է դիչերով մի ջահել և հարուստ տիկնոջ իր երեք փոքր երեխաների հետ տանի հետեանալ կալանք: Մի ինչ որ մեծ կասկած ընկել է նրա սիրտը: Մտնում են

անտառապատ ճանապարհի ամենա-
վատ տեղին: Ֆեոդորը նկատում է
որ Կոնատը ձիով կանգնեց իր ա-
ռաջ: (Սպանութեան տեսարանը
հիանալի է): Կոնատը պատուիրում է
նրան ցած իջնել կառքից, տալիս է
նրա ձեռքը կաշին և առաջարկում է
սպանել առաջ կնոջ, ապա նրա
փոքրիկներին: Նրեակալից է Ֆեո-
դորի գրութիւնը, մաքուր սրտի,
առանց ոճրագործական հակումների
տէր մարդ, որին հանգամանքների
անսպասելի բարդումը ստիպում է
մարդ սպանել. նախում է կառքի մէջ,
կինը «աղունիկի» պէս նստած է,
երեխաները մէկը միւսից փոքր
(մեծը 4 տարեկան) «Ճնճղուկներին»
նման նախում են իր վրայ: Յետ է
նախում, աչնեղ կանգնած է Կըռ-
նատը, որի հետ կապւած է երգու-
մով և պարտաւոր է հնազանդել,
Խնչ անի: Այդ տատանական գրու-
թեան չափորդում է վճռականու-
թիւնը, Ֆեոդորի սիրտը հակում է
անմեղի կողմը և Կոնատը տապալ-
ւած է:

Խնդրում ենք ընդերցողին աչքի
առաջ ունենալ բոլոր հանգամանք-
ները և առել, մեղաւոր է Ֆեոդորը
թէ ոչ: Անկասկած ոչ: Բայց տեսէք,
որ խեղճը մի քանի ամիս նստում է
բանտում, որովհետեւ դատաւորի ա-
սելով «լիմար» է և որ «օրէնքը եր-
կու միտք ունի»: Եթէ ազատւած
կինն ու իր ամուսինը օգնութեան
չհասնէին, ով գիտէ խեղճ Ֆեոդորը
աքսոր էլ գնար...

Փոքրիկ պատմութիւն է, բայց
խոր տալաւորութիւն է անում և,
երբ սկսում էք մտածել նկարա-

գրած դէպքի հիմնական պատճառ-
ների մասին, չզանում են ձեր մէջ մի
շարք մտքեր մարդկանց փոխադարձ
լարաբերութիւններին վերաբերող,
ինչպէս են նրանք և ինչպէս պիտի
լինեն, իսկ այդ հարցերից ամեն մե-
կն էլ ճիշդաւորում է բազմաթիւ
ուրիշ հարցերի խորհուրդ ենք տա-
լիս ձեռք բերել աչս փոքրիկ գր-
քովը, նա ընթերցողների մտքին
զօրկ կը տալ. մանաւանդ որ զըր-
ւածքը լաւ է և թարգմանութիւնը
«հալերէն» (ասում ենք հալերէն, ո-
րովհետեւ մեզանում մի շարք թարգ-
մանութիւններ են լուս տեսնում,
որոնք հալերէն չեն):

Անցնենք «Կետնափորի երկա-
ներին»: Մի փոքրիկ քաղաքի բարի
դատաւորի որդին՝ Վասեան՝ ապրում
է հօր հսկողութիւնից կատարեալ-
պէս ազատ, որովհետեւ հայրը Վա-
սեան մօր մահից չէտու ընկել է մի
տեսակ անտարբերութեան մէջ. Որ-
դին թափառում է փողոցներում,
ման է զալիս ասեն տեղ, մտնում է
ամեն ծակ ու ծով, Քաղաքից դուրս
մի մատուռի գետնափորում ապրում
են երկու խորհրդաւոր ծաղումի տէր
մուրացկաններ, նրանց հետ էլ երկու
երեխաւ մէկը՝ տղա, ինն տարեկան
իսկ միւսն աղջիկ՝ չորս տարեկան:
Հասակաւոր մուրացկաններից մէկը
Տըբուրցին կոչւող, մի հասկացող
մարդ է, որին կեանքը սխմել է իր
երկաթէ բազուկներով և որը եր-
բեմն, երեխաներին պահելու համար
անաղնիւ ճանապարհով հաց է ձեռք
բերում: Կոն ճանապարհի վրայ է
նաե փոքրիկ տղան՝ Վալեկը որ հաց
է «թուցնում» իր ընկերունակ փոք-

րիկ Մարուսինկալի համար: Դատաւորի որդին պատահմամբ ծանօթանում է ալս աղքատ երեխաների հետ, նրանց համար խնամորներ է բերում իրանց պարտէզից, նրանց չըրջանում իրան լաւ է զգում, որովհետեւ ոչ ոք չի լանդիմանում նրան թէ անպատան, փչացած տղա է, մինչդեռ տանն ալնքան են ասել, որ ոչ միայն հալը, այլ և ինքն է սկսել հաւատալ: Զկարողանալով տանել ահան ցուրտ ու սուս օրերը, գետնափորի խոնաւ օդը, ցնցոտիներով թաց լատակին պարկելը, փոքրիկ աղջիկը հիւանդանում է: Վասեան ու Վալիկը միշտ աշխատում են զբաղեցնել փոքրիկին: Մի օր էլ Վասեան իր քույր Սոնեայից ժամանակաւ ապէս խնդրում է նրա խաղատիկինը և բերում հիւանդին: Հիւանդը շատ է ուրախանում, բայց այդ ուրախութիւնը երկար չի տևում: Դատաւորի տանը բանի հոտն առնում են, հալը Վասեային թուլ չի տալիս տանից դուրս գալ: Վերջապէս մի օր, երբ գատաւոր խիստ կերպով հարցեր է տալիս իր որդուն խաղատիկինի մասին, ներս է մըտնում Տըբուրցինը՝ մուրացկանը և պատմում բանի էութիւնը, չափնում է որ հիւանդ աղջիկն արդէն մեռել է և դարձնում է խաղատիկինը: Դատաւորի աչքերը բացւում են, նա առաջին անգամ հալրական

զգւանքով նաւում է որդու վրա և ոչ միայն թուլ է տալիս գնալ գետնափորը՝ մեռած աղջկան տեսնելու, այլ և մի քանի թղթադրամ է տալիս աղքատներին լանձնելու համար: Փոքրիկ աղջկան թաղելուց չետոյ խորհրդաւոր աղքատները ուր որ անցաւտանում են. իսկ Վասեան և իր քույրը շատ անգամ գնում են Մարուսինկալի դերեզմանի մօտ գիրք կարդում, խօսում, լաւտնում միմեանց խոհերը և ապագայի ծրագրերն իմացնում... Ահա և բոլորը: Վարդալուց չետոյ հարց է ծագում. Բնչու խեղճ Մարուսինկան ալնպէս չուտ, ծաղիկ հասակում, աղքատութեան մէջ պիտի մեռնէր, Բնչու Տըբուրցինի պէս հասկացող և զարգացած մարդը պիտի անաչնիւ ճանապարհների դիմէր երկու երեխայ պահելու համար, ինչու Վալէկը, դեռ նոր կեանքի ուղին ոտ դնելիս, պիտի գողութիւն անէր, գուցէ շարունակելով վերջը բնաւորութիւն դարձնէր, բանտ նստէր և ալն և ալն: Եւ դարձեալ մեր առաջ կանգնում են մարդկանց փոխադարձ բարբերութիւնների մեծ խնդիրները...

Թարգմանութեան տպաւորութիւնը թուլ է: Նրկու գրքի ընտրողն ու հրատարակողը Հրատարակչական ընկերութիւնն է:

Ն. Աղբալեան:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գաղթականութիւնը:—Նոր կոտորածներ:—Դրութիւնը վանում:—Թրքական զոր-
ծողութիւններ:—Անգլիական արտայայտութիւններ—Ֆրանսիա—Հանուս'ի ճառը:—
Ռուսիա—Գերմանական արտայայտութիւն:—Գալիցիայի ժայերը:—Մաղաքիս եպիսկո-
օսմանեան—Կ. Պոլսի հայոց պատրիարք:

Ներկայ տեսութեան մէջ ընթերցողները կը հանդիպեն Ֆրան-
սիական արտաքին գործերի մինիստր Հանուս'ի ճառին, որ նա ար-
տասանեց Ֆրանսիական պարլամէնտում: Զի կարելի մեծ կարեւորու-
թիւն չտալ Ֆրանսիական մինիստրի խօսքերին, մանաւանդ որ նա
արտասանել է, ինչպէս որ ճառի մէջ ևս ակնարկ կայ, ռուսաց
կայսերական կառավարութեան հետ այդ մասին բանակցելուց յե-
տոյ, Կայսերական Զոյգի Ֆրանսիա այցելելու միջոցին: Այդ ճառից
երևում է, որ Թիւրքիայի սահմանների ամբողջութիւնը պահպա-
նելը առ այժմ վճռած խնդիր պիտի ընդունել, որպէս և այն,
որ Թիւրքիայի համար ինկատի է առնւած պետութիւնների համա-
ձայնութեամբ որոշ ռեֆորմներ մտցնելու խնդիրը: Կայ որ և է որոշ
ծրագիր թէ ոչ—այդ յայտնի չէ. մենք ընթերցողների ուշադրու-
թիւնն ենք դարձնում միայն ներկայ տեսութեան մէջ պատահող
ծրագիրների վրայ, որոնք հաւանական է թէ հիմնւած են դիպլո-
մատիալում կատարող բանակցութիւնների վրայ. յիշենք վերջա-
պէս, որ այդ ծրագիրների մէջ կայ խօսք նաեւ Տաճկա-Հայաստանին
տալիք ինքնավարութեան մասին, մի լուր, որ նոյն իսկ ռուսական
Պետական համբաւաբերը ուշադրութեան առաւ: Աչքի է ընկնում
այն հանգա հանքը, որ ռեֆորմների մասին դիպլոմատիայի ձայնը լսելի
է դարձնում մի ժամանակ, երբ Տաճկաստանը ընկած է մի այնպիսի
ֆինանսական կեցութեան մէջ, ուր Եւրոպայի ֆինանսական օգնու-

Թիւնը դառել է միանգամայն անհրաժեշտ: Որովհետեւ ստիպողական տուրքը, որին զիմել է Թիւրքիան, չի կարող նորան ազատել սնանկութիւնից:

Կատարւեց հայոց պատրիարքի ընտրութիւնը: Ընտրւեց Մաղաքիա եպ. Օրմանեան: Այդ մասին մեր ընթերցողները տաւանձին յօդաժ կը գտնեն ներքեւ:

Հայերի գաղթը Տաճկաստանից մեծ ծաւալ է ստացել, որպէս երևում է ստորեւ առաջ բերած մանրամասնութիւններից: Միմիայն Վառնայում մինչ հոկտեմբերի վերջերքը ցամաք են իջել 14.000 հոգուց աւելի. տասնեակ հազար գաղթականներ կան Սև-ծովի ռուսական ափերին. հոսանքը դէպի Կովկաս շարունակւում է. ճշգրիտ թւեր պակասում են, բայց Կովկասում եղածների թիւը հինգ հազարից պակաս չէ. և տասնեակ հազար կարելի է հաշւել Պարսկաստան, Յունաստան, Եգիպտոս, Մարսէյլ, Ամերիկա և այլ տեղեր այս վերջին ամիսներս գաղթածների թիւը. այդ ամենը տալիս է 40.000-ից աւելի հայ փախստականներ, որի շնորհիւ հայկական գաղթականութիւնը դառել է ներկայումս մի նոր համաշխարհային խնդիր:

ԱԻ. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

Գ ա ղ թ ա կ ա ն ն ե ռ

Գաղթականները Բոլգարիայում: Ռուսմուքի բրիտանական փոխ-հիւպատոսից լորդ Սալիսբուրիին ստացաւ մի զրութիւն, որից մի քաղաճք ուղարկեց Ուէստմինստրի դուքսին: Այդ զրութիւնից իմանում ենք, որ (հաւանօրէն մինչև հսկոեմբերի միջերբը) Վարնա դաղթածներից 3000 հոգի շոգենաւով հասել են Ռուսմուք. սոցանից 450 հոգի ուղարկւել են Սիլիստրէ, 400-ը Սիստոր, Նիկոպոլիս, և Լոմպալանկա, 150-ն էլ հետեւակ ուղարկւել են Տրնովա. այդպիսով Ռուսմուքում այդ ժամանակ հայ գաղթականների թիւն էր 2000: Բոլգար կաւալարութիւնը շոգենաւով գնացողներին ձրի է փոխադրել: Գաղթականների մեծ մասը բաղկանում է բեռնակիրներից, գործատարներից, փոքր խանութպաններից, սափրիչներից, խոհարարներից և սոցա նմաններից: Ռուսմուքում եղող 2000-ից 300-ը գտել էին տեւական գործ, 1.200-ի չափ հոգի ընդհանրապէս աշխատում էին այգիներում և կամ պարապում զրաի գործերով և կարող էին մի ամիս ևս զբաղւել: Մնացեալ 500-ը պատկանում են բարեկեցիկ դասին և նպաստամատոց յանձնախմբից օգնութիւն դեռ չէին ստացել: Կառավարութեան նախաձեռնութեամբ քաղաքը բաժանեց մասերի և մի նպաստամատոց յանձնախումբ նշանակեց, որ տանից տուն մանգալով հանգանակեց 6.000 Ֆրանկ. այդ գումարը յանձնեց քաղաքապետութեան: Մեղմ օրերին այժմեան բնակարանները բաւականին լաւ են, բայց ձմրան եղանակին, որ այստեղ շատ սաստիկ է և երկար, վախենում եմ (ստում է փոխ-հիւպատոսը), որ գաղթականներին անկարելի կը լինի նոցանից շատերի մէջ բնակւել, և մենք, հաւանօրէն, ձմեռը շատ նեղութիւն պիտի ունենանք:

Ուեստմինստրի դուքսը ստացաւ հետեւեալ նամակը արտաքին գործոց մինիստրութեան պաշտօնատնից, որ հոկտ. 31 (նոր տոմ.) Վառնայի փոխ-հիւպատոսը գրել էր Սոֆիայի անգլիական դեսպանին:

«Մինչև հոկտ. 26-ը ցամաք են ելած 14.710 հայ գաղթականներ, որոնցից 8.690-ը Վառնայում են մնում: Եթէ ի նկատի առնենք, թէ այս

քաղաքի բնակիչների թիւը միայն 27.000-ի է հասնում, թէ դորա մերձաւորութիւնը և ճանապարհածախսի աժանութիւնը պատճառ եղան, որ Կ. Պոլսի հալերի չքաւոր դասը այս նաւահանգիստն ապաստանեց և ի՛նչ սոցանից ալն անձերը, որոնց համար տեղ չկար քաղաքում, ստիպւել են բնակել զնչո՛ւնների և աղքատ քրիստոնեաների խրճիթներում, ալն ժամանակ դիւրին կը լինի երեակալել այս համախմբման վտանգաւորութիւնը, համաճարակից խուց տալու համար միջոցներ ձեռնարկելու կարելութիւնը... Երէկ ալցեւեցի հին պանդոկը և տեսալ որ 800 չքաւոր անձեր բնակում էին այդ պանդոկի սենեակներում, որոնց դռները և պատուհանները բոլորովին բաց էին: Խեղճերը սրանից աւելի լաւ պատուպարել չէին կարող... Հին պանդոկում և կարանթինաներում պատսպարւած 1000 ի չափ անձերից զատ՝ մնում են 7.500 անձ էլ, որոնք ցրւել են քաղաքի շրջակաները, ուր 7—12 անձ խոնւում են մի սենեակում, որ սովորաբար 13 ոտք երկարութիւն, 11 լայնութիւն և 7 ոտք բարձրութիւն ունի: Այս գերդաստաններից շատերն իրենց պաշարն արդէն սպառել են և ալ ես չեմ կարող վճարել սենեակների վարձը: Մի խղճուկ տնակի ողորմելի մի սենեակի ափսոսանք վարձը 6-ից մինչև 10 ֆրանկ է. և օր օրից ձրի ապաստարան խնդրողների թիւն աւելանում է: Շատ ուրախ պէտք է լինենք որ ցարդ գաղթականների առողջութիւնը ակնկալածից շատ աւելի լաւ է եղել, թէև Վառնայի քաղաքագետն ինձ չալունեց, որ դեղատունը իւրաքանչիւր օր գաղթականների համար պատրաստւած 100 ձրի դեղատոմս է ընդունում: Նկատում են որ տեղական նպաստամատուց լանճնախումբը ցարդ իւր պարսականութիւնը զոհացուցիչ կերպով է կատարել. սակաւ կարծում եմ որ մի աւելի լաւ սիստեմով կազմակերպւած մարմին հարկաւոր կը լինի երբ դորժ կարօտեալների աւելի մեծ բազմութեան հասնի: Հոկտ. 26 ին 240 ընտանիքներ, 1000 անձի չափ, կերակրւում էին օրական 10 լիւրալի ծախսով, օրը 650 հաց և չաբաթը 2 անգամ էլ գետնախնձորով կամ բրինձով պատրաստւած միս վալելով: Սակաւ երբ ցուրտը սկսի, պէտք է մսի քանակը մի քիչ աւելցնել: Այսուամենայնիւ առանց դրսից զրամական նպաստ ստանալու անկարելի է օգնութեան ալս գործը երկար շարունակել... Եթէ ժամանակին պէտք եղած նախապատրաստութիւններ չտեսնեն, ձմեռը պիտի բերէ իւր հետ տոկալի թշուառութիւն: Ուտելիք պատրաստելը համեմատաբար դիւրին դործ է. սակաւ չուտով պէտք է բնակարանների և վառելիքի խնդիրը կարգադրել, ոչ միայն գաղթական հալերին, ալ և քաղաքի բնակիչներին մահաւան ճիրաններից ազատելու համար»:

Վեստմինիստրի դքսի կալգադրութեամբ Անգլո-հալկական նպաստամատուց ֆոնդը ուղարկեց Վառնա ևս 500 ֆունտ ստերլինգ

լինեց, որ խնդրեալ էր իբր անհրաժեշտ հայ կարօտեալների անմիջական պէտքերի համար:

Գաղթականները Փրանսիայում եւ Ամերիկայում: Տիկին Սոմերսէթ Ռէյլի Նիւս'ում տեղեկացրեց (մի ընդարձակ նամակով), որ Մարսէլից 370 հայ գաղթականներ ապահովապէս հասել են Հիւսիս-Ամերիկա, ջանքերով «Կանանց ազգային քրիստոնէական տեմպերանսի ընկերութեան» (National Womans Christian Temperance Union): Նոքա տեղաւորւեցան Նոր-Անգլիա կոչւած նահանգի կանաչ հովիտների ագարակային տներում:

Նոյն տիկին Սոմերսէթի յիշեալ նամակից իմանում ենք, որ մինչև նոր տոմարով նոյեմբերի սկիզբը Մարսէլ եկած են աւելի քան 700 չափահաս հայ գաղթականներ, սրոնց համար ապրուստի միջոց գտնւած է Ամերիկայում, Զւիցերիայում, Անգլիայում եւ ուրիշ երկիրներում: Մարսէլում կազմակերպւած է մի ազգեցիկ յանձնաժողով հաստատ հիմքերի վրայ: «Մենք, ասում է տիկին Սոմերսէթ, խորհում ենք դորա մի ճիւղն էլ Վաշինգտոն (Բոլգարիա) հաստատել... Մենք դործը մի որոշ սխտեմի վերածելուց յետոյ կը կենդրոնացնենք Լոնդոնում, Վիկտորիա ստրիտ Ք 47, Վեստմիստր:

«Օրիորդ Մելիճ, որ տարիներով դաստիարակ միսիոնարուհի է եղել Հայաստանում, (դրում է նոյնը), եւ որ դործեց անցեալ ահաւոր ձմեռուայ ամբողջ ընթացքում, իւր հրապարակային գործերը պիտի սկսի այդտեղից: Միտ Վիլլըրտ ծամբայ ընկաւ Ամերիկա, ուր յոյս ունի նախագահելու Սէնտ-Լուիզ քաղաքի կանանց մեծ ժողովին, ամեն ջանք պիտի գործ դնէ հայերի բարեկամների մէջ նոր ոգևորութիւն առաջ բերելու համար: Այդտեղի նպաստամատոյց յանձնաժողովը մեզ հետ ուղղակի յարաբերութիւն պիտի ունենան...»:

Ամերիկա ապրաստանելու համար հոլլանդական նաւով Նիւ-Յորկ հասած 150 փախստականներ, որպէս հաղորդեց Daily Messenger, պիտի ետ ուղարկեն Ներուպա, համաձայն գաղթականների համար սահմանած օրէնքի. Նիւ-Ջերսէյ նահանգի բնակիչները ընդդիմացան իրենց անկեղանոցներում այդ գաղթականներին պատսպարելուն:

Հոկտ. 20-ին (նոր տոմ.) Նիւ-Յորկում մի մեծ միտինգ կայացաւ, ուր որոշեց թէ ժողովը բողոքում է հայ գաղթականե-

րին ընդհանուր գաղթականների կարգը դասելուն դէմ, հրաւիրում է վարչութեանը աւելի ազատամտաբար մեկնել գաղթականութեան վերաբերեալ օրէնքները և խնդրում է կառավարութիւնից դործածել այն ամեն խաղաղասիրական միջոցները, որ եւրոպական տէրութիւնների մէջ համաձայնութիւն կը գոյացնէ և Թիւրքիային ստիպել որ վերջ տայ ջարդերին:

Այս ժողովում կարդացւեց Գլադստընի հետեւեալ նամակը.

«Ինձ բերկրանք է պատճառում, երբ տեսնում եմ, որ հայերի որ և է բեկորն ազատում է մեծ մարդասպանի ճիրաններից: Քանի որ եւրոպայի անգործութիւնը շարունակում է, իրերի վիճակը Թիւրքիայում կը լինի ամօթալի և տխուր, բայց մարդոց արարքներն արձանագրում են թէ երկնքում և թէ մարդկանց առջև, և շարունակաբար դիզւող արհաւիրքները կարող են վերջապէս առաջ բերել կործանումն այն յայտնի ամբարշտութեան, որ կոչւում է Թիւրքիայի կայսրութիւն»:

Գաղթականները Ռուսիայում: Ձերնոմորսկի Վեստնիկ թերթը հաղորդում էր հոկտեմբ. մօտ 10-ին, որ Կ. Պոլսից Բաթում եկող ամեն մի շոգենաւ բերում է հայ փախստական ընտանիքների մի ամբողջ խումբ: Այդ թշուառների վիճակը սարսափելի է: Ափ իջնելիս ծովեզրը թնդում է կանանց հեծեծանքներից:

Նովոն Վրեմիայի տեղեկութեան համաձայն մինչդեռ 1896 թ. յունւարի 1-ին Սուխումի շրջանում տաճկահպատակ հայերի թիւն էր 2.000, այժմ 10.000 է. Սև-ծովեան նահանգում առաջ 4000 էր, այժմ 7.000. Ընդամենը 17.000: Քանի հողի գինը ցածր է, նոքա կալւածատիրոջ համար շատ ցանկալի անձեր են. բայց երբ հողի գինը, մշակման շնորհիւ, կը բարձրանայ (Սուխում մի դեսեատինի գինը արդէն 500 ռուբլու է հասել), ապա կալւածատէրը անշուշտ կը հեռացնէ իւր ծառայութիւնը հատուցած այս պրոլետարիատը. և, թերթի ասելով, այն ժամանակ տէրութեան համար կը ծագի գաղթականների նոր խնդիր հայ երկրագործների հետ, որոնք ամենքն էլ տաճկահպատակ են. իսկ տաճիկ տէրութիւնը նախազգուշացրել է հայերին, որ նոցա այլ ևս չի ընդունիր:

Հայ գաղթականները, բացի Կարսի և Երևանի նահանգներից

և Բաթումից, ցրւած են այժմ Թիֆլիս, Բաքու, Գանձակ և այլ տեղեր, ուր նոցա վրայ խնամք է տարուում:

Բուլթայիս հոկո. միջերբը հայ գաղթականներ հասան Կար. սից գալով. նոցանից շատերը ճանապարհ ընկան Փոթի և Բաթում իսկ մնացածները, կանաչք և որբ մանուկներ, հաւաքւելով տեղական հայոց եկեղեցու առաջը ապաստան որոնելու, մերժումն ստացան:

Պետերբուրգսկի Վեդոմոստի լրագրում Ս. Էջմիածնից մի ընդարձակ թղթակցութիւն տուեց (հոկո. սկիզբները), ուր նկարագրուում էր Թիւրքիայից գաղթած հայերի անելանելի վիճակը:

«Առանց խորին խղճահարութեան, ասւած է աջտեղ, անկարելի է նաեւ աչդ հիւանդոտ, սննդի պակասութիւնից և երկար ճանապարհից նհարած թափառականների վրայ, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք որ աչդ էակները տուժում են միայն շնորհիւ այն բանի, որ նոքա զըժբախտութիւն են ունեցել քրիստոնէական շրջանում ծնւել... Ոչ մի գրիչ չի կարող նկարագրել այն սարսափները, որ այժմ Թիւրքիայում մի քաղաքական սիստեմի հիմքն են կազմում, և որոնց վերջաւորութիւնը տակաւին դուշակելու հնար չկայ»:

Տաճկական լրագիրները մի պաշտօնական յայտարարութիւն էին տպագրել (հոկո. սկիզբը) որ Թիւրքիայից գաղթող բոլոր հայերը զրկւում են իրենց քաղաքացիական իրաւունքներից և հպատակութիւնից. ոչ մի հայի թոյլ չէ տրւած իւր սեփականութիւնը հետը տանել:

Արձագանքին Կարինից հաղորդում էին, որ Կարինից ամեն շաբաթ 14—15 ընտանիք է գաղթում այս ու այն կողմը, մանաւանդ արտասահման (այսինքն Եւրոպայ): Իրերի դրութիւնը եթէ այսպէս ընթանայ, գաղութի մեծ հեղեղը սրանից յետոյ է սկսելու: «Ար. նոիքները առատ ու աժան են. ալիւրին լիղրը (կէս փուլ) 3—4 օսմանիէ (2 աբասի կամ 40 կոպէկ). հացի օխան (3 զըր. Լանքայ) 30 փարա (7 կոպէկ):

Կոտորածներ

Էւերիկում (հոկո. վերջերք), Կեսարիայի մօտ անկարգութիւններ տեղի ունեցան, որոնց միջոցին, որպէս սկզբում էին պնդում, տաճիկները սպանեցին 100 հայ և աւերեցին շատ հայ տներ: Սակայն

յետոյ «Ֆրանկֆուրտի լրագիրը» տւեց հետեւեալ մանրամասնութիւնները Էւերիկի կոտորածի մասին. անցքը պատահեց հոկտ. 27-ին (նոյ. 7). անթիւ հալածանքների ազդեցութեան ներքոյ հայերը, կորցնելով համբերութիւնը, չարձակումն գործեցին մի մեծ մզկիթի վրայ և սկսեցին ումբեր նետել մահմեդականների վրայ. այն ժամանակ Էւերիկի և շրջակայքի մահմեդական ժողովուրդը նոյնպէս յարձակեց հայերի վրայ: Սպանւեցին մօտ 3.000 հայ և մօտ 200 տաճիկ: Ցածկական զօրքը չափազանց ուշ հասաւ և միջամտեց երբ նահանգի հարուստ քաղաքը աւերւած էր: Անգորա քաղաքի նահանգապետին հրամայւեց անմիջապէս Էւերիկ ուղևորել:

Վ ա ն ու մ

Ներոպական լրագիրները հաղորդեցին թէ «չայտնի անկարգութիւններից և աւերումներից յետոյ Վանում սկսւել է ցուրտը և ազգաբնակչութիւնը օրինաւոր բնակարաններից, հարկ եղած անուններից և հազուատից զուրկ, հիւանդութիւնների է ենթարկւում, և որ Վանում օրական 10—15 մարդ է մեռնում»:

Այդ առիթով Արձագանք'ին գրում են Վանից հոկտեմբերի 30 թւով. «Մեր վիճակն հետզհետէ անտանելի կը դառնայ: Յուրտ, անօթութիւն ու չքաւորութիւն մեծ կորուստ կը տանեն. օրական 30—40 մեռնող կայ. մեր թաղ միայն (Փոքր Քենդերչին) 70 հոգի մեռած են» (քանի օրւայ մէջ?): «Յօրենն էլ վերջին ժամանակներս սղեց. այժմ չափը 50 զրուշ (4 ուրլի) կը ծախւի (չափը մօտ 3 փութ լինելով, ասել է որ փութը 1 ու. 33 կոպէկ է նստում)». սակայն եթէ աժան ալ լինէր, դրամ ռրանդից գտնէինք»:

Թրքական զործողութիւններ

Փոքր-Ասիայի սանջակներում թիւրք կառավարութիւնը հոկտեմբերի միջերբին 5 քրիստոնեայ օգնականներ նշանակեց յոյներից, լուսաւորչական և կաթոլիկ հայերից:

Ամիսներ առաջ սուլթանը յանձնարարել էր Վիեննայի հրապարակախօս պ. Նեւլինսկի'ին բանակցել անգլո-հայկական ընկերութեան հետ հայկական խնդրի վերաբերմամբ. Նեւլինսկի'ն սակայն Լոնդոնում ոչ մի դրական հետեւանքի չհասաւ: Հոկտեմբերի սկզբին

սուլթանը նոյն նպատակով Լոնդոն ղրկեց արտաքին գործոց մինիստրութեան փոխ-քարտուղար Տիրան Դադեանին, որ Արթին-փաշայ Դադեանի եղբորորդին է:

Բ. Դուռը յայտարարեց հետևեալ պաշտօնական գրութիւնը.

«Մալրաքաղաքում վերջերս տեղի ունեցած անցքերից ցեռու հաւերից մեծ թիւ գաղթել է Պոլսից ուրիշ երկիրներ: Բացի այդ թափառաշրջիկներից, մի մեծ խումբ չարմարագոյն է դատել ցրել գաւառները, խառնակիչները և ալ չարակամ անձեր ջալդ գաղթել վերագրում են իբր թէ երկրիս մէջ տիրող անապահովութեան և կատարեալ անհիմն ցեղաշրջած բացատրութիւններ են տալիս: Մինչդեռ կայսերական կառավարութիւնը պետութեան հիմնւելու օրից երբէք չէ շեղւել արդարադատ ու շիտակ քաղաքականութիւնից: Այդ քաղաքականութիւնը եղակի նպատակ ունի՝ երկրումս ապրող նորին մեծութիւն սուլթանի բոլոր հպատակներին շնորհել կեանքի, գոյքի և պատւի ապահովութիւն և գործ է դնում բոլոր միջոցները, որ անկարգութեան, խռովութեանց և գաղթականութեան պատճառները վերանան: Իսկ եթէ հակառակ դրան կը գտնւին անձեր, որ կը կամենան երկրից հեռանալ, նոքա պարտաւոր են չատկապէս դորա համար կազմած լանձնաժողովին գրաւոր չափադիր ներկայացնել վաւերացրած ոստիկանութիւնից և Պատրիարքից առ տն, թէ նոքա երբէք հնարաւորութիւն չունենան թիւրքիս վերադառնալու: Ամեն մի այդ տեսակ փաստաթղթին կցւած պիտի լինի գաղթողի լուսանկարը: Դադթեւու արտօնութիւն կը տրւի միայն այդ ձեականութիւնները կատարելուց ցեռու»:

Սուլթանը մի իրադէով հրամայեց ստիպողական տուրք հաւաքել տաճկահպատակներից, սկսած 5 պիաստրից մինչև 120 պիաստր իւրաքանչիւրից. աւելին ըստ կամաց. արդիւնքը պիտի գնայ մահմեդական ժողովուրդը զինելու:

Ստիպողական տուրքը, որի մասին խօսեցինք, բողոքներ յարուցեց Պոլսի դեսպանների կողմից. դորա վրայ՝ սուլթանը այդ տուրքը «կամաւոր» յայտարարեց. բայց էութիւնը մնաց նոյնը. կառավարութիւնը հրահանգ տւեց իմամներին յորդորելու մահմեդականներին, որ վճարեն այդ հարկը. նոքա քարոզում են, որ քրիստոնեաները պատրաստուում են տաճիկներին վռնտել Ն. րոպայից:

Ա. Գրին, խօսելով մի յօււաճում՝ բռնի տուրքի մասին, յայտնեց որ բռնի հարկերը ըստ Ղուրանի օրինական են և որ իրաւաբանական տեսակէտից դա մի կրօնական պարզ գործ է, և այդ հարկը կուռում է

զեքաթ, որ Ղուրանով որոշւած է ամեն մինի տարեկան հասոցթի $\frac{1}{10}$ — $\frac{1}{20}$, իսկ գրամաղլիի հարկերից $\frac{2}{3}$:

Դէշլի Նիւսի. անդեկութեան համաձայն, Անգլո-հայկական ընկերութեան ժողովը մերժել է բանակցել Թահսին-բէշի հետ, որ մօտերս Լոնդոն գնաց իբրեւ սուլթանի առանձին յանձնակատար. այդ բէշի վկայադրերը բաւարար չնկատւեցան և այդ բանը նրան իմաց տրւեց:

Հայկական դատերը քննելու համար հաստատուած արտակարգ դատարանը չափազանց շատ գործեր ունենալու պատճառով սեպտեմբերի վերջերքը մի նրկրորդ արտակարգ դատարան ևս հիմնւեց նոյն գործերի համար:

Արտակարգ դատարանը սուլթանի հրամանով դադարեցրեց իւր գործունէութիւնը. բոլոր դատերը յանձնւեցին սովորական դատարաններին:

Սուլթանը հեռացրեց պաշտօնից օստիկանութեան մինիստր Նազըմ փաշային, որ վերջին 5-6 տարիները վարում էր այդ պաշտօնը: Օստիկանութեան մինիստր Նշանակեց Շեւքիկ փաշան: Հրաժեռացած Նազըմ փաշան իւր արձակումից քիչ առաջ սուլթանից նւեր ստացաւ Նիշան թաղ գեղեցիկ ապարանքը, որ գտնւում է Իլդիզ-քեօշկին մօտիկ. պաշտօնից հրաժարեցնելուց յետոյ էլ սուլթանը հրամայեց աւելցնել նորա ապրուստի թոշակը և բացի այդ՝ մի թանկագին ընծայ ուղարկեց նրան:

Նրիտասարգ Թիւրքիային պատկանող մահմեդականները քչւում են Փոքր-Ասիա:

Անգլիական արտայայտութիւններ

Ջեմս Բրայս, (Ռոզբերիի վերջին կաբինէտում առևտրական գործոց մինիստրը, «Վերելք Արարատի» գրքի հեղինակը, յայտնի հայասէր) Բերլինի Nation լրագրում (17 հոկտ. նոր տոմար) հրատարակեց իւր մի յօդւածը, ուր նա յայտնում է թէ անգլիական ազգի ներկայ շարժումը հայերի օգտին միանգամայն անշահասէր է. Բրայս միևնոյն ժամանակ Գլադստոնի պէս այն համոզմունքն ունի, որ միմիայն սուլթանի դահնկեցութիւնը կարող է խնդիրը լուծել: Բրայսը եռանդով հրաւիրում է գերմանացոց. համակրել հայոց դատին և զանգատուում է այն դժկամակութեան մասին, որ գերմանացիք

ցոյց են տալիս Անգլիային. Գերմանիայի հակառակութիւնը Անգլիային աֆրիկական խնդրի մէջ լինելով՝ Բրայսը յայտնում է որ Աֆրիկական այնքան մեծ է, որ երկու երկրին էլ գոհացումն կարող է տալ:

«Պոլիտիշէ Կորրեսպոնդէնց» վիեննական թերթը (հոկտ. սկզբները), տեղեկացնում էր որ հակասահմանադրական պատրիարքական տեղապահ Բարդուղիմէոս եպիսկոպոսը և պետական խորհրդի անդամ Նուրեան էֆէնդի աշխատում են փոփոխել տալ թէ հայոց ազգային երեցփոխական ժողովի գումարման եղանակը և թէ պատրիարքի ընտրութեան կանոնները, ինչպէս որ թիւրք կառավարութիւնը կամենում է. որով հայոց պատրիարքին շնորհած արտօնութիւնները կրճատուում են:

Անգլիոյ թագուհուն ուղղած աղերսագիրը: Այժմ ամբողջ Մեծ-Բրիտանիայի մէջ ստորագրւում է Անգլիայի թագուհուն ուղղեալ հետեւեալ աղերսագիրը.

«Թագուհոյ ամենապատւական Վեհափառութեան.— Ձեր Մեծութեան հաւատարիմ հպատակների խնդրագրի նպատակն է ցոյց տալ, թէ հակառակ բրիտանական ազգի միաձայն և անկեղծ բողոքին Թիւրքիայում հայերի դէմ կատարւած մշտական խժեթութեանց և ջարդերի ընդդէմ և հակառակ Ձեր Վեհափառութեան նախարարների և եւրոպական տէրութեանց բանակցութեանց՝ այդ արհաւիրքները դադարեցնելու մասին, որոց թոյլատրութիւնը նախատինք է մարդկային ազգին, դեռ ոչինչ չէ կատարել ազատելու սուլթանի այդ դժբաղդ զոհերին կողոպուտից և մահից: Ընդհակառակը՝ Թիւրքիայում իրերի վիճակն օր օրից վատթարանում է, և նրա վեհապետը քաջալերելով զիւլլումատիայի անկարողութիւնից, այժմ մտադիր է զինել մուսուլման ազգաբնակութիւնը, իբրև նախապատրաստութիւն օսմանեան կայրութեան քրիստոնեայ ազգաբնակութեան մի ընդհանուր կոտորածի: Ի նկատի ունենալով այս իրողութիւնները Ձեր Վեհափառութեան խոնարհ աղերսարկուններն աղաչում են, որ Ձեր Մեծութիւնը անձամբ միջամտէ և միջոցներ գտնէ մեր տարաբաղդ և լքեալ ստեղծակիցներին ազատելու սրից, ցրտից ու սովից, որոնց պաշտպանութեան համար մեր ազգը կամաւ վսեմ պատասխանատւութեանց ներքոյ է մտել, և որոնց հա-

մար մենք այժմ խոնարհաբար հայցում ենք Ձեր մեծութեան բարեշնորհ օգնութիւնը: Ձեր աղերսարկունները, իբրև իրենց պարտաւորութիւն, ընդմիշտ պիտի աղօթեն, որ Ամենակարող Աստուծը երկար կեանք շնորհէ Ձեր Մեծութեան այս պետութեան վրայ տիրելուն:

Գլխատոն հետեւալ նամակը ուղարկեց Բելգիայի Լուէն քաղաքի կաթոլիկ համալսարանի ուսանողներին, որոնք գրաւոր կերպով պաշտպանել էին հայոց դատը.

«Քիչ յայտարարութիւններ կարող էին այնչափ ուրախութիւն պատճառել ինձ, որչափ ձեր պատւական երկրի ուսանողների այդ յայտարարութիւնը: Մեր դատը մեծ է և արդար, և իրօք միխթարական է ինձ համար տեսնել, որ քրիստոնեայ երիտասարդներ անտարբեր չեն, այլ բարձրացնում են իրենց ձայնը ինպատ նոցա, որոնք, հաւատալով միևնոյն Աստուծուն, որին մենք հաւատում ենք, մարտիրոսւում են այսօր մեր աշխարհային թշնամիների կողմից: Պարոններ, խօսեցէք նոցա համար ձեր օրագիրներում, շարժեցէք ձեր ընթերցողների սրտերը դէպի հայ ազգի կրած չարչարանքները, և այդ բանով դուք մի մեծ գործ կատարած կը լինէք: Հաճեցէք ընդունել իմ սրտագին համակրանքները բելգիական համալսարանների երիտասարդների համար»:

Փրանսիա, Հանոտոյի ծառը

Նոր տոմարով նոյեմբ. 3-ին Փրանսիական պարլամէնտում հարցապնդում եղաւ հայկական խնդրի մասին: Վիճաբանութեան սկիզբ դրեց Դ. Կոշէնը, որին յաջորդեցին կոմս դը-Մէօն'ը և Հիւբբարը, ապա խօսեց արտաքին գործերի մինիստր Հանոտո'ն և վերջը սոցիալիստների պարագլուխ Ժորէսը: Կոշէնը նկարագրեց տաճկահայերի կրած անլուր տանջանքները մեր դարի վերջին. պատմեց 1894-ի կոտորածը Սասունում և ապա նկարագրեց թիւրքական ռեժիմը. վերջը Կոշէնը յայտնեց որ Եւրոպան պիտի միջամտէ և որ այս մասին Փրանսիան պիտի համաձայնութիւն կայացնէ Ռուսիայի հետ: «Ժամանակ է, ասաց նա, դառնալու դէպի մեր դաշնակիցները. Փրանսիայի բարեկամութիւնը թանկագին է, և նա ձրիապէս ձեռք չէ բերւում. հարկաւոր է, որ Փրանսիայի ազնիւ-

ձգտումները համակրութիւն գանեն մեր բարեկամների կողմից, որ մեզ օգնեն պաշտպանելու թույլերին, հալածեալներին և վերականգնելու արդարադատութիւնը. ասացէք այս մասին, պ. մինիստր, մեր բարեկամներին:—Կոմս դը-Մէօն ինկատի առաւ այն, որ թիւրք կառավարութիւնը կոտորածները կատարում է որոշ նախագծով: Իր-Մէօնը սակայն հակառակ է թիւրքիայի բաժանման. «Ֆրանսիայի աւանդական քաղաքականութիւնն է պահպանել Տաճկաստանի և Եգիպտոսի գոյութիւնը»:

Հանոտոն պատասխանելով Հիւբբարին նախ և առաջ կանգ է առնում Իտալացի Սալվատորի սպանութեան մասին, և յայտնում է թէ Դուռը քննութիւնը յանձնել է զինուորական խորհրդին և թէ Մաղաւ-բէյը, այն գնդի զօրապետը, որին պատկանում են մարդասպանները, ըստ արժանւոյն կը պատժէ նոցա: Մինիստրը ի դէպ անհրաժեշտ է համարում գովաբանել Կոմբօնին՝ իրաւօրէից նրա եռանդը, և որի աչալըջութեան վրայ իւր կարծիքով ժողովը կարող է վստահ լինել: Այնուհետև զիմելով Հայաստանում կոտորած անցքերին, Հանոտոն ասում է թէ շնորհիւ նրան որ սուլթանի հպատակ երեք միլիոն հացերը ցրած են, շարժումն այնպիսի մեծ ծաւալ չէր ընդունի, եթէ Եւրոպայի հետ ունեցած նոցա մերձ յարաբերութիւնները անկասկածիւն ստանալու ցանկութիւն չզարթեցնէին և մանաւանդ եթէ Թիւրքիայի վատ իշխանութիւնը չաճախ և արդարացի առիթներ չտար նոցա դժգոհ լինելու:

Շարունակելով պատմական տեսութիւնը, Հանոտոն ասում է, որ շարժումը մանաւանդ խիստ էր Անգլիայում, ուր յեղափոխական մասնաժողովներն աշխատում էին միջամտելու ոգին զարգացնել, որ շատ անգամ իրիւր է Եւրոպային բռնի ստիպել Արևելքին իւր կամքը կատարելու: 1893—1894 թւականներին սաստկացած շարժումն ստիպեց Պոլսում լիազօրութիւն ունեցող դեսպաններին զբաղւել նրանով և անգլիական կառավարութիւնն ըմբռնեց թէ ինչ վտանգների կարելի է ենթարկւել անկախ գործելու դէպքում:

Սուլթանի խնդրանք անգլիական, ռուսական և Ֆրանսիական դեսպանութիւններին միջև համաձայնութիւն կայացաւ: Ֆրանսիան՝

որ ուղղակի շահագրգռած չէր, իւր ծառայութիւնն առաջարկեց խաղաղացնելու համար, և 1895 թւականի հոկտեմբերին վերջնականապէս մշակեցան այն ուէֆորմները, որոնք պիտի գործադրէին Հայաստանի նահանգներում: Այդ նախագիծը դեռ իրագործւած չէր, երբ սկսեցին կռիւն ու կոտորածները: Որպէսզի ժողովը զաղափար ունենայ այդ կոտորածների լրջութեան և հիմնական պատճառների մասին, նա քաղաածքներ է կարդում գործակալների մէկի տեղեկագրած վշտալի զեկուցագրից և յիշեցնելով Օտտոմանեան բանկի վրայ յարձակւիլը, աւելացնում է, որ պետութիւններն անտարբեր չմնացին դէպի այդ դէպքը և Ֆրանսիան խօսեց մի այնպիսի ոճով, որին չհասկանալն անհնարին էր: Զարիքը նաև տարածւեց Օսմանեան պետութեան միւս մասերում: Մակեդոնիայում, ուր վտանգը վերացաւ շնորհիւ Աւստրո-Ունգարիայի նախաձեռնութեան և Կրետէյում, որի համար դիւանագիտութիւնը ձևակերպեց նոր ազատամիտ վարչութիւն: Մինիստրները — շարունակում է Հանոտոն — շարիքի աղբիւրներին չհասան. սակայն պարզեցին մի քանի սկզբունքներ, որոնցով պետութիւնները կարող են ղեկավարւել այդ վտանգաւոր և փափուկ հարցերը լուծելիս: Այդ սկզբունքները չնայած պետութեանց շահերի մրցման, ամենից առաջ ըստ երևութիւն ներգործութիւն ունեցան պետութիւնների միաբանութեան վրայ: Նոքա անշուշտ համոզւած են, որ ամենից անհրաժեշտը և կարեւորագոյնը հաստատ և անշահասէր համաձայնութիւնն է: Կառավարութիւնները միացած ընդհանուր ճիգ են թափում, որպէսզի գտնեն այդ համերաշխութեան հիմքերը և դոցա ամրացնեն. այժմ նոքա աշխատում են վերացնել կամ հարթել տարաձայնութեան պատճառները: Դեսպանների հաւաքական գործունէութիւնը և Պոլսում ձգնաժամն սկսելուց մինչև այժմ համերաշխ էր և յաջորդաբար. այդ միաբանութիւնը և յաջորդականութիւնը վերադրւելու է ոչ թէ նոցաից մէկնումէկին, այլ բոլորին ի միասին: Եւ այդ միաբանութիւնը, որին զօրաւիգ էր մինիստրների հաւանութիւնը, պահպանեց Կրետէյում և Մակեդոնիայում վերոյիշեալ արդիւնաւէտ հետևանքները:

Այս ֆակտերից եզրակացնելու է, որ պէտք է ընդմիշտ հրաժարւել առանձնակի գործելու մտքից, և զուք բոլորդ ականատես

էիք այն եռանդին, որով Անգլիայի ազատամիտ կուսակցութեան նորերս հրաժարական տւած պարագլուխը (լորդ Ռոզբերի) նախաստեղծ հրաժարել իւր դիրքից, որպէս զի ներկայ պահպանողական կաբինէտի առաջնորդի (Սալիսբըրիի) պաշտօնական ազդարարութիւններին հակասած չլինի. սակայն պետութիւնների ճնշումը Կ. Պալսում, որպէս զի սուլթանից ձեռք բերւի նրա հպատակների հասարակական և մասնաւոր կեանքի պայմանների կատարելագործութիւնը՝ երբէք չպիտի շօշափի և խախտի Օսմանեան պետութեան ամբողջութիւնը և դաշինքները: Ֆրանսիան միշտ հետևել է այդ տեսակէտին, այդ նրա քաղաքականութեան և նրա պատմութեան պատւաւոր աւանդութիւններից մինն է եղած, և նա երջանիկ է, նկատելով որ դրան համակարծիք են և միւս պետութիւնները. մի հանդամանք, որ լուրջ դրաւական է եւրոպական հաւասարակշռութեան համար: Հանոտօն համոզւած է, որ պետութիւնների համերաշխ գործողութիւնը Պալսում կը ներգործէ իսկ և իսկ այն կերպ, որի վրայ շեշտեցին նախորդ ճառախօսները: Մինիստրը շարունակում է: Բնաւ խօսք չի կարող լինել անկախ միջամտութեան կամ գործողութեան մի այլ եղանակի մասին, որ յիշեցնի condominium—դա վերին աստիճանի վաղաժամ և վտանգաւոր կը լինէր: Սակայն եւրոպական քաղաքականութիւնը, որ ձեռնամուխ է եղել վերքերի կապկպելուն և վճռել է արգելք դառնալ նորերս տեղի ունեցած չարիքների կրկնելուն, կարող է Օսմանեան կառավարութեան հետ ձեռք-ձեռքի տւած միատեղ ձեռնարկել պետութիւնը բարենորոգելու խնդրին: Այդ հարցը զժառը լուծելու է, բաց մեր ոյժերից և ցանկութիւններից վեր չէ: Անհրաժեշտ պարտք ևմ համարում շեշտել այստեղ Պարիզին տւած՝ ռուսաց Կալսեր այցելութեան բարեբար հեռանքները: Մենք կարող ենք մեծամեծ յոյսեր ակնկալել այդ այցելութիւնից, իբրեւ մի անցքից, որ արժանաւորապէս իւր վրայ է դարձնում ժողովի ուշադրութիւնը: Մտքերի փոխանակութիւն տեղի ունեցաւ և երևան եկաւ երկու պետութիւնների կարծիքների և շահերի ընդհանրութիւնը. և մենք հաւատում ենք, որ շնորհիւ պահանջների չափաւորութեան և համեստութեան՝ հնարաւոր է այնպիսի որոշումներ ձեռք բերել, որոնք համապատասխանելով միւս պետութիւնների հաշեացք-

ներին, բաւարարութիւն կը տան նաեւ Արեւելքի զրութեան պահանջներին: (Հաւանութեան աղմկալի նշաններ): Միացեալ Եւրոպան հաւանօրէն հասկացնել կը տայ սուլթանին իւր կամեցածը, կը ստիպէ նրան խուսափել և զգուշանալ վտանգաւոր ազդեցութիւնից, ձեռնհաս կը լինի ապացուցելու, որ խնդրի լուծումը նրա մէջ չէ, որ այս կամ այն կուսակցութեան, կամ կրօնին պետութեան մէջ արտօնութիւններ չնորհւի, ի վնաս միւսներին, այլ նրանումն է, որ ամենքը—կաթոլիկները, հայերը, օրթոդոքսները և մահմեդականները միատեսակ տանջուած են միեւնոյն չարիքներից և բարենորոգումներ են ազադակում:

Եւրոպան կ'ապացուցէ նրան, որ չարիքի աղբիւրը կայանում է վատ Ֆինանսական և վարչական քաղաքականութեան մէջ, և մասնացոյց կանէ այն միջոցները, որոնք հնարաւորութիւն են տալիս ամենայն տեղ կարգապահութիւն մտցնել, առանց որի պետութիւնները չեն կարող գոյութիւն ունենալ: Եւրոպան կը պահանջէ սուլթանից իւր խոստումների իրազօրծումը, կ'առաջադրէ մտցնել այն ռէֆորմները, որոնց նա ընդունել է, լրացնել նոցա, վերջ տալ հալածանքներին, ազատել բանտարկեալներին և նպաստ տալ ամենից աւելի կարօտեալներին: Նրան հեղինակօրէն կը յիշեցնեն, որ նրա խնամքին է յանձնւած եւրոպական գաղութներին կեանքը, որ նա նոցա համար պատասխանատու է և պարտաւոր է հասարակական անդորրութիւնը և կարգապահութիւնն ապահովել ու միայն իւր հպատակների վերաբերմամբ, այլ թրքական սահմաններում ապրող բոլոր ընակիչներին: Վերջապէս ընդունակ կը լինին նրան ապացուցել որ այդ քաղաքականութիւնը միակ փրկարար էլքն է, որ նա զօրաւոր է և թէ այդ ուղղութիւնն ընդունելու մէջն է կայանում թէ իւր և թէ իւր հպատակների պատիւն ու բազդը: (Հաւանութեան աղմկալից նշաններ): Բայց անհրաժեշտ է որ նորա, որոնց վրայ է ծանրացած ձեռնարկութիւնների պատասխանատուութիւնը, ըմբռնեն այն չարիքը, որ կարող է առաջանալ անզգոյշ քայլերից: Նոքա գիտեն որ Եւրոպան անտարբեր չէ վերաբերւում նոցա ցաւ պատճառող զժբաղդութիւններին, բայց կարեւոր է, որ նոքա հասկանան նոյնպէս, որ ձեռնարկելիք գործը դժւարին է, որ նա կարող է ձգձգւել, որ բռնի օգնել անհնարին է

և թէ ամբողջ Եւրոպան, բարեհաճ զգացմունքներով ոգևորւած, նոցա վրայ է դարձնում իւր աչքերը և նոցա բարիք մաղթում, բայց և այնպէս նա նոր անսպասելի սիւրպրիզների պէտք չէ զգում: Ի վերջոյ Հանոտօն աւում է՝ ես աշխատեցի ինձ համար հնարաւոր եղած սահմաններում պատասխանել ինձ ուղղած հարցերին և արտայայտւած շփոթմունքներին, փորձեցի պարզել ձեր առաջ և յաւիտենական արեւելեան խնդրի վրայ բարդւած նորագոյն դէպքերը: Ենթադրում եմ որ ժողովը և նրանից ղուրս կը հասկանան թէ ինչ մղիչներ են զեկամալ բում մեր երկիրը: Յրանսիան հաւատարիմ մնալով իւր աւանդութիւններին, կամենում է արեւելեան ազգերի բարեօրոյնը և չէ մոռանում իւր գերիշխանութեան պարտաւորութիւնները: Նա հասկանում է որ կարգապահութիւնը և ապահովութիւնը անհրաժեշտ տարրեր են այն մեծ շահերի, որոնց նա հովանաւորում է, չէ մոռանում և իւր վաղեմի կապերը, որ ունի օսմանեան պետութեան հետ, ինչպէս նաև այն հիմնական պատճառները, որոնք նրան հարկադրում են, ստիպում են այդ պետութեան ամբողջութիւնը և անկախութիւնը պաշտպանել: Բայց նախազգուշացած անցեալի փորձերից, Յրանսիան երես է դարձնում բաղադրանքական ուղղութիւնից և զիտէ որ աշխարհումս ուրիշ շատ պարտականութիւններ ունի և թէ նա ամեն մի գէպքում պէտք է զուգակշռէ իւր ուժերը իւր վրայ ծանրացած միւս խնդիրների համեմատութեամբ: Սոքա են այն հայեացքները որ եղել են և կան Յրանսիայի քաղաքականութեան ուղղութեան մէջ ներկայ ռուսիս, երբ նա իրան համապատասխանող սահմաններում կամենում է վճռել Եւրոպայի առջև դրւած փափուկ հարցերը: Բայց որչափ էլ որ լուրջ լինին այդ հարցերը, նոքա անլուծելի չեն, եթէ ամենքն էլ մեզ նման ջանք գործ կը դնեն նրա վրայ՝ արդարութեան, միաբանութեան և համերաշխութեան ուղղութեամբ աշխատելով:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Համընդգէտ Կորընսպոնդէնտ գերմանական լրագիրը հրատարակեց (հոկտ. կիսեւրդը) այն յիշատակագիրը, որ Ռուսիայի հանգուցեալ մինիստր իշխան Լոբանով-Ռոստովսկի ուղարկել էր օտար պետութիւններին Նոյեմբեր, Կոստերական Մեծութիւններին արտասահ-

ման ճամբորդելու նոյն իսկ սկզբում: Յիշատակագիրը սխառմ է այն յայտարարութեամբ թէ եւրոպական խաղաղութեան պահպանութիւնը ոռւսաց քաղաքականութեան բարձրագոյն ղեկավարող սկզբունքներից մէկն է: Զինւորական միջամտութիւնը, որպէս օրինակ Քիւրքիայի մայրաքաղաքի զինւորական զրաւումը, կարող է պետութեանց մէջ ուժգին ընդհարումներ առաջ բերել, այնպէս որ եւրոպական մի պատերազմ անխուսափելի կը դառնայ: Սակայն այն թշւառութիւնները, որ այդ պատերազմի հետեանք են լինելու, անչափ աւելի մեծ կը լինին, քան այն չարիքը, որ առաջ է գալիս հայերին հալածելուց: Ահա թէ ինչ պատճառով եւրոպական զինւորական միջամտութիւնը պէտք է a priori ի բաց մերժել այս խնդրին վերաբերեալ ամեն մի ծրագրից: Քիւրքիայում այնպիսի տանելի կարգեր վերահաստատելու համար, որոնց շնորհիւ երաշխաւորած լինէին քրիստոնեայ ազգաբնակչութեան ապահովութիւնը և անդորրութիւնը, պէտք է զիմել ճաճկաստանում զոյլութիւն ունեցող միակ իշխանութեան, այն է սուլթանի անձնաւորութեան: Պետութիւնները պէտք է իրենց ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով պահպանեն և ուժեղացնեն այդ իշխանութիւնը, որովհետեւ միմիայն սուլթանի միջնորդութեամբ կարելի կը լինի զրութիւնը բարւոքելու համար անհրաժեշտ ռէֆորմներն անցկացնել: Պետութիւնները ձեռքից եկած չափ պէտք է պաշտպանեն սուլթանին նրա ռէֆորմներին նախաձեռնութեան մէջ և ի դէպս կարօտութեան մինչև իսկ նիւթական օգնութիւն հասցնեն նրան:

Գերմանական արտայայտութիւն

«National Zeitung»-ը, — որ միշտ Անդլիայի ամենասաստիկ թշնամիներից մինն է եղել, միշտ հաւանել է Գերմանիայի թրքական քաղաքականութեան — հրատարակեց մի նշանաւոր առաջնորդող յօդած Քուրքիայի մտադրեալ նոր գլխահարկի վերաբերմամբ:

Յօդածագիրը մատնանիշ անելուց յետոյ այն իրողութեան վրայ թէ Արդուլ-Համիդը որչափ պէտք է երախտապարտ համարի իրեն դէպի Եւրոպան, առանց որի միջամտութեան նորա կայսրութիւնն այսօր մէկ ծայրից մինչև միւսը բոցերի մէջ պէտք է լինէր, ասում է հետեւեալը.

«Թիւրքիայում խաղաղութիւն և կարգ վերահաստատելու ահադին զժառուրթիւնը նրանումն է, որ սուլթանը և իւր մուսուլման հպատակներն անպարտելի մի արհաւիրք են զգում հարկաւոր ուէֆորմներէց, մահաւանդ աջն պատճառով, որ ալդալիսի ուէֆորմները մի քիչ փող են պահանջում: Այս պարագաների ներքոյ անըմբռնելի չէ, որ մահաւան երկիւղը երբեմն լուսահատութեան և կատաղութեան է փոխուում, և օրէցօր հաստատուում է իսլամների սրտերում աջն գաղափարը, թէ «նոքա ուզում են միայն աջն, ինչ որ են, և եթէ պիտի մեռնեն՝ պէտք է իրենց կեանքը սուղ ծախեն»: Եթէ սուլթանը մտադիր է գլխահարկի նոր տուրքը հաստատել և առնել, աջն իւր բանակի ծախսերի համար չէ, ալ տարածելու իւր լախտաւորների կողմակերպութիւնը ամբողջ կաշտութեան մէջ, և սպառազինեալ մի ժողովուրդ պատրաստելու: Այս թրքական մի հին և հարազատ ծրագիր է, որովհետև օսմանցիներն անցեալում իրօք մի սպառազինեալ ժողովուրդ էին, և նոցա կաշտութիւնը մի ահադին բանակ էր, պատրաստ ամեն ժամանակ Ներուպալի վրայ քալելու: Այս կէտումն է սուլթանի աջմեան ծրագրի վտանգը:

Որո՞նց դէմ օսմանցիք պէտք է դիմեն:—Յաւանապէս նախ՝ Դրան քրիստոնեակ հպատակների դէմ, որպէս զի ամեն տեղ մի ընդհանուր տերութրիզմով նաճէ նոցա, և երկրորդ՝ ուէֆորմի գործի դէմ: Դեսպաններն անմիջապէս տեսան վտանգը և չվարանցան սուլթանին համոզելու որ չես կենալ ալդ մտադրութիւնից. նաև նորան ազդեալէս պէտք է իմաց անեն, թէ եթէ ինքը դեռ աջն գաղափարին է, ալիդէս Ներուպան նրան ժամանակ չի տալ ալդ ծրագրին իրագործելու, բայց թէ աջմեկած պիտի լինի աջն ժամանակը, երբ Ներուպան չամենաջն դէպս օսմանեան պետութիւնը իւր ձեռքն առնէ: Սուլթանի մտադրած ծրագիրը շատ վտանգաւոր է մանաւանդ աջն պատճառով, որ կը չուզէ քրիստոնեաներին Թիւրքիայում և կը գրգռէ նոցա դէպի խիստ գործեր: Թիւրքիայում բոլոր քրիստոնեաները հալերի նման ցրիւ և ոչ-պատերազմասէր չեն: Ժողովուրդը զինուորելու տաշին քալը կարող է Բալկանեան թերակղզու քրիստոնեաների գլխու մէջ դնել աջն գաղափարը, թէ իրենց դրամը, որ սուլթանն ուզում է իրենցից առնել՝ իւր օսմանցի մարդասպանները զինաւորելու, իրենք կարող են աւելի լաւ նպատակի գործածել, ալն է՝ իրենց զինելու և Օսմանեան լուծը թափ տալու:

Այսուամենայնիւ եւրոպական քաղաքականութիւնը փափաղում է, որ ալսպիսի բաներ տեղի չունենան:

Ուստի փափաղելի է որ պետութիւնները ներկայ վալրկենում, որ չափ որ կարելի է, ազդեալէս գործեն:

Գալիցիայի հայեր

Dzien Polski լեհական լրագիրը (Աւստրիայում, Գալիցիայում) իւր մի յօդաւածով ուշադրութիւն դարձրեց այն հանգամանքի վրայ, որ Գալիցիայի հայերի մէջ, որոնք կարծես բոլորովին ձուլւած էին իրենց շրջապատող լեհ հասարակութիւնների հետ, վերջերքս նկատուում է զօրեղ շարժում բուն հայկական ոգով, որի սկզբնաւորութիւնը Կուտչից (?) է, ուր հայերը բազմաթիւ են, կազմելով 2,000 հոգի և ուր ընտանեկան լեզունն հայերէնն է. դեռ նորերումս այդ լեզուով եկեղեցում քարոզներ էին տրւում: Շարժման ղեկավարներն են երիտասարդ քահանաներ և ուսանող երիտասարդների մի խմբակ, Իլւովի (Լեմբերգ) համալսարանից. այդ ուսանողները ձեռնադրուած էին մինչև անգամ առանձին ընկերութիւն կազմել և լրագիր հրատարակել հայութեան զաղափարը քարոզելու և տարածելու համար. բայց առ այժմ այդ ղիտաւորութիւնը թողած են. դորա փոխարէն Ձերնովիցում, ուր հայերը աւելի բազմաթիւ են, ինչպէս երևում է, մօտիկ սպազացում կը կազմէի հայկական ընկերութիւնը: Երիտասարդ հայերի գլխաւոր նշանաբաններից մէկն է ազգային լեզւի պահպանումը, ուստի և աւելի ու աւելի յաճախ լսում է հայ լեզուն այն տեղերում, ուր երիտասարդներ են հաւաքւում: Հայ լրագիրներ, որոնք հրատարակւում են Թիթիսում, Կ. Պոլսում և Վիեննայում, ինչպէս օրինակ՝ «Արեւելք», «Հանդէս» և այլք համեմատաբար բաւական մեծ թւով ստացւում են Իլւովում: Գալիցիայի հայերը պահպանում են անրնդհատ յարաբերութիւն Հայաստանի հետ և մօտերումս այնտեղ ուղարկւած է Իլւովից 2,000 զուլդէն, որ կազմւել է կամաւոր նւիրաբերութիւնից, յօգուտ մահմեդական մոլեռանդութեան զոհերի: Գալիցիայի հայերի ազգային ոգու զարթոնքուն առիթ են տւել վերջին դէպքերը Արեւելքում, որոնք այստեղ սպասւածից աւելի արձագանք են գտել: Գալիցիայի բոլոր հայերի թիւը 5,000 է ներկայումս, որոնցից 500-ը բնակւում են Իլւովում:

Ռեֆորմների ծրագիրներ

Դէյլի Նիւսի Հռոմի թղթակիցը յայտնեց որ հաստատ աղբիւրից տեղեկացել է թէ եռապետական դաշնակցութեան պետու-

թիւնները Անգլիացի հետ միացած վճռել են Ռուսիային և Ֆրանսիային լիազօրութիւն տալ միջոցներ ձեռնարկելու թրքական ճրգնամին վերջ դնելու համար, իրենց վերապահելով այս միջոցների պաշտպանութիւնը, ի դէպ եթէ այդ միջոցները գոհացուցիչ համարւին: Ինչ վերաբերում է վարչական և ֆինանսական ռեֆորմների նախագծին, թղթակցի ասելով այժմ պետութիւնների հայեցողութեան է յանձնւած ֆինանսական հսկողութեան ծրագիրը, որի համեմատ օսմանեան պետութեան ամբողջ վարչական կազմը եւրոպական պատասխանատու մինիստրների իրաւունքին է ենթարկւում: Թղթակիցը լսել է թէ օսմանեան բանկի տնօրէն պ. Էդգար Վինսենտ (անգլիացի) նշանակւում է ելլամտից մինիստր, ռուսական սպաներից մէկը նոյնպէս մինիստրի պաշտօն է ստանում, ներքին գործոց մինիստրը պիտի մի Ֆրանսիացի լինի. մեծ եւրաբոսը (առաջին մինիստր) պետական խորհրդի նախագահ կը մնայ և նորա պաշտօնի կոչւիլը պետութիւնների համաձայնութեամբ պիտի լինի: Մենք, ասում է Դէյլի Նիւս, հիմքեր ունինք կարծելու, որ Աւստրիան և Գերմանիան հաւանութիւն են տւել թրքական խնդրի այդ տեսակ լուծման, որովհետեւ նոքա նպատակ ունին օսմանեան պետութեան ամբողջութիւնն անձեռնմխելի պահպանել: Վերակազմութեան նախագիծը, ասում է չիշեալ լրագիրը, հետեւեալ յօդւածներն է պարունակում. 1) Փոխառութիւն հինգ միլիոն ֆունտ ստերլինգի. 2) Զօրքերի կրճատումը. 3) Ամեն մի վիլայէթի համար ընդհանուր հարկահան տեսչի նշանակելը. 4) Վերաքննութիւն քաղաքացիական և զինւորական տաճիկ պաշտօնեաների անւանացուցակների. 5) Ժանդարմերիայի վերակազմութիւն թրքական և եւրոպական սպաների առաջնորդութեամբ. 6) Առանց կրօնի խտրութեան մահմեդականների և քրիստոնեաների պաշտօնի կոչել զանազան հաստատութիւնների մէջ:

Պարիզի թերթերի տեղեկութիւնների համեմատ առաջիկայում Պոլսում յայտարարուելու է ռեֆորմների մի ծրագիր, մշակւած պետութիւնների կողմից ամբողջ Թիւրքիայի համար, որի էական կետերը հետեւեալ յօդւածներն են պարունակում.

1. Մինիստրութիւնների նոր կազմակերպութիւն:
2. Զօրս մինիստրների ղեկը (արտաքին գործոց, զիւղատնտե-

սուլթեան, հասարակաց աշխատութիւնների և ելեմտից) յանձնուում է քրիստոնեաներին. սոցանից երեքը, որոնք պիտի առաջին երեք հաստատութիւնների պարագլուխներ լինին, անպայման տաճկահպատակ են լինելու, իսկ ելեմտից մինիստրը կարող է և օտարահպատակ լինել, հաւանակաբար Ֆրանսիացի կամ աւստրիացի:

3. Ամբողջ Թիւրքիայում լինելու է խառն ժանդարմերիա, որը կազմակերպելիս պահպանւելու է զանազան տարրերի համեմատական թւերը:

4. Խառն ազգաբնակութիւն ունեցող վիլայէթների վրայ քրիստոնեայ կուսակալ է նշանակուում, իսկ զուտ քրիստոնեայ բնակիչներ ունեցող նահանգների վրայ՝ քրիստոնեայ վալի:

5. Ամեն մի նահանգում հաստատուում է ընդհանուր խորհուրդ, բաղկացած քրիստոնեայ և մահմեդական անդամներից: Խորհուրդը իւրաքանչիւր տարի գումարուում է 40 օրով, որից յետոյ նորա կայացրած վճիռները յանձնուում են պետական խորհրդի հայեցողութեան:

6. Նախնական գրաքննութիւնը վերանում է, փոխարէնը նոր օրէնք է հրատարակուում մամուլի վերաբերեալ:

Ինքնավարութեան ծրագիրը

Բերլինի Տաղբըլատ լրագրի ասելով Վիեննայի դիպլոմատիական շրջաններում տեղեկութիւն էր ստացւած (հոկտ. վերջերքը), թէ մեծ պետութիւնները քննում են հայկական իրակատար ինքնավարութեան նախագիծը սուլթանի անւանական գերիշխանութեան ներքոյ, բայց եւրոպական հսկողութեամբ և պետութիւնների երաշխաւորութեամբ. և իբր թէ պետութիւնների մեծամասնութիւնը հաւանութիւն է ունի այդ ծրագրին:

Ռուսաց Վետական Համբաւաբերը՝ իւր մի յօդւածում, գրւած Ֆրանսիական արտ. գործերի մինիստր Հանոտո՛ի առիթով, մասնաւոր ուշադրութեան արժանի գտաւ Վերլինի Տաղբըլատի այդ լուրը:

ՄԱՂԱՔԻԱ ԵՊ. ՕՐՄԱՆԵԱՆ-Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԷ

Մեր ընթերցողները արդէն գիտեն ամսագրիս անցեալ համարից պատրիարքական ընտրութիւնների համար եղած պատրաստութիւնների մասին: Ընտրութիւնը, որպէս յայտնի է, պիտի կատարէին Կ. Պոլսի 83 մեծամեծներ: Դոցա խցուցակը երեւի կազմել է արտաքին գործերի մինիստրի օգնական Կադեան Արթին փաշան: Ընտրութեան մասին սուլթանը իրադէ տւեց, ապա լուր ստացւեց թէ, հայ անւանի քաղաքացիների տւած չիշատակագրի համաձայն, իրադէն ետ վերցւեց: Այժմ արդէն ընտրութիւնը կատարւած իրողութիւն է. նոյեմբերի 7-ին հայոց պատրիարք ընտրւեց Մաղարիա եպիսկոպոս Օրմանեան:

Բոլորովին անտեղի ենք համարում Օրմանեան սրբազանի նկատմամբ այժմեանից որ և է գուշակութիւններ անել. նա նախապատրաստւած մարդ է, եւանդուն է, գիտուն է, ընդունակ է գործ կատարելու—այսքանը մենք գիտենք. իսկ աւելին մնում է սպասել և նորան պատրիարքական գործի մէջ տեսնել. կատարելիք գործերի մէջ մենք կը դասենք զաղթականներին կրկին ժողովելու գործը, որի համար մի հայոց պատրիարք անշուշտ զեր ունի կատարելու:

Ահա կենսագրական տեղեկութիւններ սրբազան Օրմանեանի մասին: Նա ծնւել է 1841 թ. Կ. Պոլսում, կաթողիկ ծնողներից: Տասը տարեկան հասակում նա գնաց Հռոմ, ուր նա ուսում Հռոմի Անտոնեան զպրօցում. 1863 թւականին նա կաթողիկ քահանայական կոչում ստացաւ զոքտորական քննութիւններ տալով նա ստացաւ աստուածաբանութեան, փոլոսոփալութեան և կանոնական իրաւագիտութեան զոքտորի վկայագրեր: Հռոմում նա մնաց 20 տարի, ապա վերադարձաւ Կ. Պոլսի, ուր նա քարոզիչ և զրական զործիչ եղաւ. երբ 1870 թւականին պապի անսխալականութեան դաւանանքի խնդիրն էր վճռւում, Օրմանեան վարդապետը անսխալականութիւն հերքողներից էր և ալք պատճառով նա Կ. Պոլսի

հալ-կաթոլիկների պատրիարք Հատունի հակառակորդ էր (հակահառու-
նեաններ): Երբ հալ-կաթոլիկները գրեթէ ամենքը ընդունեցին պապի
անսխալակախութիւնը, Օրմանեան¹⁾ մի փոքրիկ խմբով բաժանւեց մեծա-
մասնութիւնից, իսկ²⁾ չլսող չա, կաթոլիկ³⁾ վարդապետ Ճերմակեանի և ալ
աշխարհականների հետ միասին գիմեց Կ. Պոլսի Հաջոց պատրիարք Ներսէս
Վարժապետեանին, խնդրելով ընդունել իրենց Հալատտանեաց եկեղեցու
գիրկը: Խնդիրքը ընդունւեց, և Օրմանեան վարդապետը նախ նշանակւեց
քարոզիչ Կ. Պոլսի Պերա թաղում, ուր ճանաչւեց իբր ճարտար հռե-
տոր, ապա նշանակւեց առաջնորդ Կարինում (Երզնրում), ուր մնաց
երկու տարի: Եւրա 1886 թ-ին չա Ներսէս պատրիարքի առաջարկով
Գալեգին վ. Սրբանձնեանի հետ ուղարկւեց Ս. Էջմիածին՝ Մակար կաթո-
ղիկոսից եպիսկոպոս ձեռնադրելու համար: Իբր եպիսկոպոս վերադարձաւ
Կ. Պոլիս, բայց հրաժարւեց զնալ Կարին առաջնորդի պաշտօնը շարու-
նակելու համար, այդ մերժումը խնդիր բարուցեց չա և մամուլի մէջ, թէ
կարելի է արդեօք մերժել առաջնորդի պաշտօնը թեմի վրալ եպիսկոպոս
ձեռնադրելուց չետու: Խնդրին վերջ տրւեց, երբ Մակար կաթողիկոսը
Օրմանեանին հրաւիրեց Գէորգեան ձեռնարան աստածաբանութեան ուսուցչի
պաշտօնով: Այդ պաշտօնում չա մնաց երկու տարի և ստիպւեց թողնել
տաճկական հայտաակ լինելու և ուսանալ պատակութիւն ընդունել չուզեալու
պատճառով: Գէորգեան ձեռնարանում չա հետք թողեց, կրթելով տանկին
կաթողիկական դիպիպլինիպի մտքով: Չոյն մտքով չա հրատարակեց
«Արարատ» ամսագրում «Աթոռ Հալատտանեաց» չուածները: Կ. Պոլիս
վերադառնալով չա եղաւ խորհրդակից պատրիարք Աշըգեանի, որը միա-
ժամանակ Արմաշի վանահօր կոչումն ունէր: Աշըգեանը Օրմանեանին չանձնեց
Արմաշի¹⁾ փոխ-վանահայրութիւնը և անց դպրեմանքի վերատեսչութիւնը:

¹⁾ Ենկերիից զէն զէպի Կ. Պոլիս Արմաշը միակ հալոց վանքն է և
գտնուում է Կ. Պոլսի պատրիարքական թեմում, գեղեցիկ ձորի մէջ, Կ.
Պոլսից կառքով 12 ժամ հեռու: Օրմանեան մի ընդարձակ միտադրութիւն
ունի Արմաշի վանքի պատմութեան մասին: Արմաշի վանքը հիմնւել է
1611 թ-ին, աղտեղին մօտ Գրնձըլար գիւղի հալ գաղթականութեան
մասին չիշատակութիւն կալ 1593 թ-ից, ալ չիշատակութիւններ կան ուղ
թւականներից Արմաշ, Գլա, Խասկալ գիւղերի մասին: Արմաշի վանքի
մասին ամենահին գրաւթը 1784 թ-ից է: Վանքը եղել է առաջ
Նիկիմիդիոյ, ապա Իզմիրի առաջնորդութեան մէջ, 1866 թականին Ար-
մաշը դառնեց Իզմիրի առաջնորդութիւնից, իսկ 1889 թ-ին միացւեց
Կ. Պոլսի պատրիարքութեան: Աղտեղ հաստատուած տպարանում 1870 թ.
հրատարակեց Յոյս թերթը որ շարունակւեց 8 տարի 1810 թ-ին հրդեհը
աւերեց Արմաշը, որ վերաշինւեց 1820-ին վանահայր Պօղոս արքեպիս-
կոպոսի ձեռքով: Չանազան ժամանակներ դպրոց է եղել Արմաշում, առանց
մեծ չաջողութեան: 1872 թ-ից սկսած աղտեղի վանահայրն է Աշըգեան
Խորէն արքեպ. (չետու պատրիարք): չա ևս վարժարան հիմնեց, որ փակւեց

որ Աշըգեան մտադիր էր հիմնել Արմաշում: Այդ պաշտօններում Օրմանեան մնաց մինչև ալսօր: Ղպրեվանքը հիմնուեց, և 1895 թ-ին զպրոցը հասունացրեց իւր առաջին պատւոյները:

Պէտք է կարծել, որ Օրմանեան իւր բոլոր հմտութիւնը գործադրել է ալլ զպրոցում. ալլ պատճառով Օրմանեանին դատելու համար անկարելի էր չէ ծանօթանալ զպրոցի կազմակերպութեան հետ: Ալլ զպրոցը ունի 5 տարւան դասընթացք, և չաւելածական վեցերորդ տարում աշակերտները իրենց գրաւոր չարադրութիւններն են պատրաստում և ազատ դասեր են տալիս իրենց ցանկացած նիւթերի վրայ: Վերատեսուչ Օրմանեանի օգնականն էր զպրեվանքի տեսուչ Նիկիչէ վարդապետ Դուրեան. զօքս երկուսը բաժանած էին իրենց մէջ ծրագրի գործադրութիւնը: Իւրաքանչիւրը նուցանից դասախօսում էր օրը 4-ական դաս. Օրմանեան դասախօսում էր ներածութիւն, քննաբանութիւն և մեկնաբանութիւն Ս. Գրքի, աստածաբանութիւն, բնական, տեսական և բարոյական, ժիւսագիտութիւն և տոմարագիտութիւն, եկեղեցական իրաւագիտութիւն, տրամաբանութիւն և հոգեբանութիւն, բնութագրութիւն, սկզբունք լատիներէնի (մէկ տարի), Նիկիչէ վարդ. Դուրեան դասախօսում էր հայոց լեզու և հայոց մատենագրութիւն, ընդհանուր եկեղեցական պատմութիւն, ֆիլոսոֆիալութեան պատմութիւն, կրօնների պատմութիւն, հայոց և ընդհանուր պատմութիւն, քաղաքական տնտեսութիւն, սկզբունք լուծարէնի (մէկ տարի): Դպրոցն ունի միւս դասատուներն էին՝ մի ֆրանսիացի—ֆրանսերէնի համար, մի հալ ուսուցիչ (Պարտիզակի զպրոցից, որի տեսուչն է եղած Նիկիչէ վ. Դուրեան),—տաճկերէնի համար, մի ալլ հալ ուսուցիչ—ֆրանսերէնի, անգլիերէնի և պատմութեան համար, և մի ուրիշը՝ (նոյնպէս Պարտիզակի վարժարանից) մաթեմատիկա մինչև երկրաչափութիւն, տոմարակալութիւն, մարդակազմութիւն, կենդանաբանութիւն, բնագիտութիւն (ֆիզիկա) և բնալուծութիւն (քիմիա), աշխարհագրութիւն և տիեզերագրութիւն: Վերջապէս երկու ալլ ուսուցիչներ սովորեցնում են ձայնագրութիւնը: Օրմանեանի և Դուրեանի դասերից մէկը կամ միւսը դասախօսած են նաև ուրիշ ուսուցիչներ:

Արմաշի զպրեվանքը գլխաւորապէս պատրաստում է աղգաչին և եկեղեցական զպրութեանց հմուտ եկեղեցական անձեր, որ և երևում է առաջին եօթ աւարտածների գրաւոր չարադրութիւններից (թէզ)։ (աշակերտները շուտով աբեղայի կոչումն են ստանում, սպասելով «վարդապետ ձեռնադրելուն, երբ գրաւոր չարադրութիւնները անցրած կը լինին)։ ալլ չարադրութիւնները ընդգրկում են հալ հին գրականութեան գլխաւոր

1877 թ-ին: 1888-ին հրդեհը նորից անրեց վանքը, որը 1889-ին վերածեց զպրեվանքի: Նորա վանահայրերից վիշենք Մատթէոս արքեպիսկոպոսին (1853 թ ից), որ լետու կաթողիկոս եղաւ: Ծան. Ա. Ա.

դէպքերը, ինչպէս՝ Եղիշէ, Գրիգոր Տաթեացի, Օհան Օձնեցի, Գրիգոր Նարեկացի, Լամբրոնացի, Գրիգոր Լուսաւորիչ, Շարական:

Դպրեւանքը անցեալ տարի ունէր 26 աշակերտ, որոնցից 7-ի աւարտելով՝ մնաց 19, որոնցից 5-ը անցկացաւ վեցերորդ դասատուն, ուր պիտի իրենց թէզերը պատրաստէին և ազատ ուսումնասիրութիւններ անէին. հինգերորդ դասատանը միաջն երկու հոգի էին, և 12-ը պիտի անցնէին չորրորդ դասատուն, եթէ միաջն կուսակրօնութիւն ընդունէին:

Ըստ կանոնադրութեան՝ երրորդ դասատուն լրացնողները, եթէ կամեաւ են իրենց ուսումը շարունակել, պիտի կուսակրօնութիւն ընդունեն, սարկաւագ ձեռնադրելով: Եւ ահա այդ է պատճառը, որ շատերը իրենց ուսումը չեն շարունակում: 1894 թ-ին ինը հոգուց միաջն մէկը ստորագրեց ուխտագիրը. մնացածները թողին դնացին: Այս կարգը շատ բնորոշ է Օրմանեանի համար. ինչ է նշանակում աչքքան վաղ կուսակրօնութիւն առաջարկել մի պատանու? Աշակերտների մէջ տիրող գաղափարը այն էր որ հինգերորդ տարին լրացնելուց չետոյ միաջն ազատ լինեն եկեղեցականութիւն ընդունել: Դպրեւանքը սկզբից ի վեր մինչև անցեալ տարի 64 աշակերտ ունեցաւ, որոնցից մնացին միաջն 26 հոգի. զոցանից եօթը աւարտեցին անցեալ տարի և լուսնի ամսին վարդապետ ձեռնադրուեցին (Բարգէն, Խոսրով, Սմբատ, Աղան, Զաւէն, Մուշեղ և Մաշտոց վարդապետներ): Դոցա ձեռքն անցաւ Մոսիս թերթը անյեալ տարւանից:

Կարևոր է գիտենալ Օրմանեանի աշակերտների ոգին: Տարիներ առաջ Կ. Պոլսում գլխաւորապէս Հայրենիք լրագիրն էր որ վախ էր չալտնում թէ մի գուցէ այն հայտ չարաբերութիւնը, որ հաջ եկեղեցին և հաջ Ժողովուրդը, քրիստոնէութեան հաստատումից ի վեր, մեր մէջ պահում են իրար հետ, խզէր այն մասնաւոր դաստիարակութեան եղանակովը, որով պիտի տոգորւին Արմաշում սնած ապագայ եկեղեցականները: Սակայն, այն եօթ նորաւարտ վարդապետները մի չալտարարութիւն տւին, ուր նոքա չալտնեցին թէ նոքա մտքերի զարգացման ու ընդլայման ոչ թէ խափանարար, այլ զօրաւիւք լինելու առաջադրութիւնն ունին: «Գո՛հ ենք, ասում էր Հայրենիքը, «որ անոնց վրայ ազդած չէ անձուկ, տգէտ ու ստրկացած կղերամտութեան ձաշնը, որ դժբաղդարար դեռ իր վաչիւնները կ'արձըկէ հալ լրագիրներու մէջ: Ատոնք, եթէ իրաւցնէ սկզբունքներէ միաջն ազդէին, հիմա զալուցթի աղաղակներ արձակելու էին, եթէ գիտնալին որ Դպրեւանքը՝ իրենց ուղածին տրամազծապէս հակառակ արդիւնք մը տւած է»:

ՆՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Վեհափառ Կաթողիկոսի կոնդակով, տւած ներկայ 1896 թ. հոկտեմբերի 27-ին, յանձնարարուամ է Բաքւի հայ հասարակութեանը՝ թեմական դպրանոց բանալ Բաքու քաղաքում: Եւ այդ նպատակով Վեհ. Կաթողիկոսը Բաքու է ուղարկել Խորէն եպիսկ. Ստեփանէին, պատւիրելով վերջինիս նախապատրաստել Բաքւայ դպրանոցի նախագիծը:

Իւր կողմից Շամսիու հայ-լուսաւորչական հասարակութիւնը խնդրամ. տուց է եղել Վեհ. Կաթողիկոսի մօտ՝ վերոյիշեալ վճիւր փոխել յօգուտ Շամսիւ քաղաքի:

Մեր ընթերցողներին յայտնի է նաեւ, որ անցեալ 1895 թ.ին մի աւելի ևս մեծ վէճ կար Աստրախանի թեմի դպրանոցի տեղի համար. այնտեղ վիճում էին Աստրախան քաղաքի հետ՝ թեմի այլ քաղաքները, գլխաւորապէս Արմաւիրը: Խորէն եպիսկոպոս Ստեփանէի թեմական ժամանակաւոր կառավարութեան օրօք՝ նորա հրաւէրքով Աստրախան ժողովւած թեմի ընտրւած ներկայացուցիչների ժողովին առաջարկեց տեղի խնդիրը վճուել ձայների բազմութեամբ. և ձայների աննշան առաւելութեամբ խնդիրը վճուեց յօգուտ Աստրախան քաղաքի:

Եթէ չենք սխալուամ Աստրախանի թեմում աչգ տարաձայնութիւնները դեռ ևս զոյուեթիւն ունին. խնդիրը վերջնականապէս վճուած չէ. գոնէ Վեհ. Կաթողիկոսի Բաքւայ դպրանոցի մասին կոնդակի մէջ ակնարկ կայ, որից երևում է, որ թէև աչգ խնդիրը յարուցւած է, բայց դեռ ևս Կաթողիկոսի կողմից վճիւր տրւած չէ: Ուրեմն խնդիրը դեռ առկալս է. և մենք ուրախ կը լինենք որ այդպէս լինի, որովհետեւ Աստրախանի թեմի ներկայացուցիչների կողմ

մից խնդրի միանգամայն քւէարկութիւնը մեզ բաւական չէ թւում մի այդքան կարևոր հարց վերջնականապէս վճռած համարելու համար: Մենք կարծում ենք, որ Ասորախանը յարմար տեղ չէ մի հայոց դպրանոցի համար, և կարծում ենք որ մի այդպիսի դպրոց այնտեղ յաջողութիւն չի ունենալ. սակայն մենք այստեղ կանգ կառնենք միայն Շամախու թեմի դպրանոցի խնդրի վրայ, այժմեանից յայտնելով որ մի դպրանոց Շամախում ոչ ցանկալի է, եթէ նա պիտի խլի Բաքւից, և ոչ Շամախում հիմնած մի դպրանոց կարող է որ և է յաջողութիւն ունենալ:

Անուրանալի է որ թեմական դպրանոցի տեղը մեծ կարևորութիւն ունի: Ինչով պիտի առաջնորդւել, սակայն, այդ կարևոր խնդիրները վճռելու համար: Պէտք է ունենալ մի առաջնորդող միտք, այլապէս թեր և դէմ խօսածները կարող են նաև շփոթեցնել: Կարևորագոյն հանգամանքը, ըստ մեզ, այն է թէ որտեղ աշակերտները կարող են աւելի լաւ կրթւել և նախապատրաստուել հայկական կեանքի խնդիրների համար: Կրթութիւնը չի ձեռք բերում միմիայն դպրոցում, այլ և այն շրջանում, ուր աշակերտները իրենց կեանքն են անցկացնում: Թեմական դպրանոցը ունենում է վեց դաստուէն, չհաշւած նախապատրաստականները. հետեւապէս նայած թէ որտեղ է թեմական դպրանոցը, նորա աշակերտը պէտք է իւր կեանքի առնւազն վեց լատագոյն տարիները անցկացնէ Բաքւում կամ Շամախում. դորա մէջ է խնդրի ծանրութիւնը: Յւսկա, խնդիրը այդպէս դրած՝ պատասխանը հեշտութեամբ զտնւում է. աւելի ցանկալի է աշակերտին ապրեցնել Բաքւում քան թէ Շամախում: Այդ ասելով մենք ինկատի ունինք մրցող քաղաքների հայ հասարակութեանց բարոյական և մտաւոր վիճակի համեմատական առաւելութիւնները: Ինչ է Շամախու հայ հասարակութիւնը, եթէ ոչ մի յետամնաց ժողովուրդ, որի ամենակենդանի ոյժերի առաջին գործն է լինում թողնել այդ քաղաքը և հաստատուել Բաքւում: Ինչ ունի Շամախու հայ հասարակութիւնը, որ ցանկալի լինէր պատւաստել հայ երեխաներին և պատանիներին, համեմատութեամբ Բաքւի Շամախին թէ ընտանեկան և թէ հասարակական կողմերից ոչինչ չունի ներկայացնելու, բացի շատ բացասական կողմերից, Ենթադրելով որ ինչ Շամախու ընտանիքի և հասարակութեան մէջ դուռ

լաւ բաներ կան մնացած՝ դոքա կը գտնւեն նաև այլ տեղերում:

Այսպէս է ներկայանում խնդիրը, երբ նորա վրայ նայում ենք ապագայ դպրանոցի աշակերտների յառաջդիմութեան տեսակէտից. այդ է ամենագլխաւորը. բաց կայ և ապացոյց, որ Շամախում մի հայոց դպրանոց բնաւ չի կարող յաջողութիւն ունենալ: Այդ ցոյց կը տայ համեմատութիւնը Շուշայի դպրանոցի հետ:

Բաքույի նահանգում շատ թէ քիչ հայ ազգաբնակութիւն ունեցող գաւառները, իսկ է, Շամախուն է և Գոկչայինը, որ առաջին կից է: Բաց այդ ազգաբնակ. առայժմ բաւականին աննշան է. ամբողջ Շամախու գաւառում կան 23 հայ գիւղական բնակավայրեր. քաղաքն էլ հետը՝ 24 բնակավայր. այդ բոլոր գիւղերում հայ ազգաբնակութիւնը կազմում էր 1886 թւականի վիճակագրութեամբ 11.902. քաղաքի հայ-լուսաւորչական ազգաբնակութիւնն էր 1894 թ.ին 3.641 հոգի. ընդամենը ուրեմն 15.543 հոգի. այս տասը տարւայ աճելութիւնն էլ հաշւի առնելով, այլ և այն, որ գիւղերում ցոյց տրւածը իսկականից միշտ պակաս է լինում, մենք այն թիւը կարող ենք մօտ 18.000 ընդունել: Գոկչայի գաւառում հայ ազգաբնակութիւն ունեցող գիւղերի թիւը (Գոկչա աւանն էլ հետը) 21 է, ուր հայ ազգաբնակութիւնը 1886 թ.ին 12.900 էր. այժմեան համար մենք այդ թիւը կարող ենք 15.000-ի բարձրացնել: Երկու գաւառներում ուրեմն հայերը 33.000 հոգի են:

Թէ ինչ աննշան թիւ է դա թեմական դպրանոցի տեսակէտից, այդ կարող է ցոյց տալ համեմատութիւնը: Գորա համար ամենայնարմարն է նկատի առնել Արցախի (Ղարաբաղի) թեմական դպրանոցի հանգամանքները: Շամախում հաստատած դպրանոցը պէտք է իբր թէ նոյն դերը կատարի Շամախու և Գոկչայի հայ գաւառների հայ ազգաբնակութեան համար, (քանի որ Բաքույի նահանգում այլ հայաբնակ գաւառներ չկան ¹⁾), ինչ որ Շուշայ

¹⁾ Բաքույի նահանգում, ըստ վիճակագրութեան 1886 թ. բնակչւնների թիւն էր 712.703: Բաքույի գաւառում չկայ ոչ մի հայ գիւղ. բաց Բաքու քաղաքը ունէր 17.483 արական և 7.007 իգական հայ բնակիչ. Ջևաղի գաւառում և Վալիան աւանում չկայ ոչ մի հայ բնակիչ. Ղուբայի գաւառի գիւղերում կար 1.020 և Ղուբա քաղաքում 833 հայ. Լենքորանի գաւառի գիւղերում ոչ մի հայ, Լենքորան քաղաքում՝ 273 հայ բնակիչ:

դպրանոցը կատարում է իւր շուրջը գտնուող գլխաւորապէս երկու (Շուշւայ և Զանգեզուրի) ամենահայաշատ գաւառների և երկու այլ աւելի քիչ հայաշատ գաւառների համար. արդ՝ Շուշւայ գաւառում նոյն 1886 թ-ի վիճակագրութեամբ 73.000 հայ կայ, որ մենք այժմ 80 հազարի հաւասար կարող ենք ընդունել. Զանգեզուրի գաւառն ունէր 57.000 հայ բնակիչ. այժմ 63 000 հոգի պիտի հաշւենք: Զիւնջիւրի գաւառը, որ կից է Շուշւայ գաւառին, ունէր 16.000 հայ. այժմ հաւանորէն 18.000 բնակիչ: Զեբրայէլի գաւառում կար 11.600, այժմ հաւանորէն 13.000 հայ:

Արցախի թեմի այլ վիճակները (Նուխւայ և Արեշի գաւառները, ուր հայերի թիւը 1886 թ-ին առաջնում 13.500 էր, երկրորդում 12.000) մենք հաշւի էլ չենք առնում, համըղած լինելով որ այդ գաւառներից շատ աննշան թւով աշակերտ կան Շուշւայ դպրանոցում:

Այսպիսով ուրեմն Շուշւայ դրանոցին նայում են Շուշւայ, Զանգեզուրի, Զիւնջիւրի և Զեբրայէլի գաւառները՝ 80 հազար + 63 հ. + 16 հ. + 13 հ. = 172.000 հայ բնակիչներով. Շուշի քաղաքի բնակիչների թիւը = 15.200 լինելով՝ ուրեմն առնւածն 187.200 հայ աղգաբնակութիւն Շուշւայ դպրանոցից ակնկալութիւն ունին:

Թողնենք զեռ մի կողմ այն, որ Շուշին շատ աւելի հրապուրի: քաղաք է քան Շամսիին, որը գրեթէ $\frac{4}{5}$ -ով թրքական քաղաք է և այլ կողմերից էլ ոչ մի կերպ չի կարող համեմատուել Շուշւայ հետ. տեսնենք միայն թէ Շուշւայ դպրանոցում որքան աշակերտ է լինում. զոցա թիւը 189³/₄ ուսումնական տարւայ վերջում 386 էր, հաշւելով նաև նախապատրաստական դասատների աշակերտներին. իսկ տարւայ ընթացքում եղել են 406 աշակերտ. բաց թուն սեմինարիայում, այսինքն առաջին դասատների մինչև վեցերորդ դասատունը կար միայն 121 աշակերտ ¹): Դոցանից 60% եղել են Շուշի քաղաքից, 40% — թեմի գիւղերից (սակաւ բացառութեամբ):

¹) Շուշւայ դպրանոցին վերաբերեալ թւերը հիմնւած են 189³/₄ ուսումնական տարւայ տնտեսական հաշւի վրայ, տպւած Մուրճ 1894 թ. № 11 — 12-րդ միացեալ համարում:

Այս համեմատութեամբ ուրեմն, եթէ Շուշի քաղաքը տալիս է իւր թեմական դպրանոցին 60⁰/₀ դպրանոցի բոլոր աշակերտների, այն է 240 հոգի, իսկ բուն սեմինարիական դասատւների համար 72 հոգի, Շամախին իւր 3641 հայ-լուսաւ. բնակիչներով կը տայ նոյն համեմատութեամբ մի քառորդից էլ պակաս, այն է 55 աշակերտ՝ հաշւելով նաև նախապատրաստականները, իսկ իսկական սեմինարիային կը տայ մօտաւորապէս 28 աշակերտ: Նոյնպէս եթէ 187 հազար գիւղացիք տալիս են դպրանոցին 40⁰/₀, այն է 160 աշակերտ՝ նախապատրաստականներն էլ հաշւած, իսկ բուն սեմինարիային 48 աշակերտ, ապա Շամախու և Գոկչայի գիւղերի 33.000 հայ բնակիչները կը տան 50 աշակերտ՝ ընդհանրապէս, իսկ բուն սեմինարիային՝ հազիւ 9 աշակերտ. ընդամենը ուրեմն Շամախին և երկու գաւառները կը տան բուն սեմինարիային 30+9=39 աշակերտ:

Եւ ապահով եղէք, որ ինչպէս Շուշայ դպրանոցը չեն մտնում այլ թեմերից աշակերտներ, և ոչ իսկ թեմի աւելի հեռաւոր վիճակներից, աւելի ևս Շամախում հաստատուած դպրանոցը չի տեսնիլ աշակերտներ ոչ միայն այլ թեմերից, այլ և Բաքւից, որը այդ թեմումն է:

Գորա հակառակը Բաքւի դպրանոցը կ'աշխատեն մտնել աշակերտներ Շամախու և Գոկչայի գաւառներից և, բացի այդ, դպրանոցը կ'ընդունի երեսաներ Բաքւայ բնակիչներից և գուցէ ոչ աննշան տոկոսով նաև այլ թեմերից: Այդ կողմից Բաքուն չի կարելի համեմատել Շուշայ և Երեւանի հետ, ուր օտարական (այսինքն այլ թեմերից) հայեր չկան, այլ պիտի համեմատել թիֆլիսի հետ, ուր օտարական տարրը մի նշանաւոր տոկոս է կազմում քաղաքի ամեն կարգի դպրոցներում: Եւ նոյն իսկ այն ծնողները, որոնք իրենք թիֆլիս չեն ապրում, բայց որդիք ունին թիֆլիսի դպրանոցում, նոքա ընտրութիւն կ'անեն թիֆլիսի և Բաքւի մէջ: Այդ բոլորը միասին Բաքւայ զբարանոցի հիմնական դասատւներին կը տայ առնւազն այնքան, որքան Շուշայ դպրանոցն ունի:

Նոր բացւելիք թեմական դպրանոցների, որպէս նաև գոյութիւն ունեցողների յաջողութիւնը, սակայն, գլխաւորապէս կախած է նոցա ծրագրից: Թեմական դպրանոցները հնացած ծրագիր ունին.

այդ ծրագիրը բնաւ չի համապատասխանում ժամանակիս պահանջներին: Ծրագրի նպատակադրմար փոփոխութիւնիցն է կախած դպրանոցների կենսունակութիւնն ու յաջողութիւնը. ծրագրի փոփոխութիւնը ոչ միայն կանխաժամ չէ, այլ դեռ շատ ուշացած է: Ծրագրի ներքին է կախած նորան փոփոխութեան ենթարկելը, և այդ նա է, որ ստեղծել է ներկայումս գործող ծրագիրը. ուղղափառ եկեղեցու սեմինարների ծրագիրը այդպիսի փոփոխութիւններ կրում է ժամանակ առ ժամանակ, հայոց դպրանոցներին մնում է անշարժ և կամ փոփոխւում է մասնաւոր կերպով, աւելի յարմարւելով ուսուցիչների յաճախ միայն քմահաճոյքին: Որպէս զի մեր դպրանոցները կենսունակ և բազմամարդ լինին, պէտք է մեր մէջ հաստատուի այս համոզմունքը, որ դպրանոցը պէտք է պատրաստի հոգեւորականներ և ուսուցիչներ, բայց յատուկ այդ կոչմանը ոչ մի կերպ չեն կարող ծառայել առաջին չորս դասարանները, որոնք պէտք է հանրակրթական ընդհանրութիւն ունենան. իսկ եթէ այդ այդպէս է, ապա չորրորդ դասարանն աւարտողը պէտք է նախապատրաստւած լինի մտնելու թէ բարձր սեմինարիական դասառնները և թէ պետական միջնակարգ դպրոցները: Եւ ահա, երբ մեր դպրանոցների չորս առաջին դասարանների ծրագրի մէջ կը մտնուի լատիներէնը և յունարէնը, և երբ ուսուց լեզուն կը դնւի ըստ ամենայնի այն կերպ, որ չորրորդ դասատունն աւարտողը ուղղակի քննութիւն կարողանայ տալ նաև պետական միջնակարգ դպրոցների հինգերորդ դասառն համար — ահա այն ժամանակ, մենք համոզւած ենք, մեր դպրանոցները ցանկալի դպրոցներ կը լինեն հայ հասարակութեան բոլոր խաւերի համար: Այդ պայմանով Քիֆլիսի, Երևանի, Շուշուայ ներկայ դպրանոցների, որպէս նաև Բաքուայ ու Աստրախանի թեմի ապագայ դպրանոցների գէթ չորս առաջին հիմնական դասառնները կը լինին շատ բազմամարդ և շատ արդիւնաւէտ դպրոցներ: Պետական միջնակարգ դպրոցների բարձր դասարաններին այսպիսով մենք կ'սկսենք տալ հայերէնում լաւ վարժւած բազմաթիւ պատանիներ, զգալի չափով թեթեւցած կը լինինք այն բազմաթիւ հայ ծնողների հոգւր, որոնց որդիքը պետական միջնակարգ դպրոցներում մեծ մասով մերժում են տեղի պակասութեան պատճառով. բայց, կրկ-

նում ենք, նոյն պետական միջնակարգ դպրոցներում արդի-
սով մենք կ'ունենանք հայերէնում շատ լաւ նախապատրաստած
աշակերտներ: Այդ պայմանով մեր թեմական դպրանոցների վերջին
երկու բարձր դասարաններն էլ ոչ միայն ոչինչ չեն կորցնիլ, այլ
մեծապէս կը շահեն:

Ա ԱՐԱՍԻԱՆԵՐՆՅ

ՀԱՅՅԵՐԻ ԵՐԴՈՒՄԸ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ

«Մուրճ»-ի անցեալ համարում մենք կարճառօտ կերպով հաղորդեցինք Քիֆլիսի նահանգական դատարանում պատահած դէպքի մասին, ուր, դատարանի նախագահի առաջարկը՝ երդւել իրա մօտ ռուսերէն—հայ վկաներից մեծամասնութիւնը մերժեց: Այլ դէպքը, առաջինք մենք անցեալ անգամ, լիւնցրեց 1891 թ. յունիսի 12-ին նահանգական դատարանում նոյն նախագահ պ. Բըկովի առաջարկի մերժումը ալժմ հանգուցեալ իրիզոր Իզմիրեանցի կողմից: Վերջինիս մասին մեր ընթերցողները մանրամասնութիւնները կը գտնեն «Մուրճ» 1891 թւականի միացեալ ՁՖ 7—8, ներքին տեսութեան «Նրդման խնդիր» լուսածի մէջ (էջ 938—946): Այդտեղ մենք դէպքի մանրամասնութիւններին կից լալտնել ենք նաեւ մեր հալեացքները երդման խնդրի մասին առհասարակ. հալեացքներ, որոնք ուշադրութեան առնւեցին նաեւ տեղական ռուս թերթերի կողմից: Վերադառնալ այդ խնդրին հարկ չենք տեսնում, լալց անկարեօր չէ չենտեղ ալն հանդամանքը, որ նախագահ պ. Բըկով 1891 թ. յունիսի 12-ին դատարանի դահլիճում վկային իւր մօտ ռուսերէն երդւելու առաջարկն անելուց առաջ՝ դեռ առաջարկել էր հրաւիրւած հալ քահանային որ սա ռուսերէն երդւեցնէ. և քահանան մերժել էր ալդ առաջարկը: Ալժմ էլ նոլնպէս, հալ վկաներին իւր մօտ, ռուսերէն երդւելու առաջարկն անելուց առաջ—նախագահ պ. Բըկով հրաւիրւած է եղել հալ քահանային, ալս անգամ ոչ դատարանի դահլիճը, ալ իւր առանձնատնեակը և ալդտեղ առաջարկել որ սա վկաներին ռուսերէն երդւեցնի: Մերժում ստանալով՝ նախագահը հալ քահանային արձակել է, ընաւ չհրաւիրելով դատարանի դահլիճը: Այսպիսով թէ 1891 թւականի յունիսի 12-ի դէպքում, և թէ ներկայ 1896 թ. սեպտեմբերի 23-ի դէպքում նահանգական դատարանի նախագահը նախ առաջարկ է արել հալ քահանային, որ սա ռուսերէն երդւեցնի, և մերժում ստանալուց վտու միալն՝ նա առաջարկել է կամ պահանջել հալ-լուսաւորչական վկաներից, որ նոքա երդւեն իրանախագահի մօտ ռուսերէն, ալն ձեով, ինչպէս սահմանւած է օրէնքով, քահանայի բացակայութեան դէպքի համար, Բոլոր զանազանութիւնը ալն

է, որ մի գէպքում (1891 թ.) նախագահը քահանայից ուռւերէն երդեց-
նելու պահանջը արել է հրապարակապէս, դատաւարութեան նիստի ժա-
մանակ, իսկ երկրորդ գէպքում նա հաշ քահանայից ալդ պահանջն արել
է ոչ-հրապարակապէս, ալ իւր գրասենեակում: Մի ալ զանազանութիւնը
սա է, որ 1891 թ-ին երբ Գրիգոր Խզմիրեանց մերժեց նախագահի մօտ
երդուել, դատաւարազը համարելով ալդ իբր ընդդիմադրութեան իշխանութեան,
ամբաստանեց Խզմիրեանցին հաշտարար դատաւորի մօտ: Վերջինս,
չնայած Խզմիրեանցի խօսքերին թէ իւր մերժումը ընդդիմադրութիւնն չէ
իշխանութեան դէմ (քանի որ դատարանը վարչական-ստորկանական հաս-
տատութիւնն չէ), աշխուժեցնելու դատաւարտեց նորան, Խզմիրեանցին,
25 ռուբլի տուգանքի. բաւց կառավարիչ սենատը արդարացրեց Խզմի-
րեանցին: Իսկ ներկայ տարւոյ սեպտեմբերի գէպքից չնոյ՝ բնականաբար
ալդախիս ամբաստանութիւն տեղի չունեցաւ և նախագահը չալտնեց միայն
որ նա, գործ ունենալով ինտելիգէնտ վկաների հետ, վստահ է որ նոքա
առանց երդման էլ, ճշմարտութիւնը կը վկայեն:

Սակաւն կարեւոր է ալն, որ գէպքից չնոյ, երբ տեղական ուսւ ազատ
թերթերից մէկում չանդիմանութիւններ տպեցին նահանգական դատա-
րանի նախագահի նկատմամբ, վերջինս «Կաւկազ» ուսւ կիսապաշտօնա-
կան լրագրին բացատրութիւններ էր ուղարկել, որ և չիչեալ թերթը իւր
258-րդ համարում առաջ բերաւ: Ահա ալ բացատրութիւններն են, որ
մենք հարկ ենք համարում ամբողջութեամբ ալտուր թարգմանաբար առաջ
բերել, գտնելով նոցա հարկաւ սխալ, բաւց և հետաքրքրական՝ իբր դո-
կումէնտ:

Կաւկազ՝ ռւբեմն տպեց հետեւեալը, քաղաքային լուրերի բաժնում:

«Դատարաններում վկաներին երդեցնելու խնդրը: Տիֆլիսից Ախտոկ
լրագրի 25 սեպտեմբերի համարում տպւած է մի լուր չարք չանդի-
մանութիւններով Թիֆլիսի նահանգական դատարանի հայցէին, որը
լրագրի ասելով զլացել էր քաղաքային վարկի ընկերութեան զեղծում-
ների մասին կաշաղրած նիստին հրաւիրել կաթողիկ և հաշ-լուսատրչական
դաւանութիւնների հոգեորականների, որի պատճառով ալդ լուրը և տե-
ղական հատարակութիւնը լուրդ գործի համար վկաներից շատերին հարց
ու փորձի ենթարկել էր առանց երդման, որովհետեւ նոքա իրենց կրօնական
խղճին անհամաձայն համարեցին երդումն ընդունել նախագահի միջոցով:
Մենք մեր կողմից հարկ ենք համարում սեպտեմբերի 23-ի նիստում եղած
միջնադէպի մասին հաղորդել ընթերցողներին ալն տեղեկութիւնները, որ
մենք ստացել ենք նահանգական դատարանի նախագահից: Բանից
երևում է, որ թէ կաթողիկ և թէ հաշ-լուսատրչական հոգեորականներ իւր
ժամանակին կանչւած են եղել դատարանի նիստը: Նոցանից առաջինը
անշուշտ պատճառով չիերկալացաւ, բաւց նորա բացակայութիւնը ոչ մի

չփոթ չպարուցեց, քանի որ բոլոր կաթուղի վկաները կարելի համարեցին երգումն ընդունել նախագահի միջոցով, որ և իրօք ընդունեցին: Իսկ ինչ վերաբերում է հալ-լուսաւորչական դաւանութեան քահանային, սա իւր ժամանակին եկաւ դատարան, բայց մինչև նիստի բացելը՝ հրաւիրեց նախագահի կաթինէտը, և վերջինիս հարցմունքին՝ համաձայն է նա արդեօք հալ-լուսաւորչական վկաներին երդեցնել ռուսերէն լեզուով պատասխանեց թէ կարող է երդեցնել միմիայն հայոց լեզուով. ալի պատճառով նախագահը առաջարկեց քահանային չմտնել նիստի դաշլիճը և հեռանալ դատարանական շինութիւնից, որ և կատարեց: Այս է իսկական պատճառը հալ-լուսաւորչական քահանայի բացակայութեան՝ նիստի դաշլիճի: Ընդ մին անհրաժեշտ է ի նկատի առնել, որ ալն քահանան, որ նշանակած է հալ-լուսաւորչական թեմական իշխանութեան կողմից՝ նահանգական դատարանում վկաներին երդեցնելու համար, վերջին ժամանակներս ¹⁾ միշտ հրաժարուած է երդեցնել ալապէս քան հալերէն լեզուով, նոյն իսկ ալն զէպքերում, երբ վկան չալանում է, որ նա հալերէն չգիտէ և չի հասկանում, և ինքը խնդրում է երդեցնել ռուսերէն ²⁾ և ալի պատճառով դատարանը, որը, ակներև է, ոչ իրաւունք ունի թոյլ տալ երկուդի համար անչափ լեզուով երդել, և ոչ էլ ռուսերէն գիտողի թոյլ տալ որ սա դատարարի առաջ, թէկուզ միայն երգումն արտասանելու համար, խօսի ալ լեզուով քան ռուսերէն, — չարժեքակ հարկադրած է նիստի դաշլիճից հեռացնել դատարանի տրամաբանական և օրինական պահանջներին հակառակույ քահանային. ալիպիսի հրապարակական հակառակութիւնը իշխանութեան պահանջներին հոգևոր կոչման տէր անձի կողմից և դորանից բխող հրապարակական արտաքսումը նիստի դաշլիճից, ակներև է որ կազմում է դատաւանական նիստի բարեկարգութեան (d'агогичіе) վերին աստիճանի ոչ ցանկալի խառնարումն: Արքան դատաւարական գործը հասարակաց հետաքրքրութիւնն է շարժում, որքան նա շատ մարդիկ է հրաւիրում դատարանը, ալն քան էլ աւելի անհրաժեշտ է հոգս քաշել որ իւր ժամանակին նիստի բարեկարգութիւնը չխանգարուի:

¹⁾ Տեղական ռուսաց Նովոե Աբազրենիե լրագիրը նկատեց, որ «վերջին ժամանակներս» խօսքը ենթադրել է տալիս, իբր թէ առաջ հալ քահանան երդեցնում էր ռուսերէն և միայն ալժմ չի անում ալի. մինչդեռ, նկատեց վիշալ թերթը, իւր տեղեկութեան համաձայն հալ քահանայի ձեռքով ռուսերէն երդեցնելու և ոչ մի զէպք երբէք չի պատահած:

Ծան. Մուրճի

²⁾ «Ալիպիսի զէպքեր շատ չաճախ են պատահում, քանի որ Քիֆլիս քաղաքի և Քիֆլիսի Նահանգի հալ ազգաբնակչութեան ահալին մեծամասնութիւնը արդէն մոռացել է հալերէնը և նորա համար մալերնի լեզվի տեղ ծաւալում է վրացերէնը» (Ծանոթութիւնը Արաբիկ լրագրի):

Գիտենալով որ հալ-լուսաւորչական թուրք վկաները, որոնք կոչւած էին քաղաքալին վարկի ընկերութեան գործով, որպէս կրթւած մարդիկ, ազատ խօսում են ռուսերէն, հետեապէս անկարելի համարելով թող տալ որ նոքա երդումը հաւերէն ընդունեն, և համոզւելով որ նաև այս անգամ քահանան հրաժարւելու է կատարել դատարանի պահանջը, դատարանի նախագահը զերադասեց հեռացնել քահանային՝ նիստը սկսելուց առաջ: Միևնոյն է, նորան պէտք էր հեռացնել, բայց աւելի լաւ էր այդ անել ոչ հրապարակօրէն: Պէտք էր կարծել, որ խելացի մարդիկ կարող են հասկանալ, որ դատարանում, ուր խօսքը արդարադատութեան և ոչ քաղաքականութեան և կրօնի մասին է, խնդիր չարուցանել հաց լեզւի կրօնական նշանակութեան մասին անտեղի է ¹⁾ և այդ պատճառով թել թէ, սեպտեմբերի 23-ին կոչւած հալ լուսաւորչական վկաները պէտք է միայն շնորհակալութիւն չափնէին նախագահից, որը նոցա ազատեց անախորժ անհրաժեշտութիւնից՝ նոցա կրօնի քահանային նիստի դահլիճից արտաքսելուն ներկայ լինելու և չետոյ, առանց դատարանի կարգադրութիւնների, քննադատութեան մէջ մտնելու, որի համար նոքա բնաւ չեն կոչւած, և առանց անօդուտ դժարութիւններ ստեղծելու պարզօրէն հպատակէին նախագահի հրաւերքին և ընդունէին երդումը նորանից, սորա վրայ բարձելով նաև պատասխանատւութիւնը նորա աչն կարդադրութիւնների օրինաւորութեան նկատմամբ, որոնց հետեանքն էր քահանայի բացակայութիւնը: Վկաներից մի քանիսը ազգայն էլ վարեցին, և 13 հալ-լուսաւորչականներից, որոնք պիտի երգէին, հինգը հէնց ընդունեցին երդումը նախագահից, իսկ մնացեալները, ցաւալի է որ չաւտարարեցին, թէ քանի որ թիֆլիս քաղաքում բաւականաչափ հալ-լուսաւորչական քահանաներ կան, իրենց խիղճը նոցա չի ներում նախագահից երդումն ընդունել, և որ երդումն արտասանելուց նոքա հրաժարւում են:

«Ընթերցողներին իրենց ենք թողնում դատել թէ իրօք հալ-լուսաւորչականների խիղճը ուրիշ է քան ալ քրիստոնեաներինը, որոնք հնարաւոր են համարում երդումը արտասանել իրենց չափնի ամեն լեզուով ²⁾»

¹⁾ Երդման գործում արդարադատութեան մասին չէ խնդիրը, ալ կրօնական ծիսակատարութեան, որ սահմանել է օրէնքը և ճանաչել եկեղեցու կողմից: Գատալարութիւնը կարող է կատարել նաև առանց երդումի. հետեապէս եթէ երդումը ընդունւում է, պէտք է չարգել նաև եկեղեցու և նոյնոր բարձրագոյն իշխանութեան պատւէրը՝ երդման վերաբերմամբ: Ծան. Մոլոճի խմբ.:

²⁾ «Թիֆլիսի նահանգական դատարանի նիստերում տակաւ չէ պատահում որ ուղղափառ քահանան երգեցնում է թուրքերէն: Բարձրակի դատաւում, Թիֆլիսի նահանգ, կալ լոյն ազգաբնակչութիւն, ուղղափառ կրօնի, որոնք միայն թուրքերէն գիտեն. նոքա վաղուց լուծարէնը մուս-

թէ խնդիրը խղճի պահանջների մէջ չէ, այլ ցանկութեան մէջ, ինչ էլ որ լինի, հրապարակօրէն, ռուսաց պետական հիմնարկութեան նիստի մէջ, դորժ ածել ոչ ռուսաց, այլ հայոց լեզուն»:

Բաւական ենք համարում այդ ջօղածը իւր ամբողջութեամբ առաջ բերել. նորա լոգիկան և լեզւի ոճը կոմենտարների քնաւ կարօտութիւն չունին:

ԼՈՒՍԻՆԻ

ցել են: Եթէ լեզւի կրօնական նշանակութեան թէօրիալին հետեւելու լինիք, խօս պէտք էր այդ լոյներին եկեղեցական-սլաւոնական լեզունը փրկելնեղն:

(Մանօթուծին Կաւկազ լրագրի):

ՍՏԱՏԻՍՏԻԿԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ

Նորերս լույս տեսաւ «Կովկասեան դպրոցական շրջանի հոգաբարձուի հաշիւը շրջանի դպրոցների դրութեան մասին 1895 թ.ին», իբր լաւելաւ Կովկասեան դպրոցական շրջանի շրջաբերականին 1895 թ. № 3: Հաշիւը մի սուար հատոր է, որից կարող ենք Մուրճ'ի ընթերցողներին միայն ամփոփումները հաղորդել և ծանօթ սցենել մեր ընթերցողներին Կովկ. դպր. շրջանի հոգաբարձու պ. Կ. Նանովսկու եղբակացութիւնների հետ:

Կովկասեան շրջանի հոգաբարձուէանը անմիջապէս ենթարկած դպրոցները: Առ 1-ն լուսնարի 1896 թ. Կովկասեան դպրոցական շրջանի հոգաբարձուին անմիջապէս ենթարկւած դպրոցների թիւն էր Կովկասում 1.181, այն է՝ 9 արական գիմնադ, 8 ռէալական դպրոց, 11 իգական գիմնադ, 7 իգական պրոգիմնադ ¹⁾, 1 ուսուցչական ինստիտուտ, 4 ուսուցչական սիմինարիաներ, 37 քաղաքային ²⁾ դպրոցներ 1872 թ.ականի կանոնադրութեամբ, 5 լեռնաբնակչական դպրոց, 8 արհեստաւորաց և պրոֆեսիոնական դպրոց, 3 ծովագնացական կլասներ, 3 իգական Մարիինեան դպրոց, 99 մասնաւոր դպրոցներ ³⁾ և 983 սկզբնական (տարրական) դպրոցներ, որոնց մէջ չեն մտնում կիրակնօրեայ, երեկոյեայ և կրկն-գական կուրսերը:

Դասատների թիւը այդ բոլոր դպրոցներում 2.262 էր. դպրոցներից 74-ը (6.2%) ունէին իրենց կից պանսիոններ, որոնցից 20-ը միջնակարգ դպրոցներին ⁴⁾ կից, 13-ը ստորին դպրոցներին կից, 36-ը մասնաւոր զբարոցներին կից, 5-ը — սկզբնական դպրոցներին կից:

¹⁾ Պրոգիմնադ կոչւում են չորս դասատուն ունեցող դպրոցները, ուր աւարկաները անցնում են աշնպէս որպէս գիմնադների 1, 2, 3 և 4-րդ դասատներում: Իսկ գիմնադները ունին 7 դասատուն:

²⁾ Քաղաքային դպրոցները այլ ծրագրով են և ունին 3 դասատուն:

³⁾ Մասնաւոր դպրոցները բաց են անում հոգաբարձուի թույլտւութեամբ և պահպանում մասնաւոր անհատներ, ըստ ամենայնի ենթարկւելով Կովկ. դպրոցական շրջանի հսկողութեան:

⁴⁾ Միջնակարգ դպրոցներ են կոչւում գիմնադները, ռէալական դպրոցները:

Այլ դպրոցներ Կովկասում: Բացի չիչեալներից կան Կովկասում դպրոցներ, որոնք չեն ստորադրւած Կովկ. դպրոցական շրջանին. դոքա երեք կարգի են. ա) հալ-լուսաւորչական եկեղեցական-ծխական դպրոցներ, որոնք միայն մի որոշ չափով չիչեալ իշխանութեան հսկողութեան ներքոյ են. բ) ալ և ալ մինխտրութիւնների և վարչութիւնների դպրոցներ, որոնք ոչ մի չարաբերութիւն չունեն չիչեալ դպրոցական իշխանութեան հետ. գ) դպրոցներ, որոնք կից են մահմեդական մզկիթներին և հրէական սինագոգներին, որոնք ենթարկւած են միայն ընդհանուր կառավարութեան հսկողութեան:

Տեղեկութիւն հայոց եկեղ. ծխական դպրոցների մասին: 1895 թ. վերջին հայոց եկեղ. ծխական դպրոցների թիւն էր 240, մեծամասնաբար Նրեանի, Գանձակի և Թիֆլիսի նահանգներում. դոցանից երկդասեան էին 59 և միդասեան 181. ՚) արական էին 156, իգական 51, խառը 33: Ծախւած է 1895 թ-ին աչդ դպրոցների վրայ 263.015 ռ., աչտինքն ամեն մէկի վրայ միջին հաշւով 1000 ռուբլուց աւելի: Ուսուցանողների թիւն էր 527 հոգի, որոնցից 69 կրօնուսուցիչներ, 330 ուսուցիչ և 128 վարժուհի: Ուսուցչական ցենզ ունէին 96 ուսուցիչ (29.4°/o) 43 վարժուհի (33.6°/o): Ուսողների թիւն էր 19.235, որոնցից աղա 12.616 (65.6°/o) և աղջիկ 6.619 (34.4°/o): 1895 թ-ին ուսողների թիւը աւելացել էր 3.159-ով, աչտինքն համարեա 20 °/o-ով:

Նրկորդ կատեգորիային են վերաբերում (աչտինքն չենթարկուղ Կովկ. դպրոցական շրջանի վարչութեան) 920 դպրոց, որոնք պատկանում են ալ և ալ վարչութիւնների, ամենամեծ մասամբ ուղղափառ կրօնի վարչութեան, աչն է՝ 4 հոգեոր սեմինարիաներ (семинарія), 9 հոգեոր դպրոցներ (училище), 4 թեմական իգական դպրոցներ և 882 եկեղեցական-ծխական գրագիտական դպրոցներ, ընդամենը 899 դպրոց:

Աչդ դպրոցներից կալին հալ-լուսաւորչական վարչութեան ներքոյ՝ 4 հոգեոր (ճեմարան Ա. Էջմիածնում և 3 թեմական դպրանոց Թիֆլիսում, Երևանում և Շուշիում) Կալսրուհի Մարիայի հիմնարկութեանց վարչութեան ներքոյ 3 դպրոց (աչն է՝ Անդրկովկասեան աղջկանց ինստիտուտ Թիֆլիսում, Կուբանեան Մարիինեան իգական դպրոց և Եկատերինոգրեան պրոֆեսիոնական դպրոց). զինւորական վարչութեան ներքոյ կալին 5 դպրոց (կաղետեան կորպուս, երկու իւնկերային դպրոց և երկու ֆել-

րոցներ և ուսուցչական սեմինարները. մնացածները—ստորին դպրոցներ են հաշւում:

՚) Միդասեան տակով պիտի հասկանալ սկզբնական 3 բաժանմունքը 3 տարւոյ դասընթացով. երկդասեանները—5 բաժանմունքով՝ 5 տարւոյ դասընթացով: Թեմական դպրանոցները և Կէորդեան ճեմարանը աչդ հաշւում չեն:

դշերալին դպրոց)։ Ներքին գործոց մինիստրութեան Ներքու 4 (ալն է մանկաբարձական դպրոց, ֆելդշերեան դպրոց և Թիֆլիսի 2 մանմեդական դպրոցները)։ Նաղորդակցութեանց ուղիների մինիստրութեան Ներքու 1 (երկաթուղալին դպրոցը Թիֆլիսում)։ Երկրագործութեան և արքունական կալաձնների մինիստրութեան Ներքու 3 (ալն է՝ երկու գիւղատնտեսական դպրոցներ և մի անտառալին դպրոց)։ Զարգարադատութեան մինիստրութեան Ներքու 1 (ալն է երկրաչափական դպրոցը Թիֆլիսում)։ Այս կարգի դպրոցները 1895 թ. ընթացքում բացւեցին 138-ը, գրեթէ բոլորը ուղղափառ եկեղ. ծխակ. դպրոցներ և գրագիտութեան դպրոցներ Հիւսիսային Աովկասում։

Սոցա բոլորի տարեկան բիւջէն էր 1.364.558 ռուբլի. ուսողները թիւն էր 36.241, որոնցից աղա 28.580 (78.9%) և աղջիկ 7.661 (21.1%)։

Մանմեդական դպրոցներ, ըստ տեղեկութեանց ժողովրդական դպրոցների տետուշների, աւելի քիչ էին, քան առաջ ցուց էր տրուում. Գանձակի նահանգում 125 (առաջ 461), Կարսի շրջանում 103 (առաջ 292), Իսկուտանում 565 (առաջ 722), մինչդեռ Թերեկեան շրջանում 154 (առաջ չկար)։ Ընդամենը 1.646 մանմեդական դպրոցներ (առաջ 2.121)։

Հրէական դպրոցներ սինագոգներին կից կալին 50։

Մանմեդական և Հրէական 1.696 դպրոցներում կալին 1.726 ուսուցիչ, 24.021 ուսողներ, որոնցից աղջիկ 3.020։

Շրջանի դպրոցների բիւջէն ¹⁾։ Յիշեալ 1.181 դպրոցները, որոնք ուղղակի ենթարկւում էին Աովկ. դպրոցական շրջանի հոգաբարձուին, 1895 թւականի ընթացքում ունեցան իրենց պահպանութեան համար 4.069.797 ռուբլի մուտք, իսկ նախկին տարիներից մնացածների հետ 4.943.852 ռուբլի։ Իոցա աղբիւրներն էին՝ պետական զանձարանը 27.8%, կազա կալին զօրքերի գումարներ 3.8%, նահանգական (գեմսկիյե) ուսուրքեր 1.9%, քաղաքալին հասարակութիւններ 10.9%, գիւղական հասարակութիւններ 13.1%, բարեգործական ընկերութիւններ 0.8%, նւէրներ եկեղեցիներից և վանքերից 0.3%, ուսման վճարներ 18.2%, մասնաւոր պանսիօնէրներ պահելու վճար 8.8%, պատուաւոր հոգաբարձուների և վերականգնների (смотрытели) վճարներ 0.8%, մասնաւոր անձերի նւէրներ 2.9%, տոկոսներ դրամագրութիւններից 1%, ալ պատահական աղբիւրներից 10.9%։

Շախք եղել է 3.637.960 ռ., որից միջնակարգ դպրոցների համար

¹⁾ Շրջանի դպրոցներ ասելով պիտի հասկանալ կրթական մինիստրութեան ենթարկւած Աովկասեան դպրոցական շրջանի դպրոցները, և ոչ թէ առհասարակ Աովկասում եղած բոլոր դպրոցները, որոնց կառուցողներն են մեր ընթերցողները ծանօթացան վերև։

548.633 ո., մասնաւոր և սկզբնական դպրոցների համար 1.303.687 ո.: Միջին հաշւով մի միջնակարգ դպրոց նստեց առանց պանսիոնի 31.690, պանսիոնով 41.527 ո., մի պանսիոնի միջին ծախքն էր 21.151 ո. ստորին դպրոցի միջին ծախքն էր 9.797 ո., մասնաւոր դպրոցինը 3.276 ո., սկզբնական դպրոցինը 996 ուրբլի.

Եթէ հաշւի աւելնէր Կովկասում գոյութիւն ունեցող բոլոր կարգի դպրոցները (ենթարկւող և չենթարկւող Կովկ. շրջանի հոգաբարձութեան) ապա ամբողջ ծախքը եղաւ 51/4 միլիոն ո.

Ուսման վճարը միջնակարգ դպրոցներում հասնում էր մինչև 100 ո., ստորին և սկզբնական դպրոցներում մինչև 30 ո., մասնաւոր դպրոցներում 240 ո.: Ուսման վճարից ազատ եղածների վրայ եղած ծախքը կազմել է մինչև 300.000 ո. տարեկան, 33-ամսիկ դումարներ և չետածղւած (запасные) դրամագլուխներ 1895 թ. սկզբում կալին 1.339.255 ո., տարւալ ընթացքում մուտք եղաւ ուսման վճարներից 750.536 ո., մասնաւոր աշակերտներին վճար 349.589 ո., ալլ չատուկ միջոցներ 689.424 ո., ընդամենը 1.789.549 ո., որից մխսեց տարւալ ընթացքում 1.590.787 ո., մնացորդ եղաւ 1.538.017 ո.:

Աշակերտներին օժանդակող հիմնարկութիւններ կալին 18 միջնակարգ և 15 ստորին դպրոցներին կից, ընդամենը 99 դպրոցներից 33-ին կից, Բացի այդ կարին մի քանի ընկերութիւններ սկզբնական դպրոցների աշակերտներին օգնելու համար: Յիշեալ 33 հիմնարկութիւնները ունեցան նւերներ և վճարներ 42.877 ո., որից նոքա տւին օժանդակութիւն աշակերտներին 30.723 ո., նախկին տարիներից եղած մնացորդների հետ տարւալ վերջը մնաց 96.700 ո.:

16 միջնակարգ և 3 ստորին դպրոցներում կալին փոխատու խնայողական դանձարաններ ծառայողների համար, ուր անդամների թիւն էր տարւալ վերջում 644.

Շրջանի դպրոցների շինութիւնների արժէքն էր մօտ 5.700.000 ուրբլի. մնացածները վարձու բնակարաններումն էին, որոնց համար տարեկան վարձ տրւում էր մօտ 150.000 ուրբլի.

Շրջանի դպրոցների ծառայողների թիւն էր Կովկասում չունւարի 1-ին 1896 թ. 5.668. իսկապէս մի փոքր աւելի քիչ էր, որովհետև շատ ուսուցիչներ, որոնք մի քանի դպրոցներում են ծառայում, հաշւած են նոցանից ամէն մէկում:

Ծառայողները դանաւորւում էին հետեւեալ կերպով ըստ ծառայութեան տեղի. (առ 1-ն չունւարի 1896 թ.). շրջանի վարչութիւններում և ժողովրդական դպրոցների ղրկեկցիւաներում 55, միջնակարգ դպրոցներում 1.337, ստորիններում 619, մասնաւորներում 444, սկզբնականներում 3.213. ըստ իրենց գործունէութեան, սլատաւոր հոգաբարձուներ և վերակա-

ցունքներ, հսկողներ և հոգաբարձական խորհուրդների անդամներ 890 հոգի, կառավարող անձներ, այն է՝ վերատեսուչներ, տեսուչներ, մանկավարժական խորհուրդների նախագահողներ, վերակայուցներ (смотрытели) և տեսչուհիներ (начальницы) 247 հոգի, կրթնուսուցներ 952, ուսուցիչներ և վարժուհիներ, դաստիարակներ և դաստիարակչուհիներ 2.899, բժիշկներ 75, գրագիրներ (письмоводитель), գործավարներ (дѣлопроизводитель), հաշվապահներ և ալին 38. այլ ծառայողներ 567.⁹) ըստ դաւանութեան՝ ուղղափառներ 4.614 (81.⁹/), հաշվաւորչականներ 414 (7.⁸/), կաթուղիներ 186 (3.³/), բողոքականներ 206 (3.⁶/), հրէաներ 10 (0.²/), այլ դաւանութիւններ 12 (0.²/):

Աշակերտողների թիւը շրջանի բոլոր դպրոցներում առ 1 նւումբ. 1896 թ. էր 99.166, որոնցից արական 75.935 (76.⁹/), իգական 23.181 (23.⁹/), որ առել է թէ 100 աշակերտի վրայ գալիս է 31 աշակերտուհի. այն թւից երթեւեկ էին 95.679, պանսիոներումն են 3,437:

Ըստ դպրոցների, միջնակարգ դպրոցներումն են 13.614 (13.⁹/), ստորիններում 9.731 (5.⁴/) և սկզբնականներում 70.393 (71.⁰/):

Ըստ տեղի—Հիւսիսային Կովկասում 52.396 (53.⁰/), Թիֆլիսի նահանգում 17.032 (17.²/), Փոթիպոլսի նահ. 15.278 (15.⁴/), Գանձակի նահ. 4.206 (4.²/), Նրեանի նահ. 3.147 (3.²/), Բաքուի նահ. 4.974 (5.⁰/), Կարսի երկրում 873 (0.⁹/), Գաղստանում 1.039 (1.⁴/), Ընդամենը Անդրկովկասում 46.949 (47.⁰/):

Նրկրիս 10.000 բնակիչների վրայ պայլիսով գալիս է 119 աշակերտ (շրջանի դպրոցներում). Հիւս. Կովկասում 162 (մեծ մասամբ Կուբանի երկրում), Անդրկովկասում 86 (ամենից շատ Փոթիպոլսի նահ. 153, ամենից քիչ Գաղստանում 8): Ըստ ազգութիւնների. ռուսներ 54.⁹/, վրացի 19.³/, հայեր 12.⁹/, թուրքեր 2.⁹/, լեռնցիք 2.²/, հրէաներ 1.³/, այլ ազգութիւններ 7.³/: Անդրկովկասի բնակիչները կազմում են ընդհանուրի 36.⁹/: Ը:

Ըստ դաւանութիւնների. ուղղափառներ 73.⁹/, հաշվաւորչական 11.⁹/, կաթուղի 2.²/, բողոքական 4.¹/, հրէա 1.⁸/, մահմեդական 4.⁴/, այլ դաւանութիւնների 2.⁷/:

Ըստ դասակարգերի. աղնականների, պետական ծառայողների և օֆիցերների որդիք 12.⁶/, հոգեւորականների որդիք 1.⁷/, քաղաքացիների որդիք 20.⁴/, զինուորականների որդիք 63.⁷/, օտարազգիք 1.⁶/:

Եթէ (ասում է պ. Նաճովսկի), վերը լիշած թւին աւելցնենք հայոց եկեղ. ծխական դպրոցներում աշակերտողներին, ալի դէպքում ուսողների թիւը կը լինի 118.180. Իսկ զորա վրայ աւելցնելով ճան աշակերտողներին այն դպրոցներում, որոնք բոլորովին անկախ են Կովկ. զպր. շրջանի իշխանութիւնից, ալի դէպքում ուսողների թիւը կը լինի 154.421 (75.⁷/):

արական, 24.8% իգական սեռի)։ աւելցնելով նաև մահմեդական և հրէական դպրոցների աշակերտողներին, ուսանողների թիւը կը լինի 178.442. Կապիտալը երկրի 10.000 բնակչին կը գաւ 212 աշակերտող։ Ի նկատի առնելով որ դպրոցական տարիքներում գտնուող երեխաները պիտի կազմեն բնակիչների 15 տոկոսը, ուրեմն կովկասեան երկրում դպրոցական տարիքում եղածներից մօտ 1/7- (միւսթներորդը) վաւելում է որևէ ուսում։

8. Մտնելու ինդիքը տուղներ 1895 թ. եղել են միջնակարգ դպրոցների համար 5.201, ստորինների համար 4.575. (սկզբնականների համար տեղեկութիւնները պակասում են)։ Խնդիրք տուղներից ընդունեցին միջնակարգ դպրոցներ 3.242, ստորինները 3.197։ Դուրս գնացին տարւալ ընթացքում միջնակարգ դպրոցներից, աւարտելով 797, չաւարտած—1.654, ընդամենը 2.451. ստորին դպրոցներից դուրս գնացին 2.995, սկզբնական դպրոցներից ուսում աւարտելով 4.735, մասնաւոր դպրոցներից 1.370։

Աւելի խիստ պատիժների ենթարկւած են ընդդէմ կարդապահութեան գործածները տարւալ ընթացքում միջնակարգ դպրոցներում 752 (5.8% ուսողների ամբողջ թւի), ստորին դպրոցներում 785 (8.1%):

Հիւսնդացածներ եղել են ամեն 100 աշակերտողներից միջնակարգ դպրոցներում 215, ստորիններում 112, մասնաւոր դպրոցներում 105, սկզբնականներում 42. Իսկ միջինը բոլոր դպրոցներում 76։

Մահւան դէպքեր՝ միջնակարգ դպրոցներում 49, ստորիններում 28, մասնաւորներում 4, սկզբնականներում 411, ընդամենը 492։ Այդպիսով, չնորհիւ զիջութիւնի և քուսթէշի համաճարակների 1895 թւականը բարեւաջող չէր սանիտարական կողմից. մահացութիւնը կազմում էր աշակերտողների թւի 0.8 տոկոսը, մինչդեռ վերջին 15 տարւալ մէջ (1879—1893 թ.թ.) մահացութիւնը կազմեց միայն 0.42% (սկսած 0.74 տոկոսից մինչև 0.29 տոկոսը առանձին տարիներում)։

ԿԱԹՆԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ա. ՈՒԹԱՆԱՍԵԱՆՅԻ

Կովկասեան Կաթնառական Գիւղատնտեսական Ընկերութեան նախա-
ձեռնութեամբ հոկտ. 6-ին նույն ընկերութեան շինութեան մէջ հանդիսաւոր
կերպով բացուեց կաթնատնտեսական առաջին ցուցահանդէսը:

Կաթնատնտեսական ցուցահանդէսը Կովկասեան երրորդ ցուցահան-
դէսն էր: Առաջին անգամ սրանից եօթ տարի առաջ 1889 թ. «Կովկասի
արդիւնաբերական ցուցահանդէսը», ապա՝ «Ալգեպանական և պոտլոքների»
և ահա այժմ՝ «Կաթնատնտեսական»:

Մեր երկիրը ահնքան հարուստ է իւր բնական արտադրութիւննե-
րով և միևնույն ժամանակ ալ չհարստութիւնները ահնքան անծանօթ են
թէ մեզ՝ տնտեսիկներին և թէ օտար արտահանող և արդիւնագործող տար-
րին, որ մեր բերքերի և երկրի արդիւնքների հետ ի մօտոյ ծանօթանալու
համար կարելի և ցանկալի կը լինէր որ նոյն իսկ իւրաքանչիւր տարի
Կովկասի և Անդրկովկասի ալս կամ ահն արդիւնաբերական ռաւոնում
(շրջանում) կազմէին զանազան ցուցահանդէսներ, որոնք ալ ռաւոնի
ներքին հարստութիւնները կը ներկայացնէին: Սակայն մինչև այժմ Կով-
կասում կազմած բոլոր ցուցահանդէսները բացառապէս Թիֆլիսումն են
եղել, որով մեր միւս արդիւնաբերական հարուստ ռաւոնները հաղորդակ-
ցութեան ճանապարհների դժարութեան թէ ուրիշ տեղական անարմա-
րութիւնների պատճառով անկարող են եղել ըստ պատշաճին մասնակցել
Թիֆլիսում կազմած ցուցահանդէսներին. ալ պիտի ալս վերջինները
գլխաւորապէս աւելի Թիֆլիսի զաւառի և նահանգի արդիւնքների ցուցա-
հանդէսներ են եղել, քան ընդհանուր Կովկասեան: Արդ նոյն երևութիւն
նկատում էր և ներկա կաթնատնտեսական ցուցահանդէսում, մասնաւոր
տեղական (Կովկասեան) պանիրների և իւղերի բաժանմունքների վերա-
բերմամբ:

Կաթնատնտեսական ցուցահանդէսի կարգադրիչ մասնախումբը ցու-
ցահանդէսի բացումից մի ամիս առաջ թէ իւր օրդան **Кавказское Сель-**

ское Хозяйство և թէ տեղական ալ թերթերի միջոցաւ չափաւարարութեամբ ծանուցել էր հասարակութեանը հօկո. 6-ին քացւելիք ցուցահանդէսի մասին, որով և հրաւիրել էր ցանկացող կաթնատնտեսներին և արդիւնաբերողներին իրենց արդիւնքներով մասնակցել նրանում: Ըստ այդ հրաւերի ցուցահանդէսը պէտք է կազմած լինէր 9 գլխաւոր բաժիններից, իսկ իւրաքանչիւր բաժնի մէջ մտնում էին կաթնալին ալ կամ ալն արդիւնքների և դրանց վերաբերեալ օժանդակիչ մեջոցների զանազան տեսակներ. օրինակ կաթի բաժնում՝ բացի կովի և ոչխարի կաթից պէտք է լինէր կուծիս և կէֆիր, արածանի բաժնում՝ սեր, սմետանա, չոր և թանձր սեր. պանիրների բաժնում՝ եւրոպական և տեղական պանիրների բազմաթիւ տեսակներ և ապա՝ թանի արդիւնքներ, լազազործութեան և պանրագործութեան գործիքների բաժինները և վերջապէս կաթնատնտեսութեան վերաբերող գրական աշխատութիւնների (չօղածներ, բրոշլերներ, ձեռնարկներ և այլն) և չափակագծերի ու նկարների բաժինները:

Արքան և ալս ծրագիրը, որպէս զուտ կաթնատնտեսական ցուցահանդէսի, լիակատար էր, աչու ամենաչնիւ մի ամենաէական բան բացակայում էր ծրագրում, աչն է՝ կովերը: Մենք չուս ունէինք, որ Կովկասեան Վիլլաատնեսական Ընկերութիւնը միջոց կ'ունենար, եթէ ոչ մանր արդիւնաբերողներին, գէթ խոշոր ֆերմաներին հրաւիրել իրենց թէ տեղական տնտեսների և թէ օտարացեղ կաթնատու կովերով մասնակցել ցուցահանդէսին, և մենք կարծում ենք, որ եթէ ցուցահանդէսի վարչութիւնը չարմարութիւններ տար, մեր խոշոր կաթնատնտեսներից շատերը ուրախութեամբ ի ցոյց կը դնէին իրենց կենդանի ինքննտարը:

Չնայելով ալ խոշոր պահասութեանը, աչուամենաչնիւ ես հեռու տեղից չտապեցի թիֆլիս չափապէս ցուցահանդէսը տեսնելու նպատակով: Ըստպէս, որ ես միջոց կ'ունենամ ոչ միայն ծանօթանալ մեր հարուստ երկրի կաթնատնտեսական բազմատեսակ արդիւնքների և սարքցտարի զարգացող գործի հետ, ալ նաչն իսկ կարող կը լինիմ չատ բան ուսումնասիրել, մասնաւորապէս մեր տեղական բազմատեսակ պանիրների տեսնելիական կողմերը: Սակաչն, մտնելով ցուցահանդէսը, ես հէնց առաջին չափացքից հիասթափեցի: Նախ՝ աչն չինութիւնը, որ չատկացրած էր ցուցահանդէսին, իւր թէ արտաքին և թէ ներքին կողմերից վերին առտիճանի սուպարմար էր ցուցահանդէսի համար. երկրորդ՝ ես չուս ունէի, որ իւրաքանչիւր մի կաթնատնտեսական ցուցահանդէս, լինէր նա նոչն իսկ թիֆլիսինը, պէտք է նախ և առաջ կարողանար տալ մի իսկական կաթնատնտեսատան պատկեր՝ իր օրինակելի կարգ ու սարքով, գործիքներիով, մեքենաներով և այլն. աչն ինչ գրա տեղ, ես պատերին կպցրած տեսալ միայն երեսկաչեալ կաթնատնտեսատան չատակագծերը. իսկ զըր-

սում պ. պ. Շաղինովի և Մելիք-Բախտամանցի իբր թէ պաւլիճոնները, որոնցից առաջինում «իբր թէ» շեցարական պանիր էին պատրաստում, իսկ երկրորդում՝ չիմացանք թէ ինչ, որովհետև բացի մի գործող սեպարատորից, ուրիշ ոչ մի հետաքրքրական բան չտեսանք: Որպէս ցուցահանդէսում, Նոյնպէս և պաւլիճոններում չկալին շեցարական պանիրներ պատրաստելու համար անհրաժեշտ ոչ կաթսաներ, ոչ մամուլ (presse), ոչ կաղապարներ (формы), ոչ պանիր մակարդող էքստրակտ և փոշանման մոլոններ (сычугъ, Lab): Կաթնատնտեսութեան մէջ գործածական և տարածած սեպարատորներից և ցենտրիֆուգներից շատ շատերը պակասում էին որպէս Ալֆա, Լաւալի, Լէֆէլըի, Բալանս, Վիկտորիա, Բուրմէյստերի և այլն. խնոցիներից չկալին՝ Զոլշտէնի, Լէֆէլըի, Վիկտորիա, Ամերիկականը, Ռէզէնալդի և այլն և ոչ վաննաներ, տաշտեր, արածանը ժողովելու համար: Մի խօսքով՝ ալն բոլոր գործիքներից և մեքենաներից, որոնք կաթնատնտեսական արեւստի մէջ հաճախ լեղափոխութիւն են դրել, որպէս նաև ամենամանրագիտ գործիքներից շատերը բացակայում էին, որով ցուցահանդէսի գործիքների բաժինը ներկայանում էր իր կատարեալ աղքատութեամբ և անշահեկանութեամբ: Մի ուրիշ տեղ, կարծես միայն անուշի համար, չարած էին կաթը և կաթնալին արդիւնքները քննելու գործիները. սակայն ոչ ոք չտեսաւ թէ ինչպէս է քննում կաթը, ինչպէս է որոշում իւղի քանակութիւնը կաթի մէջ, մի խօսքով, ինչպէս իմանալ մեր առօրեայ կեանքում ալնքան գործածական մի բանի, որպէս կաթին է, կեղծած և անարատ լինելը: Կաթ քննող գործիքները մասամբ կեղատոտ (քաղաքալին), մասամբ ֆուսկարների մէջ փակած (ֆէզէրի լակոոսկոպ) չարած էին սեղանի վրայ, և բացատրողը բաւականանում էր միայն հետաքրքրողներին ասել՝ «արանք էլ կաթ քննելու գործիներն են», սակայն զոնէ իմ աչնտեղ գտնւած 4—5 անգամներին էլ ոչ մի փորձ չկատարեց ալգ գործիներով՝ իսկ երբ ես խնդրեցի իմ ներկայութեամբ ալգալիսի փորձ կատարել գոնէ Ֆէզէրի լակոոսկոպով, ինձ շատ քաղաքավարի և ժպտաղէմ պատասխանեցին՝ «դա շատ դժուար է» (?!)... Ապա մտանք առաջին սրահը, ուր ի ցոյց էին դրած Թիֆլիսի շուկայի պանիրները՝ ես զարմացալ, որովհետև Թիֆլիսի իւրաքանչիւր մի բաղալի խաճութում կարելի էր անհամեմատ աւելի շատ թելով պանիրների տեսնել քան ցուցահանդէսի ալս բաժնում. 3—5 տեսակ պանիրների կտորներ միայն կալին ալն քաղաքում, ուր 2—3 ռուբլիով մէկ ժամաւ մէջ կարելի է աւելի քան 15 տեսակ կովկասեան պանիրներ գտնել: Պր. Շաղինովի ալս սրահի բաժանմունքում տեսանք բերանները փակ մի քանի տակառներ. բացադրողը ճգնում էր հաւատացնել, թէ դրանց մէջ հիանալի կարագ իւղ կար. սպա մի քանի թղթերի մէջ փաթաթւած ինչ որ քառակուսի բաներ տեսանք, որոնք երեւի դարձեալ իւղ կամ կարագ պէտք

է լինելին. ապա մի քանի կտոր բաղադրեցն և լիմբուրդեան պանիրներ և ալլի. Մտանք երկրորդ մեծ սրահը. ալստեղ ձախ կողմում տախտակների վրա՝ վուսած էին չեղցարական պանիրների ձև ունեցող ահագին սաւերի մի շարք, դրանց վրա՝ դրած էքսպոնէնտների անուանները և տարեկան արտադրութեան քանակութիւնը. բալց թէ թնչ կար ալդ կէս վերջով հաստութեամբ կարծր կեղեւների մէջ. պանիր թէ ալ ինչ—ալդ իմանալ չկա՝ բողացանք: Չարմանալի է ինչու պանիրների (?) ալդ սաւերը կտրուած էին, որ մարդ, փոխանակ ոչ մի բան չարտաշաւտող կեղեւի, միջի պանիրը տեսնել կարողանար, նրա գոնը, չատկութիւնը, բծիճները տեսնէր: Միթէ չէր կարելի ալդ պանիրները կտրել և եթէ ոչ ձրի, գոնէ ցանկացողներին և հետաքրքրողներին կտորը 5 կոպէկով ծախել, որ մարդ պանիր համը տեսնէր, համեմատէր միմեանց հետ և դրանց արժանիքը ճանաչէր: Այն ինչ, աֆսոս ինչպէս որ կալին⁶⁶ կարելի էր նոյն իսկ արհեստական «պանրանման» սաւեր դնել. և ի՞նչ էր իմացողը: Միթէ պանիր կամ իւղ ցուցահանողները ուրիշ տեղ կաթնատնտեսական ցուցահանողէս չէին տեսնել: Եւրոպայում գոնէ ես չորս կաթնատնտեսական ցուցահանողէսներում մասնակից եմ եղել և 50—60 պֆենիգով (20—25 կոպ.) կարողացել եմ բոլոր ինձ հետաքրքրող պանիրների և իւղերի համը տեսնել:

Բալց չարունակներ պտուտը: Սրահի ձախ կողմում էլի մի քանի պանիրներ եւրոպական, կարագներ և սպա դրանց բարձրում տախտակի վրա՝ մի կողմ. պապիէ-մաշիէկից. քետոլ երկու-երեք գլուխ թուշի պանիր, մի քանի հատ կաւէ ամաններ, երկու օրինակ «Материалы», (ուս դրական աշխատանքների, լոգաձոնների, ձեռնարկների բաժինն էր), մէկ թէ երկու քարտէզների, պատկերների և ահա սորանով վերջանում էր կովկասեան կաթնատնտեսական ինը բաժիններով և հարիւր ստորաբաժիններով նախագծած ցուցահանողէսը... Ես հաւատացած եմ, որ Թիֆլիսի մի քանի կաթնատնտեսական խանութներում կարելի էր աւելի բան տեսնել քան ալս ցուցահանողէսում: Այն ինչ մենք չուս ունէինք որ ալստեղ նախ և առաջ կը տեսնէինք գոնէ մի-մի գլուխ տեղական պանիրների ալս բազմատեսակ շարքից (օսի, թուշի, Թիֆլիսի, կիզիլիսի, թուրքական, մոթաւներ, թելպանիր, չիլ, չեչիլ, Աջարի, Արդւինի, իմերետական, մինգրելական, սոգո-գոնի, չէրքէզի, չէչէնի, բղուզի, լեզգու, թաթի և ալլն), որը սպաւած էր լալտարարութեան մէջ. ապա չուս ունէինք տեսնելու տեղական պանիրներ և իւղ պատրաստելու դորձածական տեղական գործիները և պարագաները որոշ չափորդական կարգով, սկսած կաթ կթելու բազմաաշտակ պառկներից և ամաններից, մաղեր, տաշտեր, բղուղներ, խնոցիներ, պանիր մակարդելու տեղական մալաներ (СЫРЬГО), սոպրակների, կաղապարների, մամուլ և ալլն, մինչև ալդ գործիներից անցած պատրաստի կ սրագը կամ պանիրը, իսկ դրանց հետ զուգահեռաբար միւս շարքում եւրոպական

պանիրներ և իւղեր պատրաստելու տեղական գործիներին համապատասխանող կաթնատնտեսական կատարելագործւած գործիներ և մեքենաներ, և արդիւնքները կարելիին չափ հարուստ և քաղմակոգմանիւ Ալդպէս կաղմած ցուցահանդէսը միջոց կը տար աչցելուին և հետաքրքրուողին ակընդառնի, չոչափելի կերպով մի կողմից ծանօթանալ մեր տեղական պրիմիտիւ կաթնատնտեսութեան հետ և զրա հետ միասին զուգահեռաբար հերոպական կատարելագործւած միջոցների, գործիների և դրանց արդիւնքների հետ, ալդպիսով կարելի կը լինէր համեմատել միմեանց հետ, հաւատարմանալ մէկի միւսի վրա՝ ունեցած տառելութեան, նախ ուկալարմութեան մէջ, Ալդպիսի ցուցահանդէսը միաշն կը լինէր ուսանելի, օգտաւէտ և հետաքրքիր, որ և է բոլոր ցուցահանդէսների հիմնական նպատակը և կոչումը. հակառակ դէպքում ցուցահանդէսը թողնում է պատահական ժողովածուի, բազարի տպաւորութիւն:

Կաթնատնտեսական Ցուցահանդէսից մենք զուրա բերեցինք հետեւեալ եզրակացութիւնները. ա) Մեզնում բաւական զարգացել է հերոպական (մասնաւորապէս չէչցարական) պանրագործութիւնը. բ) Գրա մեծագոյն մասը օտարների (գերմանացիների) ձեռքումն է և դ) Կովկասը շատ աղքատ է տեղական կաթնալին արդիւնքներով, (մէ եզրակացութիւն, որը խնդրատիրքեան շատ սխալ է, սակայն ցուցահանդէսը ալդ էր ցոյց տալիս):

Պր. Ա. Բալանթարի ցուցահանդէսի բացման օրը արած զեկուցումից իմացանք, որ Կովկասի պատրաստած հերոպական (չէչցարական) պանիրները իրենց չատկութեամբ շատ մօտ են բուն չէչցարական պանիրներին, որով և գերազանցում են Ռուսաստանում պատրաստած նոյնանոման պանիրներին և որ մենք առանց վախենալու կարող ենք մեր պանիրները արտահանել Ռուսաստան, ուր նրանք կը ծախեն շատ ձեռնտու գներով ¹⁾:

Մեր կարծիքով կաթնատնտեսական ցուցահանդէսը պէտք է չաջողւած համարել հետեւալ պատճառներով ա) Ցուցահանդէսի տեղի անլարմարութեամբ. բ) Բուն տեղացի կաթնատնտես էքսպոնէնտների քչութեամբ. գ) Կաթնատնտեսական թէ տեղական և թէ հերոպական անհրաժեշտ գործիքների և մեքենաների, ոչ լիակատարութեամբ և դ) Ցուց զրած

¹⁾ Կովկասում պատրաստած չէչցարական պանիրների մասին ալդ կարծիքը կազմել է Նիժնի-Նովգորոդում ալս տարի եղած ցուցահանդէսում, իսկ զորա արտալալտողը պ. Գ. Շադինեանն էր, որը Նիժնիումների կալցուցիչ էր Կովկասեան պանրագործների և որը խնդրի մասին իւր գեկուցումը տակց Կавказ, Сельск. Хозяйство թերթում №№ 142 և 143:

արդիւնքների և առարկաների անկանոն և անսխտեմ դասաւորութեամբ:

Վերջացնելով խօսքս, չեմ կարող չցաւել, որ մեր երկրի գիւղատնտեսական շահերին նւիրած ընկերութեան ալս ձեռնարկութիւնը, գուցէ իրենից մասամբ անկախ պատճառներով, անցաւ անաջող. միննոչն ժամանակ ամենայն անկեղծութեամբ ցանկանում ենք աչդ ընկերութեան անդամներին՝ առանց վատուելու աշխատել, գոնէ աշուհետեւ, աջողեցնել աւելի հարուստ և օգտաւէտ ցուցահանդէսներ, որոնք անկասկած կը ծառայեն մեր հարուստ երկրի արդիւնաբերական աջող զարգացման գործին:

ԹԱՏՐՈՆԻ ՅՈՒՐԱԸ

Հ. Ս Ե Ի Ե Ա Ն Ի

IX

Թիֆլիսի դերասանների նոր ընկերութիւնը։—Օ. Խիթարեան։—Նոր չարիք։—Տ. Աւետեանի խումբը։—Երկու 25-ամեակը։—Խճ է նշանակում «Մամուլ»։

Մեր նախորդ տեսութեան մէջ փշտտակել էինք Թիֆլիսի դերասանական խմբի ցրելը և դաւառական քաղաքների համար կաշմաճ դերասանական խումբի մասին։ Հաղիւ Թիֆլիսի դերասանական խմբի ճանապարհորդող անդամները հասել էին Բաթում, Թիֆլիսում մնացող անդամները նորից կազմակերպեցին հաւերէն ներկայացումները շարունակելու համար. խմբի մէջն են տո. Զաքէլ, Մելիքեան և օր. Վարդուհի. պպ. Տէր-Դաւթեան, Գարութիւնեան, Արաքսեան, Օհանեան և Մամիկոնեան։ Հետըհետէ ներկայացեցին «Պարիզու աղքատներ», «Սամէլ», «Քանդած օջախ», Դերասանական խումբը չունի իրա համար որոշ օրեր, պատահում է երկուշաբթի, հինգշաբթի, մինչև իսկ կիրակի։

Խմբի առաջին ներկայացումը մասնակցեց շնորհալի օր. Ա. Խիթարեանը, որ շատ անգամ զանազան ներկայացումներին (մեծ մասամբ թատրոնատէրների) մասնակցելիս ցոյց էր տւել իւր ընդունակութիւնները։ Չնաւելով որ չարգելի օրիորդը շատ քիչ է տիրապետում մալրների լիզելն, բայց իւր ջանասիրութեամբը աչնպէս է պատրաստում իւր դերը՝ որից աւելին անկարելի է պահանջել։ Շնորհաւորում ենք օրիորդի երեսը հալ բելի վերաջ և ցանկանում ենք որ նա կատարած մնալ նրա հետ մինչև վերջը։ Հաջ թատրոնը իւր չարատեսութեան համար կարօտ է նոր ուժերի մանաւանդ կանանց։ Ժամանակ է վերջապէս որ մեր ինտէլիգէնտ տիկին-

ներն ու օրիորդները ոտնակոխ անեն նախապաշարմունքի հիւսած ցանկապատը և օգնութեան ձեռք մեկնեն մալրենի բեմին. Օրիորդ Խիթարեանի օրինակը թող խրախույս լինի նրանց:

Որքան ուրախալի է վերոյիշեալ ֆակտը, աչնքան տխուր և վրդովեցնող է աչն անունների երկար շարքը՝ որով դերասանական ընկերութիւնը զարդարում է իւր չափարարութիւնը: Սառնարեամբ չէ կարելի կարգաւ Տէր-Գաւթեանի պէս փորձած և աշխատաւոր դերասանի անւան կցած «Ամիրեան, Տէր-Մկրտչեան, Մէլիք-Յովսէփեան, Տէրտէրեան և աչն» շարքը: Գուցէ շատ ընդունակ և դործին համակրող անձեր են սրանք. մեր նպատակը հեռու է նրանց վիրաւորելուց. մենք միայն զարմանում ենք որ բոլորովին անչափ անուններ տեղ են բռնում փորձառու դերասանների շարքում. ալը սխալը ուրիշ անգամներ ևս արեւ են դերասանները, և ալժմ ցանկալի էր որ անցեալից խրատէին: Եւ ալ կերպ չէին կարող զանազան «դերասան Անդրանիկ»-ների Նուխում Կարլ Մօօր խաղալ, «Արտիստ Բաբուրեան» ներ, Շուլաւէրում «Բաղդատար աղբար» ներկայացնել, «Թիֆլիսի խումբի դերասան Վաղինակ» զանազան տեղերում բազմաչարչար հալ թատրոնի կաշին քերթել: Էլ չենք խօսում արտիստ Սարգարեանի (ոչ Սարգարեան-Արեւատեան) շահատակութիւնների մասին, որոնք զգուշով զգուցրել են հասարակութեան: Այս վերոյիշեալները և սրանց նմանները աֆիշաների վրայ երբ և իցէ իրենց տպած անունը իբր փաստ և վաւերաթուղթ ծոցերնին դնելով ընկնում են գաւառները, և վաղ թատրոնի գլխին աչն ժամանակի Գա մի շարիք է որ դերասանական խումբի հասկացող անգամների սրբաբն է արժատախիլ անել՝ ի նկատի ունենալով հալ թատրոնի շահերը:

Տ. Մարիամ Աւետեանի վարչութիւնով կազմած դերասանական խումբը Բաթումում «Ասլան-բալասին» և «Բաղդատար աղբար» ներկայացնելուց չետոյ Նովոռոսիյսկի վերալով անցաւ Եկատերինոպոլ՝ հետզհետէ «Հրէուհի», «Բաղդատար աղբար», «Ախալ հաշիւ», «Ուրախաններ», «Բաղաքակաճ Մահ», «Սամէլ» և «Բաղդատար» աղբար ներկայացնելուց չետոյ մեկնեցաւ դէպի Նոր-Նախիջևան: «Սամէլ» նորից «Բաղդատար աղբար» պիէսները մի գիշերաւ մէջ խաղացուցին և վերջին պիէսը կրկնում էր հասարակութեան ցանկութիւնով: Ներկայացումների արդիւնքը բաւարար էր:

Այս տարի լրանում է Թիֆլիսի դերասանական խմբի աշխատաւոր անդամներից մէկի ս. Գէորգ Տէր-Գաւթեանի բեմական գործունէութեան

քրտնահնդամակը: Չենք սխալած լինի, եթէ ասինք թէ պ. Տէր-Գալթեանը Թիֆլիսցիներից սովետասիրած դերասանն է: Չնաչելով թատրոնի ամենածանր և ասպարդին (նիւթապէս) տարիներին, նա առանց չուսահատելու, առանց դասալիք լինելու, կուսելով 25 երկար տարիներ՝ բերել և հասցրել է իւր գործունէութիւնը մինչև այսօր: Հասարակութեանն է մնում ըստ արժանւոյն գնահատել այս ժիր մշակի գործունէութիւնը: Շատ դժուար է հաշ բեմի աշխատաւորին սովոր կանգնել իւր դիրքի վերայ մինչև վերջը: Հատերը հեռացան՝ ասպարէզից (օրինակ Աւալեանը), և մի պարտաճանաչ և գնահատող հասարակութիւն կարող է մնացեալներին էլ պահել բեմի վերայ: Մենք կրկին առիթ կ'ունենանք խօսելու տաղանդաւոր Վ. Տէր-Գալթեանի մասին:

Լսում ենք որ մի որոշ շրջանում միտք կար շնորհալի տ. Հրաչեակի 25 ամեակը ևս տօնելու: Յարգելի դերասանուհին առաջին անգամ հանգուցեալ դերասան Մաղաքեանի հովանաւորութեամբ բեմ դուրս գալով մասնակցել է թէ Վարդովեանի խմբին և եթէ Օրթագիւղի «բարեսիրաց» ընկերութեան թատրոնում տրուող ներկայացումներին: 70-ական թւականների կիսից տ. Հրաչեայ համարեա բոլորովին քաշւած է եղել բեմական ասպարէզից, մինչև որ 1880 թ. Թիֆլիսի թատր. մասնաժողովից հրաւիրւելով առիթ ունեցաւ հասարակութեան իւր տաղանդի հետ ծանօթացնելու, նոյն թւականից տ. Հրաչեայ կրկին հեռացաւ ասպարէզից մինչև 93 թ. և կրկին երեցաւ բեմի վերայ՝ հրաւիրւելով Թիֆլիսի թատր. մասնաժողովից: Տիկինը նորից հեռացաւ ասպարէզից և վերջերս հանդամանքներ իրեր մունքով բնակութիւնը հաստատեց Թիֆլիս: Յանկալի կը լինէր որ շնորհալի տիկինը իւր ջրելեանը տօնելուց առաջ զոնէ մասնակցէր հալ դերասանական ընկերութեան մի քանի ներկայացումներին և դրանով օգնած լինէր գործին:

«Մուրճ»-ի սեպտեմբերի ամսատետրում մեր VIII խօսւածում 'ի միջի ալրոց դրած էր. «Դարնան, չուշարար Կ. Մատինեանցի մահից չետոյ, հալ դերասանական ընկերութիւնը հանգուցեալի որբացած ընտանիքի օգտին ներկայացրեց Սունդուկեանցի «Էլի մէկ զոհ» դրաման, որից մօտ 400 ռուբլի հասոյթ գոյացաւ: Մատինեանցի օգտին տրւելու ներկայացման լուրը լրագիրներում տպւելուց չետոյ անհրաժեշտ էր որ դերասանական ընկերութիւնը նոյն մամուլի միջոցով չալտնէր արդիւնքի որքանութիւնը: Այս մի շատ պարզ լուր էր: Պորին կցած էինք մեր կարծիքը. հասարակութեան ամոհակներ էր ուղարկւել ծրարներով, միևնույն ժամանակ մամուլի միջոցով հաղորդւել էր թէ ներկայացումը Մատինեանցի ընտանիքի օգ-

տին է. բայց հաշիւ. ինչ եղաւ, որքան գումար գոյացաւ, թնչպէս ալլ, դումարը տեղ հասաւ. ալլ մասին պահում էր խորին լուսթիւն: Միւս կողմից, հանգուցեալի ալլին դերասաններին անհանգստացնում էր, ասե-
լով թէ փողերը չի կարողանում ստանալ: Մենք շատ զգուշաբար վարե-
ցինք, մեր լուրին միայն մեր կարծիքը կցելով և ոչ պարզելով ամբողջ
իրողութիւնը: Եւ ահա լանկարծ «Արձագանք»-ի 125 համարում խմբի
անդամների փոխարէն լուս է ընկնում պ. Սարգարեան, նախ քաջաբար
հռչակելով թէ իրան ծանօթ է Սեեանի անձնաւորութիւնը, ապա չալու-
նում է թէ «Արձագանք»-ի մալիսի համարներից մէկում տպւած է չիշեալ
ներկայացման մուտքն ու ելքը և վերջապէս «ամեն ինչ պարզելու» համար
մէջ է բերում ալլի տ. Մատինեանի անդորրագիրը:

Պ. Աղամ Սարգարեան, խմբի սցենարիւսը, «Մուրճ»-ում գրածին
«Արձագանք»-ում պատասխանելիս հետեւալ տողերն է գրում, որ աշխար-
հին կարող է զարմացնել. «Իմ ընկերակից (ըստ բեմի) պ. Սեեանը, չգի-
տեմ ինչ առիթից գրուած՝ փոխանակ ինձ դիմելու և տեղեկութիւն ստա-
նալու, շտապել է (հինգ ամիս չետոյ խօսելը դեռ շտապել է նշա-
նակում!) «Մուրճ» ամսագրի վերջին համարում տպագրել հետե-
ւալը.» (ալտեղ մէջ է բերած Մատինեանցի մասին «Մուրճ»-ում
տպւած լուրը): Պր. Սարգարեանը 'ի մէջ աշխարհի օր ցերե-
կով խոստովանում է որ (ըստ բեմի) իւր ընկերակից (ալլինքն դերա-
սան) Սեեանը Մատինեանցի օգտին տրւած ներկայացման մուտք ու ել-
քից տեղեկութիւն չունի, և թէ (Սեեան փոխանակ «Մուրճ»-ի միջոցաւ
հաշիւ պահանջելու, պէտք է իրան, Սարգարեանին դիմէ եղել հաշիւ ստա-
նալու: Բայց չգիտեցողը միայն Սեեանը չէ. դիցուք նա ձեզ դիմեց (խիչ-
պէս որ դուք հրամայում էք) և հաշիւ ստացաւ. իսկ միւս դերասանները,
իսկ հասարակութիւնը: Եւ ինչո՞ւ համար է լրագրութիւնը. ինչո՞ւ համար
ալլ ներկայացման մուտքն ու ելքը ձեր ձեռքն էիք հաւաքում, քանի որ
հաշիւ տալու պահանջը ձեզ ալլքան պիտի վրդովեցնէր և զարմացնէր:
Մենք «Մուրճ»-ի միջոցաւ պահանջում ենք որ դուք Մամուլի միջոցաւ
հաշիւ տաք. իսկ դուք միամիտ ձեռնալով ցոյց էք տալիս մեզ «Արձա-
գանք»-ի մալիսի չգիտեմ որ համարը ¹⁾. Բայց միթէ դուք «Մամուլ» և

¹⁾ Մենք աշխատութիւն տւինք մեզ որոնելու Արձագանքի մալիսի
համարներում պ. Սարգարեանի ակնարկած «հաշիւ» և ալլն դտանք թեր-
թի 29 մալիսի № 60-ում: Դա մի պարզ լուր է, որ սկսւում է ալլալու.
«Մ»-ը խնդրում են տպագրել հետեւեալը, որից չետոյ տպւած է թէ՛ ներ-
կայացման մուտք եղել է ալլքան, ծախք եղել է ալլքան: Յառեւած չէ
թէ ով է խնդրում, հետեւապէս Արձագանքի տպածը մի անպատասխանաւ
լուր է և ոչ հալոց դերասանական խմբի հաշիւ: Ճիշդ է նկատում մեր
աշխատակիցը նաև, երբ նա պահանջում է որ հաշիւը տրւի ոչ թէ մի,

«Արձագանք» բառերը չփոթելու չափ պարզամիտ էք: «Արձագանքում» տըպ-
ւած ձեր փոքրիկ գրութեան մէջ չաջողցրել էք երկու տեղում վիշել
թէ՝ գիտէք Սեեանի ու լինելը և թէ Նա դերասան է: Կարող էք
մեր անունը Ձեր ուղած կերպով հրատարակել, ալդ չէր սակաւն լուծելու
խնդիրը: Իսկ թէ դուք ամեն ինչ պարզելու համար նոր-նոր տպում էք
տ. Մատինեանցի անդորրագիրը, ալդ դարձեալ Ձեզ լիապէս չի արդա-
րացնում հատարակութեան առաջ: Մենք նորից ենք պնդում որ դուք
պարտաւոր էիք և պարտաւոր էք ալդ ներկայացման հաշիւը տալ մամուլի
միջոցաւ. ալսինքն, «Արձագանք»-ին էլ, «Նոր-Վար»-ին էլ, «Մուրճ»-ին էլ
«Մշակ» ին էլ, «Տարազ» ին էլ:

Ալժմ հասկացած թէ ինչ է «Մամուլը»:

ալ մի քանի խմբագրութիւնների. թէև հարկ չկալ բոլոր թերթերին հա-
շիւը ուղարկել, բալց ամեն հրապարակական հաշիւ, ընդունւած սովորու-
թեան համաձայն, պէտք է ուղարկել առնւաղն երեք թերթերի. Ի վերջոյ
հարկ ենք համարում նկատել, որ ամէն ստորագրած թուղթ պիտի կրէ
ստորագրութեան Թւականը. Արձագանքում տպած ալրի Մատինեանցի
անդորրոտիքը Թւակիր չէ, որ հարկաւ մի պակասութիւն է:

Մանօթ. Խմբ.

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄՈՒՐՃԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1897 Թ. ՀԱՄԱՐ բացում ենք ներկայ համարով: Ուղարկում ենք բաժանորդական ծրարներ: Բաժանորդները կարող են դիմել նաև յայտարարած գործակալներին (տես ամսագրի ծածօքը): Յուսով ենք որ 1896 թ. բաժանորդները կը շտապեն վերանորոգել իրենց բաժանորդագրութիւնը 1897 թ. համար: Յոյս ունինք նաև որ Մուրճի բաժանորդ չեղած ընթերցողները կը մասնակցեն բաժանորդագրութեան, թէ բարոյական պարտք կատարելու և թէ ամսագրի նիւթականը զօրեղացնելու համար: Մեր զիմումը վերաբերում է մանաւանդ այն ընթերցողներին, որոնք համակրում են Մուրճին և որոնք գիտեն գնահատել խմբագրութեան ջանքերը և նորա մարտնչումը ամեն տեսակ դժւարութիւնների դէմ:

Մեր մասնաւոր հոգսը յառաջիկայ տարւոյ համար պիտի լինի հոմարները ճիշդ իրենց ամիսներում հրատարակել, աշխատելով նոցա լոյս տեսնելու սովորական ժամանակը զցել ամեն ամսւոյ սկիզբը կամ ամենաուշը ամեն ամսւոյ միջերբը: Այդ կարգը կ'սկսւի ապրիլի համարից:

Նոր վէպերից առաջժամ կարող ենք յիշատակել պ. Լևոն Մանուէլեանցի մի մեծ վէպը, որ սկսելու է Մուրճում յունւար ամսից, պ. Շանթի մի նոր գործը, որպէս նաև պ. Վ. Փափազեանի մի շարք պատմաճօններն ու վէպիկները: Պպ. Բաքկենցի ու Աղէլեանի աջամ տպւող վէպերը կ'աւարտեն տարւոյ սկզբի ամիսներում:

Մուրճի աշխատակցական խումբը, որ կազմում են Ա. Արախանեանց, Լ. Մանուէլեանց, Դր. Վարդանեան, Ալ. Մա-

տուրեան, Յովհ. Տէր-Միրաքեան, Գ. Մնացականեանց, Վ. Փափա-
ղեան, Գր. Վանցեան, Ա. Այգլեան, Ծանթ, բժ. Զաքարեան, Խաչ-
Պապեան, Գ. Բաշինջաղեան, Սեհան, Աշ. Աթանասեան, Գ. Ղարա-
ջեան է և ուրիշներ, — մնում նոյնը, ուժեղացրած նոր ոյժերով:
ՍՏԱՅԵԼ ԵՆՔ մեր աշխատակից բժ. Թ. Զաքարեանցի «Ամուսնական առ-
ողջապահութիւնը» լօռածը, որի մէջ հեղինակը աշխատել է բացա-
տրել բոլոր աչն պալմանների նշանակութիւնը, որոնք բժշկական
տեսակէտից անհրաժեշտ են ինչպէս ամուսինների նոյնպէս և նոցա
զաւակների բաղդաւորութեան համար: Գորա հետ միասին նա աշ-
խատել է ցոյց տալ աչն թերութիւնները, որոնք զտնւում են եկե-
ղեցական և պետական օրէնսդրութիւնների մէջ աչր նշանաւոր
խնդրի վերաբերութեամբ:

Ն. Մ. ԿԱՅՍՐ ՆԻԿՈԼԱՅ, վերադառնալով Եւրոպայում կատարած ուղե-
ութիւնից, մտաւ Ռուսիա հոկտ. 18-ին, Էջմիածնէն տահմանալի
կապարանով:

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ հոկտ. 19 ին շաբաթ երեկոյեան ալցեւեց Երևանը:
Կիրակի օր ներկայ գտնւեց ա. Պողոս-Պետրոս եկեղեցու պատարա-
պին և քարոզ խօսեց, լորդորելով որ զաղթականներին գիւղեր զրկելու
ՄԻՆԻՍՏՐԱԿԱՆ փոփոխութիւն ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ, Ներկայ նոյնքերին
Պարսկական վարչութեան մէջ տեղի ունեցաւ մի խոշոր փոփոխու-
թիւն. նախկին սաղրազամ (անաջին մինիստր) (Ամին-Սուլթան
Միրզա-Ալի-Ասդէր-խան), նա որ 20 տարի շարունակ աչր պաշտո-
նումն էր և որը աչնքան նպաստեց ներկայ շահին դա՛ բարձրա-
նալու առանց ներքին խռովութիւնների և որին ներկայ շահը նո-
րերս աթաբէկ ամենաբարձր տիտղոսը շնորհեց, անսպասելի կերպով
պաշտօնանկ եղաւ և նորա տեղ նշանակեց Մուսու-խանը, որը մինչև
օրս 22 տարի շարունակ Պարսկաստանի յիազօր ղեսպանն էր Կ.
Պոլսում: Մուսու-խանի բարեկամութիւնը և, որպէս լսւում է, նոյն
խակ մեծ մտերմութիւնը ներկայ սուլթան Աբդուլ-Համիդի հետ՝ մեծ
երկիւղ է ներշնչում, որ նա կ'լրացնէ տաճկական ներկայ քաղա-
քականութիւնը քրիստոնեայ հպատակների վերաբերմամբ, հակառակ
նախկին ոսղրազամ Ամին-Սուլթանի, որը աչնքան հաշտ աչքով
էր վերաբերում գէպի քրիստոնեայ տարրը: Միւս կողմից Մուսու-
խանը համարւում է կուսակից Մեղքում-խանի, որի վերանորոգիչ
զաղափարները չալունի են: Գուցէ նախկին սաղրազամին պաշտոն-
անկ անելը կապ ունի Մուղաֆար-Էղդին շահի վարչական աչն ուե-
ֆորմի հետ, որով նա կամենում է վերանցնել կաշառակերութիւնը և

Նահանգները կապալով տալը, որի հետ իրօք ոչմի վերանորոգման դադարի քի կարող հաշուել: Բազմ աչն ժամանակ դժուար է մի ապրիլիսի վերանորոգում սպասել կաշառակերութեան երկրում 22 տարի դեսպան եղած մարդուց:

Մուշիր-էղդատուէլէհ նշանակւած է արտաքին գործոց մինիստր. Մու-Քաբըր-էղդատուէհ—ներքին գործոց մինիստր. Մուսթէթ-Էղդատուէհ—պատերազմական մինիստր. Աբբաս Միրզա-Մուլքարա, շահի հօրեղբայրը—արդարագատութեան մինիստր:

ԵԿԱՏԵՐԻՆՈՒԱՐ է նշանակել Բաղրատ վարդապետ Վարդազարգանց, որի համար մեծ գոհունակութիւն է չափնուում քաղաքի հասարակութեան մէջ: Նոյեմբերի 10-ին ծխականների ժողովում, մասնակցութեամբ 110 հոգու, միաձայն վերընտրեց երեցիոյս պ. Սարգիս Խարողելուն:

ՍԵՒ ԾՈՎԵԱՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ, Նոր ստեղծած Ան ծովեան Նահանգի Նահանգապետ նշանակւած է դեներալ-մալուր Տիխոնով, որը մինչև աչդ Դաղստանի նահանգապետի օգնականն էր:

ՀԱՅՈՑ ԳՊՐՈՑ ԿԱՐՍՈՒՄ, ՎԷՏ. Կաթողիկոսի կոնդակով Կարսի փոխանորդին իրաւունք տրեց Կարսում երկսեռ դպրոցներ բանալ չանուն Ս. Նշան եկեղեցու Դպրոցը բացեց Նոյեմբ. 2-ին:

ՇԱՄԱԽՈՒ ԹԵՄԻ ԳՊՐԱՆՈՑԻ մասին, որին Մուրմի աչս համարում նւիրւած է մի առանձին լօգւած, բաւականութեամբ կարդացինք Տարազ № 46-ում պ. Շիրաւնդաղէի առաջ բերած մի շարք մեծ մասամբ ճիշդ գիտողութիւնները, որոնցով Նա հանգում է Նոյն եղբակացութեանը, ինչպէս և մենք:

ԲՈՒՂԱՐԱՅԻ ՀԱՅՈՑ ՀՈՎԻՒ ՎԷՏ. Կաթողիկոսի հրամանով կարգւած է Արսէն վարդ. Վահուհի:

ՇՈՒՇԻԱՅ ԳՊՐԱՆՈՑԻ ՏԵՍՈՒՉ հաստատւած է Մեսրոպ վարդ. Փարսազանեան:

ՇԵՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ վերաքննութեան է ենթարկւում մի չանձնաժողովի մէջ, Նախագահութեամբ կառավարչապետի անդամ եակիմովի. նիստերին մասնակցում են երեսնի և Փանձակի նահանգական առեանների անդամները:

ԿՈՎԿԱՍՏԱՆ ՄԱՄՈՒԼ, Վրացի պ. Վ. Լ. Գունիաչին թուլատրւած է Թիֆլիսում հրատարակել վրաց լեզուով ամենօրեայ թերթ «Յնորիս Պուրցելի» (տեղեկատու թերթ), որի ծրագրի մէջ մտնում են սովորական լրագրի բոլոր բաժինները, բացի վիպականից և քաղաքական բաժնից: Լրագիրը աշխարհից արդէն հրատարակւում է:

Վրաց Մէուրնէ դիւղատնտեսական լրագրի խմբագրի խնդրեքը թերթի ծրագիրը ընկարձակելու մասին՝ մերժւել է:

Կուկագ Լրագիրը: Թիֆլիսում հրատարակող ռուսական

կիսապաշտօնական «կաւկագ» օրաթերթը, որ ամեն հինգ տարին նոր խմբագիր-հրատարակչի է տրուում, կառավարութեան հաստատութեամբ առաջիկայ 1897 թւականի լուսարկից անցնում է Վ. Լ. Վելիչկո'ի ձեռքը: Այդ թերթի հրատարակութեան պայմանները աչապէս են. թերթը կառավարութեանն է պատկանում, որը ամեն հինգ տարի հաստատում է նոր խմբագիր-հրատարակչի անձնակից մէկին, որոնք առաջ գրաւոր ցանկութիւն են չափոնում: Խմբագիր-հրատարակչը վարում է խմբագրական գործը իւր բարեհաւեցողութեամբ, սակայն պարտաւորում է տպել թերթի պաշտօնական մասում պաշտօնական տեղեկագրութիւնները, իսկ չափարարութեան բաժնում՝ պաշտօնական ամեն կարգի չափարարութիւնները. կառավարչական հաղորդագրութիւնները տպւում են ձրի, իսկ չափարարութիւնների համար կառավարութիւնը վճարում է որոշած սակագնով. պաշտօնական չափարարութիւնների առատութիւնը դարձնում է ալդ թերթը վաստակի մշտական և ապահով աղբիւր, իսկ թերթի պաշտօնական մասը թերթին բաժանուրդ դրւելը պարտաւորի է դարձնում երկրիս պաշտօնական աստեանների և պաշտօնական շատ անձերի համար, և ալդ պատճառով նա ապահովւած է նաև բաժանորդների մի որոշ թւով: Բացի ալդ ամենից, կառավարութիւնը վճարում է խմբագիր-հրատարակչին օժանդակութիւն, տարեկան կարծիք 6—7000 ռուբլի:

Պր. Վ. Վելիչկո տպագրեց տեղական ռուսաց թերթերում իւր ծրագիրը կաւկագի մասին. նա մտադիր է առանձին ընդարձակութիւն տալ տեղական թղթակցութիւնների բաժնին, թղթակիցներ ունենալ երկրի նաև խոշ անկիւններում, զարգացնել տեղական կեանքի և կովկասագիտութեան նւիրւած բաժնիները. ուշադրութիւն է դարձնելու ռուսաց կեանքի և հանրակուստութեան հարցերի վրա և տալու է հանրամատչելի լուսածներ գիտական հարցերի մասին: Այս ամենով պ. Վելիչկո մտադիր է կաւկաղլրագիրը ծառայեցնել կովկասեան երկրի մտաւոր և տնտեսական զարգացման, մօտեցնել երկիրը ռուսաց կեանքի հիմնական սկզբունքներին և ծառայել ռուսաց հայրենի շահերին Արեւելքում:

Պէտք է ասած որ մօտաւորապէս նոյն նպատակն են չափարարել պ. Վելիչկոյի բոլոր նախորդները:

Կանսկի լրագիրը: Բաքւում հրատարակող Каспій օրաթերթը, որի հրատարակողը տիկին Բալզերեւան է, մերժինիս ձեռքից անցել է չափնի նաւթատէր թուրք Հաջի-Չէչնաւ-Աբղին Թաղիեի ձեռքը: **ՏԱՃԱՆԱՅՈՑ ՄԱՐՈՒՆ**, «Բիւզանդիան» անունով մի օրաթերթ է հրատարակում կառավարութեան հրամանով զաղարեցրած «Արեւելք» լրագրի գլխաւոր աշխատակից Բիւզանդ Բէչեւանը:

ՀԱՅ ԴՊՐՈՑ ՎԱՌՆԱՅՈՒՄ, Մեր թղթակիցը գրում է մեզ Վառնայից, որ աչնաղ հիմնել են «Արժրուհեան» անունով մի վարժարան աղ-ջիկների համար, ուր բնդունում են նաև փոքրիկ աղաներ:

ՄԱՍՆԱԻՐ ԴՊՐՈՑՆԵՐ, Կովկ. չրջանի պ. հոգաբարձուի թուղտութեամբ, շարունակում են բաց անել ալ և ալ տեղեր. բացի անցեալ համա-րում քիչաճներից, բացել են ալգպիսիներ Բաքու, Ախալցխա, Գան-ձակ, Օրդուբաթ:

ՏԵՂԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ, ժողովրդական դաստիսութիւնների կարգալու հա-մար մերժումն է տեղ Կովկասեան դպրոցական չրջանի հոգաբարձու պ. Եանովսկին աչն լանձնաժողովին, որը Թիֆլիսում կազմակեր-պում է ժողովրդական ընթերցանութիւնները:

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՂ. ԱՐԶՈՒԹ. ԱՆԴԱՄ, հրաժարական տաժ իշխ. Պետրոս Արզութեանի տեղ ընտրեց Քր. վերմիչեան որ և հաստատեց նահանգապետի կողմից:

Չորրորդ անգամ ընտրեց նոյ. 11-ին իշխ. Ալէքսանդր Միք. Արզութեան-Երկայնաքաղու 28 ձայնով ընդդէմ 12-ի (երկրորդ քւէարկ-ւող Պաւէլ Մ. Եակիմով ստացաւ 13 սպիտակ, 29 սև):

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷԴԻ քաղաքային ընտրութիւնները կատարեցին սեպտ. 29-ին (Իբրև սկիզբ քաղաքային կրճատ ինքնավարութեան): Ընտրողական ցուցակի մէջ էին 524 տանտէրեր, որոնցից սակաւն ժողովին ներկա էղան միայն 110 հոգի, Ընտրեցին 15 լիազօրներ և 3 կանգիտա-տներ (ամենքը հայեր): Գաւառապետը հաստատեց ընտրութիւնը:

ՍՂՆԱՅԻ ԱԻԱՎ. հաստատել է Ստեփան Տէր-Աւագեան և ոչ ալդ սլաշ-տօնի համար առաջին ընտրած Ամիրան Շահվիրդեան:

ՆԻԷՐՆԵՐ ՆԻ ԿՏԱԿՆԵՐ, Հանդուցեալ Յարութիւն Սողոմոնեան Սուլիան-եան (Հանդամէջ գիւղում, Օրդուբաթի գաւառամասում) կտակով կարգադրել է. ¹⁾ Հանդամէջի Ս. Աստաճաճին եկեղեցուն 200 ո., ²⁾ Գանձակ գիւղի ս. Յովհաննէս Մկրտիչ ուխտատեղուն 200 ո., ³⁾ Ս. Էջմիածնի մալր աթոռին 200 ո., ⁴⁾ Օգեսալի հալոց եկեղ. երկսեռ ուսումնարանին 200 ո., ⁵⁾ Հալոց Բարեղ. ընկերութեան կենտրոնին 200 ո., Հանդուցեալի այրին ևս իւր կողմից Նւիրեց 200 ո. Հանդամէջի հալոց դպրոցին:

Երևանցի ալրի տիկին Ուսաննա Ղազարեան Բարեղ. ընկ. Երև-անի ճիւղին Նւիրեց 200 ուռլի:

Արմաւիրցի վաճառականներ Գաւթեոն եղբայրները Նւիրեցին 300 ուռլի Արմաւիրի ս. Աստաճամօր եկեղեցուն:

Բաքու վախճանած Նիկիտ Կրասնիկեանի մալրը և եղբայր-ները Նւիրեցին ներկա հոկտեմբերին 1000 ո. Էջմիածնի վանքին, 100 ո. Բաքու Մարդասիր. ընկերութեան, գաղթականների օգ-

տին. 1000 ո. Կովկասի Հալոց Բարեգ. Ընկ., զաղթականներին օգնելու համար. 300 ո. Բաքույի քաղաքային Բարեգ. Ընկ., 500 ո. Հալոց Բարեգ. Ընկերութեան Շուշայի ճիւղին:

Ա. Բալայեան Ղուկասեանց (շուշեցի, Բաքույի գործատէր, ալժմ թիֆլիսաբնակ) իւր վրայ է առել Սեանում վանական մի փոքրիկ դպրոցի շինութիւնը կառուցանելու ծախքը:

Նույեմբերի 9-ին վախճանած Գէորգ քահանայ Գալստեանց (թիֆլիսում, միարան վանքի մալր-եկեղեցու, կտակել է իւր երեք չարկանի տունը թիֆլիսի վանքի մալր եկեղեցուն աչն պաշտօնով որ տունը դառնալ եկեղեցու սեփականութիւն իւր կնոջ մահուանից չէտու: Նոյնը կտակել է իւր գրադարանը (300-ից աւելի գիրք) թիֆլիսի հոգևորականութեան հիմնելիք գրադարան-ընթերցարանին:

Բաքուցի աւրի տիկին Շողակաթ Մելիքեան նւիրեց Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանին 12.000 ռուբլի աչն պաշտօնով որ դրամադլիսի տոկոսով իւր հանգուցեալ ամուսին Մինաս Մելիքեանի անունով մի սան ուսանի ճեմարանում և ապա համալսարանում կատարելագործւելով՝ հոգևոր կոչումն ընդունի:

Նոյն աւրի տիկին Շող. Մելիքեան 2.000 ռուբլի ևս ուղարկել է ի տրամադրութիւն Վ.Է. Կաթողիկոսի:

(Յիշեալ աւրի տիկ. Մելիքեան, բացի ալ, մի որդեգիր ունի Գէորգեան ճեմարանում):

Խաչատուր Թադևոսեանի ժառանգները (Նրեան) նւիրել են 400 ո. Նրեանի թեմական դպրանոցին:

Յովսէփ Մելիք-Աւետիսեան (Նրեան) նոյն դպրոցին 50 ռուբ:

Մահաբադ պետրոս Միքիթարեանց (Ալէքսանդրապոլ) նւիրել է նոյն դպրոցին 100 ռուբլի:

Ներկալ նույեմբերին Եւպատորիայում (Խրիմում) վախճանեց տեղացի հարուստ վաճառական Յակոբ Սէֆէրեան, որը իւր կենդանութեան օրով նւիրել է (տարիներ առաջ) տեղի հալոց դպրոցին 15.000 ռուբլի և դպրոցին չափացրել երկու խանութ, որոնք տարեկան 500 ռուբլի են բերում. նորա հանգուցեալ եղբոր հաշով կառուցւել է դպրոցի շինութիւնը:

Օրբազարի (Խրիմում) հանգուցեալ վաճառական Յ. Արաբեան, կտակով լանձնել էր իւր կարողութիւնը 28.000 ռուբլի իւր եղբոր և վերը չիշած Յակոբ Սէֆէրեանին (որը կտակակատարների), կարգադրութեամբ որ իւր՝ Արաբեանի, կնոջ մահից չէտու (վրջինս վախճանեց 1895 թ-ին) նոցա մօտ չափեցրած գումարը դնւի պետական բանկ և 33 տարի չափեցնելուց չէտու՝ գործադրւի չօգուտ ազգի: Այդ գումարը կտակակատարների մօտ աճած էր մինչև 70.000 ռուբլի:

Նույնմբ. 20-ին Թիֆլիսում վախճանւած խոկական պետական խորհրդական Յովհաննէս Աթիսողոմեան (Թիֆլիսեցի) իւր կենաց ժամանակ նւիրել էր 5000 ռ. Թիֆլիսի արհեստաւորաց զպրոցին, ի վիշատակ հօր. աչժմ էլ կտակով թողել է 1.000 ռ. Սբ. Նշան եկեղեցու միաբանութեան:

Գրիգոր Աթիսողոմեան (ճարտարապետ), որին անցել է վերոլիշիալ եղբօր կարողութեան գլխաւոր մասը, նւիրել է 1000 ռ. Հայոց Բարեգ. Ընկերութեան, 500 ռ. ձրի ճաշարանին և 500 ռ. Վանքի մալի եկեղեցու վերաշինութեան:

ԹԻՖԼԻՍԻ ՆՈՐ ԹԱՏՐՈՆԸ, բացւեց նոյեմբերի 3-ին: Գա մի հոգակապ շինութիւն է, որ նստել է մի միլիոն ռուբլի. սկսւել էր կառուցւել 14 տարի առաջ, սակաւն շինուած էր ընդհատումներով:

ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՆԿՐԿՈՎԿԱՍՈՒՄ կազմում է ներկայումս կարեւորագոյն խնդիրներից մէկը մեզանում: Թէ որքան լաճախ են աւազակութիւնները մեր երկրում, աչլ յոյց է տալիս ստատիստիկան: Գեռւս երկու տարի առաջ իրաւագիտական գրականութեան մէջ ուշադրութեան էր առնւել աչն հանգամանքը, որ Անդրկովկասում աւազակութիւնները և սպանութիւնները կազմում էին $\frac{1}{1280}$ միւշն $\frac{1}{300}$ երկրի ազգաբնակչութեան, և որ դատական գործերի 58% մեր երկրում սպանութիւնների գործին է վերաբերում: Նոր տեղեկութիւններ չամաճաչն, մինչդեռ Ստաւրապոլի նահանգում (Հիւս. Կովկ.) մի աւազակութեան դէպք գալիս է նահանգի 39.000 բնակչի վրա, իսկ սպանութիւն 29.000 հոգու վրա, Անդրկովկասում աւազակութիւնը ընկնում է 5.200, և սպանութիւն 2.400 հոգու վրա: Ոստիկանութիւնը, շատ տեղերում, միանգամաչն անգոր է աւազակներին բռնելու: Ներկայումս խնդիր կալ աւազակութեան դէմն առնելու համար առանձին մարմիններ կազմակերպել ոստիկանութեան վրալ հըսկելու և ընդհանուր միջոցներ մշակել աւազակներին բռնելու գործը դիւրացնելու համար:

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿ. ԵՐԵՒԱՆՈՒՄ: Երեանի նահանգապետ կոմս Տիգենհաուզէնի նախագահութեամբ հոկտ. 18-ին Երեանում կաչացաւ գիւղատնտեսների ժողով, ուր վճուեց բանալ Երեանում Կովկ. Կալսերական Կիւղատնտեսական Ընկերութեան ճիւղ: Երեանեան նահանգը վաղուց պիտի ունենար աչդպիսի ընկերութիւն: Ճիւղ ունի մինչ աչժմ միաչն Բուլթալիսը:

ՂԱԼԱՐԻ ԱՅԳԻՆԵՐԸ աչա տարի ևս ենթարկւեցին միլիոն հիւանդութեան. խաղողի բերքը հաղիւ մի հինգերորդն է կազմում քան ինչ պիտի լինէր: Փաղաքը խնդրամատուց է լինում կառավարութեան առաջ, երկաթուղին Խասաւ-Իւրտից մինչև Ղալար անցկացնելու համար:

ԲԼԱԿՌՈՏ հիւանդութիւնը, որ ֆիւրկսերայից լետոյ խաղողի ամենա-
փտանգաւոր հիւանդութիւնն է, նորերս երեացել է Վախէթիալում:
ՇՈՒԼԱԻԷՐ մեծ հալ գիւղերում անձրեւներից փչացել է հացհատիկի հունձը,
խաղողի հիւանդութիւններից՝ ալգիները: ԱՂՎԱՄ գիւղում (Շուշա. դաւառ.)
խաղողի հիւանդութիւններից ալգիները խաղառ փչացել են:

ՆՈՐ ՆԱԻԹԱՏԵՂԵՐ: Սուպսա գիւղում (Թիֆլիս—Բաթումի երկաթուղու
գծի վրայ) փորձեր են անում նաւթ ստանալու. փորձնական հորերը
մէկը 20 սաժէն, միւսը 11 սաժէն խորութեամբ, տեցին անջրա-
խառն մաղուտ: Փորելու մեքենաներ դրած են նաև Աւսպարետի
գիւղում: Նաւթի նշաններ են երևում ահագին տարածութեան վրայ
Սուպսա կալարանից մինչև Նատաների:

ԿՐԱՍՆՈՎՈՂՍԿԻ երկաթուղին, որ կապում է ալդ նոր Նաւահանգիստը
Ասխարաղի հետ, բացւեց հոկտ. 15-ին, Անդրկասպեան երկրի կա-
ռավարիչ ղեկերալ Կուրոպատկինի ներկայութեամբ, որը օր առաջ
հոկտ. 14-ին շոգենաւով Բաքուից եկաւ: Կառաւջին անգամն էր,
որ շոգենաւը զալիս էր Բաքուից Կրասնովոզսկ ուղղակի:

ԳՐՈՋՆՈՅԻ ՆԱԻԹՔ սկսել է ուղարկւել Աստրախան, Պետրովսկի վրայով.
դորանով մրցութիւնը Բաքույ Նաւթի հետ իրականութիւն է ստա-
նում: Ալդ ուղղութեամբ, մանաւանդ եռանդով գործում է «Վլադի-
կաւկազի երկաթուղու առևտրական ագէնտութիւնը», որը ալդ նպա-
տակով պրոէկտ է կազմում Նաւթանցք դնելու Գրոջնօլի և Պետրո-
վսկի միջև:

ՍԵՄԻՆԱՐՍՏՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ: Ռուսաստանում ներկայ տար-
ւանից սկսել են թուլ տալ ռուսաց հոգեւոր դպրանոցներում աւար-
տածներին համալսարան մտնել: Սակայն ալդ կատարւում է առ ալժմ
ոչ ընդհանուր օրէնքի կամ կարգադրութեան հիման վրայ, ալ ամեն
անգամ առանձին թուլութեամբ կրթական միջնորդութեան կող-
մից: Ներկայ ռուսմասկան տարում ղեռ միայն Խրեւի (Կորպատ)
և Վազանի համալսարաններում ալգայիտով ընդունւած են 65 սեմի-
նարիստ:

ՊԵՏԱՆ ԳԱՆՁԱՐԱՆՆԵՐԸ նահանգներում, 1897 թ. լունւարի 1-ից
սկսած, համաձայն ֆինանսների միջնորդից տւած իրաւունքի, պիտի
կարողանան կատարել բանկալին դործողութիւններից մի քանիսը
ալն է՝ դրամ փոխել, տոկոսաբեր արժեթղթեր գնել և վաճառել,
տիրաժ ընկած արժեթղթերի գրամագուրել և տոկոսները վճարել
դրամ փոխ տալ տոկոսաբեր թղթերի գրաւկանով, դրամ փոխադ-
րել, աւանդ լնդունել, և ալն: Արգելւած է նոցա միայն մուր-
հակով փող տալ և մուրհակներ գեղջել:

ԼՈՐԴ ՍԱԼԻՍԲԻԻԻ ճառ խօսեց Լոնդոնի լորդ-քաղաքագլխի բանքէտում,

հոկտ. 29-ին, ուր չափոնեց, թէ Անգլիան չի կարող ուժով ստիպել թիւրքիային բարեկարգութիւններ մտցնելու, որովհետեւ ալդ թուլ չեն տալիս Անգլիայի ծովային և ցամաքի զօրքի ուժերը. և ալդ պատճառով Անգլիան ֆորսում է եւրոպական կոնցէրտին. չափոնեց իւր համերաշխութիւնը Փրանսիական մինիստր Հանոտի ճառի ամեն մի տողին, վերաբերեալ Եւրոպայի քործողութիւններին: Աւելցրեց որ Անգլիան միշտ համակրել է Եւրոպական դաշնակցութեան, բողոքեց Բիսմարկին վերաբերող աչն մտքի դէմ, թէ իբր Բուսիայի և Անգլիայի միջև կալ անխուսափելի հակառակութիւն. ալդ կարծիքը, ասաց նա, հին դիպլոմատիայի նախապաշարմունք է: Թիւրքիայի նկատմամբ Սալիսբերիին դժարութիւն չի տեսնում ուժ գործ դնել, եթէ միւս ակտութիւնները համաձայնեն. առաջիմ պէտք է միայն սուլթանի միջոցով գործել:

ԲԻՍՄԱՐԿԵԱՆ ՄԵՐԿԱՅՈՒՄՆԵՐ: Ռուսաց Կաշերական Զուգին Ֆրանսիալում հանդիպած մեծամեծ ընդունելութիւնները զրգեցին իշխան Բիսմարկի զլիսաւոր օրդան «Համբուրգերսն լուրեր» (Համբուրգէր Նախրիխտէն) թերթին մի զաղտնիք հրապարակ հանել, որ անագին իրարանցում զցեց ամբողջ քաղաքական աշխարհում. աչն է Բիսմարկի կանցլէր եղած Ժամանակ, չնաչած Եւրոպական դաշնակցութեան (Կերմանիայի, Աւստրո-Ունգարիայի և խալիայի միջև), Գերմանիան Բուսիայի հետ դադարի համաձայնութիւն էր կապարած, որով նորա իրար պիտի պաշտպանէին՝ եթէ նոցանից մէկն ու մէկը չարձակումն կրէր մի ալ պետութեան կողմից. ալդ համաձայնութիւնը պիտի տնէր մինչև 1890 թւականը. ալդ տարին Բիսմարկը պաշտօնանի եղաւ. Վիլհելմ II կամ նորա կանցլէր Կապրիւին չվերանորոգեցին ալդ դաշնը, որի համար և Բիսմարկի թերթը ալժմ լանդիմանեց գերմանական ներկալ կառավարութեանը, որը ալդպիսով թուլ տւեց որ Բուսիան ու Ֆրանսիան ալժմնան բարեկամութիւնը հաստատեն:

ԲԱՆՏԱՐԿԻԱՄՆԵՐ: 16-ն նոյեմբերի հեռագրի համաձայն, հալերից շատերին բանտարկելու հրամանների մէջ կալ մէկը, որը վերաբերում է պ. Մոստրիճեանին. վերջինս Վալթալի դպրոցի նախկին տեսուչն էր և միաժամանակ կատարում էր նախկին պատրիարք Խզմիրլեանի աւագ քարտուղարի պարտականութիւնները և երբ Խզմիրլեան հրաժարական տւեց՝ Մոստրիճեան փախաւ Կ. Պոլսից:

Խաւքէօլի (Պոլիս) հալոց եպիսկ. Եղնիկ Ապահունուն արտակարգ դատարունը ժահան պատժի դատապարտեց:

Պատտր Մակ-Կուլում, Մարաշում հալերին նպատներ բաժանելու միջոցին բռնւեց և ուղարկւեց Կ. Պոլսի:

ԳԻՒՐԲԵՔԻՐԻ ՎԱԼԻ Նշանակած է խալիդ-բէլ, եղևոնական զատարանի նախագահը, ի տեղի հրաժարեցրած Եանիս փաշայի:

ԹԻԻՐԲԻԱ. Ըստ հեռագրի 3-ին նույնմբերի. Պոլսի խաղական դեսպանը վճռողապէս խօսեց սուլթանի հետ, չալտենով որ բաւական չէ ռեֆորմներ հրատարակելը, ալ պէտք է նոցա իրագործել որով միայն երկրին կը վերադարձնուի խաղաղութիւնը:

ՍԵՐԲԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐԸ, երիտասարդ Ալեքսանդր I սղջնէց Ռուսիայի թագաւորին Բուքարէստում հոկտ. և վերադարձաւ 21-ին հոկտ. Բելգրադ. Ապա նա ուղևորեց Հռոմ, ուր հասաւ նոյեմբ. 25. Ընդունեց կաշարանում թագաւորից, Կարինալում (թագաւորական պալատ) թագուհուց, ձամբօրդեց գէպի Նէստրլ. վերադարձաւ Բելգրադ 22 նոյեմբերի:

ՆԱԽԱԳԱՀ ՀԻՒՍԻՍ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅ. ՍՏԱՏՆԵՐՈՒՄ ընտրեց Մակ-Կինլէյ 242 ձայնով. Որպէս չալտնի է, նախագահութեան համար մըրցում էին Մակ-Կինլէյ, որ հանրապետական կոչւած կուսակցութեան թեկնածուն էր, և Բրայէն, որը ղեմակրատական կուսակցութեան թեկնածուն էր (տես Մուրճ, 1896, № 6, էջ 885—886): Մակ-Կինլէյ 52 տարեկան է. նա շտապական-իրականական ծագումից է, ծնւել է Հիւս. Ամերիկայի Օլիո ստատում. 17 տարեկան հասակում մասնակցեց ներքին պատերազմին (1861—64 թ.) ղեկնելու Շերիդանի հրամանատարութեան ներքոյ. ապա սկսեց փաստաբանութեամբ զբաղւել. 1876 թ-ին ընտրեց կոնգրէսի անդամ: Այդ ժամանակահոյից 13 տարուաւ ընթացքում նա ձեռք բերեց հովանաւորող սիստեմի ամենաեռանդոտ կուսակցի անուն: Մինչև իւր ընտրութիւնը նահանգապետ էր Օլիոյում. 1890 թւականի ընտրութիւններին նա թեկնածու էր և պարտութիւն կրեց: Մակ. Կինլէյի մրցակից Բրայէն հեռագրով շնորհաւորեց նորընտիր նախագահին և աւելցրեց՝ «Ամերիկական ազգի կամքը—օրէնք է»: Մակ-Կինլէյի ընտրութիւնը մեծ ոգևորութիւն չառաջացրեց Նիւ-Եօրկում և բոլոր մեծ քաղաքներում:

ՍՈՎ. ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ. Հնդկաստանի փոխարքան պաշտօնապէս չալտարարել է սովի մասին. կառավարութիւնը հաց է մատակարարում 120 միլիոն հոգու, աչսինքն Հնդկաստանի ժողովրդի գրեթէ կէսին: Մեծամեծ հասարակաց շինութիւններ են կառուցւում (երկաթուղիներ և ալէն), սովեաններին վաստակ հալթհալթելու համար: Անասունների վրալ երևացել է էպիդոտիա: Բոմբէյում ընկերութիւն է հիմնւել աշխարհքիս բոլոր ծաւրերից կարելիին չափ էփան գնով հացահատիկ բերել տալու համար:

Այդ մեծ վտանգի դէմ, բազմապիսի անդիակական բարեխնամ կառավարութիւնից, առաւ ինքը բնութիւնը, Հնդկիւ ալն չորք

անձրեւները, որ նոյեմբերին սկսեցին տեղալ վտանգի ենթարկւած բազմաթիւ հասանգներում, Հնդկաստանի հիւսիսային մասում:

1877 թւականի սովին անգլիական կառավարութիւնը ծախսեց 275 միլիոն ֆրանկ սովի դէմն առնելու համար, և աջնուամեհաչիւ սովից մեռան 4,250,000 մարդ: Այդ ժամանակահից զէս երկաթուղիներից ցանցը Հնդկաստանում մեծացել է զգալապէս, աչնպէս որ աւելի հեշտ է օգնութեան հասնել, բայց և աչնպէս անբերք տարածութիւնը աչնքան մեծ է, որ մեծ հոգս է պատճառում անգլիական կառավարութեան:

ԺԱՆՏԱՍԻՏ է երեացել Հնդկաստանի Բոմբէյ քաղաքում հոկտեմբերի վերջերքում, ուր զնարով սաստկացաւ և նոյեմբերի վերջերքը տարածեց քաղաքի բոլոր մասերում. մինչև նոյեմբ. 28-ը ժանտախտից աչնտեղ հիւանդացան 1.126 հոգի, մեռան 804 հոգի:

ԲՈՍՖՈՐԻ ԱՄՐԱՅՈՒՄԸ: «Պոստ» գերմանական օրաթերթը տեղեկացրեց հետևեալը. Բոսֆորի նեղուցը ունի 30 կիլոմէտր երկարութիւն. իսկ լայնութիւնն է Սեծովի մուտքի մօտ 3,7 կիլոմէտր, ապա միայն 670 մէտր և Կ. Պոլսի առաջ նա լայնանում է մինչև 2 կիլոմէտր: Նորա հնագոյն ամրութիւններն են Ռումէլի և Անատոլի Հիւար, որոնք շինւած են զեռես 1392 և 1452 թթ-ին նեղուցի ամենանեղ մասում: Նոցանից վերք, Բօիւղերէի մօտ գտնւում են 3 բաւերէ: և մի ամբողջ 60 թնդանոթով առիական ափի վրայ: Անատոլի Կաւակ առիական մասում և Ռումէլի Կաւակ եւրոպականում, որոնք Սև ծովին աւելի մօտ են, ունին ամէն մէկը 44 թնդանոթ: Նոցա միջև տարածութիւնն է մօտ 3000 ոտ: Ապա գալիս են եւրոպական մասում Բուիւկ, Լիւման և Կարիբէ: 27 և 39 թնդանոթներով, իսկ նոցա զիմաց Պոլսի ամբողջը 40 թնդանոթով և 1 բաւերէ: Վերջապէս Սեծովի մուտքում շինւած են 2 ամբողջ՝ 9 և 26 թնդանոթներով և մի քանի բաւերէ, եւրոպական մասում, և 2 ֆորտ ու 22 թնդանոթ — առիականում: Եւրոպական ափի բոլոր ամբողջներում և բաւերէներում թնդանոթների թիւն է 306, առիականում 234, Նոցա մօտ կանգնած են արտիլերիայի 2 դունդ (2 պուլ), մի քանի բաւալիոն հետևակ և մի բաւալիօն սապեօրներ: Բոլոր ամբողջները միացրած են հեռագրով:

ԿՐԵՏԷ կղզում հաշւում են քրիստոնեաների վերջին ապոտամբութեան միջոցին իսպառ քանդած 40 թիւրքական, 30 քրիստոնեաւ և 20 խաչը ազգաբնակութեամբ գիւղեր: Այլ տեղեկութիւնների համաձայն՝ վեաուել են 200-ից աւելի գիւղեր, իսկ հոգատէրերի ձիթենիների ալրելուց չառաջացած վեաուը հաշւում են 1 միլիոն ֆրանկ:

ԴՈՒՍԻԱ և ՅՐԱՆՍԻԱ. Ն. Մ. Կալոր Նիկոլայի Պաչնի'ից հանրապետու-

Թեան նախագահ Գորին զրկած հեռագիրը վերջինս իւր նամակներով հաղորդեց պատգամաւորների ժողովի նախագահ Բրիստին և սենատի նախագահ Լուբէին, աչգ նամակները հարգացեցին երկու ժողովներում ևս հոկտ. 15-ին (հին տոմար): Բրիստը ապա աւելցրեց. «Պատգամաւորների ժողովը, որ 1891 թւականին հանդիսաւոր կերպով չափեց Զրանսիայի համակրութիւնները Ռուսիային, կը ցանկալ, ի հարկ է, ժողովի նիստերը վերսկսելէս, զիմել Օգոստափառ Այցելուին և ցանկալ Նորան, որպէս նաև Կալսրուհուն, փառաւոր Թագաւորութիւն և Կալսրութեան բարօրութիւն»: Այս ճառը ծածկեց ծափահարութիւններով և Մելինը շնորհակալիք չափեց Բրիստին՝ հալընասիրական ճառի համար: Սենատում Լուբէն ևս նամակի ընթերցումից չետոյ ջերմ խօսքեր արտասանեց Ռուսաց կալսերական Զուգի համար:

ՄԵԼԻՆԻ ՄԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ: Չնալած մինիստր-նախագահ Մելինի պահանջին, որ Ֆրանսիական պատգամաւորների ժողովը (30 հոկտ.) սկսէ քննել բիւջէն, ժողովը 273 ձայնով ընդդէմ 254 ի վճռեց չաջորդ նիստում սկսել վիճաբանութիւնը սենատի ընտրութեան եղանակի մասին: Այս միջնադէպը սակաւն մինիստրական տագնապ հառաջացրեց:

ԻՏԱԼԻԱՅԻ ԹԱԳԱԺԱՌԱՆԳԸ ամուսնացաւ Չերնոգորիայի իշխանի դուստր Հելէնայի հետ հոկտեմբերին, նախ քաղաքական և ապա եկեղեցական կարգով:

ԱՐԻՍԻՆԻԱՅԻ և ԻՏԱԼԻԱՅԻ հաշտութեան դաշնը վերջապէս կապեց ռուսներին 1-ին: Դորանով ջնջեց Ռաջիալեան դաշնը, որով Արիսինիան ճանաչում էր Խաւիալի հովանաւորութեան ներքոյ և ապմ նորից հաստատեց Արիսինիայի անկախութիւնը:

Խաւիական գերիները, որոնց մասին խօսք կալ մեր չաջորդ լուրի մէջ, աղատեցին:

ՄԵՆԵԼԻՔԻ ՊԱՏԱՍԻԱՆԸ ՊԱՊԻՆ: Պապը ուղարկել էր Մակար Կալսկոպոսին Արիսինիայի Թագաւորի մօտ մի նամակով, որի մէջ նա խնդրում էր չանուն Սբ. Նրորդութեան և ալն ամենի, ինչ թանկագին է ճեգուսի (Թագաւորի) համար, աղատել խաւական գերիներին: Մենելիկը պատասխանել էր նամակով պապին, ուր նա չափում էր թէ իւր սրտի առաջին թելադրութեամբ նա կամենում էր չարգել պապի ցանկութիւնը, բալց խաւական կառավարութեան վերջին գործողութիւնները տրիւեցին իրեն՝ չեա կամեցնել աչգ զիտաւորութիւնից: Մակար Կալսկոպոսի բերած պատասխանը պապը հրատարակել աւեց Հռոմում հոկտ. 30-ին (հին տոմար):

ԲԱՄԲԱԿԸ ՀԻՒՍ. ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ ալս տարի աւելի լաւ հունձ տաւ է

երևում քան անցեալ տարի, թէև ամերիկական կառավարութիւնը աչդ մասին հաղորդեց որ իւր հաւաքած տեղեկութիւնները զեռ շատ աւելատար են:

ԳՐԵՆՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ. Խտորիչեակի վեստնիկ ամսագրում հրատարակած է 1895 թ-ին Ռուսիայում լուս տեսած դրքերի վիճակագիրը (չօղած Լ. Ն. Պաւլէնկովի): Պորա համեմատ Ռուսիայում, չհաշւած Ֆինլանդիան, աչդ թւին լուս տեսան 11.548 հեղինակութիւններ, 42.987.707 օրինակներով. դորա մէջ ռուսերէն 8.728 հեղինակութիւն 35.521.814 օրինակ, ալ լեզուներով 2.820 գիրք 7.465.893 օրինակներով: Աչդ թւերի մէջ են նաև նոտաներ, առլամներ, ալբոմներ և ալլն, թւով 150 հատ 423.280 օրինակներով: Ոչ-ռուս լեզուով հրատարակածները՝

Լեհերէն . .	918	հեղինակութիւն	2.377.759	օրինակ
Եբրայերէն .	601	»	1.506-785	»
Գերմաներէն	296	»	510 290	»
Հաւերէն . .	110	»	193.274	»
Վրացերէն .	100	»	171.120	»

և ալլն:

Գրքերը տպւել են 172 քաղաքներում, որոնցից առաջիններն Պետերբուրգ 3.918 գիրք (որի մէջ օտար լեզուներով 142 գիրք). Մոսկա 2607 (որից օտար լեզ. 76). Վարչաւ 1220 (որից ռուսերէն 101, ոչ-ռուսերէն 1.119). Եիւե 517 (որից օտար լեզ. 47). Օդեսա 493 (որից օտար լեզ. 49). Թիֆլիս 277 (որից ոչ-ռուսերէն 180). Բաքուն բռնում էր 40-երորդ (7՝ գիրք), Երեւանը 41-դ տեղը (6 գիրք):

ԵՐԿԱԹՈՒՎԱՅԻՆ ԴԺԲԱՂԴՈՒԹԻՒՆՆԵՐ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ: Պետերբուրգ-սկիչա վեղոմատի թերթի տեղեկութիւնների համաձայն, Ռուսիայի երկաթուղիներում դժբաղդ գէպքերից շլատաւներ թիւը 15 տարում, սկսած 1880-ից մինչև 1894 թ., կազմում է 28.084 մարդ, որոնցից սպանւած 8.129 մարդ: Հաշւի չեն առնւած գէպքերը Իրինեան, Օբսեան, ծովեղրեալ և Անդրկասպեան (1.343 վերստ) և Ֆինլանդիայի (2.108 վերստ) երկաթուղիներում և չհաշւած գէպքերը որոնք չառաջացել են երկաթուղային դործի հետ կապ չունեցող պատճառներից (չանկարծահաս մահ վազոնուհ, չարագործութիւններ, մահ կալծակից և ալլն, որոնցից 15 տարում մեռել են 2.616 հոգի, վիրաւորւել 1.238 հոգի): Յիշեալ 28.084 դժբաղդ գէպքերից 1880 թւականի վրա ընկնում է 455 մահ, 979 վիրաւորութիւն, ընդամենը 1.434 հոգի. 1894 թւականի վրա ընկնում է 726 մահ և 3.073 վիրաւորութիւն, ընդամենը 3.799 հոգի: Իսկ միմիայն կառավարներ

իրար զարնելուց նոյն 15 տարիների ընթացքում մեռած են 65 հոգի, վերաւորւած՝ 405 հոգի:

ԿԱՏԱՐԻՆԷ II Ի ՄԱՀԻԱՆ 100-ԱՄՆԱԿԸ լրացաւ նոյեմբերի 6-ին: Կատարինէ Մեծը Պետրոս Մեծից լետոյ ամենափառաւոր տեղն է բըռնում Ռուսաց պատմութեան մէջ 18-րդ դարում: Նա փազաւորեց մօտ 34 տարի 1726 թ-ից մինչև 1796 թ.: Հօր կերպով աշխատեց պատւաստել Կերոպական կուսութեան Ռուսիային: Կատարինէ Մեծը առաջինը սկսեց արեւելեան լաջող պատերազմը Տաճկաստանի դէմ: Նաև չալանի է նա իւր ձգտումներով ազատել Յոյներին, Վրացիներին և Հայերին տաճկական և պարսկական լծից: Յաջող է, որ մեծ կաջարուհու զօրքերը արդէն հասել էին Կուր գետի ափերը և միացել հալ մելիքների՝ քանակի հետ, երբ, կաջարուհու մահանից լետոյ՝ հրաման ստացան վերադառնալ Ռուսիա: Ի պատիւ կաջարուհու կոչեցին հալ զաղուկների հիմնած մի քաղաքը՝ Կիտտերինուլա, մի ալ քաղաք ի պատիւ կաջարուհու աջակից Գրիգոր Պոտեօմկինի՝ Գրիգորիոպոլ: Նորա ժամանակ Ղրիմի հայերը հիմնեցին Նոր-Նախիջևանը որոշ արտօնութիւններով: Գորա համար մի քանի տարի առաջ Նոր-Նախիջևանը կառուցեց Մեծն Կատարինէի արձանը:

ՖԻՐԻՈՎԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ, Հոկտեմբերի 3-ին Բերլինի հասարակութիւնը և նորա հետ Գերմանիան սօնեց հռչակաւոր գիտնական և քաղաքական գործիչ պրոֆ. Ռուզուֆ Ֆիրխովի 75 ամեակը:

ԿԻՆ-ԲԺԴԿՆԵՐ: Նւէցարիայի Բերն քաղաքում ուսած երեք կին և Պարիզում ուսած երեք կին քննութիւն տւին Մոսկւայի համալսարանի քննիչ լանձնաժողովի առաջ և արժանացան (20 հոկտ.) բժշկի կոչման «СВ ОТЕЧЕСТВ», այսինքն գերազանց վկայականով:

ԷՄՄԱՆՈՒԷԼ ԲԷՅ. ՆԱԶԱՐԵԱՆՅ զետեղել էր Նոր-Վար թերթում առ 6-ն Նոյեմբ. մի լողւած, նւիրւած հալ հոգեորականութեանը առհասարակ և Թիֆլիսի հալ հոգեորականութեանը՝ «մանաւորապէս: Յօղւածի վերնագիրն էր՝ «Անշարժ հոգեորականութիւն»: Ահա լողւածը մի քանի կրճատուհներով:

«...մի ազգ, մի հասարակութիւն ալն ժամանակն է կեանքի ու լառաջգիմութեան նշաններ ցոյց տալիս, երբ նրա բոլոր մասները, բոլոր անդամները... իրենց որոշ պարտականութիւնն են կատարում: Մեղանում իրեն հասարակական և ազգային լառաջադիմութեան գործոններ հանդիսանում են զխաւորապէս դպրոցն ու մամուլը: միանգամալն մոռացւած են եկիզեցին ու հոգեորականութիւնը: մինչդեռ հոգեորականութիւնն ի պաշտօնէ կոչւած է առաջնակարգ գեր ստանձնելու ժողովրդի լառաջգիմութեան գործում: ալք պարզ երևում է հոգեորականին լատկացրած նոյն իսկ լոջը»

ջումներից... «հալը, հովիւ, դէտ, աղ երկրի, լոյս աշխարհի, միջ-
նորդ հաշտութեան» և այլն... դրանք բոլորն էլ առաջնորդողի,
ղեկավարողի պաշտօն են ենթադրում... հետեապէս պարզ է որ եկե-
ղեցին պարտականութիւններից ամենագլխաւորը դրել է հոգեորա-
կանի վրայ:

«Սակայն... տեսնում ենք որ միայն հոգեորականութիւնն է,
որ դատապարտւած է անդործութեան, կեանքի ու կենդանութեան
նշով անգամ ցոյց չտալով: Այս եթէ պախարակելի է նրա անտար-
բերութիւնը, ապա աչդ դատապարտութեան բացարձակ քէն տա-
լու է գլխաւորապէս Թիֆլիսի հալ հոգեորականութեանը, որ կոչւած
է առաջնորդ, օրինակ ու հայելի լինելու զաւառական հոգեորակա-
նութեանը: Թիֆլիսի հալ հոգեորականութիւնը ոչինչ ներգործական
դեր չէ կատարում, ոչ մի ածող ու ոչնչով չէ ցոյց տալիս իւր գոյու-
թիւնը: Փաստ է նույնպէս որ, եթէ երբ և իցէ վշտակուում է նրա
անունը, ապա դա լինում է նրա պակասաւոր կողմերի և իւր վեհ
կոչման մէջ կատարած մի շարք զեղծումների հրապարակութեամբ
ու մերկապարանոց նշանակութեամբ: Այս բոլորը ցոյց է տալիս որ
Թիֆլիսում քահանայք կան, բայց հոգեորականութիւն չկալ: Եւ
Թիֆլիսի 55 քահանայք, որոնց մի նշանաւոր տոկոսը միջնակարգ
կրթութիւն է ստացել, անունով միայն կան... Մենք ամենքս, կամ
մի քանիսը առանձին գուցէ շատ բան ենք չինում... բայց երբեք
չենք կարող ասել թէ Թիֆլիսի հալ հոգեորականութիւնը այս է
արել կամ այն է արել, որովհետեւ միաբան գործելու մի նշով ցարդ
ցոյց տւած չենք:

«Ինչ է պատճառը. ըստ իս՝ ահա, որ մենք մեծ մասամբ չենք
հասկանում մեր կոչման խորհուրդը, մեր սովերից օգտւելու դէպքը. և
չկալ մի ձեռք, որ մեզ միացնէր, մի հեղինակութիւն՝ որ ուղղութիւն
տար մեր մտքերին, որ մեզ ցոյց տար թէ՛ բացի մուկ թաղելուց,
բացի առն ու զերեզման օրհնելուց, մենք ունինք կատարելու աւելի
կարեւոր գործեր, լրացնելու աւելի անհրաժեշտ պէտքեր. և աչդ բո-
լոր պէտքերի ու պարտքերի մէջ՝ երկու գլխաւոր բան—նախ բարձ-
րանալ ընկած վիճակից, ապա ժողովուրդ առաջնորդելը:

Մենք բնաւ համամիտ չենք էմմանուէլ քահանայ Նազարեանցի
հետ, որը կամենում է հոգեորականութեանը առաջնորդի դեր չտա-
կացնել հասարակութեան մէջ: Հոգեորականութիւնը առաջնորդողի
դեր կատարում է մահմեդական աշխարհում—ու չօգուտ մարդկային
զառաջդիմութեան. հոգեորականութեանը առաջնորդողի դեր է չառ-
կացնում կաթոլիկ աշխարհակցողութիւնը, որի դէմ մեծ լաճողու-
թեամբ կռւել են վերջին դարերի ամենալուսամիտ գլուխները, և

դորա շնորհիւ հաստատուել է գիտութեան մէջ աննախապաշար հետազոտութիւնների ոգին և ծաւալել լուսաւոր աշխարհի վրայ։ Մենք պահանջում ենք միայն, որ հոգևորականութիւնը աչնքան լուսաւորի, որ հատկաձայ ժամանակի ոգին։ պահանջում ենք, որ հոգևորականութիւնը կազմած լինի կրթւած անձերից, ոչ թէ որպէս հոգևոր դասակարգ՝ առաջնորդելու հասարակութիւնը, այլ հասարակութեանը պիտանի լինելու, չառաջդիմութեանը խոչընդոտ չլինելու համար։ առաջնորդելու համար կարող է ընդունակ և կոչւած լինել նաև աչս կամ աչն հոգևորականը, իբրև անհատապէս կարող և հեղինակաւոր անձն, որպէս և ոչ-հոգևորականը։ Բայց աչ պիտի լինի ոչ չանուն հոգևորականութեան, որպէս դասակարգի։ Աչ բան է, եթէ էմմանուէլ քահ. Նազարեան չորդորէր որ հոգևորականութիւնը իւր կոչմանը անվաչել բանիւ չանէ, որ արատաւոր քահանաները վաւորուեն։ աչ բան է նաև, եթէ նա պահանջի որ հոգևորականութիւնը, իբրև դասակարգ, միաբան ուժերով աչս կամ աչն բարենպաստակ գործին մասնակիցէր։ Բայց թէ հոգևորականը ի պաշտօնէ կամենաչ ղեկավարել հասարակութիւնը, վճռողական ձաչն տալով հասարակական, գիտական, դպրոցական, քաղաքական, սոցիալական, տնտեսական, իրաւական և աչ խնդիրներում—դա հակառակ է չառաջդիմութեան ամենակական պաչմաններին։ Նամանաւանդ որ հոգևորականութիւնը, եթէ նա դասակարգի անունից գործելու լինի—կարող է եկեղիցու անունը ամենահեշտ կերպով ի չար գործ զնել ինչպէս և պատահած էլ է չատ անդամ և ամենուրեք։ «Գէտ, աղ երկրի, հովիւ» և աչ անունները նոր ժամանակի խօսքեր չեն, աչ մնացել են աչն հին ժամանակներից, երբ հոգևորականութիւնն էր լուսաւորութեան ներկայացուցիչը։ Բայց, գոհութիւն Աստուծոչ, սուօրաչ օրս հոգևորականութիւնը աչգ արտօնութիւնը չունի։ աչմ ասպարէզը բաց է ամենքին և հասարակութեան առաջնորդութիւնը պատկանում է միայն բարձր խելքին, հասարակաց չահերի լաւաղոն բմբռնողին, լինի նա աչխարհական, թէ հոգևորական։ Չաչ հոգևորականութեան կոչումը՝ ժողովրդի հետ ձեռք ձեռքի տաած գնաչն է, միշտ ձգտելով նորա լաւագոչն մասի հետ համերաչխութիւն պահպանել։

ԱՆՐՆԴՈՒՆԱԿՈՒԹՒԻՆ, ԹԷ՝ ԶԱՐԱՄՏՈՒԹՒԻՆ։ Տարիներ առաջ մենք միտք լղացանք հաչկական մամուլի մէջ մոցնել նիստերը ձիչղ արձանագրելու ձեր, բարխոշձարար նկարաղբերով նիստը և տեղի ունեցած խօսակցութիւնները, առաջ բերելով ձաւախօսների ասածները մի առ մի, ընդարձակ կերպով կամ նպատակաւորմար ամիոփուումի։ Աչգ ձեռով Մործը տեց «Թիֆլիսի թեմական պատգամա-

որի ընտրութեան ժողովը մարտի 8-ին 1892 թ.» վերտառութեամբ արձանագրութիւնը (տես Մուրճ 1892 թ. № 2, էջ 326—331) Ալեք օրւանից Մուրճից սկսեցին օրինակ առնել նիստեր արձանագրելու համար «Փոտոգրաֆիական ճշգրտութեամբ»։ և ամենից առաջ մեր օրինակին հետևողն եղաւ «Արձագանքը»։ Բայց ոչ մի օրինակ, ունէ իսկ լաւագոյնը չի կարող պատասխանատու լինել, երբ նորան հետևողները անբարեխղճութիւն և չարամտութիւն են մտցնում դործի մէջ։ Արձագանքը, ուրեմն, նիստերի ընդարձակ արձանագրութիւնների մէջ սկսեց մտցնել միտումներ։ սորա կամ նորա խօսածների որոշ գոյ- ներ տալով, հակառակ իրողութեան, Այս հասարակութեան մէջ, ուր ամեն զեղծում ու աղաւաղում ներում է և վաւերացում, ոչ միայն լրագրական հաշիւաւթեան մէջ դիտաւորեալ աղաւաղումներ են անում, այլ և պաշտօնականներում։ բոլորը կախած է նիստեր դե- կավարող անձերից։ և երբ, օրինակ, Հալոց Բարեգործական ընկե- րութեան նիստերի արձանագրութիւնները պաշտօնական կարգով աղաւաղում են կամ դուռնաւորում, երբ նախագահը բժշկ. Նաւա- սարգեանցն է՝ քարտուղարը Խ. Մալումեան, քաջալերողը և Մշակի խմբագրութիւնը, այն ժամանակ կարելի է երեակալել, թէ գծում դիտաւորութիւնների համար որքան պարարտ հող կալ պատրաստած մեր խեղճ հասարակութեան մէջ։ Նոր-Պարը անցեալ- ներումն էլ ունի գործում ցոյց է տւել որ չի կամենում անմաս փալ ալ խմբագրութիւնների ալ աննախանձելի դափնիներէից։ և նա ալ ժամ էլ շարունակում է. Հալոց Բարեգ. Ընկ. Նոյեմբերի 17-ին կա- չացած ընդհանուր ժողովի մասին ալ թերթը տպեց մի արձանա- գրութիւն (Նոր-Պար, 20 Նոյ.), ուր ամեն ինչ աղաւաղած է ամե- նաանհիթեթ կերպով և ուր ի միջի ալոց տպւած է այսպիսի բան. «Կրկին տեղի է ունենում վիճաբանութիւնը, որը ընդհատում է Արասիւանեանցի հետեւալ բանաձևով թէ՛ ժողովը որոշեց Արձա- գանքին չանձնել (ընկերութեան անցեալ նիստի) արձանագրու- թեան տպագրութիւնը. եթէ (Արձագանքը) չտպագրի՝ ստիպել ցին- գուրակի միջոցաւ։ Եւ Նոր-Պարը հաւատացնում է որ ոչ միայն ալգպիսի բանաձև արել է Արասիւանեանց, այլ որ ալգ բանաձևը անց է կացել ձաճից բազմութեամբ։ Իսկութիւնը սա է, որ Արաս- իանեանց ոչ ալգպիսի առաջարկ է արել և ոչ էլ ընդհանուր ժո- ղովը ալգպիսի վճիռ է կալացրել։

ՄԵԱԿԻ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐԸ։ Մենք անցեալ անգամ հրաւիրել էինք Մշակի խմբագրութեան ցոյց տալ որ եւ է ամիս, որից նա կը կամենար որ մենք օրինակներ բռնէինք թէ ինչպէս ալ թերթը, առանց աղբիւրը յիշելու, օգտւում է ալ թերթերից՝ ներքին և արտաքին (թէ և կի-

սատ-պուստ կազմած) լուրերի և նույն իսկ քաղաքական լուրերի համար: Մշակը չվստահացաւ մեր հրաւերն ընդունելու. նա մեզնից աչդ ասպնդողները չպահանջեց: Եւ շատ խելօք էլ վարեց, որովհետեւ դորանով նա ազատեց մեզ մի սաղտկալի աշխատանքից, և իրեն ազատեց մի խաղաղապետութիւնից: Դորա հետ միասին նա չքաշեց չալտնել, որ (օրինակ, Լօնդոնից, Պարիզից և այլն) «դրում են» ձեռ (ծածկելով թէ ումն են գրում, և ի հարկէ ոչ Մշակին), իբր թէ աչդ աչքակապ ձեռ նա դործ է ածել միայն մի քանի անգամ. (ահա Մշակի խօսքերը. «Մենք ապիւ ենք մի քանի լուրեր, զնկով դրում են, բայց չչալտնելով թէ ում են գրում»: Տես Մշակ, № 125): Իսկ մենք ասում ենք թէ «Մշակը միայն մի քանի լուրեր չէ աչքապէս հաղորդել, այլ շատ և շատ-շատ անգամ, դա մի սխտեմ է Մշակի համար, որի ընթերցողները կարող են իրենք ստուգել աչդ»:

Եւ ահա աղբիւրների հետ այդպէս վարեող մի թերթ աղմուկ է ուղղում հանել աչդ հանգամանքից, որ մենք հազկական խնդրին վերաբերեալ մեր ընդարձակ լուրերից մէկի մէջ, ուր աչքապէս տեղեկութիւններ են հաղորդւում մի աչքապիսի պատշաճաւոր դաստաւրութեամբ, որ միայն Մարտին է լատուկ, մենք զետեղել ենք Դէլի Նիւսի մի թղթակցութիւնից մի երես կամ մի քիչ աւելի քաղաածքներ, չիւլով Դէլի Նիւսի անունը իբր աղբիւր, և չիւլով ալ թերթի անունը, ուր մենք թարգմանած ենք գտել աչդ քաղաածքները...

Բայց որ զլիսաւորն է, մենք Մշակին ցանդիմանել էինք, որ նա պաշտօնական դոկումէնտները տպում է աղաւաղելով, աչք է՝ բազմաթիւ կրճատումներ անելով, առանց նշան դնելու կրճատած տեղերում, առանց աչդ մասին ընթերցողին որ և է խօսքով զգուշացնելու, որով հարկաւ նա ընթերցողներին մոլորութեան մէջ է գցում: Ինչ է պատասխանում Մշակը դորան. ահա ինչ. «Արասխանեանց, իբր խմբագիր, պիտի հասկանար, որ աչդ կրճատումները անհրաժեշտ են, որպէս զի հնարաւոր լինի դոկումէնտների տպագրութիւնը» (Ստորագծումները Մշակ'ումն են): Ոչ. Քալանթար, Մալումեան, Լէօ և ընկերութիւն, Արասխանեանցը, իբր խմբագիր, ոչ միայն աչքապիսի խարդախութիւն չի հասկանում, և ոչ միայն նա աչք չի ուղղում հասկանալ, այլ և բարձր ձայնով շարունակում է նախատեղ ձեռ աչդ ձևերի համար և վրդովում է երբ դուք, փոխանակ խօսք տալու թէ կ'ուղղէք, դու փաստաբանում էք աչք կեղծիքները, որպէս փաստաբանում էիք կեղծ վկայութիւնները աչք տալու աւանդ: Եթէ դուք մի դոկումէնտ տպագրելը հնարաւոր դարձնելու համար անհրաժեշտ էք համարում որ և է տող կրճատել, ապա կրճա-

տէք և բաց թողած տեղը նշանակեցէք:—անս թէ մենք, իբր խմբա-
գիր, ինչ կարող ենք ձեզ սովորեցնել, և ոչ թէ ձեզնից խարդախու-
թեան և ընթերցողներին մոլորեցնելու գասեր վերցնել:

«ՆՐԱԶ ՕՐԵՐ» հեղինակութիւն Շանթի, լոյս տեսաւ առանձին գրքով (169
երես): Տպագրութիւնը կատարւած է Մուրճում տպածից, որը սա-
կաչն ենթարկել է մանրակրկիտ սրբագրութեան հեղինակի կողմից:
Դիրքը տպւած է շատ մաքուր, գրեթէ անլրիպալ: Նկատւած երկու
վրիպակները (էջ 1 և 53) ուղղւած են նոյն իսկ բնագրի մէջ: Գինն
է 40 կոպէկ, ճանապարհածախսով 45 կոպ: Գուրսեցիներ վէպը և Նրազ
Օրերը միասին վաճառւում են 90 կոպ: ճանապարհածախսով եր-
կուսը միասին 1 ռուբլի:

ՄՈՂԱ Է ՔԱ կամ Նուր մողնի պիկնիչ անունով մի պիես Ներկայացրեց
Թիֆլիսի հալոց զերասանական խումբը, նոյեմբ- 28-ին Ներկայա-
ցումը գլխակի արտասովոր բաղմութիւն: Պիեսը վերցլւած է Արծա-
գանքի համանուն ֆելետոնից: Փամանակը ուշ լինելու պատճառով
մեր խօսքը ակզ մասին կը լինի գալ համարում:

ԱՍԽԱՐԱԿՈՒՄ չազում է առաջացրել մի քանանական խնդիր, որ ար-
ծարժել է հետեւեալ պարագաներում. տեղական ծխատէք քահանայ
Փանեանց, համաձայն հոգևոր բարձր իշխանութեանը տւած
գրաւոր խնդիրքին՝ փոխադրւում է Կովկաս. նորա տեղ հոգևոր իշխա-
նութիւնը Ասխաբադի հալիւրի քահանայ է նշանակում Աղբալեանցին,
առանց կանխօրէն Ասխաբադի հալ հասարակութեան համաձայնու-
թիւնը հարցնելու և ստանալու: Այսպիսով Ասխաբադի հալ հասարա-
կութիւնը տեսնում է իւր ընտրական իրաւունքը արհամարւած բար-
ձր հոգևոր իշխանութեան կողմից:

ՍԻՐԱՆՈՅՇ. Ակամաջ սխալանքի մէջ ընկնելով ալ թերթերում տպած լու-
րերից՝ մենք մեզ թուլ տւինք անցեալ համարում զերասանուհի տ.
Սիրանուշի անունը մահացուցակի մէջ զետեղելու: Պարտք ենք
համարում չալտնել որ բարեբախտաբար ակզ լուրը սխալ է եղած
և որ տ. Սիրանուշը Պոլսում ողջ և առողջ է:

† ՆԵՐՍԷՍԵԱՆ ՆԵՐՍԷՍ, մէկը Գանձակ քաղաքի չալտնի գործիչներից
70-ական և 80-ական թւականներին, գործով վաճառական. չալտնի
գլխաւորապէս նրանով որ 25 տարի, մինչև իւր մահան օրը, խնա-
մատար եղաւ Սր. Թարգմանչաց վանքի (Խաչակապ գիւղի մօտ—
Գանձակի գաւառ). վախճ. հոկտ. 20-ին:

† ԱԼԽԱԶԵԱՆ, ե. Կ., հալ սզգի ռուսաց գեներալ, վախճանւեց, նոյեմ-
բերի 3-ին:

† ԻՇԽ. ԳԱԳԻԱՆԻ, վախճանւեց Պետերբուրգում: Յաւանի էր իբրև
վրաց հասարակական և զրական գործիչ. ունի հնագիտական երկեր
և Շեքսպիրի մի քանի երկերի վրացերէն թարգմանութիւնները:

† ՄՈՐԻՅ ՇԻՖ (Maurice Schiff) լաւտնի բնախօս գիտնական, մեռաւ ալս 1896 սեպտ. 25-ին. ծնւել էր 1828 թւին, Ֆրանկֆուրտում Մալնի վրայ: 1896 թւին սկսեց Բերնում իւր լեկցիաները, բաւց վեց տարի չետոյ անցաւ Ֆլորենցիա, ուր նա բնախօսութեան պրոֆեսոր էր 14 տարի: 1876-ին հրաւիրւեց Ժընէվի համալսարան, ուր նա, 19 տարուց ի վեր բնախօսութեան դասեր էր աւանդում և գրաւում ոչ միայն գիտնական աշխարհի ուշադրութիւնը իւր նոր գիւտերով, այլ և ամէն կողմից ուսանողներ՝ իւր գրաւիչ դասախօսութիւններով: Մ. Շիֆը մեռաւ. 73 տարեկան հասակում և զրէթէ աշխատութեան մէջ, որովհետեւ գիշեր և ցերեկ անընդատ աշխատում էր լաբորատորիայում: Նա շատ կարեւոր գիւտեր է արել թէ ջրերի, թէ ստամոքսային նիւթերի և թէ ուղեղային գործունէութեան վերաբերեալ: 1891 թւին, Ժընէվի համալսարանը, նրա հետ նաեւ ամբողջ Շւէյցարիայի ուսանողութիւնը, այլ և Շիֆի ամեն տեղ գտնուող աշակերտները տօնեցին գիտնականի գործունէութեան լիսնամակը ամենամեծ շուքով: Այլ թւականից սկսեց նրա ամբողջ գործերի հրատարակութիւնը, որի 3-րդ հասորը ալս տարի լոյս տեսաւ: Մ. Շիֆը ոչ միայն գիտնական էր, այլ և բնկերաբան, ընկերավարական համոզմունքներով: Մ. Շիֆը ունի հաւ աշակերտներ եւ:

† ՇԱԼԼՄԵՆ-ԼԱՍՈՒՐ վախճանեց հոկտեմբերին 70 տարեկան հասակում: Նա ամենամեծատու բարեկամն էր եղած Գամբետտայի: 1870 թ-ին սկսեց հրատարակել *La République Française* օրաթերթը, 1883 թ-ին եղաւ արտաքին գործոց մինիստր՝ Ֆերրիի մինիստրութեան մէջ, 1893 թ-ին ընտրեց սենատի նախագահ: Կարնօի մահից և ապա Կադլմիր-Պերիէի հրաժարականից չետոյ (1894-ին) նա մեծ շանսեր ունէր հանրապետութեան նախագահ ընտրուելու, բայց երկու անգամ էլ հրաժարեց թեկնածու լինել, տկարութեան պատճառով: Գրականութեան մէջ լաւտնի էր իբր մասնագէտ գերման ֆիլոսոֆայութեան. 1893-ին ընտրեց անգամ ֆրանսիական Ակադեմիայի:

† ՀՈՒԳՕ ԳԻԼԴԵՆ, հռչակաւոր աստղագէտ, վախճանեց Ստոկհոլմում, 29 հոկտեմբերի:

† ԲՈԳՈԼԻԻՅՈՎ, Ա. Պ., ռուս տաղանդաւոր նկարիչ-մարինիստ և հեղինակ պատերազմական նկարների, վախճանեց Պարիզում, 27 հոկտ.:

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐԳԵՐ

- 1) ՇԱՆԹ ԵՐԱԳ Օրեր: Արտատպած Մուրճ ամսագրից: Թիֆլիս. 1896. տպ. Ռոտինեանց. գիշն է 40 կող., պոստի ծախքով 45 կող:
- 2) ՅԱԿՈԲՋԱՆԵԱՆ, Տ. Ս.—Ընկերաբան վահանը (Մանկական զրադա-

րան): Հրատ. Թիֆլ. Հ. Հր. Ընկ.—Թիֆլիս. 1896. տպ. Ռոտինևանց գինն է 10 կոպ.

3) ՄԱԼԻԱՍՏԱՆ, Յովհաննէս.—Պատանեկան լուչեր: Թիֆլիս. 1896. տպ. Շարաձէ. գինն է 15 կոպ.

4) ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ Աղբւր—Տարաղի:

5) ՕՐԱՅՈՅՑ Ս. Էջմիածնի 1897 թ. կազմած, գինն է 20 կոպ.

6) ՊԱՏԻ ՕՐԱՅՈՅՑ Ս. Չմէկեանի:

ՄՈՒՐՃԻ ՊՈՍՏԱՐԿՂ:

Վերին-Աղղան: (Ղաղախի գաւառ): Հոգաբարձութեան հալոց եկեղեցական միդասեան երկսեռ դպրոցի: Հալոց դպրոցներէից մօտ 165-ի փակելովը Մուրճ-ը կորցնում է զգալի թւով թէ դպրոց բաժանորդներ և թէ մանաւանդ ուսուցիչ-բաժանորդներ: Հոգաբարձութիւնդ, փոխանակ մեզ դիմելու Մուրճ-ը ձրիապէս ստանալու համար—թող հարկաւոր դրամը հանգանակէ հասարակութեան մէջ, եթէ միայն Մուրճը դպրոցի համար է. իսկ եթէ դպրոցի համար չէ, ալ մի խումր ընթերցողների համար—թող դոքա իրար մէջ բաժանորդագինը հաւաքեն: Այս ութ տարւալ ընթացքում Վերին-Աղղան գիւղում Մուրճ-ը բաժանորդ չի ունեցել. մինչդեռ Մուրճ-ը միայն քաղաքացից համար չէ հրատարակում: Մեր գիւղերը պէտք է ինքնագիտակցութեան դան. առանց գիւղերի մասնակցութեան Մուրճը չի կարող հասնել իւր նպատակին. իսկ մասնակցութիւնը պէտք է կատարել թէ կարողալով և թէ բաժանորդագրութիւնով: Մենք ունինք հազարաւոր գիւղեր միայն Անդրկովկասում հալկական աղղաքնակութեամբ, որոնցից 300 գիւղ, ուր ամեն մէկում հալ աղղաքնակութիւնը 100-ից մինչ 500 տուն է. ասել է թէ Անդրկովկասում մենք ունինք 300 մեծ հալ գիւղեր. պէտք է որ գոնէ աղղալսի մեծ գիւղերը մասնակից լինին Մուրճի բաժանորդագրութեանը, մինչդեռ նոցանից միայն մի քանիսն են չլուսն պահպանում մեր գրականութեան և լուրջ մամուլի հետ:

Թիֆլիս վ. Փափաղեան: Ձեր պատմածքը Homo homini lupus (Մարդը մարդու համար գալ) մեզնից անկախ պատճառով չկարողացաւ լուս տեսնել:

ՎՐԻՊԱԿՆԵՐ Մուրճ № 9-ում Լևոն Մանուէլեանցի «Ես հանգում էի» ոտանաւորի մէջ տող 6 տպւած է՝ արիւն, ուղիղն է՝ աւին. տող 13-րդում «իմ» խօսքը աւելորդ է, իսկ տող 16-րդում պիտի աւելացնել «իմ» (Նորից վառւում են իմ չուսոյ աստղերը...)

Խմբագիր-հրատարակիչ՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

I

Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի

Թիֆլիսից-Բաքու. ա) ելք—1 ժ. 10 ռ. օրւայ, հասնում է Բաքու—7 ժ. 30 ռ. առաւ. բ) ելք—10 ժ. 50 ռ. երեկ. հասնում է Բաքու—4 ժ. 49 ռ. օրւայ:

Բաքուից-Թիֆլիս. ա) ելք—2 ժ. 30 ռ. օրւայ, հասնում է Թիֆլիս—8 ժ. 21 ռ. առաւօտ. բ) ելք—11 ժ. 5 ռ. գիշերւայ հասնում է Թիֆլիս—5 ժ. 50 ռ. գիշերւայ:

Թիֆլիսից-Բաթում. ա) ելք—9 ժ. 10 ռ. առաւ., հասնում է Բաթում—9 ժ. 45 ռ. գիշերւայ. բ) ելք—6 ժ. 50 ռ. երեկոյեան, հասնում է Բաթում—8 ժ. 15 ռ. առաւօտեան:

Բաթումից-Թիֆլիս. ա) ելք—9 ժ. 40 ռ. առաւ., հասնում է Թիֆլիս—9 ժ. 55 ռ. երեկոյեան, բ) ելք—11 ժ. 20 ռ. գիշերւայ, հասնում է Թիֆլիս—12 ժ. 25 ռ. ցերեկւայ:

II

ՌԱԶՄԱՎԻՐԱԿԱՆ ԽՃՈՒՂՈՎ, ԹԻՖԼԻՍԻՅ ՎԼԱԴԻԿԱՎԿԱԾ
ԳՆԱՅՈՂ ԿԱՌՔԵՐ

Թիֆլիսից—Հինգ տեղով կառքեր. ա) Դուրս է գալիս առ. ժամը 7-ին, գիշերում է Մէթում և միւս օրը երեկոյեան ժամը 6-ին հասնում է Վլադիկավկազ: բ) Դուրս է գնում առաւ. ժամը 9-ին, գիշերում Պասանաուրում և միւս օրը գիշերւայ ժամը 8-ին հասնում է տեղ:

Վեցտեղով հանրակառքեր (օմնիբուս) գնում են երկու անգամ, առանց գիշերելու, ա) 9 ժ. 30 ռ. առաւօտ և բ) 7 ժ. երեկոյեան: Հասնում են Վլադիկավկազ, առաջինը՝ միւս օր 12 ժ. օրւայ և երկրորդը՝ 8 ժ. 50 ռ. երեկոյեան:

ՎԼԱԴԻԿԱՆԿԱԶԻՑ—Հինգ տեղով կառք. ա) Գուրս է գալիս առաւ. 7 ժ., գիշերում է Մէթ, հասնում է Թիֆլիզ միւս օրը երեկոյեան 6-ին. բ) Գուրս է գալիս ժամը 9-ի ն, գիշերում է Գուրս, հասնում է Թիֆլիզ միւս օր ժամը 7-ին երեկոյեան:

Վեցտեղով հանրակառք. երկու անգամ, առանց գիշերելու, ա) առ. ժ. 10-ին և բ) երեկ. ժ. 7-ին. հասնում են Թիֆլիզ. առաջինը՝ միւս օրւայ ժամ 11-ին առ., երկրորդը՝ ժամը 8-ին երեկոյեան:

Գնեցն մնւ. կառքի ներսում իւրաքանչիւր անձի համար 19 ռ. 60 կոպէկ: կառքի կից կաբրիօլետում՝ 13 ռ. 20 կ. կառապանի մօտ՝ 3 ռ. 40 կոպէկ:

Մէթի կալարանում գտնուում են ամեն կառքի համար մանուկների և կանանց համար առանձին համարներ գիշերելու՝ առանց վարձի, իսկ տղամարդիկ կարող են գիշերել ընդհանուր սենեակում կամ վճարելով մասնաւոր համարներում:

„Ա Ր Յ Ր Ի“

Պատկերագարդ սեղանի օրացոյց 1897 թ.

Դեկտեմբերի սկզբներում «Արօր» տպարանի հրատարակութեամբ լոյս կը տեսնի սեղանի պատկերագարդ օրացոյց, 1897 թ.: Բացի օրացոյցի մասից և զանազան վիճակագրական տեղեկութիւններից, օրացոյցը ունի և հարուստ լաւելուած:

Դիմը ծանալարհաժախքով 1 ոտքի:

Դիմել՝ Բազու, տպարան «Արօր»:

XV ԱՂԲԻԻՐ XV 1897 VIII ՏԱՐԱԶ VIII

Միամսեայ պատկերազարդ հանդէս մանուկների, ծնողների և դաստիարակների համար:

Պատկերազարդ շաբաթաթերթ ընտանեկան ընթերցանութեան համար:

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՂԲԻԻՐԸ լոյս է տեսնում իւրաքանչիւր ամիս 2—3 թ., տարեկան 12 ՁԵՁԵ:

ՏԱՐԱԶԸ լոյս է տեսնում ամեն կիրակի, իւրաքանչիւր № 1—2 թերթ, տարեկան 48—50 ՁԵՁԵ:

Ա. ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ. Ման-րավէպ, Զրոյց, Հէքիսթ, Հանապարհորդութիւն, Կենսագրութիւն, Բանաստեղծութիւն, Գիտութիւն եւ արեւստ. Նոր լուրեր: Այլ եւ այլք: Զատնայիք: Մանկական, Ֆրեզիլեան, շախմատի եւ այլ խաղեր, Ռեբուսներ, Քաղաքական խընդիրներ, Անեկդոտ, Հանելուկ, Կրդեր նուաներով:

Բ. ԲԱԺԻՆ. Կրթութեան եւ դաստիարակութեան վերաբերեալ յօդածներ եւ տեղեկութիւններ: Առաջարկութիւններ: Խորհուրդներ: Մատենախօսութիւն եւ նոր դրքեր: Խառն լուրեր: Պատասխաններ: Յայտարարութիւններ:

ԱՂԲԻԻՐ-ՏԱՐԱԶԻ խմբագրութիւնը անմիջական և սերտ շարաքերութիւն ունենալով Եւրոպայում կլիշէ պատրաստող նշանաւոր գործարանների հետ, արդէն կարելի է դարձրել բաւական արագութեամբ տպագրել օրւայ հարցերի, դէպքերի հետ համարեա գուզընթաց և նրանց վերաբերեալ նկարներ, տեսարաններ, պատկերներ: Բացի այն՝ որ ՏԱՐԱԶԸ ընթերցանութեան շատ նիւթ է տալիս բնկատրիստիկայից, պակաս էջեր չեն զարդարում և կրիտիկական լօղւածներով:

ԱՂԲԻԻՐ և ՏԱՐԱԶ միեւնոյն հասցէով 1897 թ. ստորագրողը իրաւունք ունի 1 ռ. ուղարկելով ճանապարհածախս՝ ստանալ Տարազի № 1-ի հետ. 1) Միքայէլ Նալբանդեանի (խկական եւ վերջին ֆոտոգրաֆիայից) մեծադիր գրաւիւր, 2) Մալրիկի ննջարանում, շքեղ խրտօ, 3) Հարեմի աղջիկ, յլծօգրաֆիական պատկերները:

Բացի այդ իւրաքանչիւր ամիս եւ Պարիզի մողաները

ԱՂԲԻԻՐԻ տարեկան գինը 3 ռ. (արտասահման 4 ռ. կամ 12 ֆր.) ՏԱՐԱԶԸ 6 ռ. (արտասահման 10 ռ. կամ 30 ֆր.):

Հասցէն՝ Редакция „Арбюръ“ կամ „Таразъ“ ГИФЛИСЪ. Rédaction des journaux „Agbur“ et „Taraz“ Tiflis (Caucase).

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ОТКРЫТА ПОДПИСКА НА „НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

НА 1-97 ГОДЪ.

(четырнадцатый годъ изданія).

У С Л О В І Я П О Д П И С К И

съ доставкой и пересылкой:

На 12 мѣсяцевъ . . .	10 р. — к.	На 2 мѣсяца	2 р. 75 к.
„ 6 „	6 „ — „	„ 1 „	1 „ 50 „
„ 3 „	3 „ 50 „		

Заграницу на годъ 17 р., на полгода 9 р., на три мѣсяца 5 р.

Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го числа лютого мѣсяца.

Для годовыхъ подписчиковъ какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, **ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА** на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится 3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября 2 р.

Лица, подписавшіяся теперь на будущій годъ, получаютъ газету безплатно въ текущемъ году съ дня подписки.

Подписка принимается: въ Тифлисъ—въ редакціи „Нов. Обзор.“, Бяратинская ул., № 8; въ Бану—въ типографіи „Ароръ“; въ Батумѣ—въ книжномъ агентствѣ М. И. Николадзе; въ Кутаисѣ—въ книжныхъ магазинахъ Чиладзе и Бежанейшвили.

ОТЪ РЕДАКЦІИ.

Открывая подписку на будущій годъ, редакція „Нов. Об.“ считаетъ нелишнимъ заявить, что всѣ сотрудники (за немногими исключ.), которые принимали участіе въ нашей газетѣ до сихъ поръ, примутъ участіе въ ней и въ будущемъ году. Кроме того, намъ обѣщали сотрудничество нѣкоторые петербургскіе литераторы: Д. Н. Маминъ, М. А. Протопоповъ (критикъ), В. Вересаевъ (сотрудникъ „Русскаго Богатства“) и др. Нашъ лондонскій корреспондентъ Л.—вичъ, временно прекратившій участіе въ „Нов. Обзор.“, въ скоромъ времени возобновитъ печатаніе у насъ своихъ политическихъ писемъ. Печатаніе специальныхъ телеграммъ изъ Петербурга и отчасти изъ главнѣйшихъ центровъ Закавказья будетъ продолжаться круглый годъ.

Но улучшеніе литературнаго и политическаго отдѣловъ нашей газеты не отвлечетъ насъ отъ главнѣйшей нашей задачи—отъ обсужденія мѣстныхъ, кавказскихъ вопросовъ, стоящихъ на очереди, и отъ сообщенія возможно полныхъ свѣдѣній о событіяхъ мѣстной жизни. Мы заручились постоянными корреспондентами не только въ главныхъ городахъ Кавказскаго края, но и въ нѣкоторыхъ второстепенныхъ его пунктахъ. Многое зависитъ въ данномъ случаѣ, конечно, отъ содѣйствія мѣстныхъ дѣятелей, голоса которыхъ мы будемъ продолжать высушивать съ особеннымъ вниманіемъ. Пользуясь ихъ сочувствіемъ, мы съ своей стороны ни минуты не будемъ забывать, что газета должна совершенствоваться съ каждымъ днемъ; мы будемъ стремиться къ тому, чтобы читающая публика получала возможно болѣе матеріала, обработаннаго и правильно освѣщеннаго, при чемъ никогда не перестанемъ руководствоваться той основной точкой зрѣнія, которая ясна для всякаго, кто внимательно слѣдитъ за нашей газетой.

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻՆԵՐԸ

Վաճառում է հետևեալ գներով

«ՄՈՒՐՃ» 1889 թ. անկազմ	4 ռ. — կ.
«ՄՈՒՐՃ» 1890 թ. անկազմ	5 » — »
«ՄՈՒՐՃ» 1891 թ. անկազմ	10 » — »
«ՄՈՒՐՃ» 1892 թ. անկազմ	9 » — »
«ՄՈՒՐՃ» 1893 թ. անկազմ	10 » — »
«ՄՈՒՐՃ» 1894 թ. անկազմ	7 » — »
«ՄՈՒՐՃ» 1895 թ. անկազմ	8 » — »
ԲՈՂՈՐ 7 ՏԱՐԻՆԵՐԸ ՄԻԱՍԻՆ անկազմ	45 » — »
» » » » կազմով 14 հատոր	50 ռ. — »

Վ Ճ Ա Ր Ը Կ Ա Ն Խ Ի Կ

Ճանապարհածախքի համար ուղարկում է մի-մի ռուբլի
ամեն տարւոյ համար:

Դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала „Мурчъ“.

ՖՈՏՈԳՐԱՓԻԱ ՅՈՎ. ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ

Բացւած է 5-ից մայիսի 1896 թ.

Դռովինսկի պրոսպեկտ, տուն Զուբալովի, № 8


Աշխատակիցներ Ս. Պետերբուրգից: Ամենատարեւադորձւած աս-
պարատներ ՂԱՄԷՅԵՐԻ և ՐՈՍՍԱ:

ФОТОГРАФИЯ И. БАШИНДЖАГІАНЪ

Открыта съ 5-го Мая 1896 г.

На Головинскимъ проспектъ, въ домѣ Зубалова, № 8.

Сотрудники изъ С. Петербурга. Самые усовершенство-
ванные аппараты ДАЛЬШЕЙЕРА и РОССА.





ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐՔԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՈՒԹԻՒՆԸ 1897 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՍԱՐ

Բ Ա Յ Ի Ա Մ Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ տարեկան 10 հոգի, կամ 30 ֆունտի
ԴԻՄԵԼ՝ ԹԻՖԼԻՍ, Վեդեմիստան փողոց, տուն № 8: Այլ քաղաքնե-
րից՝ Тифлисѣ. Въ Редакцію журнала „МУРЧУ“.
Արտատահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue
„MOURTCH“ և կամ հեռագրով անձերին.

ԲԱՔՈՒ—պ.պ. Ֆրիդման Մարդանեան՝ Հ. Մելիքեանի գրասենեակ:

ԲԱԼԱԽԱՆԻ.—պ. Միրախչ Լհրամանեան:

ԲԱԹՈՒՄ.—պ. Սարգիս Մակարեան և պ. Ալեքս. Խոջամիրեան:

ԵՐԵՒԱՆ.—պ. Գեորգ Ղարաջեանց:

ԿԱՐՍ.—պ. Աբէլ Ապրեսեան:

ԱԽԱԼՔԱԼԱՔ.—պ. Զաւադ Տէր-Գրիգորեան:

ՆՈՒԻԻ.—պ. Աբրահամ Բունիաթեան:

ՂԱԶԱՐ.—պ. Ստեփ. Սողոմոնեան:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԻԱՆ.—պ. Յովհ. Տէր-Միրաքեան:

ՄՈՍԿՒԱ.—պ. Ալեքսանդր Մատուրեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—պ. Քրիստ. Բաշինջաղեան:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.—պ. Ալեքս. Յովսէփեան, Ռէշտ, անգլիական բանկում: